ՊՐՈՖ. ԴՈՐ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՎՐԱՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

9(47.925)
Մ-52

ՀՍԽՀ ԼՈՒՍԱԺՈՂԿՈՄԱՏ

ՊՐՈՖ. ԴՐ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ՎՐԱՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ՓԱՂՎԱԾՔՆԵՐ ՎՐԱՑԵՐԵՆ ԲՆԱԳՐԵՐԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ.
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ—ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՅԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ

ՀԱՏՈՐ Ա.
(Ե-ԺԲ ԴԱՐ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ
ՑԵՐԵՎԱՆ 1934

Պետհրատի տպարան
Գլավլիտ № 9264 (ր)
Պատվեր № 2380
Տիրաժ 1500

40 92 – 39

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատությունը մենք ձեռնարկել ենք կազմելու՝ ոգտագործելով այդ նպատակի համար վրացերեն լեզվով մեզի հասած թե տպագիր և թե (ըստ կարելվույն) անտիպ աղբյուրները, ինչպես զուտ պատմագրական և ժամանակագրականը, նույնպես և վարքաբանական-վկայաբանականն ու այսպես կոչված հայրախոսականը, նաև վիմական տարեգիրն ու ժողովրդական բանահյուսությունն ամենալայն իմաստով, մի խոսքով՝ այն ամենը, ինչ վոր իր մեջ Հայաստանի և հայերի մասին վորևե նյութ և պարունակում, ում գրվածն ել ուզում և լինի, միմիայն թե վրաց հեղինակի գրչից ելած ինքնուրույն կամ կոմպիլատիվ (վրացերեն գրվածք) լինի այն։

Ամբողջ աշխատությունը մենք ծրագրած ունենք 4 հատորով.

I հատորում մտնելու են V—XII դարու հեղինակները կամ անանուն գրվածքները։

II հատորում մտնելու են XII—XVIII դարերի հեղինակները։

III հատորը կազմելու են XVIII—XIX դարերի (մինչ 1829 թ.) հեղինակները։ Վերջապես՝

IV հատորում կամփոփենք վիմական տարեգիրը, հայերենից թարգմանված յերկասիրությունների վարիանտները, ժողովրդական բանահյուսությունը, հավելվածներն ու կարևոր ցանկերը։

Ի նկատի ունենալով, վոր վրացերեն բնագիրներից կատարած մեր թարգմանություններին մենք կցում ենք ներածություններ, վորոնք մեծ մասամբ մեր իսկ հետազոտությանց արդյունքներն են կազմում, մենք լիահույս ենք, վոր այս մեր աշխատությունը պիտանի կարող և լինել վոչ միայն հայ ընթերցողի համար, վորը առաջին անգամն և հնարավորություն ստանում ի

մոտո ծանոթանալու վրաց աղբյուրների հետ, այլև վրացագետների համար։

Հայերեն թարգմանությունները մենք տալիս ենք համաձայն «վերականգնած» բնագրերների, որ մենք ենք կատարել յերբեմն նույնիսկ մեր իսկ ձեռքով տպագրության պատրաստած նյութի հիման վրա (ըստ ձեռագրերների), որը բավականին տարբերվում է ցարդ գոյություն ունեցող հրատարակություններից։

Ընդ սմին, թյուրիմացությունների տեղիք չտալու համար, անհրաժեշտ ենք դտնում մատնանշել, որ թարգմանության ժամանակ մենք մերթ աշխատել ենք հատուկ անուններն (թե աշխարհագրական և թե անձանց) ու այսպես կոչված «եթնիկական» տերմիններդը ներկայացնել «հայկական հարազատությամբ» կողքին, կերբ վտակագին մեջ, դնելով այն և վրացերեն բնագրի արտասանությամբ. իսկ անկյունավոր փակագծերի մեջ դնում ենք այն բառերն ու նախադասությունները, որը մենք ենք ավելացնում իմաստը հասկանալի դարձնելու համար։

Ինքնըստինքյան հասկանալի յե, որ՝ քանի որ այնպիսի տերմինների գործածությունը նախնական շրջանի նկատմամբ, ինչպիսի յեն «Հայաստան» կամ «Վրաստան»-ը, կատարյալ անաքրոնիզմ կլիներ, մենք առհասարակ այդպիսիներից խուսափում ենք՝ գործածելով դրանց փոխարեն 1) «Հայք» (→ «Հայոց»), ինչպես եկվիվալենտ վրացերեն «Սոմխիթ»-ի և 2) «Վիրք» (→ «Վրաց»), ինչպես եկվիվալենտ «Բարթլի»-ի դիմաստառ գրությամբ. իսկ «հայ»—«հայեր» (→ «հայոց») և «վրացի»—«վրացիներ» ‖ «վրացիք» (→ «վրաց») զուգընթացաբար գործածում ենք երբեմն լոկ «եթնիկական» տերմիններ (փոքրատառ գրությամբ)։

* * *

Մեր ներկա աշխատության առաջին հատորի առաջին պրակի մեջ մենք ամփոփել ենք համապատասխան նյութեր վրաց գրականության զարգացման նախնական շրջանի յերկասիրությունների, որոնք գրեթե բացառապես վարքաբանական-վկայաբանական հայրախոսական, յեկեղեցա-պատմական կամ ժամանակագրական բնույթ են կրում, ընդամենը 15 հեղինակությունից կամ 19 յերկասիրությունից քաղած, որոնք V—XI դարերին են պատկանում կամ այդ դարերին վերագրվում։ Ինքնըստինքյան հասկանալի յե, որ նյութերը դասավորված են երբեմն առանձին-առանձին հատվածներ, բացի մի-յերկու դեպքերից, որ մենք առաջ ենք

բերում կամ ամբողջությամբ (IX դարու անանուն հեղինակների համառոտ Հայոց «պատմության» փորձերը), կամ չնչին կրճատություններով (IX դարու հեղինակ Արսեն Սաւարացու «Հայոց և Վրաց բաժանման մասին»), որոնք առանձնապես հետաքրքիր են յերբեմն զուտ գրական գործեր և վոչ ժամանակակից ձեռքով կատարած պատմական անցքերի նկարագրություններ կամ պատմագրական յերկասիրություններ, որոնցից վրաց գրականության մեջ միմիայն XI դարումն են ծնունդ առնում (XI—XII դարումն յերևան յեկած վրաց պատմիչներին հատկապես նվիրվում և առաջին հատորի յերկրորդ պրակը)։

Ինչպես ընթերցողը կնկատե, ներկա (առաջին) պրակում զետեղած նյութը կարծես թե գլխավորապես յեկեղեցական պատմության են վերաբերում, մասամբ՝ հայոց և վրաց բաժանման շարցի հետ կապված դավանաբանական վեճերին, որի կողքին աննշան տեղ ունին գրված Հայաստանի պատմական աշխարհագրության, ժամանակագրական պատմության և այլ և այլ պատմական անցքերի ու անձանց վերաբերյալ տեղեկությունները, իսկ տնտեսականի մասին և վոչ մի խոսք։ Բայց սա հո մեր մեղքը չե, յերբ իմը ցույրր ևեց այդ ե մեզ մատակարարել...

Սակայն հայոց պատմության համար բոլոր այդ տվյալներն արժեք ունին այն տեսակետով, որ՝ տենդենցիոզ լինելով հանդերձ՝ ըղխում են իդեոլոգիապես հակառակ, այսինքն հուշ-յուզական տնտեսական-քաղաքական օրիենտացիային յենթակա քաղկեդոնիկ (դիոֆիզիտ կամ յերկաբնակ) միջավայրից, մինչդեռ ամբողջ հայ գրականությունն այն ձևով, ինչպես եղ այն հասել և մեզ՝ լինելով նույնպես տենդենցիոզ՝ ասորա-պարսկական օրիենտացիային յենթակա, պարզապես հակաքաղկեդոնիկ (մոնոֆիզիտ կամ միաբնակ) իդեոլոգիայի դրոշմն և կրում. և հետևապես պետք և յենթադրել, որ հայերեն լեզվով յերբեմն գոյություն ունեցող քաղկեդոնիկ իդեոլոգիայի գրականությունն, մեծ մասամբ հունական աղդեցություն կրող կամ հունարենից թարգմանվածը, հակաքաղկեդոնականության հաղթանակով իսպառ վոչնչացրած և, ցավ հենց այդտեղ և համապատասխան վրաց աղբյուրների արժեքը, նամանավանդ, որ վերջիններն՝ յերբեմն դավանաբանական վեճերի հետևանքով անհետացած և մեզ չհասած հայկական աղբյուրների վրա յեն հիմնված։ Համենայն դեպս, այնպիսի դոկումենտների հրատարակումով, որոնք հայ քաղկեդոնականության զարգացման հնագույն շրջանին են վերաբերում, հարց և ծագում հայ հին գրականությունն

վերագնահատելու մասին*)։ Ցեղ իրոք, հայ և վրաց պատմագիրների տվյալների տարաձայնությունը չի՞ վոր արդյունք և այն հակասությունների, վոր նկատելի չե հին Հայաստանում և Վրաստանում շնորհիվ առաջավոր Ասիայում մշտ մարտնչող յերկու տարբեր քաղաքական-տնտեսական սիստեմների (Մարք, Պարթևք, Պարսիկներ, Արաբացիք՝ մեկ կողմից, Հույնք, Հռոմայեցիք և Բյուզանդացիները՝ մյուս կողմից)։

Ինչ վերաբերում և նույն V—XI դարերին պատկանող այն գրվածքներին, վորոնք հայերենից վրացերեն թարգմանությամբ են հասել մեզ (և նկատի ունենք Աթոնի Իվերոն վանքի X դարու «վարք հարանց»ի «հայոց» կամ «ասորվոց» սրբերի վարքերը) և վորոնց հայերեն բնագրերները կամ տարբերվում են թարգմանությունից կամ կորած են (որինակ Դավիթ և Տիրիճանի վկայաբանությունը), ուր՝ բնագրերների համեմատ, տարբեր կամ լրացուցիչ տեղեկություններ կան Հայաստանի և հայերի մասին, այդպիսիները մենք մտադիր ենք զետեղել «Հավելվածների» մեջ, վոր մեր աշխատության IV-հատորն և կազմելու։

Լ. Մ.-Բ.

Տիվլիս
7. III. 1933

---

*) Վորքան այս տեսակետից չահեկան են Ն. Մառի, Իվ. Ջավախիշվիլու, Կ. Կեկելիձեյի յեվ Ն. Ադոնցի համապատասխան ուսումնասիրությունները, վոր մենք բավականին ոգտագործած ունենք, նույնքան մեզ համար վրեպ և արժեքից դուրկ են այնպիսի աշխատությունները, ինչպիսի յին Ադեխանդր Պալմյանի «Պատմութիւն կաթոլիկէ վարդապետութեան ի Հայս» (Վիէննա 1878), S. Weber-ի Die Katholische Kirche in Armenien (Freiburg in Breisgau 1903) և այլն։ Մի կողմն ենք թողնում Կարապետ Տեր-Մկրտչյանի դոկտորական չարադրությունը՝ Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte Ketzerische Erscheinungen in Armenien, Leipzig 1893:

Ա.

ՀԱԿՈԲ ՅԵՐԵՑ (V Դ.)

«ՇՈՒՇԱՆԻԿԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

«Շուշանիկի վկայաբանությունն»-ը, վոր հայտնի չե հայերեն և վրացերեն լեզուներով, հասել և մեզ դուբդ-դուբդ խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ։ Հայերենը հրատարակված է «Մոփերք Հայկականք»-ի Թ. հատորի մեջ (Վենետիկ 1853), ընդարձակ խմբագրությունը 11—47 եջերում, իսկ համառոտը 49—55, յերկուսի ծանոթությունները 57—61 եջ. (համառոտի կրկնությունը տես նաև՝ Լ. Մելիքսեթ-Բեկ «Ծաղկաքաղ բանից նախնի հայերէն հանդերձ հայ-վրացերէն բառգրովք», հատուած առաջին. Ծաղկաքաղ, Տիփիս 1920, եջ 100—103). վրացերենի ընդարձակ խմբագրությունը հրատարակել են նախ Միք. Եաբիճիճը իր «Վրաստանի դրախտ»կոչված ժողովածուի մեջ (Ս.Պ. Բ. 1882), եջ 181—192, ապա Ս. Դօրգաձե առանձին դրքույկով՝ «Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը» (Տիփիս 1917), եջ 1—23, ծանոթությունները և հավելվածները 25—44, իսկ համառոտը հրատարակեց, ըստ Աթոնի Իվերոն վանքի X դարու «Վարք հարանց» ժողովածուի, Ալ. Խախանովը (Խախանաշվիլին) իր աշխատության մեջ «Материалы по грузинской агиологии» [«Труды по востоковедению», изд. при Лазаревском институте вост. языков, вып. XXI] (Москва 1910), եջ 49—51։ Հետագա (XVIII դարու) վրացերեն խմբագրություններից կատարած ռուսերեն թարգմանությունը տես՝ (*М. Сабинин* «Полное жизнеописание святых грузинской церкви», ч. I, Спб. 1871, стр. 141—152:

Վաղուց Ն. Մառը (Из поездки на Афон, — «Журнал Министерства Народного Просвещения», 1899, март, стр. 19—20) այն կարծիքն եր հայտնել, վոր վկայաբանության վրացերեն համառոտ խմբագրությունը բառացի թարգմանություն և համապա-

վերագնահատելու մասին*)։ Ձեվ իրոք, հայ և վրաց պատմագիրների տվյալների տարաձայնությունը չի՛ վոր արդյունք և այն հակասությունների, վոր նկատելի չե հին Հայաստանում և Վրաստանում շնորհիվ առաջավոր Ասիայում մինչև մարտնչող յերկու տարբեր քաղաքական-տնտեսական սիստեմների (Մարք, Պարթևք, Պարսիկներ, Արաբացիք՝ մեկ կողմից, Հույնք, Հռոմայեցիք և Իլուզանդացիները՝ մյուս կողմից)։

Ինչ վերաբերում և նույն V—XI դարերին պատկանող այն դրվածքներին, վորոնք հայերենից վրացերեն թարգմանությամբ են հասել մեզ (և նկատի ունենք Աթոնի Իվերոն վանքի X դարու «վարք հարանց»ի «հայոց» կամ «սաղովոց» սրբերի վարքերը) և վորոնց հայերեն բնագրերները կամ տարբերվում են թարգմանությունից կամ կորած են (որինակ Դավիթ և Տիրիճանի վկայաբանությունը), ուր՝ բնագրերների համեմատ, տարբեր կամ լրացուցիչ տեղեկություններ կան Հայաստանի և հայերի մասին, այդպիսիները մենք մտադիր ենք զետեղել «Հավելվածների» մեջ, վոր մեր աշխատության IV-հատորն և կազմելու։

Լ. Մ.-Բ.

Տփղիս
7. III. 1933

---

*) Վորքան այս տեսակետից չահեկան են Ն. Մառի, Իվ. Ջավախիշվիլու, Կ. Կեկելիձեյի յեվ Ն. Ակինյանի համապատասխան ուսումնասիրությունները, վոր մենք բավականին ոգտագործած ունենք, նույնքան մեզ համար վրդովիչ և արժիքից դուրկ են այնպիսի աշխատությունները, ինչպիսի յին Աղեքսանդր Պալմյանի «Պատմութիւն կաթոլիկէ վարդապետութեան ի Հայս» (Վիեննա 1878), S. Weber-ի Die Katholische Kirche in Armenien (Freiburg in Breisgau 1903) և այլն։ Մի կողմն ենք թողնում Կարապետ Տեր-Մկրտչյանի դոկտորական շարադրությունը՝ Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte Ketzerische Erscheinungen in Armenien, Leipzig 1893:

Ա.

ՀԱԿՈԲ ՅԵՐԵՑ (V Դ.)

«ՇՈՒՇԱՆԻԿԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

«Շուշանիկի վկայաբանություն»-ը, վոր հայտնի յե հայերեն և վրացերեն լեզուներով, հասել և մեզ զուլդ-զուլդ խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ։ Հայերենը հրատարակված է «Մոփերք Հայկականք»-ի Բ. հատորի մեջ (Վենետիկ 1853), ընդարձակ խմբագրությունը 11—47 եջերում, իսկ համառոտը 49—55, յերկուսի ծանոթությունները 57—61 եջ. (համառոտի կրկնությունը տես նաև՝ Լ. Մելիխեթ-Բեկ «Ծաղկաքաղ բանից նախնի հայերէն հանդերձ հայ-վրացերէն բառգրովք», հատուած առաջին. Ծաղկաքաղ, Տփղիս 1920, եջ 100—103). վրացերենի ընդարձակ խմբագրությունը հրատարակել են նախ Միք. Եաբիճիները իր «Վրաստանի դրախտ»կոչված ժողովածուի մեջ (Ս.Պ. Բ. 1882), եջ 181—192, ապա Ս. Գորգաձեն առանձին դրքույկով՝ «Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը» (Տփղիս 1917), եջ 1—23, ծանոթությունները և հավելվածները 25—44, իսկ համառոտը հրատարակեց, ըստ Աթոնի Իվերոն վանքի X դարու «Վարք հարանց» ժողովածուի, Ալ. Խախանովը (Խախանաշվիլին) իր աշխատության մեջ «Материалы по грузинской агиологии» [«Труды по востоковедению», изд. при Лазаревском институте вост. языков, вып. XXI] (Москва 1910), եջ 49—51։ Հետագա (XVIII դարու) վրացերեն խմբագրություններից կատարած ռուսերեն թարգմանությունը տես՝ (*М. Сабинин* «Полное жизнеописание святых грузинской церкви», ч. I, Спб. 1871, стр. 141—152:

Վաղուց Ն. Մառը (Из поездки на Афон, — «Журнал Министерства Народного Просвещения», 1899, март, стр. 19—20) այն կարծիքն եր հայտնել, վոր վկայաբանության վրացերեն համառոտ խմբագրությունը բառացի թարգմանություն և համապա-

տասխան հայերեն խմբագրությունից, իսկ ինչ վերաբերում է նույն վկայաբանության ընդարձակ խմբագրությունների առնչությանը իրար հետ, դրա մասին նույն Ն. Մառը վոչինչ չեր ասել։

1917 թվին, տալով Շուշանիկի վկայաբանության վրացերեն ընդարձակ խմբագրության պիտական հրատարակությունը, Ս. Գորգաձեն իր դրքույկի վերնագրի վերևից անհրաժեշտ եր գտել դնելու և հեղինակի անունը՝ «Հակոբ Ցերեց, V դար»։ Սույն գրվածքն V դարու Հակոբ Ցերեցին վերագրելը վոչ մի առարկություն չգտավ պրոֆ. Իվ. Ջավախիշվիլու կողմից՝ 1921 թվին լույս ընծայած ուսումնասիրության մեջ՝ «Հին վրացական պատմական գրականությունը (V—XVIII դ. դ.), յերկրորդ լրացրած հրատարակություն», եջ 13—26, ապա և պրոֆ. Կ. Կեկելիձեյի կողմից՝ «Վրաց գրականության պատմության» I հատորում (Տփղիս 1923), եջ 119—124, վորոնք ավելի ևս պարզեցին վկայաբանության ավտենցիալի հարցը։ Մասնավորապես Իվ. Ջավախիշվիլին ջանաց ապացուցել, վոր՝ մինչդեռ վկայաբանության համառոտ վրացերեն խմբագրությունը բառացի թարգմանություն է հայերենից, նույն հեղինակության ժյուս՝ ընդարձակ վրացերեն խմբագրությունն ինքնուրույն գրվածք պիտի ճանաչվի, վորն աղբյուր է ծառայել հայերեն խմբագրության համար, մի խոսքով, վրացերեն ընդարձակ խմբագրությունը նիմիֆ է ծառայել (ա. աստիճան) հայերեն ընդարձակ խմբագրությանն (բ. աստիճան), վորը հետագայում համառոտվել է (գ. աստիճան) և ապա թարգմանվել է վրացերեն (դ. աստիճան)։

Այս կարծիքն այժմ վրաց գրականության մեջ ընդունված է ու տարածված, և գրեթե վոչ մի առարկության չի հանդիպում։

Այժմ տեսնենք, թե ինչ ավյալների հիման վրա յեն վրացագետները (Ս. Գորգաձե, Իվ. Ջավախիշվիլի, Կ. Կեկելիձե և ուրիշները) ապացուցում Շուշանիկի վկայաբանության ինքնուրույն վրացերեն գրվածք և այն էլ V դարու հեղինակ Հակոբ Ցերեցի հորինվածք լինելն, վորը միաժամանակ վրաց գրականության հնագույն հիշատակարանն է համարվում։

1. Դիմելով մի ինչ վոր հեղինակավոր անձի՝ վկայաբանությունն կազմողը մի ինչ վոր հատվածից հետո, վորը նույն վկայաբանության սկզբնական մասն պիտի կազմեր կամ գուցե նեբածությունը, ասում է (եջ 1). «Յես ահա հաստատապես պատմեմ Ձեզ սուրբ և յերանելի Շուշանիկի մահվան մասին» (սրանով է սկսվում վրացերեն տեկստը)։ Ապա՝ խոսելով Վարդան Մամիկոնյանի մասին՝ նա մատնանշում է (նույն տեղ). «Վորի մասին յես Ձեզ գրեցի»։ Մի ուրիշ տեղ՝ բղեշխի դրան յեպիսկոպոս Ափուտի (Ափոցի) անունը տալով՝ հեղինակն ավելի վորոշակի ասում է (եջ 3). «Յես էլ՝ Շուշանիկ տիկնոջ (թագուհու) յերեցն՝ այն յեպիսկոպոսի մոտն եյի»։ Յեվ ահա այստեղից պարզ է, վոր հեղինակը՝ առաջ բերելով իր և Շուշանիկի միջև տեղի ունեցած բազմաթիվ զրույցները (դիալոգները)՝ մերթ ընդգծում է, թե վերջինս ինչպես եր դիմում իրեն, հեղինակին՝ «Ցերեց», «Այ յերեց» տալով։ Վերջապես, վրացերեն բնագրում կա և մի այնպիսի տեղ (եջ 9—10), ուր մի վոմն պատանի՝ փնտռելով Ցերեցին Շուշանիկի բնակության տեղում՝ հարցնում է. «Հակոբն այդտեղ է», վորին ինքը՝ հեղինակը, պատասխանում է. «Ինչ կուզես», և նա ասում է. «բղեշխն կանչում է»։

Ըստ յերևույթին, այս ավյալների հիման վրա չէ, վոր նախ Մ. Սաբինինը (1882) և ապա Ս. Գորգաձեն (1917) վկայաբանության հեղինակ համարեցին Հակոբ Ցերեցին, վորը նույն գրվածքի հայերեն վերսիայի մեջ անանուն «դրան քահանա» է կոչվում (Սոփերք, թ., եջ. 29)։ Իսկ Իվ. Ջավախիշվիլին մանրամասն ապացուցեց այս կետը՝ հենվելով ինչպես վերև բերած տվյալների վրա, նույնպես և ամբողջ հորինվածքի, կազմվածքի և վոճի վրա։ «Հակոբ Ցերեցի գրվածքը, — ասում է բազմաշխատ վրացագետը, — ինչպես իր պատմական, աշխարհագրական [ու] ժամանակագրական տեղեկություններով, նույնպես և նիստուկացի նկարագրությամբ, պատմական բնույթով ու վոճով և, վերջապես, հեղինակի պատմվածքի հոգեբանական ճշտությամբ լրոք վոր ժամանակակից, ականատեսի և համագործակցի կողմից գրված յերկասխություն պիտի ճանաչվի» (Հին վրացական պատմական գրականությունը, 19)։ Մոտավորապես նույն միտքն է արտահայտում և Կ. Կեկելիձեն, յերբ պնդում է, վոր Շուշանիկի վարքը գրի յե առել «վոչ թե սովորական ժամանակակիցն ու ականատեսը, այլ [բղեշխի] ապարանքին շատ մերձեցած և, միաժամանակ, համեմատաբար պատրաստված անձն՝ Հակոբ Ցերեցն, վորը դրան քահանա յեր և Շուշանիկի խոստովանահայրը. Հակոբն այն անձնավորություններից մեկն եր, վորը վոչ մի րոպե չեր հեռացել իր հոգևոր զավակից անտանելի տանջանքի և նեղության ժամանակ, նրա հետ եր ապարանքում և ապարանքից դուրս՝ յեկեղեցում ու բերդում» (Վրաց գրականության պատմությունը, I, 119—120)։ Ընդ սմին, նույն Կ. Կեկելիձեն՝ ի նկատի առնելով վկայաբանության մեջ

յեղած զանազան թվականները՝ պտնում է, որ այն հորինված պիտի լինի 474—484 թվականներին (ibid., եջ 123)։

2. Իվ. Ջավախիշվիլու հետազոտութեամբ, հայերեն և վրացերեն ընդարձակ խմբագրութիւնները (որոնց ծագած են համառոտները), ակնհայտորեն կերպով իրարից տարբերվում են գլխավորապես հետևյալ կետերում. Ա. Մինչդեռ վրացերենը գրված է առաջին դեմքով, հայերենում հեղինակը սկի չի յերևում, և պատմվածքն յերրորդ դեմքով է ներկայացրած. Բ. Վրացերեն տեկստի ավագույն տեղերը, ուր այն ժամանակվա նախարարական ճշտագույն պատկերն է ներկայացրած, հայերենում բաց են թողնված։ Գ. Թվականները վրացերենում ավելի մանրամասնորեն և ճշտորեն են առաջ բերված, քան թե հայերենում, ուր այդպիսիները յերբեմն (որինակ Շուշանիկի մահվան մասին) նույնիսկ բաց են թողնված։ Դ. Ժամանակագրական ավյալները ու գործող անձանց անունները (որինակ՝ բդեշխի դրան յեպիսկոպոսի և դրան յերեցի) վրացերենում ամենայն բարեխղճութեամբ են առաջ բերված, մինչդեռ հայերենում այդպիսիները բաց են թողնված։ Ե. Հայերենում պահպանում են մի շարք այնպիսի տեղեկութիւններ, որոնք այն ժամանակվա պատմութեանն ու աշխարհագրութեանն են վերաբերում (որինակ Հերեթի և Ցուրտավի մասին), ինչպես և Շուշանիկի անձնավորութեան, բնավորութեան, մտածելակերպի և բնորոշ առանձնահատկութիւնների նկարագրութիւնը։ Զ. հայերեն տեկստը՝ համեմատաբար վրացերենի հետ ավելի կրճատված լինելով հանդերձ՝ ավելի ընդարձակ ձևով և ներկայացնում զանազան տողթքները, որոնք վրացերենում քիչ տեղ ունեն գրաված, և այլն։

Շուշանիկի վկայաբանութեան վրացերեն ընդարձակ խմբագրութեունից առանձ քաշած տեղեկութիւնները, ճիշտ և բուն Հայաստանին (Հայքին) չեն վերաբերում, քանի որ և նկատի ունեն Հայոց (Հայքի) և Վրաց (Քարթլիի) սահմանակից Հերեթ=Ոանը, բայց և այնպես մենք այդպիսիներն առաջ ենք բերում, որպեսզի նպաստած լինենք Դուդարքի պատմութեանը, որն այնքան սերտ կապված է նույն Հայոց և Վրաց անցյալի հետ։

Բաղվածքների թարգմանութեուններն առաջ ենք բերում համաձայն Ս. Գորգանեյի հրատարակութեան (համեմատութեամբ Մ. Սաբինինի հրատարակածի հետ), կողքին դնելով հայերեն վերնագրի համապատասխան հատվածն ըստ «Սոփերք»-ի։

[ՇՈՒՇԱՆԻԿԻ ԾԱԳՈՒՄԸ ՅԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ]

Պարսից [Պերոզ] Թագավորի [իշխանութեյան] ութերորդ տարին[1] դեպի արքունի դուռն ուղեվորվից Վաղգեն բդեշխն (վարսքին պիտիախշն)՝ Աշուշայի վորդին, վորը սկզբում քրիստոնյա յեր, քրիստոնյա հորից ու մորից ծնված։ Յեվ նրա կինն եր հայոց սպարապետ Վարդանի դուստրը, վորի մասին ասա դրում եմ Ջեղ. հորից նա վարդան եր կոչվել, իսկ ըստ սիրո նրա անունն Շուշանիկ, աստծուց յերկյուղած, ինչպես արդեն ասացինք, մանկութեյունից իսկ...

Հեռանալով Պարսից Թագավորից՝ բդեշխն (պիտիախշն)... մոտեցավ Վրաց (Քարթլիի) սահմաններին, Հերեթ[2] յերկրին....

...[Յեվ նա] յեկավ Ցուրտավ[3] կոչված ավանը....

Իսկ բդեշխի (պիտիախշի) զբաղան յեպիսկոպոսը, վորի անունն եր Սվուտ[4], այնտեղ չեր գտնվում, վորովհետև գնացել եր սբր. բուհու (Շուշանիկի) մասունքից մեկի տունը.... և յես էլ [Հակոբ]՝ Շուշանիկ սիկնոջ (թադուհու) յերկաց՝ այն յեպիսկոպոսի մոտն էլի....

Իսկ բդեշխն (պիտիախշն) ուղեվորվեց Զորդ[5], բայց նրա յեղբայր Զոջիկը չհանդիպեց նրան [այնտեղ]... և՛ բդեշխի (պիտիախշի) յեռեփեցն ընկնելով՝ հասավ

Եւ եղեւ ի ժամանակս Պարսից թագաւորութեանն՝ բդեաշխ վասդեն, որդի Աշուշայ բդեշխի, որ ի դուռն արքունի երթեալ՝ ուրացաւ զքրիստոնէութիւն, և եղեալ ընդ պարսկական սրինաւքն ի կամաց և ոչ ի հարկէ և ի բռնութենէ։ Եւ կին ունէր զդուստր Վարդանայ հայոց սպարապետի Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ Պարթեւի և հայոց հայրապետի՝ ի դստերէն Սահականուշայ, և անուն նորա վարդենի ի ծնօղացն կոչեցեալ, Շուշանիկ յորջորջանօք յիտոյ անուանեալ. բարեպաշտոն և երկիւղած յաստուածոյ ի մանկութենէ իւրմէ...

Նրան Հերեթի սահմաններում...

[Յերկիրն, ուր գտնվում է Ցուրտավը[6], նկարագրելի չէ այսպես՝]. ամռան պահին արևի կիզումը կրակի պես է այրում, քամիները տաք և չրերը վնասարար. այդտեղի բնիկները լի չեն ախտով, ջրով ուռած և դեղնած են, մարմինը ծակծկած, չորացած, քոսոտ, կարմիր քամուց [վչացած], չերեսը ուռած. և նրանց կյանքն էլ կարճատև. և վոչմի ծեր չկա նըրանց յերկրում....

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ Ս. Գորգաձեյի *(Ս. Շուրանովի վիպաբանությունը, եջ 26)*, 458 + + 8 = 466 թվին, ըստ Իվ. Ջավախիշվիլու *(Հին վրացական պատմական դրականությունը, եջ 16)*, 456 կամ 457 + 8 = 464 — 465 թվին:

2. Նույն Ռանը:

3. Տես 6. ծանոթություն:

4. Նույն Ամոցը ըստ «Գիրք թղթոց»-ի *(եջ 178)*, որը Ցուրտավի թեմի առաջին յեպիսկոպոսն էղավ (Կ. Կեկելիձե, Նվիրապետական կազմը հին Վրաստանում, վրացերեն, — «Bulletin de l'Université de Tiflis, X, *1930, եջ 313*):

5. Ջորդ կոչված ավանը, ըստ յերևույթին, Տայքումն է յեղել, որովհետև Տայքեցին եր Ջորդուանել իշխանների տոհմից:

6. Ցուրտավը զանազան հեղինակներ յերկար ու ձիգ դարերի ընթացքում սկսած դեռ եվի X դարուց՝ այլ և այլ անվերումն եյին վկայում Այս հարցը, անկասկած, Հայաստանի և Վրաստանի պատմական աշխարհագրության հիմնական պրոբլեմներից մեկն է, քանի որ Դուդարաց բդեշխության յերբեմնի կենտրոնի և սահմանների հարցին է վերաբերում Ըստ Ուխտանեսի, այն X դարում կոչվելիս է յեղել Դաշնակ, դնելով «յեղը դետոյն՝ որ կոչի յիւր անուն Դաշնագետ, ի նահանգին որ կոչի Վրաց-դաշտ, որ է մինչասահման երկուց աշխարհացն Հայոց և Վրաց,... հանդէպ լերինն Կաւկասու, որ է սահմանակից... մեծի մայրաքաղաքին Տփղնաց» («Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց», Վաղարշապատ *1871, եջ 34*): Ստեփաննոս Որբելյանի որոք եվ Ցուրտավը կոչվելիս է յեղել «Դաշնակք, զորոյ դքեան — ասում է Ստեփաննոսը — այժմ ունի Հախպատ» (Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց [«Ղազիասեան մատենադարան» Դ]. Թ. *1911. եջ 105*):

XVIII դարու վրաց աշխարհագիր Վախուշտը վկայում եր Ցուրտավը Ախալա վանքից դեպի արևելք, Բերդուջ կամ Դերեզի լեռան ջրջանում (Description géographique de la Géorgie par le *Tsarévitch Wakhoucht*, publiée par M. Brosset, S. P. B., 1842, p. 142, n. 1): *Մեկնելով Վախուշտի խոսքերը, Մ. Բրոսսեն յեկել եր այն յեզրակացության, որ Ցուրտավը գտնվում է «a l' E. d' Akhtata, sur le Berdoudj, la Kamenka de Busses» (M. Brosset*, Deux historiens Arméniens, S. P. B. 1870, p. 295—296. n. 2. *հմմտ.* Additions et éclaircissements à l' Histoire de la Géorgie, p. 109, n. 3), *որ առանց այլևայլությեան կրկնում է և վրացագետ Թ. Ժորդանիան տարօրինակ մեկնաբանությամբ՝ «Ցուրտավը, այժմյան (?) Դայենքը, Վախուշտը Դայինքը (Ախտալայից մոտ, ռուսական* Каменка *գյուղը) դնվում եր Դուդարքում, Հերեթի և Բարթլիի սահմանում» (Բրքնէականեր, վրացերեն, I, Տփղիս 1892, եջ 320, ծանոթ. 42)։ Մ. Ջանաշվիլին (Վախուշտի աշխարհագրությունը, վրացերեն, Տփղ. 1901, եջ 51, ծանոթ. 92), կանգ առնելով «Ցուրտակետ» անվան ստուգաբանության վրա, որով հայտնի չե Ղարաբուլախի ջրջանը, գտնում է «հավանական, որ Շուջանլիի քաղաքը հետագայում վերակոչվեր Ցուրտակետ»։ Ըստ Ղ. Ալիշանի (Յուշիկք հայրենեաց Հայոց, I, 375) և ապա Ն. Ակինյանի (Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա 1910, եջ 199), Ցուրտավը գտնվելիս է յեղել «Բողնովոյը դաւառին հարաւային ցածագոյն ծայրն» — «Վիսատուր ճամբով միայն հեռու» Տփղիսից։ 1912 թվին Սարգիս Կակարածեն (Սուրբ Նունեն ու նրա նշանակությունը Վրաստանի պատմության մեջ, Վրացերեն, եջ 8) այն կարծիքի յեր, որ Ցուրտավը «այժմյան Մանգլիսից դեպի արևմուտք եր գտնվում»։ 1914 թվին հրատարակած իր «Վրաց ժողովրդի պատմություն» (վրացերեն)[1] II դրքում Իվ. Ջավախիշվիլին ուղղակի ասում է՝ «Հերեթումն եր համարվում Ցուրտավը, սակայն ևսկապես վրտեղ եր այն գտնվում, չգիտենք» (եջ 307)։ 1916 թվին հրատարակած մեր հատուկ փոքր հոդվածում «К вопросу о местоположении Цуртава» (Известия Кавк. отд. Рус. Геогр. О-ва, т. XXIV, № 3) *մենք՝ ամփոփելով հարցիս գրականությունը՝ այն միտքն եյինք հայտնել, որ «Ցուրտավը պիտի վորոնել կամ այժմյան Ախալալի մոտերը, Բերդուջի կամ Դեբեդա-չայի (Համենկայի) ջրջանում, կամ հին Դաչնանի տեղում՝ Բզիա կամ Ջրամ գետի աջ ափին» (եջ 341—345, հատմ. նաև մեր «Гадженк-Гачиан»,—«Христ. Восток», т. VI, пгр. 1918, стр. 94-95)։ Չհամաձայնվելով մեզ հետ՝ Սարգիս Կակարածեն (Վրաց պետականության դևնադիսի հարցերը, վրացերեն,—«Bulletin Historique», Տփղիս 1924, Գ. I, եջ 74-75) գտնում է, որ Ցուրտավը Պասկևիչի արշավանքի ժամանակ, որ Ուշակովն եր կազմել, Ջրոուտ և կոչվում՝ գտնվելով Ջրամ գետի ձախ ափին, որը, ըստ յերևույթին, Ցուրտավ անվան ազավաղումն է. Նույնը Ս. Կակարածեն կրկնում է և 1928 թվին (К истории названия города Тифлиса, — «Исторический сборник» II, 67) հետևյալ խոսքերով. «Эквивалент названия Гачиан-и —Цуртав (Ухтанес, как известно, считает эти названия идентичными) находит об'яснение на арм. яз., именно *ցուրտ холодный* (само слово иранского происхождения) с суффиксом-ав, встречающимся и в других древних географических названиях на Юго-Кавказе (например, Тех-ав, Манав, Зан-ав, Парт-ав и пр.). В этом же значении Гачиан-и при сопоставлении с аварским коачан—*холодный* вполне покрывает термин Цурт-ав, который, таким образом, представляется простым переводом термина Гачиан-и в его аварском, так сказать, аспекте. Гачиан-и—Цуртав, повидимому, находился в районе нынешнего Хоша-Килиса на правом берегу р. Храм (притока Куры), у слияния с ним р. Машавер»:

Նրան Հերեթի սահմաններում...

[Ցերկլերն, ուր գտնվում է Ցուրտավը[6], նկարագրելի չե այսպես՝]. ամռան պահին արևի կիզումը կրակի պես է այրում, քամիները տաք և չրերը վնասարար. այդտեղի բնիկները լի չեն ախտով, չրով ուռած և դեղնած են, մարմինը ծակծկած, չորացած, քոսոտ, կարմիր քամուց [վչացած], չերեսը ուռած. և նրանց կյանքն էլ կարճատև. և վոչ մի ծեր չկա նրանց յերկրում....

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Ըստ Ս. Գորգաձեյի (Ս. Շուրանովի վկայաբանությունը, էջ 26), 458 + 8 = 466 թվին, ըստ Իվ. Ջավախիշվիլու (Հին վրացական պատմական դրականությունը, էջ 16), 456 կամ 457 + 8 = 464 — 465 թվին:*

2. *Նույն Ռանը:*

3. *Տես 6. ծանոթություն:*

4. *Նույն Ամոսը ըստ «Գիրք թղթոց»-ի (էջ 178), որը Ցուրտավի թեմի առաջին յեպիսկոպոսն յեղավ (Կ. Կեկելիձե, Նվիրապետական կազմը հին Վրաստանում, վրացերեն, — «Bulletin de l'Université de Tiflis, X, 1930, էջ 313):*

5. *Զորդ կոչված ավանը, ըստ յերևույթին, Տայքում և յեղել, որովհետև Տայքից էր Զորդուանել Լիպանորի տոհմը:*

6. *Ցուրտավը զանազան հեղինակներ յերկար ու ձիգ դարերի ընթացքում սկսած դեռ եղի X դարուց՝ այլ և այլ տեղերում եյին վնտռում. Այս հարցը, անկասկած, Հայաստանի և Վրաստանի պատմական աշխարհագրության հիմնական պրոբլեմներից մեկն է, քանի որ Թաւպարայ բդեշխության յերբեմնի կենտրոնի և սահմանների հարցին է վերաբերում. Ըստ Ուխտանեսի, այն X դարում կոչվելիս և յեղել Դաւինք, դանվելով «յեղը դեռոյն՝ որ կոչի յիւր անուն Դաւինագետ, ի նահանգին որ կոչի Վրաց-դաշտ, որ է մինչառաման երկուց աշխարհացն Հայոց և Վրաց,... հանդէպ լերինն Կաւկասու, որ է սահմանակից... մեծի մայրաքաղաքին Տփղեաց» («Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց», Վաղարշապատ 1871, էջ 34): Ստեփաննոս Որբելյանի որոք էլ Ցուրտավը կոչվելիս և յեղել «Դաւինք, զորոյ դիմեն — ասում է Ստեփաննոսը — այժմ ունի Հախպատ» (Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց [«Ղազիսական մատենադարան» Դ]. Թ. 1911. էջ 105):*

*XVIII դարու վրաց աշխարհագիր Վախուշտը փնտռում եր Ցուրտավը Ախալցխա վանքից դեպի արևելք, Բերդուջ կամ Դեբեդի լուսան ջրվանում (Description géographique de la Géorgie par le Tsarévitch Wakhoucht, publiée par M. Brosset, S. P. B., 1842, p. 142, n. 1): Մեկնելով Վախուշտի խոսքերը, Մ. Բրոսսեն յեկել եր այն յեզրակացության, որ Ցուրտավր գտնվում է «a l' E. d' Akhtala, sur le Berdoudj, la Kamenka de Busses» (M. Brosset, Deux historiens Arméniens, S. P. B. 1870, p. 295—296. n. 2. հմմտ. Additions et éclaircissements à l' Histoire de la Géorgie, p. 109, n. 3), որ առանց այլևայլության կրկնում է և վրացագետ Թ. Ժորդանիան տարօրինակ մեկնաբանությամբ՝ «Ցուրտավը, այժմյան (?) Դայենքը, Վախուշտը Դայինքը (Ախտալայից մոտ, ռուսական Каменка գյուղը) դանվում եր Դուգարքում, Հերեթի և Քարթլիի սահմանում» (Քրոնիկաներ, վրացերեն, I, Տփղիս 1892, էջ 320, ծանոթ. 42): Մ. Ջանաշվիլին (Վախուշտի աշխարհագրությունը, վրացերեն, Տփղ. 1901, էջ 51, ծանոթ. 92), կանգ առնելով «Ցուրտավետ» անվան ստուգաբանության վրա, որով հայտնի յե Ղարաբուլախի ջրվանը, դանում է «հավանական, որ Շուշանիկի քաղաքը հետագայում վերակոչվեր Ցուրտավետ»: Ըստ Ղ. Ալիշանի (Յուշիկը հայրենեաց հայոց, I, 375) և ապա Ն. Ակինյանի (Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա 1910, էջ 199), Ցուրտավը դանվելիս և յեղել «Բողնոցիոր գաւառին հարաւային ցածագոյն ծայրն» — «Կիսաւուր ճամբով միայն հեռու» Տփղիսից: 1912 թվին Սարգիս Կակաբաձեն (Սուրբ Նունեն ու նրա նշանակությունը Վրաստանի պատմության մեջ, Վրացերեն, էջ 8) այն կարծիքի յեր, որ Ցուրտավը «այժմյան Մանգլիսից դեպի արևմուտք եր դանվում»: 1914 թվին հրատարակած իր «Վրաց ժողովրդի պատմություն» (վրացերեն)| II դրքում Իվ. Ջավախիշվիլին ուղղակի ասում է՝ «Հերեթումն եր համարվում Ցուրտավը, սակայն խնդրոս վերտեղ եր այն դանվում, չգիտենք» (էջ 307): 1916 թվին հրատարակած մեր հատուկ փոքր հոդվածում «К вопросу о местоположении Цуртава» (Известия Кавк. отд. Рус. Геогр. О-ва, т. XXIV, № 3) մենք՝ ամփոփելով հարցիս գրականությունը՝ այն միտքն եյինք հայտնել, որ «Ցուրտավը պետի վորոնել կամ այժմյան Ախտալայի մոտերը, Բերդուջի կամ Դեբեդա-չայի (Կամենկայի) ջրվանում, կամ հին Դայինքի տեղում՝ Քյիա կամ Ուրամ գետի աջ ափին» (էջ 341—345, հմմտ. նաև մեր «Гадженк-Гачиан»,—«Христ. Восток», т. VI, пгр. 1918, стр. 94-95): Չհամաձայնվելով մեզ հետ՝ Սարգիս Կակաբաձեն (Վրաց պետականության դիմադիմաց հարցերը, վրացերեն,—«Bulletin Historique», Տփղիս 1924, Գ. 1, էջ 74-75) գտնում է, որ Ցուրտավը Պասկևիչի արշավանքի ժամանակ, որ Ուշակովն եր կազմել, Ջրոռա և կոչվում՝ դանվելով Ուրաց գետի ձախ ափին, որը, ըստ յերևույթին, Ցուրտավ անվան ապավառումն է. Նույնը Ս. Կակաբաձեն կրկնում է և 1928 թվին (К истории названия города Тифлиса, — «Исторический сборник» II, 67) հետևյալ խոսքերով. «Эквивалент названия Гачиан-и —Цуртав (Ухтанес, как известно, считает эти названия идентичными) находит об'яснение на арм. яз., именно ցուրտ холодный (само слово иранского происхождения) с суффиксом-ав, встречающимся и в других древних географических названиях на Юго-Кавказе (например, Тех-ав, Манав, Зан-ав, Парт-ав и пр.). В этом же значении Гачиан-и при сопоставлении с аварским коачан—*холодный* вполне покрывает термин Цурт-ав, который, таким образом, представляется простым переводом термина Гачиан-и в его аварском, так сказать, аспекте. Гачиан-и—Цуртав, повидимому, находился в районе нынешнего Хоша-Килиса на правом берегу р. Храм (притока Куры), у слияния с ним р. Машавер»:*

Վերջապես, 1928 թվին հրատարակած «Վրաց ժողովրդի պատմության (վրացերեն) I հատորի Դ. հրատարակության մեջ Իվ. Ջավախիշվիլին նորից պնդում է 1914 թվին արտահայտած այն դրույթը, որ Ցուրտավը հերետիկոսների դաստիարակության կենտրոն էր դարձվում։

1928—1932 թվականների ընթացքում մենք հնարավորություն ունեցանք պրպտումներ կատարել դրեթե ամբողջ Դուդարքում (Լոռի-Տաշիր, Թրիալեթ-Ծալկա, Ջուրտաղեթ-Ղարաբուլախ և այլն) և ամենայն մանրամասնությամբ հետազոտեցինք Ցուրտավի հարցն իր բոլոր յուրահատկություններով՝ հաշվի առնելով դրականության մեջ արտահայտված դրեթե բոլոր կարծիքներն ու ցուցմունքները այդ մասին, և հիմնեք այն վերջնական եզրակացության, որ Ցուրտավ-Դաշինքը (Դաշինքը)՝ Դուդարաց բդեշխների մայրաքաղաքը՝ Բոլնիսին (այժմյան Լյուկսեմբուրգի) չրջանի Թուրքական Առբիլո դյուղն է, որ յերբեմն վրացերեն «Նախիդուբի» և կոչվել, այսինքն կամբջատեղ (ըստ Վախուշտի քարտեզների)՝ Քյամ կամ Բցիա գետի աջ և ձախ ափերին, ուր վոռոդիչ առուներն են սկիզբ առնում և, ի միջի այլոց, «Վախտանգ Թագավորի արվա» կոչվածը XVIII դարում*). Իսկ Ուխտանեսի Դաշինագիրը վոչ այլ ինչ է, բայց յեթե նույն Քրամը. և հենց այստեղ են մնացել բազմաթիվ յեկեղեցիների ավերակներ, վորոնց մեջ աչքի յե ընկնում Վաղարշապատի Ս. Գայանեի ձևով կառուցված կաթողիկեն, իսկ փոքր յեկեղեցիներից մեկում աչքի յե ընկնում Մանգդյաց հինավուրց քարե խաչն (վրացերեն «Մարիամ Ջվարի», ռուսերեն՝ Каменная невеста, ոսերեն՝ «Մամիդա» կոչվածն) տիպարը։ Այս Առբիլոյի մոտ է գտնվում և XVIII դարու վերջերում վրաց Հերակլ II-ի այրեկի՝ Դարեջան Թագուհու վերանորոգած ընդարձակ «Բոլագիր» ‖ «Բալագիր» (համմ. Կախեթի «Բոլագիս», այսինքն Քաղաքատեղ) բերդը, վոր Թյուրքերեն «Ադ-զալա» յե կոչվում (Դարեջանի վերանորոգության մասին տես Ե. Թաղայշվիլի, Վրաստանի հնություննները, վրացերեն, III, Տփղ. 1910, եջ 299—300)։ Ընդ սմին, այս Առբիլո-Բոլագիրից վոչ շատ հեռու գտնվում է և պատմական Սամցուրա-Սամշվիլդե բերդաքաղաքը, յերբեմն Կորնիկյանց աթոռանիստը, վորի մայր եկեղեցվո (VIII դարում կառուցվածի) արևելյան պատի վրա վորագրված վրացերեն յերկաթագիր արձանագրության յերկրորդ տողում ասված է, վոր տաճարի շինողները՝ «բդեշխների դարմից» ([Նա]թեսավնի պլուխաչնի) են յեղել (Е. Такайшвили, Археологические экскурсии, разыскания и заметки, вып. II, Тфл. 1905, стр. 42)։

Ցուրտավի ու, նրա հետ, ամբողջ «Վրացդաշտ»-ի այնպիսի դիրքին, վոր մենք գտնում ենք Առբիլոյում, միանգամայն համապատասխանում է, ի միջի այլոց, և հետևյալ յերկու հանգամանքը։ Նախ՝ 506 թվին Դվինի (Դունայ) ժողովի մասնակիցների ցարքում «[Յ]ո[ւ]րտաւ»-ի յեպիսկոպոսի անունը հիշվում է «Բողնիսա»-ի և «[Ր]ուսթաւ»-ի յեպիսկոպոսների անվանց միջև, վորոնց արդեն հետևում են «Տփղեաց»-ն ու «Մանգդեաց»-ը. ուրեմն, պարզ է, վոր իր աշխարհագրական դիրքով Ցուրտավը Բոլնիսիրի և Ռուսթավ-Դարդարանի կամ Հերեթի մեջտեղն պիտի լիներ, վորպիսին միմիայն Քրամ գետի ավազանը կարելի յե համարել իր ներքևի մասում, ուր Առբիլոյից (Նախիդուբից) զատ վոչ մի ուրիշ՝ փոքր ի շատե նշանավոր՝ կենտրոն չի յերևում։ Յերկրորդ՝ կարծեցյալ «Ցուրտավներից» և վոչ մեկը — վոչ Ախտալայի դիմաց գտնվող եռան

*) «Նախիդուբի»-ի նկարագրությունը տես՝ Ս. վ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, II, 92-93)։

վանքը, վոչ Կամենկան, վոչ Ջուրտաղետը և վոչ էլ Մանգլիսի չրջակայքը — կլիմայական հատկություններով սկի չեն համապատասխանում այն միանգամայն սոսկալի պատկերին, վորի մանրամասն նկարագրությունը տալիս է մեզ Շուշանիկի վկայաբանության վրացական բնագիրը։

Բացի դրանից պարզվեց, վոր նույն բդեշխները (պլուխաչնները) ունեցել են և մի ուրիշ բնակավայր, ուր նրանք, հավանական և, «քոչելիս» են յեղել ամառվա ամիսներին իրենց ամբողջ դերդաստանով, մերձավորներով, ծառաներով ու տավար-վոչխարով, և այդ յերկրորդ բնակավայրն (յայլան) և այժմյան Վերին-Ծալկայի հունական Ավրանլո ‖ Աբլանլո դյուղը, վորը, յերբեմն, ըստ VI դարու քարտեզիչ Աբիբոս Նեկրեսեցու վկայաբանության (Սարգիս Կակաբածի, Ասորի հայրերի վարուց նախատիպերը, վրացերեն, Տփղ. 1928, եջ 44-45), «Ռեխա» և կոչվել՝ լինելով VI դարում բդեշխների (ընագրում սխալմամբ «մարզպանների») բնակատեղը իր հակայական «մեգալիթիկ» կամ «կիկլոպյան» (աչկատարյան) սիստեմի բերդաքաղաքի ավերակներով, ուր ամփոփված է «Աբիբոս» կոչված վանքը (ըստ Վախուշտի) և նույնպես՝ ինչպես և Առբիլոն՝ ջրաբաշխական ամբողջ սիստեմով։ Այդ «Ռեխա» անունն է, վոր այժմ կրում է Ավրանլոյից վերև, Քրամի ձախ ափին, գտնվող դյուղը։ Մյուս կողմից, հիշատակելի յե, վոր նույն Քրամի ձորը Ավրանլո ‖ Աբլանլո — Ռեխայի չրջանում Վախուշտի քարտեզում (XVIII դար) կոչվում և «Սապիտխախչո» (ուղիղ՝ «Սապիտխաչո»), այսինքն բդեշխական, վորի նշմարքը մինչև որս հասել է մեզ նույն Վերին-Ծալկայի Բուրնաղեթ դյուղի վերևից գտնվող և «նախապատմական» զույգ մեհնիրներ պարունակող մի վայրում, վոր հայերեն, հունարեն և Թյուրքերեն «Սապիտաղե» և կոչվում և վորը, անկասկած, նույն վրացերեն «Սապիտխախչո» — «Սապիտխաչո»-յի ուղղյն արտասանությունն է՝ նոր քարտեզներում Забатагджа — «Ջաբատաղջա»-յի վերածված այս «Սապիտաղճա»-ն այժմ հայոց Ղզլ-քիլիսա դյուղի «յայլանն» է ներկայացնում)։ Վերջապես, Ռեխա — Սապիտաղճայից վոչ շատ հեռու գտնվում է և «Գուջարեթի» կոչված ավանը՝ «Գուջարեթի» ձորով, վոր, անկասկած, վաղեմի «Դուդարեթի»-ի, այսինքն «Դուդարք»-Գոգարդի՝ արտաքին - Թյուրքական հորջորջումը պիտի լինի (համմ. Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Спб. 1908, стр. 425, прим. նաև՝ Իվ. Ջավախիշվիլի, Վրաստանի սահմանները, վրացերեն, Տփղ. 1919. եջ 16)։

Վոր «Ցուրտավ»-ը ջրաբաշխական սիստեմի հետ կապված յերբեմնի կենտրոնի և միաժամանակ «բիլդաղ»-ի անուն պիտի լինեն, ցույց է տալիս այն հանգամանքն էս, վոր ինչպես ինքը «Ցուրտավ» անունն, նույնպես և «Ռեխա»-ն (նույնիսկ այժմյան «Առբիլո»-ն, վոր «արխ», առու արմատն և պարունակում) կազմված են ջուր իմաստ ունեցող արմատներից. 1) վրաց «ցուրվա» լողալ՝ «Մուրվա» քամել (համմ. հայկ. ծոր, ծորակ. ծորան, ծորել, ծորենի, ծորում և այլն) և 2) ռուս. ре-ка, бе-ре-г, озе-ро, ру-чей, ру-сло, ру-салка, ры-ба, мо-ре, ов-ра-г, Рā Rã (Волга), Рехы; յեվրոպ. mare, rivus, rivulus, riviere, ruisseau, Renos ‖ Reyn, Rona և այլն (համմ. Սանսկր. ri-na)։ Հարցիս վերաբերյալ մանրամասնությունները տես մեր աշխատության մեջ՝ «Թրիալեթ-Ծալկայի անցյալից» (վրացերեն), վորը հանձնված է տպագրության։

Բ.

ԿՅՈՒՐԻՈՆ ՍԿՈՒՏՐԵՑԻ (ՍԿՈՒՐՏԱՑԻ)

(VI—VII Դ.Դ.)

Խոսելով Վրաց Կյուրիոն (Կիրիոն) կաթողիկոսի մասին, որը ծագումով Ջավախքի Սկուտրի գյուղից էր, և տալով նույն Կյուրիոնի կենսագրությունը ըստ «Դիրք թղթոց»-ի և Ուխտանեսի պատմության, Հ. Ներսես Ակինյանը իր հատուկ ուսումնասիրության մեջ՝ «Կիւրիոն կաթողիկոս Վրաց. Պատմութիւն հայ-վրացական յարաբերութեանց երկրորդ դարու մէջ» (Ազգային մատենադարան, Կ, Վիեննա 1910) համապատասխան ժԹ գլուխ («Կիւրիոն իբրև մատենագիր») առանձնապես կանգ է առնում Կյուրիոնի գրական գործունեության վրա՝ Հարց տալով՝ «արդեօք ստացած լուսնական կրթութիւնն և այն պաշտօնները, զորս առանձնից նա այլ և այլ ժամանակներ, չընծայեցի՞ն առիթ գրականութեամբ ալ պարապելու, ըլլայ ինքնագրութեամբ, ըլլայ թարգմանութեամբ յուսարէնէ կամ հայերէնէ վրացերէն», Ակինյանը պատասխանում է՝ «դժբախտաբար, սակայն, վրաց հին գրականութենէ շատ քիչ բան ծանօթ ըլլալով՝ ոչինչ կրնանք ըսել այս մասին ստուգութեամբ։ Բայց իւր գրական գործունէութենէն ունինք այլ և այլ նշխարքներ Հայ Մատենագրութեան մէջ, որոնք բաւականաչափ կը պարզեն իւր ընդունակութիւնն այս ճիւղին մէջ ալ։ Այս նշխարքները իւր Թղթակցութիւններն են, պահուած Թղթոց գրքին մէջ և Ուխտանէսի քով» (եջ 261—262), «Յայսոր այս Թղթակցութեանց ոչ վրացերէնը գտնուած է և ոչ ստորերէնը», — ասում է Ակինյանը, և ապա շարունակում. «Բայց ապահովապէս վրացերէն գոյութիւն ունէին երբեմն*), գոնէ առաջին Թուղթը Մովսէս կաթողիկոսին Թղթին հետ ժ. դարուն վրացերէն կը գտնուէր*, թարգմանուած, ինչպէս կը կարծեմ, հայերէնէ. այնպէս որ մեզ հասած օրինակը

*) Ընդգծումը մերն է։

(առ Ուխտանէսէ) յետս թարգմանութիւն (Bückübersetzung) է լոկ» (եջ 262—263)։

Դասելով Կյուրիոնին վրաց գրական գործիչների (մտավորականների և մեկնաբան-թարգմանիչների) շարքը և տալով, ինչպես և Ն. Ակինյանը (թեև սրանից բոլորովին անկախ) նրա՝ Կյուրիոնի՝ կենսագրության փորձն ըստ Ուխտանեսի, Կորն. Կեկելիձեն (Վրաց գրականության պատմություն, I, 124—125) առանձնապես մատնանշում է այն փաստը, որ Կյուրիոնը «գրագրություն է ունեցել Յերուսաղեմի և Հռոմի հայրապետների հետ» Բաղկեդոնի ժողովի քրիստոսաբանության (քրիստոլոգիայի) հարցի շուրջը և, ի միջի այլոց, Հռոմի պապին դիմել է նեստորականներին վերաբերյալ հարցով, ի հետևումն որի Գրիգոր I պապից ստացել է ընդարձակ պատասխան Epistola S. Gregorii I Qurino vel Quirico Episcopo et ceteris Episcopis in Hybernia catholicis վերնագրով, որ հասել է մեզ (*P. Michel Tamarati*, Histoire du catholicisme en Géorgie avec les documents justificatifs du XIII-e au XX siecle, Tiflis 1902, p. 575—577)։ Իր տեսությունը Կ. Կեկելիձեն վերջացնում է հետևյալ չեղրակացությամբ. «Մի խոսքով, Կյուրիոնն առաջին վրաց գրողն է, որը անկախ պայքար է մղել նեստորականության-մաքրնակության դեմ, թեև նրա երկասիրությունները մեզ չեն հասել (op. cit., 125)։

Ի հարկե, ցավալի չի, որ այնպիսի հնագույն հեղինակի գրություններից, ինչպիսին է Կյուրիոնը, մեզ մի բան չի մնացել վրացիների լեզվով, որից մենք կարողանայինք ուսումնասիրել Հայաստանի և հայերի մասին նյութեր քաղելով [1])։

---

1) Մի քանի խոսք Կյուրիոնի ծննդյան տեղի՝ Ջավախքի Սկուտրի գյուղի մասին։ — Այժմ Ջավախքում «Սկուտրի» անունով գյուղ չկա, բայց կա «Կոռելիա», որը գուցե նույն «[Ս]կո[ւ]տրի»-ի հետագա ձևափոխությունը լինի։ Դեպ, մատնանշելի չի նաև այն, որ Կյուրիոնը, իբրև թունդ քաղկեդոնիկ, հայ հակաքաղկեդոնիկների առելությունն էր գրավել այն աստիճանի, որը նույնիսկ Սկուտրի գյուղից նրա ծագումը, ասոցիացիայով Սկարիովտացի Հուդային հիշեցնելով՝ նրա հակառակորդները մատնի փոթաթան էլեն դարձրել։ Ցավ այդպիսով միանգամայն հասկանալի չի Ուխտանեսի հետևյալ ընորոշումը, որը նա տալիս է Կյուրիոնին. «զոր մերժեալ և հերձեալ հետացոյց [զՎիրս] ի մէնջ Կիւրիոն Սկուտրացի՝ հանդոյն և հաւասար լեալ Յուդայի Սկարովտացւոյ» (Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, եջ 35)։

4092-39

Գ.

ԱՆԱՆՈՒՆ (IX Դ.)

«ՎՐԱՑ ԴԱՐՁԻ [ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ]»

«Վրաց (Քարթլիի) դարձը» կամ «Վրաց (Քարթլիի) դարձի պատմութիւնը», վրացերեն «Მოქცევაჲ ქართლისაჲ», resp. «Քարթլիս մոքցևա» կոչվածը, վրաց գրականութեան պատմութեան մէջ նուէն նշանակութիւնն ունի, ինչ որ «Հայոց դարձի պատմութիւնը» կամ «Ագաթանգեղայ պատմութիւնը» հայ գրականութեան պատմութեան մէջ։ Այն հասել է մեզ երկու վարիանտով, որոնցից մեկը 973—976 թ. թ. գրված Շատբերդի վանքի հայտնի ժողովածուի մէջն է (այս պատճառով էլ կոչվում է «Շատբերդի վարիանտ»), իսկ մյուսը՝ համեմատաբար աւելի ուշ ժամանակվա, այսպես կոչված Ձեղիշի վանքի ձեռագրում (որն ըստ այսմ «Ձեղիշի վարիանտ» է կոչվում)։ «Պատմութիւնը» բաղկացած է երկու մասից. առաջինը ներկայացնում է իրենից «Վրաց դարձի» ժամանակագրականը կամ քրոնիկոնը, իսկ յետդարը՝ հատկապես ս. Նունեայ (Նինոյի) վարքը, վորոնք, հավանական է, տարբեր հեղինակների կազմածն են, սակայն մեկի ձեռքով է մի հավաքած. յուրաքանչյուր մասն, իր հերթին, պարունակում է, անշուշտ, հնագույն գրվածքներ այլևայլ հեղինակների (որինակ վոմն Գրիգոր սարկավագի VII դ., վորը, համենայն դեպս, «Դարձի պատմութեան» հորինող չի կարող համարվել. և այլն), վորոնք, սակայն, նրանից անկախ դեռ հայտնագործված չեն։ Յերկու մասերից և վոչ մեկը մեծ պատմական արժեք ունեցող գրվածքներ չեն ներկայացնում, վորովհետև լի են սխալներով, անաքրոնիզմներով և այլն։ Հրատարակվել է «Վրաց (Քարթլիի) դարձի պատմութիւնը» մի քանի անգամ։ Սկզբներում, յերբ այն հայտնի էր միայն՝ Շատբերդի ձեռագրում, նրա բնագիրը փոքրիկ ուսումնասիրութեամբ և ծանոթութիւններով հանդերձ լույս ընծայեց

Ն. Թաղայեվիլին՝ առաջին մասը ժողովածուի մեջ «Յերեք պատմական քրոնիկա» (վրացերեն), Տփղիս 1890, էջ 1—115, իսկ յերկրորդը առանձին գրքուկով՝ «Ս. Նունեյի վարուց նոր վարիանտը կամ վրաց դարձի [պատմութեան] յերկրորդ մասը» (վրացերեն), Տփղ. 1892, էջ 1—74։ Նույն 1892 թվին Թ. Ժորգանիան նորից հրատարակեց «Դարձի» միմիայն առաջին մասն իր աշխատութեան՝ «Քրոնիկանեբ»-ի I հատորում, էջ 11—79։ 1900 թվին վերոհիշյալ Ն. Թաղայեվիլին ներկայացրեց «Դարձի» ամբողջ տեկստի (այն և յերկու մասերի) ռուսերեն թարգմանութիւնը իր հայտնի աշխատութեան մէջ՝ վերնագրով Источники грузинских Летописей —Три хроники („Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. XXVIII, отд. I, стр. 1—116, և առանձին), ուր այն առաջին տեղն ունի գրված. I. Обращение Грузии (в христианство), իսկ անգլիացի հայտնի վրացագիտներ Marjory Wardrop and Y. O. Wardrop լույս ընծայեցին «Դարձի» յերկրորդ մասի, այն է Ս. Նունեյի վարքի, անգլիերեն թարգմանութիւնը՝ Life of. st. Nino („Studia Biblica of Ecclesiastica", Volume V, Part. I, Oxford 1900 p. p. 1--88). Ձեղիշի վարիանտը հայտնագործելուց հետո նույն Ն. Թաղայեվիլին «Դարձի» տեկստն ամբողջութեամբ կրկին հրատարակեց զուգընթացաբար՝ ըստ Շատբերդի և Ձեղիշի վարիանտների՝ սակայն առանց թարգմանութեան, իր ստվար աշխատութեան մէջ Описание рукописей «Общества распространения грамотности среди грузинского населения, т. II, Тифл. 1906 — 1912, стр. 708/710—727 (ա. մասը) և 727 – 805/813 (բ. մասը)։ Այսպիսով, այժմ մենք ունենք Շատբերդի վարիանտի ա. մասի յերեք, իսկ բ. մասի յերկու հրատարակութիւն, հանդերձ ռուսերեն թարգմանութեան յերկու մասերի ևս, և անգլիերենի՝ յերկրորդ միմիայն մասի, իսկ Ձեղիշի վարիանտինը միմիայն մի հրատարակութիւն՝ յերկու մասերինը՝ առանց վորևե թարգմանութեան։

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ով է «Դարձի» հեղինակն և յերբ է այն գրված, դրա մասին դեռ ևի վերջնական լուծում չկա։ Հեղինակի անունը կատարյալ մթութեան մեջ է։ Իսկ գրութեան ժամանակի վերաբերյալ գոյութիւն ունի մի քանի կարծիք. մինչդեռ հեղինակների մի մասն, այն է Ն. Թաղայեվիլին (Յերեք պատմական քրոնիկա, XCII—XCV) և Ս. Կակաբաձեն (Պատմական պրպտումներ, վրացերեն, Տփղ. 1924, էջ 56—92, К истории названия города Тифлиса, — «Исторический Сборник»

II, 1928, եջ 69—70), վերապրում և այն VII դարուն, մյուս մասն, այն և Խ. Ջավախիշվիլին (Հին վրացական պատմական գրականությունը, եջ 85—91, 73 - 85) և Կ. Կեկելիձեն (Վրաց գրականության պատմություն, I, 569 –579), համարում են այն IX դարու գործ, վերջինս նույնիսկ IX—X դ. դ. (համենայն դեպս. վոչ ուշ քան 882—912 թ. թ.)։ Հիշատակելի չե նաև «Դարձի» տարբեր մասերի նախատիպի մասին գոյություն ունեցող հետևյալ կարծիքները. ըստ Ս. Կակաբաձեյի (op. cit., 67—71), ա. մատենագրական հատվածը հավանական և հունարեն լիներ գրված 365—400 կամ 380—400 թ. թ., իսկ ըստ F. C. Conybeare-ի («Studia Biblica et Ecclesiastica», 1900), բ. մասը կարծես թե ասորերեն լիներ գրված։

Ստորև բերած քաղվածքների թարգմանությունը կատարված և համաձայն Ե. Թաղայեվիլու 1906—1912 թ. թ. հրատարակության։

Ա. ՄԱՍԻՑ

[ՎՐԱՑ ԴԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ]

Այն որվանից (Կոստանդիանոս կայսեր պարտվելուց 310 թ.) տասերորդ տարին[1] դնաց Հեղինե [կայսրուհին] Յերուսաղեմ [Քրիստոսի] պատվական խաչը փնտռելու, և տասնուչորսերորդ թվականին[2] մի ինչ վոր պատճառով փախուստի դիմեց արքունի կանանցից մեկը՝ անունով Հռիփսիմե, իր զայակով հանդերձ։

Յեվ նրա հետ գնվում եր վոմն գեղեցիկ գերուհի անունով Նունե (Նինո), վորի գործ[ունեյություն]ը հետազոտել եր Հեղինե թագուհին, և եր նա (Նունեն) իշխանուհի Հռոմից, վորը ինքն եր սկսել իր ճանապարհ[որդություն]ը՝ բուժելով [հիվանդներին]՝ և հասել Հունաստան. նա [ինքն] ուսուցանում եր իր իշխանուհի Հռիփսիմեյին։

Անցնելով ծովով՝ Հռիփսիմե, Գայանե, Նունեն ու նրանց ուղեկիցները մտան Հայքի (Սոմխիթի) սահմանները, Տրդատ (Թրդատ) թագավորի բնակատեղը, և բոլորը մարտիրոսացան այնտեղ[3]։

Մնաց միայն Նունեն, վորն ուղևորվեց հյուսիսային լեռների ուղղությամբ։

[ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ ՎՐԱՑ ԴԱՐՁԻՑ ՀԵՏՈ]

Յեվ թագավոր նստեց նրա (Բակուրի) յեղբայր Տրդատը (Թրդատը), իսկ յեպիսկոպոսապետ եր Ներսես (Ներսե) հայոց կաթողիկոսի Յոթ սարկավագը...

...Ապա պարսից թագավորի բդեշխ (պետախշ) Բրամ-խուարբոր-Ջարդը մտավ Տփղիս քաղաքաբերդն, և Քարթլին նրա հարկատու դարձավ, նույնպես և Հայքը (Սոմխիթը) և Սյունիքը և Վասպուրականը...

Յեվ նրանից (Փարամանից) հետո թագավորում եր Բակուրը և կաթողիկոսն եր Մակարը. այս պահին եր վազգեն բդեշխը (վարազեն պետախշը և Շուշանիկը վկայեց Յուրատավում...[4] Այս բանի որոք վերջ յեղավ վրաց (Քարթլիի) թագավորությանը...[5]

Պարսիկները տիրապետում եյին Քարթլիին և Հայքին և Սյունիքին և Վասպուրականին...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուրեմն 310+10=320 թ.
2. Ուրեմն 310+14=324 թ.
3. Անկախ «Վրաց դարձի պատմության»-ից, Հռիփսիմյանց և Գայանյանց պատմությունը գոյություն ունի վրացերեն ձեռագրեր վերնագրով. ա. իրրև մասն Գրիգոր Պարթևի վարուց (տես Ա. Меликсет-Беков, Грузинская версия Агафангелия и ее значение для грузинской историографии,—«Христ. Восток», т. IV 1915, стр. 155—170, հատկապես 168—169. Vita S. Gregorii Parthianensis, edidit Leo Melikset-Bek [Monumenta georgica, I, Scriptores ecclesiastici, № 2], Tiflis 1920), և բ. իրրև ուրույն վկայաբանություն Հռիփսիմեյի, Գայանեյի և այլոց (տես А. Цагарели, Сведения о памятниках грузинской письменности, т. I, в. 3, стр. 160, М. Джанашвили, Каталог предметам церковного музея грузинского духовенства, Тфл. 1914, стр. 1, Л. Меликсет-Беков, Новый список «Жития свв. Рипсимии, Гаянии и сподвижниц» на грузинском языке,—«Христ. Восток», т. III, 1915, стр. 313—314, Robert P. Blake, Catalogue of the Georgian Manuscripts in the Cambridge Universty Library,—«Harvard Theological Review», vol. XXV, July 1932, Number 3. p. p. 216, 220—221. E. Takaichvili, Les manuscrits Géorgiens de la Bibliothéque Nationale de Paris, etc, Paris 1933 p. 26):

Ի դեպ, անհրաժեշտ և ժամանակին, վոր «Հռիփսիմյանց» հիշատակության մասին վրաց դարձի պատմության մեջ՝ գոյություն ունեն տարբեր կարծիքներ. վոմանք կարծում են, վոր սա արտահայտություն է հնագույն ավանդության, ըստ վորի հայերն ու վրացիները քրիստոնեացել են Գրիգոր Պարթևի քարոզությամբ, թեև ինքը Գրիգորը «Դարձի» պատմության մեջ սկի չի հիշվում, մինչդեռ նա ծանոթ է, ինչպես իր տեղում կտեսնենք, Աբսեն Սափարացու «Վրաց

և Հայոց բաժանման» մեջ, ուր, մյուս կողմից, Հռիփսիմյանց մասին ոչ մի հիշատակություն չկա, իսկ մյուսները այն կարծիքին են, որ սա հետագա դարերում հորինված դասակարգային-իդեոլոգիական վորոշ մթնոլորտի արտահայտություն է, ի հարկե, քաղկեդոնականության հաղթանակների հետ կապված (համաձայն Կեսարիա-բյուզանդական թեորիայի)։ Համմ. հինգերորդ գլխի 7 ծանոթություն։

4. Ըստ այսմ, Շուշանիկի վկայությունը վերագրվում է VI դարուն, վոր, ի հարկե, անաքրոնիզմ է (համմ. Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականությունը 90)։

5. Համաձայն 532 թ. «Հավիտենական դաշնագրության», (Իվ. Ջավախիշվիլի, վրաց ժողովրդի պատմություն, I, 1928, եջ 226—227)։

Բ. ՄԱՍԻՑ

[Ս· ՆՈՒՆԵՆ ՀԱՅՔՈՒՄ]

Հասնելով կիսաճի յերկրի Բուդի* ավանը, [Նունեն] հիվանդացավ և ապա վախճանվեց...

Իսկ [մինչ նրա մահը] ժողովեցան նույն յերկրի թագավորն և իշխան-իշխանուհիները, և ժողովրդի հոծ բազմություն...

Սալոմե Ուջարմայի տիկինն (թագուհին) և Պերոժավը Սյունեցին և նրանց հետ գտնվող բոլոր իշխանները դիմեցին Նունեին հարցնելով. «Ով ես դու և ինչպես յեկար մեր յերկիրը...»

Ապա Նունեն պատասխանեց. «...յեթե ցանկանում եք գիտենալ [թե ինչպիսի եր] իմ՝ ձեր խեղճ ազախնու՝ ուղին, կասեմ...»...

Ապա Սալոմե Ուջարմոյեցին և Պերոժավը Սյունեցին բերին թանաք ու գրիչներ, և Նունեն սկսեց պատմել. իսկ Նրանք գրում էին։ Նա (Նունեն) սկսեց պատմել իր ծնողների մասին...

«...Իսկ պատրիարքն իմ մորս հանձնել եր թշվառ և հիվանդ կանանց ծառայելու, իսկ յես ծառայում էլի պատահ հայուհի Նիափորա**) Դվինեցու մոտ յերկու տարի...

«[Այդ Նիափորան, ի միջի այլոց,] ինձ ասաց. «Հյուսիսային յերկիրը [՝ուր Մցխեթում Քրիստոսի շապիկն և թաղված,] գտնվում և Հայոց [յերկրի] լեռնաստանում. այն հեթանոս յերկիր է, հուշնաց և խուժկաց պետությանն սահմանակից...

«[Կոստանդիանոս կայսեր մկրտվելուց] յոթերորդ տարին տեղի ունեցավ Նիկիո ժողովը և մեր վախճանը Հունաստանից։ Հռիփսիմե տիկինն (թագուհին) և Կայանե զայակը, և հիսուն հոգի [ուրիշները] յելանք առաջին ամսվա տասն և հինգին։

*) Var. Բոդիսի։ **) Var. Միափորա։

«Յեվ յեկանք Հայքի (Սամխեթի) սահմանները Տըղատ (Թրղատ) թագավորի պարտեզը, ուր նրանք և սպանվեցին առաջին ամսվա յերեսունին՝ ուրբաթ որը։

«Իսկ յես Ճեացի վարդենիի փշերի մեջ... և յես յեկա հասա Ուլոպորեթ*[1], ուր և մեծ թշվառության մեջ անցկացրի ձմեռը։

«Յեվ չորրորդ ամսին անցա Ջավախքի (Ջավախեթի) լեռների կողմը, վորպեսզի տեղեկանամ, թե ուր և Մցխեթը...»[2]...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուլոպորեթի դիրքը դեռևս անհայտ և, համենայն դեպս, այն չպետք է շփոթել Ալան-Ուրբան-Ալբանոպոլիս,- Ուրբանոպոլիս-Հորբոնորոլիս-Արևբան-Աղբակի հետ։

2. Առհասարակ «Վրաց գարձի պատմության» մանրամասնությունները նորագույն լուսաբանությամբ կարելի յե գտնել Կորն. Կեկելիձեյի համապատասխան աշխատության մեջ, «Վրաց գարձի դիխավոր պատմա-ժամանակագրական խնդիրները», վրացերեն, — «Միմոմխիլվելը», I, 1926, եջ 1 — 53, գերմաներեն ռեզյումեյով. նույնը գերմաներեն՝ K. Kekelidze, Die Bekehrung Georgiens zum Christentum [«Morgenland», Darstellungen aus Geschichte und Kultur des Ostens, Heft 18], Leipzig 1928, S. S. 1—51։ Նաև Իվ.Ջավախիշվիլի,Վ րաց ժողովրդի պատմո թյունը, վրացերեն, I, 1928, եջ 162—215 (ուր, ի միջի այլոց, կարելի յե գտնել և Կեկելիձեյի յեզրակացությունների քննադատություն)։

*) Var. Ուլիպորեթաւ

Գ.

ԱՆԱՆՈՒՆ (IX Դ.)

«ԿՈՆՍՏԱՆԴ-ԿԱԽԻ ՎԱՐՔԸ»

Կոնստանդ-կախը վրաց այն իշխաններից էր, որը «Ափխազաց» թագավորի զորաբանակումն էր դանվում Բուղայի 853 թվի ոգոստոսյան արշավանքի պահին Քարթլիի վրա և որին՝ Տփղիսի ամիլա Սահակի պարտվելուց հետո, նույն թվի 26 ոգոստոսի ձերբակալեցին ու տարան Տփղիս Բուղայի մոտ, իսկ այստեղից Ա. Ասիայի Սամարիա քաղաքը, ուր և գլխատեցին նույն 853 թվի 10 նոյեմբերին։

Յեվ ահա այն պատմական անձնավորության «վարք»-ն է, որը գրվել է նրա ժամանակակից անանուն հեղինակի կողմից, Բյուզանդական «Թեոդորա թագուհու որդք», մինչ վերջինիս Միքայել որդու չափահաս դառնալը, ուրեմն 853—856 թ. թ. (Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմություն, I, 566—567. հմմ. Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականությունը, 52—58)։

«Վարք»-ի մեջ առաջ բերած տեղեկությունները միանգամայն վստահելի են այն տվյալներին, որ տալիս է Ատենի (Գորու մոտ) Սիոն հինավուրց տաճարի 853 թվի հազվագյուտ արձանագրությունն (տես И. Джавахов, К вопросу о времени построения грузинского храма в Атене по вновь обследованным эпиграфическим памятникам.—«Христ. Восток», т. I 1912, стр. 277—285) ու Թովմա Արծրունի (Պատմությիւն տանն Արծրունեաց, գլուխ Գ, գլուխ ԺԱ.), մասամբ նաև արաբացի մատենագիր Ալ-Տաբարիի (հմմ. Բ. Խալաթյանց, Արաբացի մատենագիրները Հայաստանի մասին [«Ազգային մատենադարան», ԶԴ], Վիեննա 1919, էջ 98—101)։

Ատենի արձանագրությունն ուղղակի նշում է, որ «ոգոստոս ամսի 5-ին, շաբաթ որը, քրոնիկոնի 73 [=780+73=853],

արաբական 239 թվին, Բուղան ավերեց Տփղիս քաղաքն և ձերբակալեց ու սպանեց Սահակ ամիրային, և նույն ոգոստոս ամսվա 26-ին, նույնպես շաբաթ որը, Զիրաքը ձերբակալեց կախային ու նրա վորդի Թարխուջին» (И. Джавахов, op. cit., 278—279, հմմ. Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, II, Տփղ. 1914, էջ 376)։

Թովմա Արծրունուն (հրատ. Ղուկասյան Մատենադարանի №ԺԶ, Տփղիս 1917, էջ 304—305) ևս ծանոթ է «կախայ վերին աշխարհին», վորի մասին պատմագիրն ասում է, թե ինչպես նա և «Սողովմոն որ Սևորդին ճանաչի»՝ չկամենալով ուրանալ «աստուածային օրինացն»՝ «մեծաւ համարձակութեամբ» պատասխանում էին թագավորին, վորի հրամանով չենթարկվեցին չաբչարանքի ու «նահատակեցան արիաբար». «և եղեալ ի վերայ վայրին զերանելին Սողոմոն, —ասում է պատմագիրը (էջ 305—306),—և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ), զի զոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին»։ Ապա պատմվում է, թե ինչպես «նույն ժամայն էլ հրամանն յարքունուստ, զի զսուրբն Սողոմոն ի նմին վայրի սպանցեն... իսկ զսուրբ Կահայ հրամայեաց սրով սպանանել» և այլն։*

Կոնստանդ-կախի «վարք»-ի վրացերեն բնագիրը հրատարակել է Մ. Սաբինին («Վրաստանի դրախտը», էջ 363—370*). Նույնը հրատարակած ունի և «վարք»-ի ռուսերեն թարգմանությունը (Полное жизнеописание святых грузинской церкви, ч. III, Спб. 1873, стр. 89—96)**։ Դժբաղդաբար վերոհիշյալ միակ հրատարակությունը զուրկ չէ ակներև աղավաղումներից, վորոնց մեջ առանձնապես աչքի է ընկնում «կախա» անվան փոխարեն «կացի» բառի ընթերցումը, ինչպես վաղուց մատնանշեց Y. Marquart-ն (Osteuropäische und Ostasiatische Streifzüge, Leipzig 1903, S. 413, B. 1), թեև վերջինիս միանգամայն իրավացի ուղղումը միմիայն նորերս ընդունելություն գտավ վրացագետների կողմից (տես՝ Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականությունը, էջ 54, ծան. հմմ. И. Джавахов, К вопросу о времени построения грузинского храма в Атене etc. стр. 283, прим. 1).*

*) *Անկասկած, նույն «կախայ»-ն է։*

** *Իսկ P. Peeters-ը տվեց վրացերեն տեկստի լատիներեն թարգմանությունը համապատասխան ուսումնասիրությամբ հանդերձ* (De S. Constantino, martyre in Babylonia, commentar. praevius.—«Acta sanctorum», Novembris, t. IV. Bruxellis 1925, p. p. 363—370).

չ[ը] վոր Marquart-ի առաջարկած ընթերցման հիման վրա մեծ հնարավոր դարձավ Կոնստանդ վկային նույնացնել Կախ իշխանի հետ, իսկ «Կոնստանդ» և «Կախա» անուններն ընդունել իբրև մի ևնույն անձի՝ առաջինը մկրտության, իսկ յերկրորդը հեթանոսական՝ անուններ։

Ապա Կ. Կեկելիձեն վերջերս իր հատուկ հոդվածում (Կոնստանդ Կախի մարտիրոսություն ու ոճ լինելը, վրացերեն, — «Bulletin de l'Université de Tiflis», VII, 1926, եջ 160—173) մի շարք սրբագրություններ մտցրեց վկայաբանական տեկստի մեջ, ապացուցելով միաժամանակ, որ հնագույն ձեռագրերում վոչ թե «Կոնստանտին Կախա» յե կարդացվում, ինչպես սովորաբար ընդունված եր, այլ «Կոնստանդ Կախ» (Կոնստանտի Կախի)։

Մատրև բերած հատվածի թարգմանությունը կատարված և համաձայն Մ. Սաբինինի հրատարակության։

[ՀԱՅ ԻՇԽԱՆՆԵՐԸ ՍԱՄԱՐԻԱՅՈՒՄ]

....[Տփղիս բերելուց] մի քանի որից հետո կապեցին նրան (Կոնստանդ-Կախին) զարհուրելի յերկաթե կապանքներով և հանձնեցին Բաբելոնյան[1] յերկիրը՝ Սամարիա կոչված քաղաքն, [ուր և] ներկայացրին իսմայելացվոց թագավորին, վորի անունն եր Ջաֆար՝ վորդի Աբրահամի,.... վորը հրամայեց յենթարկել նրան (Կախին) սաստիկ բանտարկության և ուղարկեց նրա մոտ այն յերկու իշխաններին, վորոնց գերելով բերել եյին Հայքից (Սոմխեթից) և վորոնք՝ Քրիստոսին ուրանալով՝ պատվելի եյին զարձել թագավորից[2]. մոտենալով յերանելիին՝ նրանք (իշխանները) ասացին, «...Մի լինիր դյուրագրգիռ...»։

Ապա սուրբը Կոնստանդը պատասխանից նրա մոտ ուղարկած հայերին՝ «....հեռացեք լինճանից...»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Բաբելոն» և կոչվում վրաց հին գրականության մեջ Բաղդադը։ Այսպես և բացատրված «Բաբելոն»-ը, ի միջի այլոց, Մխիթար Սեբաստացվո քերականության «ցանկի» հիման վրա կազմված «Հայ-վրացերեն բառգրքում» (XVIII դարու), վորը առայժմ 6 ձեռագիր որինակով և հայտնի մեզ։

2. Թովմա Արծրունին (Պատմութիւն տանն Արծրունեաց, Տփղիս 1917, եջ 310) մի առ մի հիշատակում է այն իշխաններին, վորոնց «խաղացուցին ի Սաւատայ», այն է, «եաէր Սմբատ սպարապետ Հայոց, և Գրիգոր Բուբդկայ որդի Մամիկոնէից տէր, և Աարոնեսէն Աղուանից իշխան, և Գրիգոր Սիւնեաց տէր, և Մահ Սմբատայ որդի, Շաքէոյ տէր, որ զԲաբանն կալաւ, և իշխանական վաճառ վայոց ձորոյ տէրն, և Փիլիպպէ իշխանն Սիւնեաց, և Ներսէհ իշխան Գաբրիթիայենից, և ապա եւայլ Ազուանսէք»։ Պարզ է, ուրեմն, վոր Կոնստանդ-Կախի «Վարք»-ի մեջ հիշատակված արաբացվոց թագավորին հավատարիմ յերկու հայ իշխաններն, անկասկած, վերոհիշյալ իշխաններիցն պիտի լինեյին։

ե.

ԱՐՍԵՆ ՍԱՓԱՐԱՑԻ (IX Դ.)

«ՎՐԱՑ ՅԵՎ ՀԱՅՈՑ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»

Արսեն Սափարացուն, վորը վրաց գրականության մեջ ավելի «Արսեն կաթողիկոս» կոչումով և հայտնի, վոմանք համարում եյին X դարու, իսկ վոմանք XI կամ XIII դարու գործիչ. իսկ պրոֆ. Ֆրանց-Նիկ. Ֆինկը (*Franz Nikolaus Fink*, Die georgische Literatur,—«Die Kultur der Gegenwart», I. 7. Sonderabdruck Berlin und Leipzig 1906, S. 306) քաշեց նրան նույնիսկ XIV դարը։ Վերջերս վրացագիտական գրականության մեջ այս հարցին վերաբերյալ նկատելի յե յերկու հոսանք, վորոնցից մեկը դասում է Արսենին IX դարու գործիչների շարքը, իսկ մյուսը՝ VII դարու։

Դեռ ելի 1920 թ. հունվարի 23-ին Մոսկվայի հնագիտական ընկերության կովկասյան ճյուղի հրապարակական նիստին կարդացած մեր զեկուցման մեջ Трактат грузинского католикоса Арсения (IX века) о разделении Грузии и Армении, как памятник армяно — грузинских церковных отношений, *մենք ապացուցեցինք, վոր Արսենը* IX *դարու հեղինակ է (այս զեկուցման մասին տես* «Известия Кавказского Отделения Московского Археологического Общества», вып. VI. Под редакцией *Л. М. Меликсет-Бекова и Д. П. Гордеева*, Тфл. 1921, стр. 55): *1921 թվին յերկրորդ բարեփոխված հրատարակությամբ լույս ընծայած իր «Հին վրացական պատմական գրականությունը (V—XVIII դ. դ.)» աշխատության մեջ Իվ. Ջավախիշվիլին առաջին անգամ վրաց գրականության մեջ փորձեց վերագրել Արսենին* IX *դարուն (եջ 60—63), վորին ապա հետևեց Կորն. Կեկելիձեն՝ 1924 թվին հրատարակած իր «Վրաց գրականության պատմության» I հատորի մեջ (եջ 134—135). Միաժամանակ՝ նույն 1924 թվին Սարգիս Կակաբաձեն իր հատուկ գրվածքում «Յոբրը և գրված Վրաց և Հայոց*

բաժանման մասին յերկասիրութիւնը» (Պատմական պրպտումներ, վրացերեն, եջ 38—55) և ապա մի շարք այլ գրութիւններում (Պատմութիան ժողովածու, վրացերեն, I, 1928, եջ 124, Ասորի հայրերի վարուց նախատիպերը, վրացերեն, 1928, եջ 11) արծարծեց այն գրույթը, որ Արսենը VII դարու գործիչ է։

Ինչպես 1920 թվին, նույնպես և այժմ մենք այն կարծիքի յենք, որ Հայոց և Վրաց բաժանման պատմութիան հեղինակ Արսեն կաթողիկոսը IX դարու Մեծն Արսեն կոչվածն է՝ Գրիգոր Խանձթեցու (վախճանված 861 թ.) աշակերտը։ Այդ յերևում է հետևյալ տվյալներից։

Արսեն կաթողիկոսի յերկը կրում է հետևյալ ընդարձակ վերնագիրը. «Մեր սուրբ հոր՝ Մցխեթի կաթողիկոս Արսեն վարդապետի, որը ծագումով Սափարայի շրջակայքից էր, որ է Սամցխե, ճառ Վրաց (Քարթլիի) և Հայոց (Սամխիթի) բաժանման մասին»։ Այսպիսով, այս վերնագրից կարելի յե յեզրակացնել, որ Արսենը ծագումով Սամցխե, այսինքն Մեսխք (ապագայում Ախալցիխեի) գավառից է յեղել։ Սա անկասկած, այն Արսենն է, որ քանիցս հիշատակված է Գրիգոր Խանձթեցու «Վարք»-ի մեջ (տես Георгий Мерчул. Житие св. Григория Хандзтийского, грузинский текст, введение, издание, перевод *Н. Марра* [„Тексты и Разыскания по армяно-грузинской филологии", VIII] Спб. *1911*)։ Ուսուցչով Գրիգորի բարեկամների՝ Թեոդորոսի և Քրիստափորի մասին, «Վարք»-ի հեղինակ Գեորգ Մերչուլը (վախճ. 951 թ.) նկատում է, որ նրանք՝ «գալով Սամցխե՝ ասածու հրամանով աշակերտ վերցրին իրենց մոտ մեծն Մհերան (Միրյան) ազատի (ազնվականի) որդուն Արսեն անունով, որն ըստ արժանվույն կոչվեց մեծն Արսեն՝ կաթողիկոս վրաց (Քարթլիի) և Մցխեթի աթոռի անթառամ պսակ» (ibid., եջ վրաց. տեկստի եբ = ռուս. թարգմ. *100*, գլուխ XIX)։ Բայց Գեորգ Մերչուլը հաղորդում է Արսենի մասին ավելի մանրամասն տեղեկություններ։ Այսպես, նույն «Վարք»-ից մենք տեղեկանում ենք, թե ինչպես Արսենը՝ Սամցխեի «մեծ Մհերան ազատի (ազնվականի) որդին» նախ քան կաթողիկոսանալը առանձնած ուներ Ածղուրի յեպիսկոպոսական աթոռը և թե ինչպես նույն «մեծն Արսեն ապագայում յեղավ Վրաց (Քարթլիի) կաթողիկոս, Մցխեթի կաթողիկե յեկեղեցում՝ Քրիստոսի շապկի օթևանում» (ibid., վրաց. մե = ռուս. *119*, գլուխ XLII)։ Նույն «Վարք»-ից մենք տեղեկանում ենք նաև, թե ինչպիսի հանգամանքներում Արսենը դարձավ կաթողիկոս, ինչպես

բեկանվեցին առաջին ընտրությունները, որ՝ վրաց յեպիսկոպոսների ու Տեր Գուրամ Մեծն Մամիալոնի հակառակ՝ անց եր կացրել նրա հայր Մհերանը (Միրյանը) մխիթար Սամցխեյի ուժեղ ղեկավորության աջակցությամբ ումի քանի յեպիսկոպոսների ներկայությամբ, և թե ինչպես ծագեց անհրաժեշտություն հատուկ յեկեղեցական ժողով հրավիրելու յեպիսկոպոսների կանոնավոր թվի մասնակցությամբ, վորպիսի ժողովը, որ իսկապես հրավիրել եր հիշյալ Գուրամ Մամիալը, Գրիգոր Խանձթեցու կրակոտ ճառից հետո վորոշեց վավերացնել առաջին ընտրությունն Արսենի կաթողիկոսության, հաղորդելով, որ Արսենը «կամօքն աստուծո յե կաթողիկոս» (ibid., վրաց. մզ = ռուս. *121*, գլուխ XLII)։ Գեորգ Մերչուլը ապա մատնանշում է, որ այս Արսենը «փոխեց ուրախություն վրաց (Քարթլիի) բոլոր յեկեղեցիների վրա, վորովհետև հայրապետական աթոռը զարդարեց կատարելապես և [ինքը] զարդարվեց շնորհով» (ibid., վրաց. մթ = ռուս. *123*, գլուխ XLII)։ Ընդ սմին Գեորգ Մերչուլը ավելացնում է. «[Նա] կաթողիկոսեց քսան և յոթ տարի և ապա փոխվեց այս աշխարհից» (ibid)։

Այս բոլոր տեղեկությունները Գրիգոր Խանձթեցու «Վարք»-ից մենք առաջ բերինք միմիայն այն նպատակով, վորպեսզի կարողանանք վճռական արդյունք հնարավոր է այս «Վարք»-ում հիշվող Սամցխեյի Մհերան (Միրյան) ազատի (ազնվականի) որդի, մեծն Արսեն Մցխեթի կաթողիկոսին նույնացնել հայ-վրացական յեկեղեցական բաժանման պատմության հեղինակի հետ, վորը կոչվում է «Մցխեթի կաթողիկոս Արսեն վարդապետ, ծագումով Սափարայի շրջակայքից, վոր է Սամցխե»։ Ի նկատի ունենալով, որ «Սափարա»-ն, իրոք, Սամցխե (Մեսխք) յերկրամասն եր գտնվում, որ ապա մայրավանքն վերածվեց և այժմ էլ գոյություն ունի (Ախալցիխեյից մի քանի կիլոմետր հեռավորությամբ), այս հարցը մենք լուծում ենք դրական իմաստով։

Ինչ վերաբերում է այն հարցին, թե վոր ժամանակվա հեղինակ է Արսենը, սա շատ հեշտ լուծվում է նույն «Վարք»-ի տվյալներով։ Ըստ վերջինի, Գրիգոր Խանձթեցին ապրեց մինչև 861 թվականը, իսկ Արսենի մասին ասված է, որ նա Աշոտ Կյուրապաղատի մահվան թվին (826) 6 տարեկան հասակում մնաալ վանք, ուրեմն ծնված պիտի լիներ 820 թ., նաև այն, որ նա հայրապետեց 27 տարի։ Յեթե ի նկատի առնենք, որ Արսենը իբրև կաթողիկոս անձամբ ոծեց Խանձթայի մենաստանի հին յեկեղեցին դեռ ևս իր ուսուցիչ Գրիգոր Խանձթեցու կենդանության

որոք և, բայց դրանից, ներկա չեղավ վերջինիս թաղմանը, որ տեղի ունեցավ 861 թվին, իսկ կաթողիկոս կարող եր դառնալ, համաձայն եկեղեցական կանոնների, առնվազն 35 տարեկան հասակում, այն և մոտավորապես 855 թվին, միանգամայն հասկանալի չե, որ նույն Աբասենի կաթողիկոսության ժամանակաշրջանը 855—882 թ. թ. մեջ պիտի ամփոփել և ուրեմն «Վրաց (Քարթլիի) և Հայոց (Սամխիթի) բաժանման մասին» յերկասիրությունը գրված պիտի լինի ոչ ուշ քան 882 թ., ըստ Կորն· Կեկելիձեյի (op. cit., 137) հավանական և մինչև 862 թ.: Մի խոսքով, Աբասեն Սաֆարացին պիտի համարվի IX դարու յերկրորդ կիսի հեղինակ:

Այժմ տեսնենք, թե վեր ավյալների հման վրա չե Սարգիս Կակաբաձեն ապացուցում Աբասեն կաթողիկոսի VII դարու հեղինակ լինելը: Ըստ Ս. Կակաբաձեյի, հայ-վրացական յեկեղեցական բաժանման պատմության հեղինակը «VII դարու վերջին կաթողիկոսական աթոռի վրա բազմած՝ մինչ այժմ անհայտ Աբասեն Վրաց (Քարթլիի) կաթողիկոսը պիտի լինի» (Պատմական պրպտումներ, 1924 թ., եջ 55): Այսպիսի դրույթի դեմ հավանական այն և, որ Աբասենի «պատմությունն ընդհատվում և իբրև լրացել կաթողիկոսով (667—683 թ. ըստ Կիրակոսի, 667—677 թ. ըստ Ասողիկի) և Գրիգոր մարզպանի (+682) շրջանով» (ibid., 43): Ապա նույն Ս. Կակաբաձեն ավելացնում է. «Զարմանալի չի, թե ինչպես պատահեց, որ հեղինակը, յեթե նա 9-երորդ դարում եր ապրում, որը կուսակցորեն, կարելի չե ասել, շահագրգռված եր պատմությունը շարունակելու, ընդհատեց իր աշխատությունն մի այնպիսի անհարմար տեղում, մինչդեռ Հայոց յեկեղեցվո 8-երորդ դարու պատմությունը նրան ավելի ձեռնտու նյութեր եր տալիս, որինակ Հովհան կաթողիկոսի շրջանը, յերբ 726 թ. դումարվեց Մանազկերտի ժողովը, որը կրկին և արդեն վերջնականապես հաստատեց Հայոց յեկեղեցվո ընդունած դիծը» (ibid.): Մի ուրիշ տեղ իր այս կարծիքը Ս. Կակաբաձեն կրկնում է հետևյալ խոսքերով. «Այժմ պարզված է VII դարու վերջերում հայտնի գրող՝ Վրաց յեվ Հայոց բաժանման մասին յերկասիրությունն հորինող Աբասեն կաթողիկոսի դոյությունը: Հիշյալ յերկասիրությունը, բնագրում բերած տեղեկությունների համաձայն, հասցված է մինչ 680 թվականը: Այսու յենթադրելի չի, որ յերկասիրությունը գրված պիտի լինի մոտավորապես 685—700 կամ 690—700 թվականներին: Յեվ իրոք, իր ընդհանուր բնույթով, իր ներքին իմաստով և, վերջապես, ոճով ել յերկասիրությունը շատ լավ համապատասխանում է նշած շրջանին» (Ասորի հայրերի վարուց նախասիրերը, 1928 թ., եջ 11):

Ս. Կակաբաձեյի դրույթն ջրելու համար բավական և մատնանշել, որ, նախ՝ Աբասենի յերկասիրությունն ընդհատվում և վոչ թե VII դարու վերջերի դեպքերի արձանագրությամբ, այլ VIII դարու, յերկրորդ՝ նույն Աբասենը 726 թվի Մանազկերտի ժողովի մասին վոչ թե չի լռում, այլ վորոշակի հիշատակում և այն, ինչպես և Հովհան Ոձնեցուն, և յերրորդ՝ մի վորևե յերկասիրության VII կամ VIII դարով ընդհատվելը դեռ ելի չի նշանակում, վոր այն անպայման նույն VII կամ VIII դարու հեղինակի հորինված լինի (չե՞ վոր XX դարումն ևս կարելի չե գրել VII դարու պատմություն՝ չհասցնելով մինչ մեր որերը):

Վոր Աբասեն Սաֆարացին վոչ մի դեպքում չի կարող լինել VII (յեվ վոչ ել VIII) դարու հեղինակ, այլ մեծ մասն IX դարուն և պատկանում, կարելի չե ապացուցել նաև նրանով, վոր նրա յերկասիրությանն աղբյուր են ծառայել այնպիսի գործեր, վորոնք VIII դարումն են գրված:

Ինչպես իր ժամանակին Իվ. Ջավախիշվիլին (Հին վրացական պատմական գրականությունը, եջ 67) մատնանշեց, «Վրաց և Հայոց բաժանման մասին» յերկասիրության հեղինակը ձեռքի տակ և ունեցել զանազան աղբյուրներ, առաջին հերթին, բացի վրացերենից, հայերեն, նաև հունարեն, վորպիսիները նա, սակայն, չի հիշատակում: Վաղուց H. Goussen-ը (Die Georgische Bibelübersetzung, — «Oriens Christianus», VI, Roma 1906, S. 315) այն միտքն եր հայտնել, վոր նույն յերկասիրությունը շատ կտեղում շփվում և Combefis-ի հրատարակած Historia haeresis Monothelitarum-ի և մեծն Միքայելի «ժամանակագրության» հետ: Իսկ Ն. Ակինյանը (Կիւրիոն կաթողիկոս Վրաց, 289—290) կարծում է, վոր «Աբասեն հիմնուած է ընդհանրապէս... Narratio de rebus Armeniae գրութեան վրայ, որուն թէև այժմ միայն յունարէնն կայ, բայց եղած է երբեմն նաև հայերէնը»: Իսկ Narratio de rebus Armeniae-ն թեև ըստ նույն Ն. Ակինյանի (ibid., եջ 99, ծանոթ. 1) «է դարու բ. կիսէն կ'երևայ», բայց իրոք VIII դարու գործ է (S. Weber, Ueber die Versuche, den Verfasser der Invektiven gegen die Armenier: — Migne, Patrologia graeca 132, S. 1154 ff., zu bestimmen, — «Յուշարձան», Վիեննա 1911, եջ 175—180):

Առանձնապես հետաքրքիր է Աբասենի յերկասիրության՝ հայկական աղբյուրների հետ առնչության հարցը, վորի մասին մանրամասն խոսում է Իվ. Ջավախիշվիլին (Հին վրացական պատմական գրականությունը, 67—72):

Մատնանշելով միմիայն մի-երկու օրինակի վրա, երբ Արսենը վորևե վրացական կամ հունական աղբյուրների աղճատությանտակ է գտնվում, Իվ. Ջավախիշվիլին ասում է. «Ինչպես պարզվում է, մեր պատմաբանը (Արսենը), համենայն դեպս, գլխավորապես հայկական աղբյուրներով և ոգովիլ. վոր նա տեղյակ է հայերենին, հաստատվում է այն հանգամանքով, վոր Արսենը յերբեմն առաջ է բերում հայերեն բառեր, թեև վրացերեն էլ ուղիղ թարգմանված, որինակ՝ Ներսես կաթողիկոսին անվանում էին շուայ, վոր է հայերեն միջին, վարդան Մամիկոնյանին անվանում էին չոխախ, վոր է ուր» (էջ 67)։ Բայց նույն գիտնականը ուղում է ապացուցել էլ ավելին։ Նրա ասելով, «Արսեն կաթողիկոսի տեղեկությունները հաճախ միանգամայն համաձայն են հայ պատմագիրների տեղեկություններին, իսկ հաճախ նրա խոսքերը հաստատվում են առանց այլևայլության» (էջ 67)։

Գալով այն հարցին, թե հատկապես վոր աղբյուրներով է ոգովիլ Արսենը իր յերկասիրությունն գրելիս, նույն Իվ. Ջավախիշվիլին ասում է. «Իսկապես պարզվում է, վոր Արսեն կաթողիկոսը կամ գուցե նրա հայկական դրավոր աղբյուրները Բագրեվանդի ժողովին հետևող հայ կաթողիկոսների մասին վոչինչ վատ բան չեն ասում, նույնիսկ դովասանությամբ էլ են նրանց զարդարում, իսկ հայ պատմագիրները, վորոնց յերկասիրությունները պահպանվել են, չեթե այս յերեցապետներին հիշատակում են ամոթալիից զատ վոչինչ լավ բան չեն ասում։ Հավանական է, վոր վրաց պատմագիրն էլ, կամ գուցե նրա աղբյուրը, կողմնապահությամբ են վերաբերում իր դավանակիցներին, իսկ հանդեպ միաբնակ հայ պատմագիրների՝ իրենց դավանական հակառակորդների՝ ցույց են տալիս անվստահելի վերաբերմունք» (էջ 70)։ «Իր հերթին, — շարունակում է նույն գիտնականը, — Բագրեվանդի ժողովին հետևող «ուղղափառ» վրաց պատմագիրը և, հավանական է, նրա աղբյուրն էլ սկի չեն վստահանում հակառակորդ «հերձվածող» միաբնակ հայ յերեցապետներին. շահամոլությունից ու քաղաքական բռնադատությունից կամ կողմնապահությունից զատ Արսեն կաթողիկոսն ու նրա աղբյուրները նրանց գործունեության և ուղղության մեջ ուրիշ վոչինչ չեն տեսնում» (էջ 70—71)։ Ապա, քննության յենթարկելով Արսենի հաղորդած տեղեկությունները հայ միաբնակ կաթողիկոսների մասին՝ նա ասում է. «Պարզ է, վոր այս տեղեկություններն վրաց պատմագիրը քաղած պիտի լինի հայ պատմական աղբյուրներից, սակայն այս պատմական

աղբյուրներն անպայման Բագրեվանդի ժողովին հետևող «ուղղափառ» հայ հեղինակների գրածը պիտի լինի, և հենց այս պատճառով է, վոր այնտեղ Բագրեվանդի ժողովին հակառակ միաբնակ հայ հոգևորականության այսպիսի սուորացուցիչ տեղեկություններով է առատ զարդարված. [իսկ] քանի վոր մեզ հասած հայ պատմական գրականության մեջ, վորն ամբողջապես միաբնակ հեղինակներին է պատկանում, այսպիսի տեղեկություններ չեն գտնվում, հետևում է յենթադրել, վոր նրանից հետո, յերբ հայ միաբնակությունը վերջնականապես հաղթող դուրս յեկավ, հակառակորդ յերկրնակ քաղկեդոնիկ դավանության հետևողների յերկասիրություններն խպատ վոչնչացվել են» (էջ 71—72)։

Իր տեսությունը Իվ. Ջավախիշվիլին վերջացնում է Արսենի յերկասիրության այսպիսի դնահատումով. «Անտչառ և անաչիկ պատմական յերկասիրության փոխարեն Արսեն կաթողիկոսի գրվածքը, ինչպես և հայ հեղինակների յեկեղեցական-պատմական աշխատությունները, դասակարգային կողմնապահությամբ և դավանական ատելությամբ են թելադրված և տոգորված» (էջ 72)։

Միանգամայն համաձայնվելով Իվ. Ջավախիշվիլու հետ, վոր Արսենը՝ չհիշատակելով իր աղբյուրները՝ «ձեռքի տակ է ունեցել վրացերեն, հունարեն և, մանավանդ, հայերեն աղբյուրներ», Կ. Կեկելիձեն (op. cit., 138—139) գտնում է, վոր «հայկական աղբյուրներից նա (Արսենը) ոգտվել է; մասնավորապես, վրաց և հայոց բաժանման ժամանակվա գրագրությունից (Գիրք բղթոցը), նաև Ղազար Փարպեցվո պատմությունից, քանի վոր Ղազարն էլ, ինչպես Արսենը, պարսից քաղաքականություն է ընդգծում վրաց, հայոց և աղվանից դավանական հալածանքների ժամանակ։ [Իսկ] նրա հայկական աղբյուրների մեծագույն մասը քաղկեդոնական ֆրակցիայից է բղխում և այս պատճառով Արսենի աշխատության մեջ հարուցած հարցը կատարյալ անաչառությամբ չէ լուսաբանված»։

Ավելորդ համարելով «ժամանակագրական անհամաձայնությունք և այլն մասնանշել, որոնք այնպես կարկառուն կերպած են» Արսենի յերկասիրության մեջ՝ «տեսանելի ամենուն», Ն. Ակինյան (Կիւրիոն կաթողիկոս վրաց, 291) վաղուց այն յեզրակացությանն էր յեկել, վոր «Արսէն ուղածին պէս հասկացած է յոյն անանունի պատմածները և իւր ճառը յօրինած՝ ինչպէս թելադրած է իրեն ազգասիրութիւնը»։

Ըստ մեր հետազոտության, վորի արդյունքները իրենց ար-

տահայտութիւնն ունին գտած ստորև հրատարակվող մեր թարգմանութեանը կցված բազմաթիվ ծանոթութիւնների մէջ, Աբսենը իր աշխատութիւնը դրելիս ոգտագործել է, մի կողմից, Սեբեոսի և նմանօրինակ հայ պատմիչների գործերը, որոնք X դարուց աղբյուր են ծառայել, ի միջի այլոց, Հովհան Դրասխանակերտցուն և Ասողիկին, իսկ մյուս կողմից և, առավելապես, հունա-բյուզանդական գրականութեան մէջ հայտնի անանուն (վոմն «Սահակ՝ Հայոց Մեծաց կաթողիկոսին» վերագրվող) գրվածքը, որը Narratio de rebus Armeniae չի կոչվում։ Ընդ սմին, վերջինս էլ, հավանական է, ոգտագործված լինի հայերեն թարգմանութեամբ, քանի որ հայկական հատուկ անունները՝ թե անձանց և թե աշխարհագրականը, չնչին բացառութեամբ, ներկայացրած է հարազատութեամբ և միշ թե հունարեն բնագրի աղավաղումներով հանդերձ։

Ի նկատի ունենալով, որ Աբսեն Սափարացու «Վրաց և Հայոց բաժանման մասին» յերկասիրութեյան միակ հրատարակութիւնը, որ տվիլ է Թ. Ժորդանիան իր «Քրոնիկաներ»-ի I հատորում (էջ 313—332), հեռու չի կատարյալ գիտական հրատարակութիւն լինելուց, ստորև մենք տալիս ենք նույն յերկասիրութեյան հայերեն թարգմանութիւնը՝ գրեթե ամբողջապես կամ ուղիղ ասած, չնչին կրճատումներով (որ դավանաբանական փորձուլմանների են վերաբերում), ըստ վերակազմված բնագրի, որ մենք ունենք պատրաստած տպագրութեյան՝ համաձայն մինչ որս հայտնագործված 3 ձեռագրերների, այն է Ծփղիսի նախկին յեկեղեցական թանգարանի հավաքածուի №№ 691 (XVII դ.), էջ 129—152, և 735 (XVII դ.), էջ 1r—10r, նաև Վրաց մէջ գրաքիւրութիւն տարածող նախկին ընկերութեյան հավաքածուի № 3270 (XIX դ.), էջ 1—16, որոնցից լավագույնն է № 735-ը։

ՎՐԱՑ (ՔԱՐԹԼԻԻ) ՅԵՎ ՀԱՅՈՑ (ՍՄԽԻԹԻ) ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

... Բայց թե ինչպես հեռացան հայերը ուղիղ դավանութիւնից[1], պատճառն այս է....

Հունաց (բերձեննների) Արկադ թագավորի և Հայոց (Սմխիթի) Արշակ թագավորի որոք[2] հայերն հաստատապես հունաց (բերձեննների) կրոնին էին մասնակից, ինչպես նրանց ուսուցել էր սուրբ Գրիգոր Պարթևացին, և [հույները] արիաբար [ու] բազում ջանքերով դրաված ունեին նրանց (հայոց) յերկիրը [՝ազատելով] պարսից ծառայութիւնից, իսկ հունաց (բերձեննների) թագավորներն ոգնում էին [նրանց] զորքով և յերբեմն էլ մեծ ուժով պաշտպան էին կանգնած նրանց մոտ. և այսպես էր նրանց գործը։ Իսկ Արկադ թագավորը, Թեոդոսի վորդին, անուշադիր յեղավ նրանց (հայոց) գործերի վերաբերմամբ, և պարսիկները հաղթեցին հայերին ու քշեցին իրենց յերկրից, իսկ փախըստականները Յեկեղեցյաց (Ելեկեցի) [գավառից] բազմիցս անցել են հարևան յերկիրները և աղաչել Արկադին, վորպեսզի զորք ուղարկի՝ իրենց յերկիրը նվաճելու համար, սակայն տերը չլսեց նրանց աղաչանքը։ Ապա հայերը հնար գտան և հարկատու դարձան պարսիկներին, և յերդումով ու յերաշխավորութեյամբ հավաստիացրին պարսից թագավորին, վոր անձնատվում են հույներից (բերձեններից) և միանում նրանց (պարսիկներին)։ ԵՒ այսու շատ ուրախացավ թագավորը, վորը մեծ խնդութեյամբ և նվիրատվութեյամբ վերադարձրեց նրանց յերկիրը[4]։ Յեվ մնացին հայերը մի առժամանակ խաղաղ [և] ուղիղ հավատով։

Իսկ սատանան, վորը մահով է պայքարում մարդկային սեռի հետ, անաստված Նեստորի աղանդակից մի ազգին դրդեց, վորպեսզի վոսկու մեծամեծ կաշառներով խնդրե թագավորից բարվոք դարձնելու Հայքը (Սմխիթը) դեպի իրենց կրոնը. և փոխեցին թագավորի սիրտը՝ հավատացնելով, վոր հայերը հենց վոր գտնեն [բարեպատեհ] ժամանակ, նորից հույների (բերձեննների) կողմն կանցնեն.... Յեվ Պերոզ թագավորը[5] ստիպեց հայերին պաշտել անաստված Նեստորի կրոնը. իսկ հայերը կտրականապես հանձն չառան այս և դեսպանի միջոցով դիմեցին թագավորին՝ [հայտնելով,] վոր «այս չի իրագործվի վոչ միայն յերկրի, այլև մեր և մեր զավակների գերության ու մահվան [գնով նույնիսկ]»։ Իսկ թագավորը նորից այլ նենգության դիմեց և հայտնեց իր վճիռը [հայերին] հույների (բերձեննների) բաժանելու մասին և՝ վերադարձնելով դեսպաններին՝ [առաջարկեց] անել յերկուսից մեկը. «Կամ ընտրեցեք ասորական բոլոր կրոն[ներ]ից [վորևե մեկը] բացի մելքիտներինը[6], վորոնք կրոնով հույն (բերձեն) են, կամ թողեք ձեր յերկիրը և հեռացեք մեզանից»։ Ապա հայերը շատ տխրեցին այս յերկու առաջարկության առթիվ, վորը նրանց հոգսեր պատճառեց, և խորհրդակցություններ ունեցան նրանք բազում որերի ընթացքում, և հանձնեցին այս գործը Ներսես (Նելսե) կաթողիկոսին, վոր կոչվում էր «Միջին»*[7]։ Յեվ ասաց Հայոց

* Բերած է հայերեն, սակայն վրացերեն տառերով և առանց վորևե թարգմանության նույնը կրկնվում է և ներքև, բայց արդեն վրացերեն հոմանիշով հանդերձ։

թագավորն ու ամբողջ ժողովուրդը հետևյալը. «Մեզանից լավ դու [ինքդ] գիտես. ինչ վոր լավագույնը հրամայես հոգվոց անքննության համար, կհնազանդվենք քո հրամանին»:

Իսկ նա՝ վողորմելին (Ներսեսը)՝ հոգիները հնազանդեցրեց մարմիններին.... և ասաց. «Մեզ համար ավելի լավ է մահը, քան թե այս պահին կրկին վերադառնալ հունաց (բերձննների) [կողմն] և նորից թողնել յերկիրը և բնաջինջ լինել պանդխտությամբ»: Յեվ ամբողջ նրա մտածել[ակերպ]ը բոզչական եր և գոռոզամիտ: Յեվ [դեսպանները] ուղարկեցին արտմուտքյամբ թագավորի մոտ՝ խնդրելով հակոբիկնների կրոնը, քանի վոր բոլոր մյուսներին առավել նղովեցին: Իսկ վոքը մեղքը վերածվում է մեծի՝ պորտաբուծության մեջ, ինչպես գրված է:

Իսկ թագավորն վատահացավ և ուղարկեց նրանց մոտ հակոբիկ չար[ամիտ] վարդապետներին [թվով] լինն, իբրև նենգ աղվեսների, ինչպես ասաց Սողոմոն՝ խմաստունն աստուծո. և նրանք ապականեցին Հայքում (Սոմխիթում) սուրբ Գրիգորի վաստակը, վորը վառոդված եր նրա բաղում յեռանդով ու արցունքներով. և սրանց անուններն են՝ Աբդիշո (Աբդիբո*)[8], Պետրոս Թաւիւչ[9], չարա[միտ] Սիմեոն, Հակոբ,—վորոնք իրենց հետ բերին Փիլոքսենոսի (Փիլաքսոսի) [և] Հուլիանոս Աղիկառնացվո գրություննները,— նաև Տիմոթեոս Կուզ[10], Սևերոս [և Փիլոքսենոս] Նարբոկացին**[11]: Յեվ ժողով գումարեցին քաղաք Դվինում, ուր և ընդունեցին «խաչեցյար»ը[12]... և այսու հեռացան ուղիղ և ճշմարիտ դավանությունից և ոտարացան սուրբ և մեծ առաքելական կաթողիկե յեկեղեցուց... և նույն Դվինում հաստատեցին առաջ[ավ]որ»-ն[13], ասելով. «Այս է մեր հավատո առաջին որը»[14]: Յեվ չարը չարին ավելացրին ու նղովքով անիծեցին իրենց [գլուխը], քանի վոր չմիաբանեցան Քաղկեդոնի ժողովին[15]...

Յեվ յերբ Վրաց և Հերաց կաթողիկոսն Կյուրիոն (Կվիրիոն) Մցխեթացին[16] տեսավ, վոր հայերն Աբդիշո (Աբդիբո) Ասորվո

* Յեկեղեցական վրացերեն այբուբենում բ և շ տառերն իրար նման են. ուստի և հաճախ շփոթության հետևանքով տեղի ունի անուններն աղավաղումն. Աբդիշո–Աբդիբո, Աբշակ–Աբբակ, Արտաշիր–Արտաբիր և այլն:

** Բնագրում՝ «Տիմոթեոս Կուզ և Սևերոս Նաբլիկեցի (Նաբլիկելի)», sic. յեթե «Նաբլիկելի»-ն կարդալ «Նաբրիկելի», կստացվի «Նաբրիկեցի», վորը մոտ է «Նարոկա»-ին, «Նարբոկա»-յին, այսինքն «Նարբոկացի»-ին. իսկ վերջինս վոչ թե Սևերոսն, այլ Փիլոքսենոսի հետ պիտի կապել, վոր բացակայում է վրացերեն բնագրում և վորը մենք վերականգնել ենք, անկյունավոր փակագծի մեջ դնելով:

ձեռքով ժողով գումարեցին քաղաք Դվինում և նղովքով հեռացան ս. կաթողիկե յեկեղեցվո դավանությունից ու բաժանվեցին չորս պատրիարքություններից, և դժեցին այն ուխտին, վոր սուրբ Գրիգորը դրել եր կեսարիայի յեկեղեցուց հավիտյանս չբաժանվելու՝ այնտեղից առնելով յեպիսկոպոսական ձեռնադրությունն չորից Հայոց (Սոմխիթի) համար[17], Հայքն (Սոմխիթն) հրաման ստացավ պարսից թագավորից, վոր [իրենց] յեպիսկոպոսները իրենք ձեռնադրեն: Արդ, յերբ այս ճշմարտությամբ լսեցին Կյուրիոն (Կվիրիոն) [Վրաց և Հերաց] կաթողիկոսն, Աբաս (Աբաղ) Աղվանից (Հերաց sic) կաթողիկոսն[18] և Գրիգոր Սյունյաց յեպիսկոպոսն[19], մեծ վեճ ծագեց Հայոց (Սոմխիթի) և Վրաց (Քարթլիի) միջև: Վրացիք ասում էին, վոր «սուրբ Գրիգորը Հունաստանից բերել տվեց մեզ [այն] հավատքը, վորը՝ իբրև նրա սուրբ դավանություն՝ դուք թողեցիք և յենթարկվեցիք Աբդիշո (Աբդիբո) Ասորվուն և այլ չար հերձվածողներին... և չհնազանդվեցիք սուրբ Գրիգորի դավանությանը[20] և կիրք հատկացրիք անչարչարելի յերրորդությանը, ինչպես ձեզ ավանդեց ամբարիշտն Պետրոս Թափիչ Անտիոքացին»: Ապա հայերն ամբաստանեցին վրացիներին (Քարթլին) պարսից թագավորի մոտ, թե նրանք հոռոմոց հավատքն են դավանում: Յեվ մեծ վեճ տեղի ունեցավ հայոց և վրաց միջև Ներսես (Ներսե) հայոց կաթողիկոսի որոք և [նույն] Ներսեսի մահվան պահին: Ներսեսը (Ներսեն), վոր կոչվում եր միջին (շուայ), չարությամբ փոխվեց այս աշխարհից (կյանքից), և նրա աթոռը գրավեց Աբրահամը[21]: Յեվ քշեց Կյուրիոն՝ վրաց (Քարթլիի) կաթողիկոսն՝ Մովսես Ցուրտավացուն[22] իր աթոռից, վոր հաստատված եր սուրբ Շուշանիկի մասունքներին կից՝ Հայքում (Սոմխիթում)[23], և Աբրահամը պահանջեց Կյուրիոնից նրա աթոռը. բայց վերջինս չկոնարհվեց[24]: Յեվ խորացավ վեճը նրանց միջև[25], և դիմեց Աբրահամը Արարատյան [յերկրի] քահանաներին, ասելով. «Կամ նղովեցեք ժողովն Քաղկեդոնի, կամ հեռացեք ձեր բաժնից»: Յեվ վորոնք հնազանդվեցին, ինչպես գրված է, մեծարելի դարձան,... իսկ վորոնք չհնազանդվեցին, հանվեցին իրենց բաժիններից և ոտարության մեջ մահացան: Աբրահամից հետո [կաթողիկոս] նստեց Կոմիտասը (Կոմիտոսը)[26], վորն ընչավետ եր և հարկատու դպեսաների և գրաստների և վորն աղնիվ բյուրեղաքարով եր զարդարում իր գավազանի ծայրն (գլուխն): Սա ամենից առավել ևս խորացրեց վեճը Քաղկեդոնի ժողովի մասին և յոթն յեպիսկոպոսություն զրկեց Աղվանից (Հե-

բաց) կաթողիկոսին, վորի [սիրտ]ն գրավեց և մերժել տվեց ժողովի Բաղկեդոնի. և խաչ շնորհեց Այուձյաց եպիսկոպոսին, վորպեսզի խաչով ընթանան նրա առաջ՝ ինչպես կաթողիկոսի[27], և ընդարձակեց նրա բաժինը, և ապա այլ եպիսկոպոսներին էլ ընդլայնացրեց նրանց բաժինները, և այսպես ամբողջ Հայքը (Սոմխիթը) մնացրեց Բաղկեդոնի ժողովի ընդդեմ։ Յեվ Մայրագոմեցի (Մայրեգուեմելի) վոմն անիծյալ Հովհաննին, վորն, յերևակայեցեք, վարդապետ կոչվեց, հակաճառական գրություններով զինեց Բաղկեդոնի սուրբ ժողովի ընդդեմ[28]։ Յեվ սրան ուխտեց [Կոմիտասն] բազմել իրենից հետո իր աթոռի վրա[29] և մեկնաբանեց հերձվածողական գրություններն Տիմոթեոս Աղեքսանդրացվո, վորը Կուզ կոչվեց[30], և Պետրոս Թափիչինը, վորը Գայլ կոչվեց[31], և Սևերոսի (Սևերիոսի) և այլ հերձվածողների. և [այս գրություններն] մակագրեց [այնպես], իբր թե ուղղափառ վարդապետների՝ սուրբ Սահակի և Մովսեսի՝ ճառերն են, և այսպիսի կեղծիքով հավատացրեց ամբողջ յերկիրն Հայոց (Սոմխիթը)[32]։

Յեվ շատ ընթերցվածքներ հորինել տվեց [Կոմիտասն] և իր անվանը վերագրեց[33], նույնպես և առաջին [հայրերի] կանոններն ու կարգերը փոխեց, նրանց տեղը դնելով չեղը, վորով հինը խանգարվեց և նորն էլ չհաստատվեց. սակայն ամեն մարդ իր համար և հոգս քաշում՝ մինչև այժմ։ Յեվ այս բոլորը [Կոմիտասն] իրագործեց կաթողած Հովհան Մայրագոմեցվո (Մայրեգուեմելիի) ձեռքով[34]... Ապա [կաթողիկոս] նստեց վոմն Բրխատափոր, վորը թշնամի յեր Մայրագոմեցուն (Մայրեգուեմելիին), և տրամեց Հովհաննու։ Յեվ յերբ ինչ-ինչ պատճառով դահընկեց արին [Բրխատափորին][35], Հովհաննն ուրախացավ, սակայն այս դեպքումն էլ նա չարժանացավ աթոռին, քանի վոր այն գրավեց Յեղբը (Եղբան), վորն առավել ևս հուզեց նրա (Հովհանի) նենգ հոգին... Յեվ այսպիսի նենգությամբ մեծարեցին վերոհիշյալ Կոմիտասին (Կոմիտասին), վորն տիրեց սուրբ Գրիգորի մասունքներին. և Մայրագոմեցվո (Մայրեգուեմելիի) ձեռքով Հայոց (Սոմխիթի) յերկիրը լցվեց մահուշափ խաբեբայական ուսմունքով[36]։

Այստեղ արդեն կատարվեց սուրբ Գրիգորի տեսիլքը, վոր նրան հայտնագործեց սուրբ հոգին, իբր վոչխարների մի մասը՝ կերպարանափոխվելով և գայլերի վերածվելով՝ հարձակվեց վոչխարների վրա և անողորմ պատառոտեց նրանց։ Նմանապես կատարվեց սուրբ Սահակի տեսիլքը, վորը տեսավ վոսկե գունդ և նափորտ սուրբ սեղանի վրա, քանի վոր Աբշակունյաց (Արշակունյան*) թագավորության անկումով բարձավ և քահանայ[ապետ]ությունն սուրբ Գրիգորի զարմից[38]... Այսպես նրանք հարեցան Մայրագոմեցվո (Մայրեգուեմելիի) վարդապետությանն։

Սակայն վոչ աննշան ուխտ տվեց Խոսրով (Խուասրո) թագավորը Ներսես (Ներսե) կաթողիկոսին, վորը կոչվում եր շուայ, այսինքն և հայերեն «միջին», վորով խախտեց նրա [առանց այն էլ] անխոհեմ սիրտը։ [Յեվ Ներսեսը] գումարեց առաջին ժողովը Դվինում, վորով [հայերը] հեռացան կրոնով հույներից (բերձեններից) ու Յերուսաղեմից։

Իսկ ամբողջ Բարթևին և Զորրորդ Հայքը (Սոմխիթը) հրաժարվեցին հայերից քահանայական ձեռնադրությունն առնելուց։ Իսկ աղվաններն (հերացիք) ու սյունեցիք մի առժամանակ հեռացան և կրկին հարեցան Ներսեսին[39], վորն իր մորուքը վոսկվով եր ներկում[40]։ [Ապա] ժողով գումարեց հայոց Հովհան կաթողիկոսն Մանազկերտում և ջրախառն [գինին] ու խմորահացը վտարեց սուրբ խորհրդից՝ հաստատելով բաղարջն ու անխառն [գինին][41]...

Յեվ բազմատեսակ եյին նրանց (հայոց) հերձվածքները՝ Սաբելիանոսի, Հակոբի և Տիմոթեոս Կուզի հետևողների, վորոնց սխալը յուրացրել եյին մանիքեյացիք....

Յեվ լուր տարածվեց, վոր Հայքը (Սոմխիթը) հեռացավ սուրբ Գրիգորի դավանությունից և կեսարիայից ձեռնադրությունն [առնելուց], ինչպես վերջինս եր ուսուցել[42]։ Յեվ [դեսպաններ] ուղարկեցին [հայերն] Ներշապուհ Տարոնի յեպիսկոպոսի մոտ, վորին պարսից թագավորն եր նշանակել հանդերձ յերկու ընկերներով, և հայտնեցին, վոր «բոլորը [դավանա]փոխ են յեղել՝ ընդունելով Նեստորի ազանդն և հաստատելով Բաղկեդոնի. ժողովն, և մենք չունինք աթոռ, ուր ձեռնադրություն կատարենք. ուստի և դիմում ենք քո բարեպաշտությանն, վոր մեզ յեպիսկոպոսներ նշանակես, քանի վոր բոլորը ճանաչեցին նրանց՝ ազանդի մեջ ընկնելը»։

Յեվ քանի վոր պարսից թագավորները ատելություն եյին հայերին, վոր հեռանան հունաց (բերձենների) դավանությունից, ինչպես վերև հիշեցինք, և վորպեսզի կրոնափոխությամբ նրանց միջև թշնամություն ընկնի, և այսու առավել ևս հնազանդ լինեն պարսից պետությանն, մեծամեծ կաշառներ խոստացան հայոց վար-

---

* Տես 36-րդ յերեսի * ծանոթությունը։

դապետներին իրագործելու այս, յորը բարձավ քահանայապետութիւնն Գրիգորի զարմից[43]։

Յեվ հենց վոր Ներշապու կեպիսկոպոսը տեղեկացրեց Ներսես (Ներսե) կաթողիկոսին, վոր եր Աշտարակեցի (Աշխարակ[ե]ցի?)[44] և չար հերձվածող, և վոնն Պետրոս Բերդողին[45], այլ և ուրիշ եպիսկոպոսներին և ազատներին (ազնվականներին), հրամայեցին յերկրորդ մեծ ժողովն գումարել նույն Դվինում[46] նույն Ներսես [կաթողիկոսութեան]յերկրորդ տարին, Հուսաինիանոս (Իսավինիան) թագավորի տասնուչորսերորդ տարին, Խոսրով (Խուասրո) պարսից թագավորի յերկրորդ տարին, այն տարին, յորը վկայեց սուրբ Յիզոխբուզիտը (Ազիզ-բուզիտը)[47]. և կրկին նզովեցին նույն սուրբ ժողովն Բաղկեդոնի[48], վոր կոչեցին նեստորական՝ համաձայն անաստված Աբդիշոյի (Աբդիսոյի). և նույն թվին յերևան հանեցին մեկնողական գրութիւնն Տիմոթեոս և Փիլոքսենոս (Փիլաքսոն) հերձվածողների, վորոնք ասորի եյին և առաջինները յեղան, վոր գրեցին Բաղկեդոնին ու Քրիստոս աստուծո յերկու բնութեյանն ընդդիմադրելու մասին. և Կուզի գրվածքին[49] ստորադրվեցին իրենց իսկ մեռցնելու համար և ասացին «մի բնութեյուն բանին աստուծո և մարմնոց», և անմահական բնութեյամբն խաչեցյալ և մեռյալ Քրիստոսն քարոզեցին, այսինքն՝ «խաչեցյալ» ավելացրին «սուրբ աստված»-ի մեջ, վոր և «խաչեցար», համաձայն Պետրոս Անտիոքացվո[50], վոր Սաբելիոսի (Սաբելի) ախտով եր վարակված։ Յեվ նզովքով կրկին սահմանեցին ուղիղ դավանութեյունից բաժանումը և վերոհիշյալ հերձվածող վարդապետներին ուղարկեցին՝ ամբողջ Ասորիքում ավետելու, վոր մխիթարութեյամբ հավիտյանս ընդունել են նրանց ապաշխարանքն[51]։

Յեվ իրենց մեռած կացուցին մահագործ (մահաձեռն) Աղիկառնացվո և մասամբ Աբդիշոյի (Աբդիսոյի) կողմնակից [համարվող] մեկին։

...[Յեվ] հեռացան ճշմարտութեյունից, վոր ուղիղ սովորել եյին սուրբ Գրիգորից։

Յերեք տարի անց Բաղկեդոնի ժողովից հետո սուրբ Սահակն ու Մաշտոցը (Մաստոցն)[52], Գրիգորի շառավիղները (թոռները), և նրանց բոլոր աշակերտներն ու վարդապետները՝ առաջինները մեկնաբանեցին Ղևոնդ (Լևոնտ) և Հովսեփ Հայոց (Սոմխիթիթ) վարդապետների և այլ անթիվ սրբոց [վկայա]բանութեյուններն (գրքերը), վորոնք բարի (սուրբ) սերմ[եր] ցանեցին նրանց (հայոց) մեջ[53]. իսկ նրանք (հերձվածողները) առաջնակ տատասկով դիտ-

մամբ խոցեցին նրանց հոգիներն ու անմեղ ժողովրդին. և ինքն Մովսես Բերդողն [նախա]զգուշացրեց նրանց կործանումը[57], բայց [հերձվածողները] նրան էլ չլսեցին։

Սրանից հետո անցավ մի քանի ժամանակ, [և] մեռավ Վահան Մամիկոնյանը (Մամկուենին), վորն իր քաջագործութեյամբ գրավից պարսիկներից մարզպանութեյունն, ձեռք բերեց քրիստոնյաների իրավունքները, Տրդատ (Թրդատ) թագավորից սահմանված՝ յեկեղեցական և չքավորաց կարգերն, գավառներն վերադարձրեց ու առանց հարկի ազատեց[55]։ Այս ժամանակից պարսից մարզպաններն գրավեցին Հայքն (Սոմխիթը), և քրիստոնեական կարգն արհամարհվեց ու յեկեղեցական վարչապետութեյունն վերացավ, և ազատների (ազնվականների) իշխանութեյունն տապալվեց պարսից մարզպաններից, և կաթողիկոսներն ու եպիսկոպոսները ճգնամարտութեյունից չեղվեցին և հանդգնութեյուն սովորեցին պարսիկներից ազատների (ազնվականների) ընդդեմ [գործելու], և գավառների հարկն [էլ] իրենք եյին վճարում՝ հանձնելով յերկիրն եպիսկոպոսներին ու քորեպիսկոպոսներին, վորպես պարսից թագավորութեյան հրուներին։

Յեվ կաթողիկոսներից ու եպիսկոպոսներից վոմանք վորդեդրեցին պարսից թագավորներին և վորդեդիր եյին անվանում Կավատին ու Խոսրովին (Խուասրոյին), վորի պատճառով կատարվարութեյան իրավասութեյունն յուրացրին և վարվում եյին վոչ թե համաձայն ճշմարտութեյանն որինաց, այլ ըստ իրենց քմահաճույքի, և յեկեղեցիների պետքերը սկի յեկեղեցիների համար չեյին սահմանված, այլ իրենց ծառայեցնելու նպատակով, [վոր] և մարդկանց ցույց տալու համար ցիրուցան եյին անում. [և] այս [պատճառ]ով բոլոր եպիսկոպոսներն ու բոլոր վանահայրերն՝ անաստված թագավորների հաճութեյամբ՝ աստուծո զայրույթն հարուցող ունայն գանձումների յետևից ընկան։ Յեվ ապա ազատներն (ազնվականներն) ու գինվորականներից վոմանք՝ նրանց որինակին հետևելով՝ միանգամայն հեռացան սուրբ Ներսես[56] և սուրբ Սահակի[57] սահմանված կանոններից։ [Զե՛] վոր Վահան Մամիկոնյանի (Մամկուենին) որոք վորոշվեց՝ բոլոր մեծամեծների տներում տարին մի անգամ տոնել սրբերից մեկի հիշատակը, վորպեսզի սիրո սեղանով (ագապով)[58] միխթարվեն նրանց տներում փառաբանութեյուն աստուծո՝ չքավորները, տկարներն ու ցավագարները, վորբերն ու տնանկները։ Այս բոլորը նրանք վերացրին իրենց սեպհական գանձումների համար, և խանգարվեց ու խախտ-

վեց հոգևորական բոլոր բարի սովորույթն ու կարգը, և որեցոր հաստատվեց չարն, և եպիսկոպոսաբանները զարձան կռատներ. և յերբ նախարարները գնում եյին եպիսկոպոսական դուռն, ժամանակ չեյին գտնում այնտեղ մտնելու և ամոթալի վերադառնում եյին ինչպես պարսից մարզպանի դռնից. և ավելին[59]: Այս [պատճառ]ով այս մեծ անպատվությանը չհանդուրժեց վարդան Մամիկոնյանը (Մամիկոնեանը), որը Զոհխ[60] եր կոչվում, այն է «կամակոր» (sic), և նրա աղգական ուրիշ նախարարները, որոնց անպատվել եյին, սպանեցին վոմն պարսիկ Սուրեն մարզպանին՝ նրա տունը կրակի յենթարկելով, և ընտանիքով հանդերձ փախուստի դիմեցին դեպի Կոստանդնուպոլիս: Գնալով այնտեղ, նըրանք բարյաց[ակամ] ընդունելություն գտան Հուստինիանոս (Իուստինիան) թագավորի կողմից: Սակայն նրանք չմիաբանեցան հույների (բերձեննների) հետ. և թագավորը զարմացավ և հարցրեց պատճառը: Յեվ նրանք ասացին, որ «վեճ յեղավ Քաղկեդոնի ժողովի մասին, որը մեր վարդապետները չընդունեցին»: Յեվ թագավորը հրամայեց կանչել Հայոց (Սոմխիթի) վարդապետներին ու եպիսկոպոսներին, որպեսզի հարցուփորձի յենթարկվեն և ճշմարիտն ճանաչեն: Յեվ գումարվեց մեծ ժողով Կոստանդնուպոլսում, ուր մեծ քննություն արին և ճշտվեց այն, ինչ որ իրավացի յեր, և բոլորը միաբերան ընդունեցին ժողովը Քաղկեդոնի, և ամբողջ Հայքն (Սոմխիթն) իսկ անիծեց և նզովեց նրա կշտամբողին և՝ միանալով հույների (բերձեննների) հետ՝ խնդրեց թագավորից բարվոք [ընդունի], որ նրա (Հայոց) ծախքով շինվի Սոփիայի արևմտյան դուռն, որն այն պահին եյին կառուցում: Յեվ թագավորն [իրավունք] շնորհեց կատարելու նրանց (հայերի) բաղձանքը, և նրանք տվին շինության գինը՝ մաքուր արծաթ հարյուր հազար (տասը բյուր) և կոչեցին այն «դուռն Հայոց», [ինչպես այն կոչվում է և] մինչ որս[61]:

Յեվ՝ վերադառնալով նույն ժողովից՝ [ժողովական հայերը] հասան Հայք, և վոմանք յերմեռանդությամբ ընդունեցին [այն] և հնազանդվեցին միաբանությանն, իսկ վոմանք՝ իբրև ոձեր՝ առավել ևս ուժ տվին ժողովրդի դրգռմանն ու վրդովմունքին՝ Մայրագոմեցվո (Մայրեգոմեցվոց) դրդմամբ. և այս յեղավ Հովհան կաթողիկոսի որոք:

Սրանից հետո Մորիկ (Մավրիկ) կայսրն[62] [Խոսրովի մոտ] ուղարկեց Հայոց (Սոմխիթի) մեծ զորավար Մուշեղ (Մուշել) Մամիկոնյանին (Մամիկոնեանին), և Հայոց (Սոմխիթի) թագավորությունը տվեց Խոսրովին (Խուասրոյին)[63]:

Իսկ ամբողջ [Հայքը՝ սկսած] Դվինից՝ Խոսրովը (Խուասրովը) յենթարկեց կայսեր, և խաղաղություն ընկավ նրանց միջև. իսկ Մուշեղին (Մուշելին) մեծամեծ ընծաներ տվեց և ուղարկեց արքայանիստ [քաղաքն]: Յեվ հասավ Մուշեղն (Մուշելն) կոստանդնուպոլիս խաչվերացի տոնին[64], և [ինչպես] ինքը, [նույնպես] և նրա ուղեկիցները չհաղորդվեցին հույների (բերձեննների) հետ. և հարցրեց թագավորը [պատճառի մասին] և պատասխանեցին, որ «Քաղկեդոնի ժողովի և Քրիստոսի յերկու բնության համար է»:

Իսկ թագավորն ասաց. «Քեզանից (Մուշեղից) առաջ Վարդանն ու նրա [կողմնա]կից ազատները (ազնվականները) ձեր իսկ քահանայապետների ձեռքով ու գրոց բազմազան քննությամբ ընդունեցին [ժողովը Քաղկեդոնի]»: Մուշեղն (Մուշելն) պատասխանեց. «Գուցե տգիտությամբ կամ ձեզանից յերկյուղ կրելով [արին այդ]. իսկ յեթե քրիստոսասեր արքայությունդ հրամայե և ճշմարտությամբ լինիս միջնորդ, դու սրա մասին մեր վարդապետներից ճշմարիտն կգտնես»:

Յեվ հրամայեց թագավորն Հայոց (Սոմխիթի) կաթողիկոս Մովսեսին[65] և բոլոր եպիսկոպոսներին, որպեսզի դան Կոստանդնուպոլիս և նորից քննեն ու հաստատվի ճշմարիտն:

Բայց Մովսես կաթողիկոսը չհամաձայնվեց գնալու, այլ այսպես պատասխանեց դեսպաններին. «Ձեմ անցնի Ազատ գետն[66], վոր և սահմանն պարսից, չեմ ուզի հույնաց (բերձեննների) թըլխվածքը և չեմ խմի նրանց թերմոնը[67]»: Նույնպես և Վասպուրականի եպիսկոպոսները, վորոնք պարսից պետության ներքո եյին, չկամեցան գնալ Միմիայն Տարոնի եպիսկոպոսն ու բոլոր [այն] եպիսկոպոսները, վորոնք հույնաց (բերձեննների) ձեռքի տակ եյին, շատով կերպով ուղեվորվեցին դեպի արքայանիստ [քաղաքն] և՝ կրկին անգամ քննելով՝ նորից հաստատեցին ժողովը Քաղկեդոնի բոլորը միաձայն Մորիկ (Մավրիկ) թագավորի առաջ, և խոստովանեցին յերկու բնությունն Քրիստոսի ճշմարիտ, նույնպես և միաբանության յերդումն գրեցին, և վերադարձան: Բայց յերբ նրանք յեկան Հայք (Սոմխիթ), նրանց [վորոշումն] չընդունեց[ին] Մովսես կաթողիկոսն ու այլ եպիսկոպոսները, վորոնք պարսից մասումն եյին[68]:

Յեվ բաժանվեց Հայքը (Սոմխիթը), և սրանք (քաղկեդոնիկները) կաթողիկոս կացուցին Հովհան Կոգովիտեցուն[69], և սրանից

հետո տասնևչորկու տարի՝ մինչև Մորիկ (Մավրիկ) թագավորի մահը՝ բաղում ընդդիմադրութիւամբ եր ընթանում [Հայքը] Բաղկեդոնի ժողովի ու մեր տեր աստված Քրիստոսի յերկու բնութեան պատճառով։

Յետ վերոհիշեալ Աբրահամ կաթողիկոսն քշեց Ա[յ]րարատից [Բաղկեդոնի ժողովի կողմնակից] քահանաներին և Հովհան՝ վանահորն սուրբն կաթողիկէին, վոր կոչվում և նաև Շողակաթ (Շուլակաթ), և [վանահայրերին] սուրբն Հռիփսիմեի, և՛ Ոշականի (Ուշականի) և՛ Յեղվարդի (Ելիվարդի) և՛ Արամոնաց և՛ Գառնիի և բոլոր վանքերի ու ամբողջ Ա[յ]րարատի, իսկ վոմանց հարկադրեց նղովել սուրբ ժողովն [Բաղկեդոնի][70]։

Յերեք տարուց հետո պատերազմ ծագեց Բասենում (Բասիանում), ուր հույները (յոնները) պարտվեցին պարսիկներից, և [վերջիններս] գրավեցին կիրճի քաղաքն [Հ]աշտենից. իսկ չորրորդ տարին անաստված Փոկա կայսեր, վորը սրով սպանեց Մորիկ (Մավրիկ) թագավորի[ն ու նրա] վորդոց, կարնո (կարնուս) քաղաքն [ևս] հանվեց ասպարեզից։

Սույն թվին Ահմադը գրավեց [նույն] կարնո (կարնուս) քաղաքն [՝գերելով նա]և Հովհան կաթողիկոսին, վորը [Հայքի] հուշատ (բերձհիններն) մատուռն եր[71], և սույն թվին Մովսես կաթողիկոսը բաց թողեց (քշեց) իր ձեռքից Հովհանի կողմնակից քահանաներին, վորոնք գնացին՝ մի մասը հույների (յոնների) մոտ, մյուսը՝ Տայք (Տաո)[72], և սրանց կոչում են (?) «Շողակաթ» (Շուլակաթ)։

Ինչպես սուրբ Գրիգորին յերևաց տեսիլքում, վոր յերկինքը բացվեց և լույս իջավ այն տեղում[73] [,նույնը կատարվեց այժմ]։ Յեվ մի առժամանակ անց Հերակլ կայսրը[74] յեկավ Հայք (Սոմխիթի) և՝ տեսնելով Հայոց հերձվածքն՝ շատ ցավեց նրանց կործանման առթիվ, [վոր հետևանք եր նրանց իսկ] ակամա շեղման. և հրամայեց գումարել մի մեծ ժողով Հայոց (Սոմխիթի) եպիսկոպոսների ու վարդապետների, և դիր գրեց Յեզր (Եզրա) կաթողիկոսին[75] ու ազատներին (ազնվականներին), վորպեսզի ժողովն կարնո (կարնուս) քաղաքն[76] և քննեն հավատքը, Բաղկեդոնի ժողովի առթիվ, և հայերը ճշմարիտ ճանաչեն Քրիստոսի յերկու բնութիւնը։

Յեվ յեկան բոլորը միասին Թագավորի մոտ և յերբորդ անգամ մանրամասն քննեցին ու հաստատեցին ճշմարիտն և հնազանդվեցին հայերն յերդումով [ու] ատորագրութիւամբ, վոր նրա

(Բաղկեդոնի) մասին վիճելով՝ վոչվոքի չեն ընդդիմադրի. բայց յերբ Դվին վերադարձան, նույն կործանիչ աղանդին յենթարկվեցին, վորովհետև նրանց (աղանդավորների) վարդապետութեան տեղն այն եր, ուր ամեն ինչ ճշմարիտն խեղաթյուրելով և ասվում։

Իսկ նույն Մայրագոմեցին (Մայրագուեմելին) գրգռում եր վոմն հերձվածող վանականների (մոնոզոններին) և Ստեփանոս (Ստեփանե) Գարդմանից եպիսկոպոսին[77] և Մաթուսաղա (Մաթուսալա) Սյունյաց քերդողին[78] և այլ պատահական մի վոմն քահանայի, վորոնք ներկա չեյին յեղել այն (կարնո) ժողովին, վորպեսզի չհաղորդվեն Յեզր (Եզրա) կաթողիկոսից և [բոլոր ներողների,] վորոնք նրա հետ եյին միացել։ Մի քանի որից հետո Ստեփանոս (Ստեփանե) եպիսկոպոսն ու Մաթուսաղան (Մաթուսալան) յեկան Յեզր (Եզրա) կաթողիկոսի մոտ և հաղորդվեցին նրա մոտ։ Հենց վոր չար[ամիտ] Մայրագոմեցի (Մայրագուեմելի) վանականը լսեց, վոր նրանք միացան Յեզրին (Եզրային) և Մաթուսաղան (Մաթուսալան) Սյունյաց եպիսկոպոս ձեռնադրվեց, մեծ վիրավորանքով հայհոյում եր Ստեփանոսին (Ստեփանեյին) և Քերդողին, ասելով. «Փոքր և Յեզրի (Եզրայի) ուրացումը ձեր սխալմունքի հանդեպ, քանի վոր նա՝ թագավորից յերկյուղ կրելով կամ դիտուն մարդկանց հետ մերձենալով՝ ուրացավ կրոնը, իսկ դուք անապատության ու ղողոքորթության համար անբուժելիորեն կործանվեցիք»։

Հենց վոր Յեզրը (Եզրան) իմացավ այս, դիմեց այն չար[ամիտ] վանականին և բոլորի ներկայությամբ ասաց. «Յես յերեք անգամ կանչեցի քեզ և յերեք անգամ Մաթուսաղային (Մաթուսալային) և Ստեփանոսին (Ստեփանեյին), — քանի վոր դուք եք յերկրի[ս] վարդապետներն ու գիտնականները, — վոր գայիք և պատասխան տայիք թագավորին, բայց դուք չեկաք, և այժմ մեր վորոշմանը հանդիսորեն ընդդիմադրում ես, մեր [դեմ,] վորոնք դրքերից ու վարդապետներից ճշմարտապես քննեցինք արդարացին, ընդունեցինք տեր մեր Հիսուս Քրիստոսի յերկու բնությունն կատարյալ աստվածությամբ և կատարյալ մարդկայնությամբ, մի դեմք և մի պատկեր, նախախնամությամբ անբաժան. և առաջին սուրբ հայրերի գրությունները, վոր կարդացինք, նույնն եյին վկայում. և մենք հնազանդվեցինք նրանց (հայրերի) հրամաններին և որամադրվեցինք դեպի բարին. և այժմ վոչինչ չե անցած՝ աստվածային գրությունները մեզ մոտ են, վերցնենք և ճշմարիտն սովորենք»։

Յեվ դրոց վկայութ[յամբ] փակեց նա (Ցեղրը) բերանը թե վոչ [վանականը] գարշահոտութ[յամբ] վորձկաց՝ նման չար հերձվածքին, և ասաց. «Ի վիճակի չեմ ընդունել այդ դիրը, վորովհետև սուրբ գրքերին նեստորականներն են այդ ավելացրել»։ Յեվ գնաց բաղում մարդկանց գայթակղեցնելու,... և նրա աշակերտներն իր գյուղի անունով «Մայրևանեցի» (Մայրևանելի) էլին կոչում նրան[79]։

Իսկ նա (Մայրագոմեցին) գնաց Հունաստան նույն ընդդիմադրութ[յունն] ցույց տալու համար և մի վոքր [հունարեն] լեզուն [էլ] սովորեց, վորպեսզի դրանով ավելի ևս հավատացնել տա [իրեն] հայերին, և վերադարձավ Հայք (Սոմխիթ)։ առաջվանից վատթար տարածում եր հերձվածքն և աշխատում եր՝ մեծամեծ մարդկանց աջակցութ[յամբ] ու հերձվածողների ցանկութ[յամբ] Ցեղրից (Եղրայից) հետո գրավել նրա աթոռը, վոր նրան խոստացել էին Բաղկեդոնի ժողովին ընդդիմադրութ[յուն] ցույց տալու համար[80]։

Իսկ Ցեղրից (Եղրայից) հետո աթոռը գրավեց Ներսես (Ներսե) Իշխանցին, վորը կամոքն աստուծո արժանի և ուղղահավատ մարդ եր. և բոլորովին հուսախաբ չեղավ այն նենգ[ամիտ] Հովհան վանականը, նամանավանդ նրա համար, վոր Ներսեսին (Ներսեյին) տեսել եր Հունաստանում հաղորդվելիս Կոստանդին փոքր թագավորի հետ, և վոչվոք չէլավ ընդդիմադրելու և ասելու, վոր «Բաղկեդոնից հետո Ներսեսն (Ներսեն) էլ Ցեղրի (Եղրայի) պես սխալվեց»։ Այս պատճառով էլ Ներսեսը (Ներսեն) կանչեց նրան, և բազում եպիսկոպոսների և վարդապետների ու ազատների (աղնվականների) ներկայութ[յամբ] մեծ քննութ[յուն] արին նույն վեճի առթիվ, և նրանք բոլորը վճիռ կայացրին կարգալուց անել նրան (Մայրագոմեցուն) [և քշել] յերկրից իբրև խաբեբայի. և սուրբ Ներսես (Ներսե) կաթողիկոսն ցասմունքով արտաքսեց նրան [Հայքից][81]։

Յեվ Թեոդորոս՝ Ռշտունյաց տերն, իշխանն Հայոց (Սոմխիթի), պղնձե աղվեսն տաքացրած նրա ճակատին կպցրեց իբրև նշան հերձվածքի, հանդերձ նրա յերկու ընկերակից - վանականներով (մոնոզոններով)։ Ապա նա փախուստի դիմեց դեպի Կովկասյան լեռները և այնտեղից շուտով վերադարձավ, վորովհետև լեռնականները նրան չէլին ընդունել, քանի վոր վերջիններս կռապաշտներ էլին, և անցավ կամբեչ[ովի]ան՝ տիրելով վոքր ձորին, վոր «Հայոց (Սոմխիթի) ձոր» է կոչվում, և շատերին աշակերտ վերցրեց վոչ այնքան այդ [ձոր]ում, վորքան Կուր [գետի] հայկուց՝

Ա[յ]րարատում, Գարդմանում, Ջորովորում (Ջորոթորում) և Սմախիթում. և շատերին վանական (մոնոզոն) դարձրեց նույն անկանոն վարդապետութ[յամբ]. և լցվեց յերկիրը վորոմով։

Յեվ Ներսես (Ներսե) կաթողիկոսի մահից հետո, Անաստաս կաթողիկոսի որոք[82], [Մայրագոմեցին] յեկավ Ա[յ]րարատ՝ աշակերտյաներով հանդերձ։

Յեվ Անաստասի մահից հետո [նույնը] գաղանի պես ներս խուժեց Հայք (Սոմխիթ)՝ առաջին [հերթին] իր իսկ գավառն Բջնի (Բիջնիս) և Մայրեվանքը՝ նույն ընդդիմադրութ[յան] [փափագով] և. և հերձված[քով] մեռավ այնտեղ այդ՝ լվտին ու Հայքն (Սոմխիթն) ապականող՝ քոփակ շունը, վատ որում ձև թվին[83]։ Իսկ նրա աշակերտները՝ մի առժամանակ վանականներ լինելով Մայրեվանքում, Յեղվարդում (Ելիվարդում) և Սուրբ-Թեոդորոսում՝ Իսրայել կաթողիկոսի և Գրիգոր իշխանից քշվեցին և ցիրուցան յեղան ամբողջ Հայքում (Սոմխիթում), այս ու այն տեղ՝ քաղաքներն ու գյուղերը, գայթակղեցնելու բոլոր մարդկանց որեցոր և մինչև այսոր[84]։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վրաց պատմիչի խոսքերը՝ «Հայերը հեռացան ուղիղ դավանութ[յունից]» արդեն ցույց են տալիս, վոր նա սկզբից և յեթե վորոշած ունի, թե Վրաց (Քարթլիի) և Հայոց (Սոմխիթի) բաժանման» խնդրում ով և իրավացի և ով անարդար, ճիշտ այնպես, ինչպես, մյուս կողմից, հայ պատմիչ Ուխտանեսը տալիս և մեզ «պատմութ[յուն] բաժանման Վրաց և Հայոց» (և վոչ «Վրաց և Հայոց»), համմ. Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական դրականութ[յունը], եջ 64 և ծանոթ. *. Լ. Մելիխեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց», հայ-վրացական փոխ-հարաբերութ[յանց հարցերի հետ զուգընթաց (Ազգ. պատմա-դրականական հետազոտութ[յան]), վրացերեն, Տփղիս 1928, եջ 76, ծանոթ. 4)։

2. Հունաց Արկադ թագավորի (395—408) և Հայոց Արշակ թագավորի (378—387), իբրև ժամանակակիցների, միասին հիշատակելը, անկասկած, այն անաքրոնիզմներից է, վորով առհասարակ լի է Աբսենի յերկասիրութ[յունը]։

3. «Հունաց (բերձհնների) կրոն» ասելով հեղինակը հասկանում է քաղկեդոնիկ կամ յերկաբնակ (դիոֆիզիտ) դավանութ[յունը], վոր նա համարում է «ուղղահավատ» և «ուղղափառ» հակադրելով «Ասորվոց» կրոնին, վորը հակաքաղկեդոնիկ կամ միաբնակ (մոնոֆիզիտ) լինելով՝ նրա կարծ[քով], «չարափառ» է և հերձվածողական (համմ. Իվ. Ջավախիշվիլի, op. cit., 66, 65)։

4. Ինչպես Կ. Կեկելիձեն (Վրաց գրականութ[յան պատմութ[յուն, I, 139) իրավացիորեն ստանանչեց, այս դեպքը տեղի ուներ վոչ թե IV դարու վերջում, այլ V-ի կիսում՝ 450 թվին։ Համմ. Ցեղրեյի համապատասխան վկայութ[յունը

ի դիջէլ պատմութիւն Վարդանանց [«Հուշկապան Մատենադարան» ԺԱ], Թիֆլիս 1913, եջ 89—93)։

5. 458—484 թ.թ.

6. Այսինքն քաղկեդոնիկ-ասորիներու։

7. Տարօրինակ է, որ այստեղ Նեբսես կաթողիկոս Մլէյնի մասին խոսում է իբրև Պետրոսի (458—484) ժամանակակցի մասին, մինչդեռ մի ուրիշ տեղ, ստորև, նույն Նեբսեսի մասին խոսում է իբրև Վրաց Կյուրիոն կաթողիկոսի (VI—VII դ.) կամ նաև Մսորով Ա.-ի (577—579) ժամանակակցի մասին. համմ. Կ. Կեկելիձե, op. cit. 139։

8. Սա այն «Արդիսոյ եպիսկոպոս Ասորւոց»-ն է, որ քանիցս հիշատակվում է «Գիրք թղթոց»-ի մէջ (եջ 54, 55, 57, 59, 62, 66, 68, 73, 78, 81, 344 վերջինում «Աբգիշոյ») և որի թղթերից մի քանիսը ամփոփված են նույն ժողովածուի մէջ (եջ 59—69)։ Հմմ. նաև Narratio de rebus Armeniae (*Migne*) Patrologiae cursus completus, series graeca, t. CXXXII, col, 1244 et pass).

9. Պետրոս Թափիչէ (Կոպեչ) մասին հատկապես տես. Լ. Меликсет-Бековъ, Грузинскій изводъ сказанія о посте «араджавор»,—«Христианскій Востокъ» изд. Р. Академіи Наукъ, т, V, Игр. 1917, стр. 100—108:

10. Տիմոթեոս Կուզի մասին հատկապես տես. Տիմոթէոս եպիսկոպոսապետի Աղէքսանդրեայ՝ Հակաճառութիւն առ սահմանեալն ի ժողովոյն Քաղկեդոնի, հրատ. Կարապետ վ. Տէր-Մկրտչեանի և Երուանդ վ. Տէր-Միքայէլեանի, Էջմիածին 1908 (նուէրը դերմաներէն առաջաբանով՝ Timotheus Äluruss' des Patriarchen von Alexandrien Widerlegung der auf Synode zu Chalcedon Festgesetzen Lehre. Armenischer Text mit deutschen und armenischen Vorwort, herausgegeben von lic. Dr. *Karapet Ter-Mekerttschian* und lic.Dr. *Erwand Ter-Minassiantz*, Leipzig 1908). *Գալուստ Տէր-Մկրտչեան, Տիմոթէոս Կուզի հակաճառութեան հայ թարգմանութեան ժամանակը և սուրբ գրքի երրորդ կամ «նորաբեր» հայ թարգմանութիւնը, — «Արարատ» 1908, եջ 564—589,707—708.* Ներսէս վ. Ակինեան, *Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ, և Հրաչեայ Աճառեան, Հայերեն նոր բառեր Տիմոթէոս Կուզի հակաճառութեան մէջ [երկուսը տիտղոս «Ազգային Մատենադարան»-ի ԺՀ գրքում], Վիեննա 1909. Հ. Աճառեան, Տիմոթէոս Կուզ և ս. գրքի նորաբեր թարգմանութիւնը,— «Ծողակաթ», I, Վաղարշապատ 1913, եջ 1—22.* H. M[app], Сирійская версія Возраженій Тимофея Элура противъ Халкедонскаго собора,—«Христ. Востокъ», т. II, 1913, стр. 405—406, *հմմ.* Изв. Акад. Наукъ, 1914, стр. 457. *հմմ. նաև* Լ. Մելիքսեթ-Բեկ, *«Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց»* etc, *վրացերեն, Տփղ. 1928, եջ 70—71։*

11. Պետրոս Քաղավորի կողմից 9 հակաբիկ վարդապետների ուղարկելը Հայք ահներև անաքրոնիզմ է այն պարզ պատճառով, որ այս հատվածում հիշատակված Սևերոսը, ինչպես և Փիլոքսենոս [Մաբուգցին] ու Հուլիանոս Ալիկառնացին (Հալիկառնացին) VI դարու դործիչներ են (հմմ. Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմութիւն, I, 139)։

12. «Պաչիցար»-ի մասին մանրամասն խոսվում է Narratio de rebus Armeniae-*ի մեջ (Migne,* PG, t. CXXXII. p. p. 1240, 1242, 1245). *բուն Կարապետ եպ. Տէր-Մկրտչեանի, այն ընդունված է հայոց մէջ V դարու վերջում. տես՝ Կնիք հաւատոյ, հրատ. Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածին 1914, եջ* LXXIII—LXXV, *հմմ.* Л. М[еликсет],-Б[еков], Тезисъ Θεὸς ἐσταυρώθη у армянъ,—«Христ. Востокъ», т. III, 1915, стр. 198—199. Նույնը, Грузинскій изводъ сказанія о посте «араджавор», т. V, стр. 105—108. *հմմ. նաև* Исповедание христианские веры Армянския церкви, переведенное с Армянского на Россійскій языкъ и изданное тщаніем преосвященного *Иосифа* Архіепископа всего Армянского народа обитающего в Россіи и Кавалера Князя *Арцутинского-Долгорукого* Спб. 1799, стр, 73—75, *И. Троицкій*, Изложение веры церкви Армянския, Спб. 1875 стр. 203—210

Ինչպես առաջին, նույնպես և յերկրորդ «պատմութիւնը» ինքնուրույն գրվածքներ չեն, այլ ներկայացնում են համառոտ Հայոց «պատմութիւն» վորձեր կոմպիլյատիվ բնույթի, մեկը՝ հայ, իսկ մյուսը՝ հույն-բյուզանդական աղբյուրների վրա հիմնված։

Առաջին հոդվածը, ինչպես մենք մանրամասն կերպով հետազոտած ունենք (Л. Меликсет-Беков. Экцерпты из древней «Истории Армении», стр. 136—138, համ. նույնը, О грузинской версии апокрифического Видения Саака Парфянина о судьбе Армении, стр. 166), հիմնված է գլխավորապես Մովսես Խորենացու պատմութիւն այս կամ այն տեղեկութիւնների վրա, իսկ յերկրորդը, ինչպես վայուց հարևանցի կերպով հայտնել ելինք (Լ. Մելիքսեթ-Բեկ, Սահակ Պարթևի «մարգարեութիւն» վրացական վերսիան, վրացերեն, էջ 202) և այժմ պիտի մանրամասն հիմնավորենք, Narratio de rebus Armeniae-ի այլ և այլ տեղերի ու վերջինիս կցված Catholici Armeniae (Migne, PG. CXXXII, 1253—1257) կոչված ամբողջական հատվածից կազմված մի կոմպիլյացիա յե։

Ի նկատի առնելով այն հանդամանքը, վոր Յեփրեմիոս Յերուսաղեմացին Սոսթենես Մարմաշենցու հետ վիճաբանելիս (տես այս պրակի տասնույերկուերորդ գլուխը) հենվում և պատմության կոչված գրքի վրա, ինչ Սոսթենեսը չի կարողանում հանդուրժել, ուստի և ասում է՝ «Անլծեալ լինի ով վոր քեզ ծանոթացրեց պատմութեա-յի հետ», Կ. Կեկելիձեն (Վրաց գրականութեյան պատմութիւն, I, 535) միանգամայն իրավացիորեն այն միտքն և հայտնում, վոր այս պատմութեա-ն քաղկեդոնիկ ուղղութեյան գրվածք պիտի լիներ։

Յեվ, իրոք, մեր ձեռքի տակ գտնվող յերկու պատմութիւններն էլ, ինչպես պարմրիները, նույնպես և պատիմրիները, քաղկեդոնական վոգով գրված յերկեր են։

Առաջին հոդվածը՝ Հայոց «նահապետների» և թագավորների ծննդաբանութիւնը նախարարների ցանկերով հանդերձ՝ մենք առաջ տալիս ենք Ա. Գլուխում ամբողջական թարգմանութեյամբ համաձայն մեր իսկ հրատարակած բնագրի (Экцерпты из древней «Истории Армении», стр. 139—142)։

Յերկրորդ հոդվածը՝ հայոց յեկեղեցական պատմութիւնը՝ վորը մենք Սբահն Սափարացուն ենք վերագրում, առաջ տալիս ենք Բ. գլուխում դարձյալ ամբողջական թարգմանութեյամբ ըստ վերոհիշյալ ձեռագրի, վոր մենք պատրաստած ունինք տպագրութեյան համաձայն մինչ այս հայտնագործված 2 ձեռագրերին, այն է վրաց մեջ պրագիտութիւն տարածող ընկերութեյան հավաքածուի № № 312 (XVI դ.), էջ 65ա — 67ա, և 248 (XVIII դ.), էջ 173—178 (համ. Թ. Ժորդանիայի «Քրոնիկաներ»-ի I հ., էջ 336—341)։ Թարգմանութեյան կցված բազմաթիվ ծանոթութիւնները արդյունք են մեր իսկ հետազոտութեյան։

1.

Հայոց թագավորութիւնը՝ սկսած Նոյե վորդուց. [այս տեղեկութիւնները]՝ գտնված լինելով պարմրիի-ի մեջ՝ ներկայացրած են այս գրքում նախարարների ցանկերով հանդերձ

Նոյի վտրվոց անուններ՝ Սեմ, Քամ և Յափեթ՝ դանված են ձեռագ կամ պարսից լեզվով. թարգմանարար հեռևյալն են՝ Զրուան, Տիտան և Յապետոս։

Իսկ Յափեթը ծնեց Գամերին, Գամերը ծնեց Ռիփաթին, Ռիփաթը ծնեց Թիրաթին, Թիրասը ծնեց Թորգոմին (Թորգամոյին)՝ հայոց [նախնի]ոը, Թորգոմը (Թորգամոն) ծնեց Հայկին, սա՝ Սրմենակին (Արմենեկին), Սրմենակը (Արմենեկը)՝ Արմայիսին, սա՝ Ամասիային, Ամասիան ծնեց Գիլայիին, սա՝ Հարմայիին, Հարման ծնեց Արամին, Արամը ծնեց Արայ-գեղեցկին, որին պատերազմում սպանեց Շամիրամը [1]։

Արայն ծնեց Անուշավանին *), սա Պատերին, Պատերը ծնեց Արշակին, Արշակը՝ Գլավանին, սա՝ Փառնակորին, Փառնակորը՝ Հավանակին, սա՝ Վաշտակին, Վաշտակը՝ Հայկակին։ Հայկակի մասին ասում են, որ նա Բելոքոսի որոք եր։ Նա առաջ բերից անմիտ ապստամբություն, որի ժամանակ սպանվեց։ Ապա նրա սերունդը (որդոց-որդիք) այս են. Ամբայկ, Առնակ, Շավարշ, Նորայր (Նուարար), Վահամ, Կար .. [Զարմայր]. սա ոգնական Պր[ի]ամու Տեւտամիոյ **) ուղարկվեց եթիոպական զորքի հետ, և սպանվեց հելլենական հերոսներից [2]։

Հրաչե, Փառնավազ (Փառնեվազ), Պաճուճ, Կառնակ, Փառս, մյուս Հայկ, Ներվանդ սակավակյաց, Տիգրան ***) մեծն [3]։

Այստեղ խախտվեց հայոց թագավորությունը։ Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց աշխարհս մեծ մասը։ Սա քսան և չորրորդն եր Աքիրիթից։ Նրանից հետո Սելևկոս Նեկատորը թագավոր նստեց Բաբելոնում և հնազանդեցրեց պարթևներին, որի պատճառով կոչվեց Նիկանոր ****). և թագավորեց 31 տարի։ Ապա Անտիոքոսը, նրա որդին, 19 տարի։ Անտիոքոսի [թագավորության] տասնումեկերորդ թվին պարթևները ապստամբեցին Մակեդոնացվոց լծից (տարկություններից)։ Աժդահակը նույն ստուհակն և՝ մարաց թագավորը։ Սրան սպանեց Տիգրանը։ Յետ Ալեքսանդր թագավորի քառասուներորդ տարին թագավոր նստեց Հայքում (Սոմխիթում) մեծն Արշակ, որը Աբրահամի զավակներից եր՝ Քեատրից ծնված, ինչպես ասված ուխտ տվեց Աբրահամին՝ ասելով «Թագաւորք ազգաց ի քէն ելցեն *)» [4]։

Արշակը ծնեց Խոսրովին (Խվասրովին), Խոսրովը (Խուասրեն) ծնեց Տրդատ (Թրդատ) թագավորին։ Տիրանը նստեց հայոց թագավոր, որը Խոսրո[վ] կրտսերի վորդին եր և Տրդատի (Թրդատի) թոռը, որին կուբացրին։ Սրանից հետո նրա վորդի Արշակին եր, որին պարսից թագավոր Շապուհը (Սապուրը) սպանեց, իսկ նրա սպասպետ Վասակից կաշին պոկեց։ Սրանից հետո թագավորությունը դրավեց նրա անաստված վորդի Պապը, որը սպանեց Գրիգորի թոռան՝ անունը մեծն Ներսես (Ներսե) կաթողիկոսին, և ուրիշ շատ չարություններ էլ արավ իր որոք։ Սրանից հետո նստեց Վարդգաոը, որը ծնկով սպանեց Մուշեղ (Մուշել) սպասպետին։ Այս Վարդգաս թագավորին քշից Մանվել (Մանոել) պահին։ Այս Վարդգաս թագավորին Մամիկոնյանը (Մամկուենը) և դաստիարակեց Պապի վորդվոց։ Յետ թագավոր նստեցրին Պապի վորդի Արշակին։ Յետ Մանվելի (Մանոելի) մահից հետո Հայոց (Սոմխիթի) թագավորությունը չորեքու մասի բաժանվեց, մի մասը Արշակինն եր, իսկ մյուսը՝ Խոսրովի (Խուասրոյի), վորոնք հպատակ էին պարսից։ Սրանից հետո նրանց բոլոր գործերը անհաստատ էին։ Իսկ այն Ներսեսը (Ներսեն), որին հիշեցինք, որդի էր Աթանագինեսի (Աթանագենի), որին Հուսիկի (Ոսիկի), թոռան Վրթանեսի (Որթանեի)**) սուրբ Գրիգորի շառավիղի (թոռներից մեկի վորդվո), չորրորդ աստիճանի։ Յետ այս լերանցի Ներսեսի (Ներսեսի) վորդին եր սուրբ Սահակը՝ Գրիգորի շառավիղը (վորդին), չորրորդ աստիճանի (sic), որին չեռաց ասածուց Հայքին (Սոմխիթին) [չնորհած] լերկնային տեսիլքը [5]։

Այս են Հայոց (Սոմխիթի) նախարարներ. Արշակունիք, Բագրատունիք, Ամատունիք, Մամիկոնյանք (Մամկուենք), Ման[դ]ակունիք, Գաբեղք, Սուրե[նի]անք, Արծրունիք, Կամսարականք (Կամսարպանք), Ռշտունիք, Սլկունիք, Գնեթունիք, Բզ[ն]ունիք (Պզ[ն]ունիք), Մանավազյանք, Փառավազյանք, Որսունիք (Որդանք), Արևելյանք, Սահրունի տիկիններից (Թագուհիներից) շառավիղները։

*) Բնագրում՝ Անուշավան։

**) Բնագրում՝ «Մ ա վ պ ն ա, կ ա մ ր ա, Մ ե ս ա ե վ ա ս» (անունների շարք է), որ տարաբացումն է հայերեն «սա ոգնական Պռ[ի]ամու ի Տեւտա[մոյ]»...

***) Բնագրում՝ Տ ր դ ի ն։

****) Բնագրում՝ Նիկանոր։

*) Ծննդոց XVII, 6։

**) Համ. վահան → «ոհան», աւդնական՝ օգնական → «վադնական»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ Մ. Խորենացվո, գ. I, գլուխ 5 (1913 թ. հրատ., էջ 19). «Յարեւէ ծնանի գԴամիւ, Դամիւ ծնանի գԲիբրատ, Բիբրատ ծնանի գԹորգոմ ծնանի զՀայկ, Հայկ ծնանի գԱրամանեակ (var. գԱրամանեակ գԱրմանեակ գԱրմենակ գԱրմինակ), Արամանեակ (var. Արմանեակ Արմենեակ Արմինակ) ծնանի գԱրամայիս (var. գԱրմայիս), Արամայիս ծնանի գԱմասիայ (var. գԱմասիա), Ամասիայ (var. Ամասիա) ծնանի գԱրիսդամ, Արիսդամ ծնանի գԱրմայ (var. գԱրմա), Արմայ ծնանի գԱրամ, Արամ ծնանի գԱրայն զկնիկիկ»:*

2. Ըստ Մ. Խորենացվո, գ. I, գլուխ 19 (var. 20) (1913 թ. հրատ., էջ 62—63) «Արայեան Արայ (var. մխիթարեան Արայ)... Անուշաւան, Պարէտ, Արբակ, Զաւան, Փառնակ (var. Փառնաս)... Սուր, Հաւանակ, Վաշտակ, Հայկակ: Զոմանէ ասէն լինել առ Բիւրբուռս և ամրոխս իմն արարեալ անխորհրդս և մեռանիլ ի նմին: Ամպակ (var. Ամբակ), Աստակ, Նաւարչ, Նորայր, Վատտակար (var. Վատամ, կամ Վատտակար), Գռոակ (var. Գռակ), Հռանտ (var. Հրատն), Ընձաք, Գզակ (var. Գզակ), Հօրայ (var. Հուրա Հուրայ Հօրայ), Զարմայր (var. Զայրմայր): Սա օգնական Պահամու ի Տհոտամայ առաքեալ ընդ նմովպագի զօրուն՝ մեռանի ի քաջացն հայկենացուց»:

3. Ըստ Մ. Խորենացվո, գ. I, գլուխ 22 (var. 23) (1913 թ. հրատ., էջ 68—69). «Պարայր որդի Սկայորդւոյ, Հրաչեայ... Փառնաւազ (var. Փառնաւաս). Պաճոյճ (var. Պայճոյճ), Կռանակ (var. Կռնակ), Փառոս (var. Փառաս Փաւոս), մին Հայկակ, երեւեցեալ սակաւակիաց, Տիգրանայ»:

4. Ըստ Մ. Խորենացվո, գ. II, գլուխ 1 (1913 թ. հրատ., էջ 102) «Յետ սերիլոյն ամենայն սերնդոյ Ալէքսանդրի Մակեդոնացւոյ, որդւոյ Փիլիպպոսի և Ոլոմպիագայ, որ էր քոյր և չորրորդ յԱբիդդայ, բազմոց տալով զաչբուխիւնն կատակաւ, զի ամենայնի իշխանութիւն՝ Մակեդոնացւոցն անուանեսցի՝ ինքն մնասցի: Չկնի որոյ թագաւորեաց Բարլոմիէլ Սկիկիոս, զոլովից կոչեալ զիշխանութիւն. ուստի և զՊարթեւս հնազանդեաց մեծաւ պատերազմաւ, և կոչեցաւ Նիկանովր այնորիկ ազգաւ: Սորա սերեալ ամս երեսուն և մի՝ թագաւորութիւնն որդւոյ իւրում Անտիոքայ, անուանեցելոյն Սաւտէր, ամս լինն և տասն: Զոր յաջորդէ Անտիոքոս, ասացեալն Թեւոս, ամս տասն. և ի միտասանդրորդին տղատոմբեն Պարթեւք ի ծառայութենէ Մակեդոնացւոցն: Ուստի և թագաւորացաց Արշակ քաջ, որ էր ի զաւակէ Արբատմոս, ի Բեռւորական ծննդոց, առ ի հասատակել բանին տեսան առ Աբրահամ, թէ «թագաւորք ազգաց ի քէն ելցեն»:

5. Տես հետագրության գլխ. 38-րդ ծանոթ.:

2.

Պատմութիւն Պատիմորիենից

Սուրբ Գրիգոր ասացը 21 տարի: Սուրբ Արիստակեսը (Ռոստակէն)՝ 20 տարի: Սուրբ Վրթան[ես]ը (Որթանը)՝ 3 տարի: Գրիգոր[իս]ը՝ 12 տարի: Հուսիկը (Ոսիկը)՝ 6 տարի: Փառներսեհը (Փառներսեհը) Ապրակունեաց (Ապրականանեցվոց) յերկրէն՝ 4 տարի: Սուրբն Ներսեսը (Ներսեհն)՝ 4 տարի, վորին թուղնով մահայցրին: Սրանից հետո Սահակը՝ 4 տարի: Աստւածակեսը (Աստւածակիսը)՝ 7 տարի: Այս յերեքը Աղուանից յերկրի ** յեպիսկոպոսներ եղին՝ ուսնելով միմիայն կաթողիկոսական կոչումն, բայց յեպիսկոպոսական ձեռնադրութենից խուսափում եղին, վորովհետև մինչ սուրբ Ներսեսի մահը [եպիսկոպոսները] կարգվում եղին կեսարիայի յեպիսկոպոսապետից (արքեպիսկոպոսից)[1]:*

*Սրանից հետո սուրբ Սահակը ստացավ Հայքին (Սոմխիթին) յեպիսկոպոսներ ձեռնադրելու իրավասութիւնը, իսկ ինքն յեպիսկոպոսութիւն արավ 40 տարի: Մի քանի ժամանակից հետո [ազատներից վոմանք] պարսից թագավոր Վրաստանում մոտ բամբասեցին իրենց թագավոր Արտաշիրին, և սուրբ Սահակը, քանի վոր համախոհ չեր նրանց բանսարկութիւններին, հեռացվեց աթոռից: Յետ սուրբ Սահակի գահընկեցութիւնից հետո պարսից թագավորն հրամանով և իրենց ցանկութեամբ կաթողիկոս կարգեցին Սաուրմագ Ծաղկեցուն, վորը սուրբ Սահակի զրպարտիչն եր: Իսկ վերջինիս (Սաուրմագի) զրպարտիչները հանեցին սրան աթոռից և խնդրեցին պարսից թագավորից հետևյալը. «Տուր մեզ [կաթողիկոս վորևէ մեկին] քո յերկրից և թող նա հայ չլինի»: Յետ ավեց նրանց թագավորը ասորի Բրբիշոյին ***, վորին Պերկիստ էլ եյին կոչում: Բայց յերեք տարուց հետո սրա զրպարտիչները սրան [յետ] հանեցին, և [թագավորը] կրկին տվեց նրանց ասորի Սամվել (Սամոել) Մուսելցուն: Յետ սա էլ՝ բազում կսկիծի մեջ յերկու տարին ավարտելով՝ վախճանվեց[2]:*

Իսկ արևելից [եպիսկոպոսների] ձեռնադրութիւնը խափանված եր կեսարիայից՝ սուրբ Սահակի գահընկեցութեան առթիվ: Սրանից հետո Հայոց ազատները (ազատն) գնացին սուրբ Սահակի

---

*) Հունարենում՝ ὁ ψωττὴς:

**) Հուն.՝ Ἀχάϊκ χώρας:

***) Բնագրում՝ Բրբիթու, վորն նույն Աբրիբոն է, այսինքն Աբրիշոն:

մոտ՝ խնդրելով, վոր նրանց ի չարն չհիշի և վերադառնա իր աթոռը։ Բայց նա չլսեց նրանց և պատմեց նրանց այն տեսիլքը, վոր տեսել էր նրանց քակվելու մասին։ Բայց իրեն վոխարեն աթոռի պահապան ավել չերանելի Մաշտոցին (Մաաւոցին)[3]։ Յեվ նրա (Սահակի) ու Մաշտոցի (Մաաւոցի) մահից հետո չկրեցապետական աթոռի վրա կարգեցին Դյուտին (Կիտին), վորը Ուքթմիս (Ամիտս) ավանից էր, և [կաթողիկոսից] 17 [տարի]։ Յեվ սրա որոք [տատաւովից այն կարգը], վոր պարսից թագավորի հրամանով էր կատարվում Հայոց (Սոմխիթի) չեպիսկոպոսների [և] կաթողիկոսների ձեռնադրությունը, [վոր շարունակվում է] մինչ այսոր[4]։

Իսկ սրանից հետո [կարգվից] Հովհան Մանդակունին՝ 6 տարի, և սրանից հետո Բարսին (Պասնիկին) [Ոթ]մից (Միտս) ավանից՝ 5 տարի, Սամվել (Սամոել) Արտաշ (Արտաշ) ավանից՝ 11 տարի, Մուշեղ (Մուսիլ) Այլարերդ (Ալպիր) ավանից՝ 50 տարի, Իսահակ (Իսակ) Ուղիեցին (Ավիեցին)՝ 7 տարի, Բրխտաւփոր Տիրառճեցին (Կուբավիցեցին)՝ 6 տարի, Ղևոնդ (Լևոնտ) Առեսաեցին (Ալեթեցին)՝ 3 տարի, Ներսես (Ներսե) Արտարակեցին՝ 9 տարի[5]։

Սրա որոք կայացավ ժողով քաղաք Դվինում Աբդիշո (Ավլիտաո) ասորի հակորիկի ձեռներեցությամբ։ Յեվ քանի վոր ուրացել [էին] սուրբ Գրիգորի և այլ հայրերի ավանդներն, ուստի [ուղիղ] հավատքն ու Քաղկեդոնի ժողովը [նզովելով], Բրխտոսի աստվածայնի և մարդկայնի մի բնության դավանողները յերեքքրրյան «սուրբ աստված» արրաուացությանը ավելացրին «վոր խաչեցար»[6]. և յերդումով ու նզովքով, նաև փոխատարձ պրագրությամբ իրենց իսկ ձեռքով հաստատեցին չհեռանալ այսորինակ դավանությունից հավիտյանս։ Իսկ Եվտիքեսը (Եվտուքին), հակորիկները ու յերկու եպ. համախոհները, մնկը կարծես հուլիանիա, իսկ մյուսը՝ մի այլ հերձվածքի նախկացուցիչ, չեպիսկոպոս ձեռնադրվեցին և ուղարկվեցին Միջագետք[7]։

Սրանից հետո Հովհան (Հաննե) Գաբեղենացին (Կապելինեցին)՝ 17 տարի, Մովսես Յեղիվարդեցին (Ելիվարտեցին)՝ 30 տարի, Աբրահամ Ռշտունյացը (Արխատունեցին)՝ 23 տարի, Հովհան Բագարանցին (Կապրանայեցին)՝ 26 տարի, Կոմիտաս (Կոմիտաս) Արագածոտնեցին (Արկացոյեցին)՝ 8 տարի, Բրխտաւփոր Ապահունեցին (Աբրամեցին)՝ 13 տարի, Յեզր (Եզրա) Նիգայեցին՝ 10 տարի, Ներսես (Ներսե) Իշխանցին՝ 8 տարի, Անաստաս Ակոռեցին (Ակորայեցին)՝ 6 տարի, Իսրայել Ուքթմիսեցին (Ամիտսեցին)՝ 10 տարի[8]։

Հայոց բագրատունիներ. — Վաղարշի (Վաղարրի) թագավորության[1] սկսած Արտաշիր 21. և սրանից հետո իշխանները՝ Գնունի (Կինունի) պատրիկը՝ 4 տարի, Դավիթ Սահարունին (Սարոնին)՝ 3 տարի, Թեոդորոս (Տոտրուս) Ռշտունյաց (Որուստունի)՝ 10 տարի, Համազասպ (Ամազասպ) կուրապալատը՝ 4 տարի, նրա յեղբայր Գրիգորը՝ 24 տարի, Աշոտ Բագրատունին՝ 3 տարի, Ներսես (Ներսե) Կամսարականը՝ 3 տարի, Սմբատ (Սումբատ) Բագրատունին (Բագրատունիանը)՝ 12 տարի[9]։

Իսկ Դվինի ժողովից հետո յերկար ժամանակ անց Սուրեն (Սվիրենե) պարսից իշխանին սպանող վոմն Վարդանը՝ հայերից հալածվելով՝ գաղթեց Կոստանդնուպոլիս Խոսրովի (Խուսարոյի) [թագավորության] 40 թվին և Հուստինիանոսի՝ 30 թվին, վորը սուրբ Սոփիան կառուցեց։ Հենց վոր թագավորը նկատեց Վարդանի չհպարզվելը [հույների հետ], հրամայեց ժողով գումարել, և հրավիրեց հայոց չեպիսկոպոսներին ու վարդապետներին[10]։ Յեվ հայերը հավատացին ու նզովեցին Որիգենեսին, Յեվագրին, Դիդիմոս նեստորականին, հակորիկներին, հուլիանիտներին և պայտանիտներին և Եվտիքեսի աղանդի բոլոր մասնակիցներին։ Բայց յերբ վերադարձան Հայք (Սոմխիթ), վոմանք հաստատուն մնացին [Քաղկեդոնին], իսկ վոմանք շեղվեցին՝ Հովհան կաթողիկոսի որոք, և [վերջիններիը] գիր գրեցին աղվանից կաթողիկոսին և Վրթանես (Վռրտանես) Սյունյաց*) չեպիսկոպոսին, վոր՝ «ինչպես Պետրոսն ու Գրիգորը, մեր առաջին չեպիսկոպոսներն, ուսուցին հավատքի մասին, նաև սուրբ աստված-ը, վոչ կկրճատեմ և վոչ էլ կավելացնեմ»։ Նմանապես [գրեցին] և վրացիներին, բայց նրանք գայթացան [և] չընդունեցին[11]։

Յեվ նորից՝ Մարիկ (Մավրիկ) թագավորի որոք՝ կոստանդնուպոլիս հրավիրված Մուշեղ (Մուսիլ) հայը չհաղորդվեց [հույների հետ], և նորից քննություն արին, և նորից գրով հաստատեցին ու չկրդում ավելի չուբանալ [հույներին]։ Իսկ Հայք (Սոմխիթ) վերադարձածները չընդունվեցին Մովսես կաթողիկոսի և չեպիսկոպոսների այն մասի կողմից, վորոնք Պարսից և Հայոց (Սոմխիթի) սահմաններում էին գտնվում։ Իսկ նրանք իրենց կաթողիկոս կացուցին Թեոդորոս Կոգովիտեցուն (Կոկուստեցուն) Բագարան

*) Բնագրում՝ «Սաղոյա» — Սաղոյին (sic)։

(Պապրանացան) յերկրից։ Յետ բազում ընդդիմադրութիւն յեղաւ յերկուսի միջև Բրխատոսի յերկու բնութեան ու Բազկիդոնի ժողովի մասին [ամբողջ] 14 տարի [ընթացքում], մինչ Մարկի (Մաւրիկ) կայսեր մահը։ Յետ Ռոսթով (Ռուսաց) թագաւորը գրաւեց Հայքը (Սոմխիթը) ու Աբրահամին կաթողիկոս նշանակեց, և սոխից [կամ] նզովել Բազկիդոնի ժողովը կամ հետևել նրան։ Յետ նրանք (հայերը) նզովեցին[12]։

Ապա Հերակլ կայսրը իր թագաւորութեան 23 տարին՝ հասնելով Հայք (Սոմխիթ)՝ հրամայեց մեծ ժողով դումարել, մի որով Հայոց (Սոմխիթի) բոլոր եպիսկոպոսներից ու վարդապետներից Յեզր (Եզրա) կաթողիկոսի և բոլոր ազատների (ազատիա) հետ Թեոդոսիուպոլսում, [և] քննեցին յերկու բնութեան ու Բազկիդոնի ժողովի [հարցը]. և հավատացրին հայերին սուրբ գրվածքները, և յերկվեցին և իրենց խոկ ձեռքով գրեցին, որ այլ ևս սրա հետևող չեն լինի, և այսպես վերադարձան Դվին։ Իսկ Հովհաննէս [Մայրագոմեցին] ճնշում էր գործ դնում այն եպիսկոպոսների վրա, որոնք [այն ժողովին] ներկա չեղին գտնվել, որպեսզի չհավատային Յեզրին (Եզրային), բայց նրանք էլ հավատացին։ Ապա Հովհաննէս կրտամբում էր նրանց և թշնամութիւն դուզ տար նրանց հանդեպ, և Յեզրի (Եզրայի) մահից հետո հավատացած էր, որ ինքը կատանա աթոռը՝ իշխանների աջակցութեամբ[13]։

Իսկ յերբ Ներսեսին (Ներսեհին) վիճակվեց [գրավել] աթոռները, և նա այնքան էլ չէր վրդովվում, [Հովհաննէսը] նրան էլ սկսեց կրտամբել։ Ապա [Ներսեսը] բերեց նրան բազում եպիսկոպոսների ու վարդապետների առաջ և նրա բամբասանքը քննութեան ենթարկեց։ Յետ ազգին ձեռ դրոշմ կպցրին նրա ճակատին։ Յետ այսպես [Ներսեսը] աքսորեց նրան ընկերներով հանդերձ դեպի Կովկաս։ Ջընդունվելով նրանց (լեռնականների) կողմից էլ՝ [Հովհաննէսը] Անաստասի մահից հետո կրկին վերադարձավ Հայք (Սոմխիթ), [ուր և] վարձանվեց ծերութեան մեջ։ Իսկ նրա գայթակղած բոլոր աշակերտները շղվեցին ճշմարտութիւնից, և նրանց ազգանքը ցանվեց նուէն (Հայոց) յերկրում մինչ Հուստինոս (Իուստինոս) կայսրը[14]։

Ապա նա (Հուստինիանոս) կայսրը կանչեց Իսահակ կաթողիկոսին[15] իր եպիսկոպոսներով հանդերձ կոստանդնուպոլիս և միացրեց նրանց մեր տեր Հիսուս Բրխատոսի յերկու բնութեանն՝ ասելով նրանց մեր տեր Հիսուս Բրխատոսի յերկու բնութեանն՝ ասելով վանականին ու մարդկայինը՝ մի դիմքում անխառն ու անբաժան դավանողների հետ, և սրա մասին գրով յերդվեցին, որպեսզի

նրանց (հույների և հայերի) միջև սրա մասին այլևս չլինի հակառակութիւն։ Իսկ յերբ կրկին վերադարձան իրենց յերկիրը՝ [գտան, որ] Հայքում (Սոմխիթում) հնացածները տխրել էին նրանց վրա հունաց վերահսկողության [հաստատման] առթիվ, [և] այս պատճառով հակառակորդները քննութեան չենթարկեցին Իսահակի ու նրա հետ գնացածների [վարմունքը], ասելով՝ «Յերթ չէք վերադառնա [մեր] դավանութեանը, և չէք նզովի նրանց (հույներին), այլ ևս չենք ընդունի ձեզ մեր տեղերում»։ Իսկ նրանք՝ [քանի որ] մարդկային փառքը [գերադասում էին] աստծո փառքին, կրկին նզովեցին իրենցից հաստատվածը, որով հաղորդվել էին հույների (բերձեննների) հետ։ Սրանից հետո հույները (բերձեննները) գտան, որ [հայերը] չարիքներից անբաժան չեն[16]։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ամբողջ արտայր գրքի բառացի թարգմանութիւն է Catholici Armeniae-ի *(Migne,* PG. CXXXII, col. **1253, 1256**) *հետևյալ հատվածի, միմիայն այն տարբերությամբ, որ թվական նշանները վրացի հեղինակը յատուկ կերպով ունի հակիրճ և ըստ այմի, ազատած (հմմ. 16-րդ ծանոթության հավելվածը).* «Ὁ ἅγιος Γρηγόριος ὁ φωστήρ, ἔτη λ'. Ὁ ἅγιος Ῥωστάκης ὁ υἱὸς αὐτοῦ, ἔτη β'. Ὁ Βαρτανές, ἔτη γ'. Ὁ Γρηγόριος, ἔτη ιά. Ὁ Ἰουσὴκ, ἔτη ζ'. Ὁ Φαρνεσὲκ ἀπὸ τῶν Ἀσπράκων χώρας, ἔτη δ'. Ὁ ἅγιος Νορσέσης, ἔτη λδ'. Ὃν ἀπέκτεινε Φάρμη. Εἶθ' τῶν Ἀσπράκων χώρας, ἔτη δ'. Ὁ ἅγιος Νορσέσης, ἔτη λδ'. Ὃν ἀπέκτεινε Φάρμη. Εἶθ' οὕτως Ἰουσὴκ, ἔτη γ'. Ὁ Ζαγένης, ἔτη δ'. Ὁ Ἀσπουρακέσης. ἔτη ζ'. Οὗτοι οἱ τρεῖς τῆς Ἀχὰρκ χώρας ἐπίσκοποι ἦσαν, ὀνομα μόνον ἔχοντες καθολικόν. Ἐπίσκοποι χειροτονεῖν οὐκ ἐτόλμων, ἐπειδὴ διὰ τὸν θάνατον τοῦ ἁγίου Νορσέση, ἐκωλύθησαν παρὰ τοῦ ἀρχιεπισκόπου Καισαρείας αἱ χειροτονίαι τῶν ἐπισκόπων τῆς μεγάλης Ἀρμενίας»։

2. Այս՝ յերկրորդ արտայն ևս գրքի բառացի թարգմանութիւն է Catholici Armeniae-ի *(Migne,* PG. CXXXII, 1256) *հետևյալ հատվածի, որ նախորդի անմիջական շարունակությունն է.* «Εἶτα ὁ ἅγιος Ἰσαὰκ ἔλαβεν ἐξουσίαν χειροτονεῖν εἰς Ἀρμενίαν ἐπισκόπους, ὃς καὶ ἐπεσκόπησεν ἔτη μ'. Μετὰ δὲ χρόνους τινὰς βιαβάλλοντες τῷ Περσῶν βασιλεῖ, τῷ Βράμ Σαπῷ, τὸν ἴδιον βασιλέα Ἀρτασὴρ, καὶ τὸν ἅγιον Ἰσαὰκ, ὡς ὁμορρονήσαντας ἐν τῇ βουλῇ αὐτῶν, κατέβαλον αὐτὸν ἀπὸ τοῦ θρόνου αὐτοῦ. Καὶ μετὰ τὴν ἔκπτωσιν τοῦ Ἰσαὰκ, τὸν Σορμὰγ (Σορμὰν. sic. l. Մ.–Բ.) ἀπὸ τοῦ Ἀρτζακὲ, τῇ προστάξει τοῦ τῶν Περσῶν βασιλέως, καὶ τῇ ἰδίᾳ αὐτῶν βουλῇ, ἐκάθισαν αὐτὸν καθολικὸν, διαβαλλοντες τὸν Ἰσαάκ. Μισήσαντες δὲ αὐτὸν, κατέβαλον ἀπὸ τοῦ θρόνου αὐτοῦ, [καὶ] αἰτήσαντες τῷ τῶν Περσῶν βασιλεῖ, λέγοντες: «Δὸς ἡμῖν ἐκ τῆς χώρας σου, καὶ μὴ ἔστω ἡμῖν Ἀρμένιος». καὶ ἔδωκεν αὐτοῖς ὁ βασιλεὺς τὸν Περκισὸν (Περσικὸν. sic. l. Մ.–Բ.) τὸν Σύρον. καὶ μετὰ τρία ἔτη μισήσαντες καὶ αὐτὸν, κατέβαλον. Πάλιν ἔδωκεν αὐτοῖς τὸν Μουσούλιον τὸν Σύρον. Κἀκεῖνος δύο χρόνους καθίσας, ἐν πολλῇ θλίψει κατέλυσε τὸν βίον»։

3. Տես հինգերորդ գլխի 52-րդ ծանոթ։

4. Այս՝ յերրորդ արտայն ևս գրքի բառացի թարգմանութիւն է Catholici Armeniae-ի *(Migne,* PG. CXXXII, 1256) *հետևյալ հատվածի, որ նախորդի*

անմիջապես շարունակությունն և. «Ի ժն χειροτονία τῆς Ἀνατολῆς ἐκωλύθη ἐκ τῆς Καισαρείας, διὰ τὴν ἔκπτωσιν τοῦ Ἰσαάκ. Καὶμετὰ ταῦτα ἀπερχόμενοι οἱ Ἀζάτοι τῶν Ἀρμενίων, παρεκάλουν τὸν ὅσιον Ἰσαάκ, μὴ μνημονεύειν τῶν πονηριῶν αὐτῶν, καὶ ὑποστρέφειν εἰς θρόνον αὐτοῦ. Ὁ δὲ, οὐκ εἰσήκουσεν αὐτῶν. Ὅθεν λοιπὸν διηγήσατο αὐτοῖς τὴν ὀπτασίαν ἣν ἑώρακε περὶ τῆς ἐκπτώσεως αὐτῶν, τῆς γενομένης, καὶ τῆς ἐσομένης. Δέδωκε δὲ αὐτοῖς ἀνθ' ἑαυτοῦ τὸν μακάριον Μαστήντζην, φύλακα τοῦ θρόνου αὐτοῦ. Καὶ μετὰ τὴν τελευτὴν τοῦ Ἰσαάκ, καὶ τοῦ Μαστήντζη, ἐκάθισαν ἐπὶ τοῦ θρόνου ἱερατικοῦ τὸν Κιτὸν, τὸν ὄντα ἀπὸ της κώμης Ἀτμησοῦ, ἔτη ιζ'. Ἐν ταῖς ἡμέραις δὲ τούτου προετάχθησαν παρα τοῦ βασιλέως τῶν Περσῶν, χειροτονεῖν εἰς τὴν Ἀρμενίαν καθολικοὺς καὶ ἐπισκόπους μέχρι τῆς σήμερον»:

5. Այս՝ չորրորդ արգոյն ևս գրեթե բառացի թարգմանութիւն է Catholici Armenae-*ի (Migne,* PG. CXXXII, 1256) *հետևյալ հատվածի, որ նախորդի անմիջապես շարունակությունն է.* «Εἶτα Ἰωάννης ὁ Μαρτακουνῆς, ἔτη ς'. Ἀπουϊπένης ὁ ἀπὸ τῆς Μισοῦ τῆς κώμης ἔτη ε'. Ὁ Σαμουὴλ ὁ ἀπὸ Ἀρτασατ τῆς κώμης, ἔτη ιβ'. Ὁ Μουσέλης ὁ ἀπὸ τῆς κώμης Ἀρπηρείς, ἔτη ν'. Ὁ Ἰσαὰκ ἀπὸ τοῦ Ἀρκὰν, ἔτη ζ'. Ὁ Χριστοφόρος ὁ ἀπὸ τοῦ Κουβαρίτζη, ἔτη ζ'. Ὁ Λέοντιος ἀπὸ τοῦ Ἀρὲν, ἔτη γ'. Ὁ Νορσέσης ἀπὸ τοῦ Ἀσπαρὰζ, ἔτη θ'»:

6. Տես նախորդ հինգերորդ գլխի 12-րդ ծանոթ.

7. Այս՝ հինգերորդ արգոյն ևս գրեթե բառացի թարգմանութիւն է Catholici Armeniae-*ի (Migne,* PG. CXXXII, 1256—1257) *հետևյալ հատվածի, որ նախորդի անմիջապես շարունակությունն է.* «Ἐν ταῖς ἡμέραις αὐτοῦ ἐγένετο ἡ σύνοδος εἰς πόλιν Τιβὴν, ἀπὸ τοῦ Ἀπτισῶ Σύρου Ἰακωβίτου. Μέντοι γε εἰ καὶ τὰς παραδόσεις τοῦ ἁγίου Γρηγορίου, καὶ τῶν ἄλλων πατέρων ἐξέκλιναν· ἀλλ' οὖν περὶ τὴν πίστιν, καὶ τὴν σύνοδον τὴν ἐν Χαλκηδόνι, καὶ περὶ τὰς δύο φύσεις τὰς ἐν Χριστῷ τῷ Θεῷ ἡμῶν, οὐδεμίαν ἀμφιβολίαν εἶχον, ἕως ἐτῶν ργ', ἀπὸ τῆς συνόδου τῆς ἐν Χαλκηδόνι, ἕως τῆς συνόδου Τιβήν. Καὶ λοιπὸν ἐξ ἐκείνου ἀπέστησαν ἀπὸ τῆς κοινωνίας τῶν Ῥωμαίων καὶ τὴν Ἱερουσαλὴμ ἀναθεμάτισαν, καὶ τὴν σύνοδον Χαλκηδόνος, ὁμολογήσαντες μίαν φύσιν τοῦ Χριστοῦ, τῆς θεότητος καὶ τῆς ἀνθρωπότητος, προσέθεντο τῷ ὁ σταυρωθεὶς, εἰς Τρισάγιον ὕμνον, πρὸς Ἅγιος ὁ Θεός. Μετὰ ὅρκου καὶ ἀναθεματισμοῦ, καὶ μετὰ ἀλλήλων ἐγγράφως ἰσχυρὰ διέθεντο, μὴ χωρίζεσθαι τῆς τοιαύτης ὁμολογίας εἰς τὸν αἰῶνα. Τὸν δὲ Εὐτυχέα τὸν Ἰακωβίτην, καὶ β' ἄλλους ἑταίρους αὐτοῦ, ὁ μὲν εἰς Ἰουλιανίτης, ὁ δὲ ἕτερος, ἄλλης αἱρέσεως τυγχάνων, ἐπισκόπους χειροτονήσαντες, εἰς Μεσοποταμίαν ἀπέστειλαν»:

8. Այս՝ վեցերորդ արգոյն ևս գրեթե բառացի թարգմանութիւն է Catholici Armeniae-*ի (Migne,* PG. CXXXII, 1257) *հետևյալ հատվածի, որ նախորդի անմիջապես շարունակությունն է.* «Μετὰ τοῦτο ὁ Εὐανέσης ὁ ἀπὸ Καπεληνῆς, ἔτη ιζ'. Ὁ Μωϋσῆς ἀπο τοῦ Ἐλιβάρετ, ἔτη λ'. Ὁ Ἀβραὰμ ἀπὸ Ἀραστουνῆς, ἔτη κγ'. Ὁ Ἰωάννης ἀπὸ τοῦ Πακρανα, ἔτη κζ'. Κωμητὰς ὁ καὶ τῆς κώμης Ἐλτζηχαρακιτζου, ἔτη η'. Ὁ Χριστοφόρος ὁ Ἀβραμίτης, ἔτη γ'. Ὁ Ἔσδρας ὁ ἀπὸ τοῦ Νικᾶ, ἔτη ι'. Ὁ Νορσέσης ὁ ἀπὸ τοῦ Ἰσχνᾶ, ἔτη κ'. Ὁ Ἀναστάσιος ὁ ἀπὸ τοῦ Κορᾶ, ἔτη ζ'. Ὁ Ἰσραὴλ ὁ ἀπὸ Τμησοῦ τῆς κώμης, ἔτη ι'. [Ὁ Ἰσαὰκ ἀπὸ τοῦ Βαζακαστρίου]»:

9. Այս՝ յոթերորդ արգոյն ևս գրեթե բառացի թարգմանութիւն է Catholici Armeniae-*ի (Migne,* PG. CXXXII, 1257) *վերջին հատվածի.* «Βασιλεὺς Ἀρμενίων, ἀπὸ τοῦ Βαλαρέως ἕως Τασὴρ, καὶ μετὰ τοὺς ἡγεμόνας. Κοινουνὴς ὁ Πρίτης, ἔτη δ'. Ὁ Δαβὶδ ὁ Σαρωνῆς, ἔτη γ'. Τοτρούσης ὁ Ῥουστανῆς, ἔτη ι'. Ὁ Ἀμαζάσπης ὁ Κουροπάλατος, ἔτη δ'. Γρηγόριος ὁ ἀδελφὸς αὐτοῦ, ἔτη κδ'. Σώτης Πακρατουνῆς, ἔτη γ'. Ὁ Νερσέχης Καμψαρακὰν, ἔτη γ'. Ὁ Πακρατουνὴς Σμπάτιος»:

10. Այս՝ ութերորդ արգոյն մասին բառացի թարգմանութիւն է Narratio de rebus Armeniae-*ի (Migne,* PG. CXXXII, 1245) *համապատասխան հատվածի, որ մենք առաջ ենք բերել նախորդ՝ հինգերորդ գլխի 61-րդ ծանոթության մեջ սկսած խոսքերից «Մետ դե χρόνον πολὺν» և մինչ «ἐπισκόπους καὶ διδασκάλους τοὺς τῶν Ἀρμενίων»:*

11. Նույն այս՝ իններորդ արգոյի յերկրորդ մասը սկսած նախադասությունից «Յետ հայերը հավատացին» մինչ այստեղ բառացի թարգմանութիւն է Narratio de rebus Armeniae-*ի (Migne,* PG. CXXXII, 1245) *հետևյալ հատվածների.* «Τότε, ἀναθεμάτισαν τὸν Ὠριγένην, τὸν Εὐάγριον, τὸν Δίδυμον, τοὺς Νεστοριανοὺς, τοὺς Ἰακωβίτας, τοὺς Ἰουλιανίτας, καὶ τοὺς Γαϊανίτας, καὶ τοὺς ἅπαξ ἁπλῶς ἔχοντας τὴν τοῦ Νεστορίου [ἴσ. Εὐτύχους] αἵρεσιν. Ὑποστρεψάντων δὲ αὐτῶν εἰς Ἀρμενίαν, οἱ μὲν προθύμως ὑπεδέξαντο τὴν ἕνωσιν. οἱ δὲ ἐπορνεύσαντο ἐν ταῖς ἡμέραις Βοανέσῃ [ալ. Եւանէսի] τοῦ Καθολικοῦ, περὶ ὧν οὐκ ἔστι νῦν λέγειν κατὰ μέρος. Ἔγραψαν τοίνυν ἐπιστολὴν πρὸς τὸν Ἀπᾶς τὸν καθολικὸν Ἀλβανίας χώρας, περιέχουσαν οὕτως. Ἐλθὲ μεθ' ἡμῶν ἑνωθεὶς τῇ πίστει, ἐν τῷ λέγειν μίαν φύσιν Χριστοῦ τοῦ Θεοῦ, καὶ εἰς τὸ, Ἅγιος ὁ Θεὸς, Ὁ σταυρωθεὶς δι ἡμας. Ὁ δέσὺ συγκατέθετο λέγων. ὅτι Ἅγιος ὁ Θεὸς, ὁ Πέτρος καὶ ὁ Γρηγόριος οἱ πρὸ ἐμοῦ ὄντες, οὕτως ἔλεγων, τὸ, Ἅγιος ὁ Θεός. ἐγὼ δὲ οὐ προστίθω, οὔτε ὑφέλω. Ὁμοίως καὶ πρὸς τοὺς Ἴβηρας ἔγραψαν. Οἱ δὲ, σφοδρῶς ἀντειπόντες, οὐ κατεδέξαντο»:

12. Այս՝ տասներորդ արգոյի սկզբնական մասը մինչև «Ինչպես ասացինք, որ Հովհաննէս Փիլիսոփան և կոչված «Կոգովիտացի Բագարանի յերկրից» (Կախուստակի Պապրանաց քվեղնից) = ոչ Կաքոստէ Պագրատեան գիրք՝ տե՛ս հինգերորդ գլխի 68-րդ ծանոթությունը:

13. Այս՝ տասնմեկերորդ արգոյը համապատասխան հատվածի, Narratio de rebus Armeniae-*ի (Migne,* PG. CXXXII, 1252—1253) *որ մենք առաջ ենք բերել նախորդ՝ հինգերորդ գլխի 79-րդ ծանոթության մեջ:*

14. Այս՝ տասներկուերորդ արգոյը կրկնություն է ընդհանուր գծերով Narratio de rebus Armeniae-*ի (Migne,* PG. CXXXII, 1253) *համապատասխան հատվածի, որ մենք առաջ ենք բերել նախորդ՝ հինգերորդ գլխի 83-րդ ծանոթության մեջ:*

15. Այս՝ «Խոսնակ կաթողիկոսը» այն Սահակը չէ կամ, ուրիշ ասած, այն Սահակներից է, վոչ մեկը չէ, որ հայտնի է «Գիրք թղթոց»-ից («Բացայայտութիւն համառօտ տեղեկութեան հոգևոյ հարցն սրբոց ըստ առաքելական ուսմանցն ուսուցչին եկեղեցւոյ Քրիստոսի, հանդերձ հաւատոյ բանութեամբ ճշմարիտ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայցս, առաքեալ սրբոյ վարդապետին Սահակայ հայոց կաթողիկոսի և մեծի թարգմանչի ընդդէմ երկաբնակաց նեստորականացն»), էջ 413—482, և «Կանոնագիրք»-ից («Հարցմունք կանոնականք Յովհաննու Սիւնեաց եպիսկոպոսի առ Յովհաննէս Սիւնեական և առ ընդին աթոռակից եպիսկոպոսս բազմաց»), Վաղարշ, յոց կաթողիկոսի և ընդին աթոռակից եպիսկոպոսաց բազմաց»), էջ 130—135, A. Maius, op. cit., 300—302, տես C. Տւրեան, Կանոնագիրք Հայոց, Древне-армянская Книга канонов [„Записки Рос. Акад. Наук", VIII сер., т. XIII № 3], Пгр. 1918, стр. 67.

16. Այս՝ տասնուերեքերորդ և վերջին արգոյը գրեթե բառացի թարգմանութիւն է Narratio de rebus Armeniae-*ի (Migne,* PG. CXXXII, 1253) *հե-*

ակյալ հատվածի. «Οἱ δὲ μαθηταὶ αὐτῶ πληθυνθέντες, πάντες ἐξέκλιναν ἀπὸ τῆς ἀληθείας. καὶ διεσπάρη ἡ αἵρεσις αὐτὴ ἐν τῇ χώρᾳ ἐκείνῃ, ἕως Ἰουστίνου Καίσαρος τῷ ἑ ἔτει, ἐν ᾧ καιρῷ καλέσας τὸν Ἰσαὰκ τὸν καθολικὸν σὺν τοῖς ἐπισκόποις εἰς Κωνσταντινούπολιν, ἤνωσεν αὐτοὺς τοῖς ὁμολογοῦσι τὰς δύο φύσεις τοῦ Χριστοῦ καὶ Θεοῦ ἡμῶν, τῆς Θεότητος καὶ τῆς ἀνθρωπότητος, ἐν μιᾷ ὑποστάσει, ἀφύρτως, ἀδιαιρέτως. καὶ διὰ τοῦτο ἐγγράφως ὥμοσαν, τοῦ μηκέτι γενέσθαι εἰς αὐτοὺς ἀντιλογίαν. Πάλιν δὲ, ὑποστρεψάντων αὐτῶν, οἱ καταλειφθέντες ἐν τῇ Ἀρμενίᾳ, ἐδυσχέρανον τῇ τούτων ἐπιστασίᾳ, ὡς ὁμοφρονήσαντων μετὰ τῶν Ῥωμαίων. Καὶ λοιπὸν στάσεις καὶ συζητήσεις ἐποίουν μετὰ τοῦ Ἰσαὰκ καὶ τῶν συναπελθόντων αὐτῷ, λέγοντες, ὅτι «Ἐὰν μὴ στραφῆτε καὶ ἀναθεματίζητε αὐτοὺς, οὐ δεχόμεθα ὑμᾶς εἰς τόπον ἡμῶν». Αὐτοὶ δὲ ἀγαπήσαντες τὴν δόξαν τῶν ἀνθρώπων, ἢ τὴν δόξαν τοῦ Θεοῦ, πάλιν ἀνεθεμάτισαν πρῶτον ἑαυτούς, ὡς κοινωνήσαντας τοῖς Ῥωμαίοις. Εὑρέθησαν δὲ ἀνίσχνοι ἐν ταῖς κακίαις»:

— *Ի վերջո, գնում ենք «Պատմվածք Պատիմորին-ից» կիրիասիրուքյան մեջ հիշված վորոշ կարգի աշխարհագրական և անձանց անուններին* (Ortsnamen und Personennamen-*ի*) *համեմատական ազդուսակը վրացերեն, հայերեն և հունարեն.*

Վրացերեն	Հայերեն	Հունարեն
Ռոստակե	*Արիստակես*	Ῥωστάκης
Որթան	*Վրթանես*	Βαρτανὲς
Գրիգոլ	*Գրիգորիս*	Γρηγόριος
Ոսիկ	*Հուսիկ*	Ἰουσὴκ
Փարնեբսեխ	*Փառնեբսեհ*	Φαρνεσὲκ
Ապրականելթա	*Ապրակունյաց*	τῶν Ἀσπράκων χώρας
Ներսեհ	*Ներսես*	Νορσέσης
Սահակ ‖ Սաակ	*Սահակ*	Ἰσαὰκ
Վրամշապուհ	*Վռամշապուհ*	Βρὰμ Σαπῶ
Սաուրմագ	*Սուրմակ*	Σορμὰγ
Ծալկելի	*Ծաղկեցի*	τοῦ Ἀρτζακὲ
Բրքիշո (Բրքիրո ?) ‖ Պերկիսո	*Բրքիշո*	Περκισῶ (Περσικῶ ?)
Սամոել	*Շմուել*	
Մուսելի	*Մուսկեցի*	τὸν Μουσούλιον
Մաստոց	*Մաշտոց*	Μαστήντζη
Կիտ	*Գյուտ*	Κὶτ
Ատմիսո	*Ութմէս*	Ἀτμησῶ
Մանդակունե	*Մանդակունե*	Μαρτακουνῆς
Պապնիկի	*Բարգեն*	Ἀπουϊπκένης
Միսո	*Ութմէս*	Μισῶ
Արտաշ	*Արտազ*	Ἀρτὰσ
Մուսելի	*Մուշեղ*	Μουσέλης
Ալպիր	*Այլաբերդ*	Ἀρπὴρ
Ավկելի	*Ուղեկցի*	τοῦ Ἀρκὰν
Կուբավլեցկի	*Տիրառեցի*	τοῦ Κουβαρτίζη
Լեոնտի	*Ղևոնդ*	Λέοντιος

Արեթելի	*Առեսեցի*	τοῦ Ἀρὲν
Արպարակելի	*Արպարակեցի*	τοῦ Ἀσπαρὰξ
Դվին	*Դվին*	Τιβὴν, Τιβὴν
Ավպիսոս	*Աբգիշո*	Ἀπτυσῶ
Հաննե	*Հովհան*	Εὐανέσης
Պապկլինելի	*Գաբեղենացի*	ἀπὸ Καπεληνῆς
Ելիվարտելի	*Յեղիվարդեցի*	τοῦ Ἐλιβάρετ
Արևստանելի	*Ռշտունյաց*	ἀπὸ Ἀραστουνῆς
Գապրանտելի	*Բագարանցի*	τοῦ Παχρανα
Կոմիտաս	*Կոմիտաս*	Κωμησὰς
Արկածոնելի	*Արտագծոնեցի*	Ἐλτζησαρακιτζοῦ
Արբամելի	*Ապահունեցի*	ὁ Ἀβραμίτης
Եզդրա	*Յեզր*	Ἔσδρας
Նեղպելի	*Նեղպեցի*	τοῦ Νικᾶ
Իշխնելի	*Իշխանցի*	τοῦ Ἰσχνᾶ
Ակորսելի	*Ակռեցի*	τοῦ Κορᾶ
Ամմիսոելի	*Ութմխեցի*	ἀπὸ Τμησοῦ
Վաղարշ (Վաղարբ ?)	*Վաղարշ*	Βαλαρέως
Արտաշիր	*Արտաշիր*	Ταστὴρ
Կինունի	*Գնունի*	Κοινουνῆς
Սարոնի	*Սահառունի*	ὁ Σαρωνῆς
Տոտրուս	*Թեոդորոս*	Τοτρούσης
Որուստունի	*Ռշտունի*	ὁ Ῥουστακῆς
Ամազասպ	*Համազասպ*	Ἀμαζάπης
Աշոտ	*Աշոտ*	Σώτης
Բագրատունի ‖ Բագրատունիանի	*Բագրատունի*	Παχρατουνῆς
Նեռսե	*Նեռսես*	Νερσέχης
Կամսարական	*Կամսարական*	Καμψαρακὰν
Սումբատ	*Սմբատ*	Συμπάτιος
Սվիրինե	*Սուրեն*	Σουριὲν
Վարդան	*Վարդան*	Βαρτᾶς
Խոսրով	*Խոսրով*	Χοσρῶ
Գոկուսանելի	*Կոգովիտեցի*	Κωκοστὰ
Պապրանտի	*Բագարան*	Παγκράτον χώρα

Պատվելով ասվածից, տառադում ենք և ժամանակագրական ազդուսակն ըստ վրացերեն *բնագրի և հունարեն աղբյուրների՝*

	Թաղի տարի			Թաղի տարի	
Գրիգոր	*21*	*30*	*Փառնեբսեհ*	*4*	*4*
Արիստակես	*20*	*2*	*Ներսես*	*4*	*34*
Վրթանես	*3*	*3*	*Հուսիկ*	—	*3*
Գրիգորիս	*11*	*12*	*Սահակ*	*4*	*4*
Հուսիկ	*6*	*6*	*Աստուրակես*	*7*	*7*

Սահակ	40	40
Գյուտ	17	17
Հովհան Մանդակունի	6	6
Բաբգեն	5	5
Սամվել	11	12
Մուշեղ	50	50
Իսահակ	7	7
Բրիտաւիոր	6	6
Դևոնդ	3	3
Ներսես	9	9
Հովհան Գաբեղենացի	17	17
Մովսես	30	30
Աբրահամ	23	23
Հովհան Բագարանցի	26	26
Կոմիտաս	8	8
Բրիտաւիոր	13	3

Յեզր	10	10
Ներսես Իշխանցի	8	20
Անաստաս	6	6
Իսրայել	10	10
[Իսահակ]	—	—
Վաղարշ	—	—
Աբուաշիր	—	—
Գնունի պատրիկ	4	4
Դավիթ Սահարունի	3	3
Թեոդորոս Ռշտունի	10	10
Համազասպ կուրապաղատ	4	4
Գրիգոր	24	24
Աշոտ Բագրատունի	3	3
Ներսեհ Կամսարական	3	3
Սմբատ Բագրատունի	12	—

Է.

ԴԱՋԻ (IX—X Դ.)

«ՅԵՊԻՓԱՆ ԿՅՈՒՊՐԱՑՎՈ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱՎԹԻ»

«Մեզի հասել է Ցեպիփան Կյուպրացվո «Մեկնութիւնն սաղմոսաց Դաւթի», վոր փոխադրել է հայերենից վոմն Դաչի-ն», — այսպես է սկսում Կորն. Կեկելիձեն (Վրաց գրականության պատմություն, I, 140) իր տեսությունը Դաչիի գրական գործունեության մասին, և ապա շարունակում. «Ո՞վ է այս Դաչին, մենք չգիտենք, սակայն միայն մի բան պարզ է, վոր նա իններորդ դարու վերջերի և տասերորդի սկզբների գործիչ է», և «այս այնտեղից է յերևում, վոր իր յերկասերությունը նա ուղարկել է Ստեփան Տրեթցուն (Ստեփանե Մտբեվարիին), վորը... առաջին եպիսկոպոսը յեղավ նշանակված Աշոտ Կուխի († 918 թ.) հիմնած Տրեթի աթոռի վրա». Ըստ Ն. Թաղայեվիլու (Ցերեք պատմական քրոնիկա, XVII), նա ժամանակակից է Ստեփան Տրեթցու 881—923).

Այս մեկնության կցված գրությունից հանուն Ստեփանին՝ Դաչին բացատրում է, թե ինչ պայմաններում նրան վիճակվեց կատարել հիշյալ թարգմանությունը, վորտեղից և քաղել ենք մենք մեզ հետաքրքրող հատվածները, վոր առաջ ենք բերում թարգմանաբար՝ համաձայն վրացերեն բնագրի, վոր քանիցս հրատարակվել է, այն է. 1) Ն. Թաղայեվիլի — «Ցերեք պատմական քրոնիկա». վրացերեն, Տփղիս 1890, էջ X—XIII. 2) Թ. Ժորդանիա — «Քրոնիկաներ», վրացերեն, 1892, էջ 99—101. և 3) նույն Ն. Թաղայեվիլի — «Описание рукописей Общества распространения грамотности среди грузинского населения», т. II, 1906—1912, стр. 640—643 (վերջինում հանդերձ ռուսերեն թարգմանությամբ).

[ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՎՍՏԱՀԵԼԻ ՅԵՆ]

...Յերկար ժամանակ չերմեռանդութեամբ փնտռում եմ սաղմոսների մեկնութիւնն այն գրքում, որ գրեց մեր սուրբ հայրն, կյուպրացի եպիսկոպոս Եպիփանը, բայց չգտա այն վրացերէն. այն գտա հունարէն, սակայն չկարողացա վերծանել, քանի որ այն [ինձ համար] անմատչելի և անգնահատելի աղբյուր եր. ապա [նույնը] գտա հայերէն՝ գրված նույն կարգով և նույն թվով, ինչպես և հունարէնը, նախանձեցի հայերին, սակայն վախեցա թարգմանել, որովհետև անդրադարձ թարգմանութիւնները մեծ կշտամբանք են առաջացնում[1]:

Իսկ յետո որ առաջին անգամ լրիվ թարգմանեց, յերկրորդ թարգմանութիւնը կերևա նրան հակառակ...

Դադին և թարգմանել այս հայերենից. աստված, վեռաբանիր նրա հոգին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Չմմ. սաանչորսերորդ գլխի 3-րդ ծանոթութեան:

Ը.

ՍՏԵՓԱՆ ՏԲԵԹՑԻ (IX—X Դ.)

«ԳՈՐՈՆԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Ինչպես Իվ. Ջավախիշվիլու (Հին վրացական պատմական գրականութիւնը, 91—92) և Կորն. Կեկելիձեի (Վրաց գրականութեան պատմութիւն, I, 143) հետազոտութիւններից յերևում է, Ստեփան Տբեթցին (Ստեփանե Մտբեվարին) իններորդ դարու վերջերի և տասերորդի առաջին քառյակի գործիչ է: Յերբ Աշոտ իշխանաց-իշխանն, որը Կուխի մականունով եր հայտնի, Տբեթի յեպիսկոպոսական աթոռը հիմնեց, վերջինիս անդրանիկ յեպիսկոպոս Ստեփանին կարգեց, հետևապես՝ տասերորդ դարու սկզբում, քանի որ Աշոտ Կուխին 918 թվին վախճանվեց. «Ստեփանը,—կ. կեկելիձեի (ibid.) *ասելով, — իսկապես հռչակավոր և բեղմնավոր գրող և յեղել: Նրան, ինչպես յերևում է, հետաքրքրում եր մեկնաբանական (հզեգետիկ) գրականութիւնը, որովհետև Փոքրիկ Յեփեան Կյուպրացու Սաղմոսաց մեկնութեան իր թարգմանութիւնը նրան եր ուղարկել ծանոթանալու, այնինքն խմբագրելու և գնահատականը տալու (ռեցենզիայի) համար... բայց Ստեփանը ավելի հայտնի յեր վորպես վկայաբան (հագիոգրաֆ)», և «սրա մասին մենք տեղեկանում ենք [ի միջի այլոց] ...այն յերկասերութիւնից, վոր կոչվում է վ կայաբանութիւն Գորոնի սուրբ վկայի, վորին նահատակեցին Պ'վելի բերդից»:*

Իր յերկասերութեան մեջ Ստեփան Տբեթցին նկարագրած ունի ամիր Աբուլ-Ղասիմի արշավանքը Հայաստան, Հայաստանի ավերումն և արևելյան վրաստանի հափշտակումը, վորի ժամանակ ձերբակալեցին և նահատակեցին Գորոնին» (Իվ. Ջավախիշվիլի, op. cit., 92): Միաժամանակ տրվում է տեղեկութիւն և Սմբատ խոստովանողի նահատակութեան մասին, վորը տեղի ունեցավ, ըստ հայկական աղբյուրների, 914 թվին: Ըստ այսմ

և ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս յերկասիրությունը Մաեփանը գրել է, ինչպես ինքն է ասում («Վրաստանի դրախտը», 393), «Աշոտ իշխանաց-իշխանի հրամանով» պարզ է, որ այն պետք է վերագրել 914—918 թ. թ. (հմմ. Ի. Ջավախիշվիլի, op. cit., 91—92, Կ. Կեկելիձե, op. cit., 144):

«Բացի նրանից, որ մեր պատմիչը, — Իվ. Ջավախիշվիլու (op. cit., 96) ասելով, — Վրաստանի և Հայաստանի քաղաքական կացության ու Աբուլ-Վ'ասիմի արշավանքի կենդանի և ճիշտ պատկերն ունի նկարագրած, նրա յերկասիրությունն ուշագրության արժանի է նաև իբրև վրաց հոգևորականության և Մեսխեթի կառավարիչ շրջանների դպացմունքներն բնորոշող մի հիշատակարան»: Ցավ իրոք, «Մաեփան Տբեթցու յերկասիրությունը, — նաև գիտնականի ասելով (ibid., 95), — այն ժամանակաշրջանին և վերաբերում, յերբ Վրաստանում տեղի ուներ անշեղ պայքար միավորման համար: Այս պահին վրացիների և հայերի միջև մրցումն ու թշնամությունն էլ ընկավ: [Ցավ] այս պատճառով է, որ Մաեփան Տբեթցու կրքոտ՝ ալեկոծությամբ լի՝ դպացմունքը դեպի հայերը և կրոնական առելությունն էլ ազգայնական-քաղաքական դռնավորում ունի»:

Գրեթե նույն կարծիքն է արծարծում Մաեփան Տբեթցու յերկասիրության մասին և Կ. Կեկելիձեն (op. cit., 144). «Այս յերկասիրությունը տիպիկ ներկայացուցիչ է այն գրական արտադրության, որոնք մեզանում (վրացոց մեջ) գոյացան սկսած տասերորդ դարուց և որոնք լի են ազգայնական-կրոնական առելությամբ և զայրույթով դեպի հայերը»: Ապա թե ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ Հայաստանի դժբաղդությունը Մաեփանը կապում է նրա «մեզապարտ» բնակիչների բացասական հատկությունների հետ՝ միանգամայն մոռանալով, որ այդպիսի դժբաղդությունից դուրկ չի մնացել և Վրաստանը:

Մտորև ներկայացրած քաղվածքների թարգմանությունը կատարված է համաձայն «Վկայաբանության» բնագրի միակ հրատարակության, որ ավել է Մ. Սաբինինը իր «Վրաստանի դրախտ» աշխատության մեջ (եջ 393—400), հմմ. ռուսերեն համառոտությունը նույնի Полное жизнеописание святых грузинской церкви աշխատության II մասում (Спб. 1872, стр. 57—63):

Քաղվածքները դիտավորյալս հետաքրքիր են իբրև նյութեր, Հայաստանի պատմական աշխարհագրության վերաբերյալ:

[ՀԱՅՔԻ ՎԻՃԱԿԸ X ԴԱՐՈՒ ՍԿԶԲՆԵՐԻՆ ՅԵՎ ՍՄԲԱՏ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԸ]

[Ուրիշ հերձվածողների հետ միասին] մեզանչեց նաև Հայոց (Սոմխիթի) մեծ Տունն, ինչպես ասաց Յերեմիա մարգարեն իր վողբի մեջ...

Ցավ յենթարկ[վ]եց այն (Հայքը) [հրի և] սրի՝ չարաբար, գերության՝ [ան]ողորմ, սով[մահ] ախտին և մահացու [և] անդուլ բնաջնջման, որոնց առաջն առնող (փրկիչ) վոչ վոք չկար, և նրանք (հայերը) ընկան ինչպես ծառերը դետնի վրա, համաձայն Յեսայա մարգարեյի խոսքերին..., վորովհետև նրանք դեն շպրտեցին առաքյալների կողմից քարոզած սուրբ կաթողիկե յեկեղեցվո ուղղափառ[1] դավանությունը և անպատվեցին վարդապետների կողմից սուրբ ժողովներում ասածո [ներ]շնչմամբ հաստատված յեկեղեցական որենքը:

Այս [իսկ] պատճառով դառնության արմատը տնկվեց նրանց (հայերի) մեջ և չարության վորոմը բուսավ, և հերձվածողական[2] մեղքը զարգացավ և կործանման պատուղն ավելացավ նրանց գլխին, քանի վոր մոտեցավ նրանց, վորովհետև Հայոց (Սոմխիթի) այն հողը հպարտացել է և նրա բնակիչները վատամիտ, ագահ[ասիրտ], հանդուգն և մեղանչկոտ, հպարտ, անդութ, ատելով և ամեն տեսակ չարությունների լի յինն, վորի մեջ ապավեն չդտավ Քրիստոսը և վորի համար վատ մեռավ Քրիստոսը[3]:

Ցավ այս են նրա (Հայքի) սահմանների և [այլ և այլ] կողմանց (ձորերի) անունները. Վան[ան]դ (Վանդի), Աշորնիք (Աշոռնա), Ապահունիք (Ալապաունիսի), Ծաղկոտն (Կալկոտնի), Ճակատք (Ճակատի), Կոգովիտի (Դոգովիտի) յերկու ձորը, Շարուրը (Շարուրը), [Վ]աս[պ]ուրականի (Աստրագանի) տասնևերկու ձորը, Վայ[ոց] ձորի (Վայձորի) չորս ձորը, Դվինադաշտի (Դափին, Ագաշտի?) յերեք ձորը, Գեղարքունյաց (Գեղարքունիա) չորս ձորը, Այրունյաց տաս ձորը, Տաշիրն ու Կողբովիորը (Կաքսպաքարը)[4]:

Այս ութսունևյոթ ձորերն[5] ասածո անհնդով ավերվեցին՝ իբրև հետևանք նրանց (հայոց) մեղքերի, քանի վոր այս ձորերում * չգտնվեց [և վոչ մի] աթոռ ուղղափառ[6] յեպիսկոպոսների, և վոչ էլ ուղղափառ[7] վանք[եր] հավատացյալ կրոնավորների (մո-

* Բնագրում՝ «խելթա» — ձեռերում (sic), պիտի լինի «խելթա»—ձորերում:

հաճութեամբ տեղից շարժվեց արաբացոց (սարկինոսների) թագավոր Աբուլասճ ամիրայի վորդի Աբուլ-Ղ'ասիմ կոչեցյալը և պարսից տերը, վորին հպատակ եյին վաթսուն մեծամեծ քաղաքներ և հնազանդ եյին յոթն հզոր թագավորներ:

Սրանց բոլորին տալով զորք՝ բաղում [և] ընտիր հազարապետներով (կառավարներով)[8] հանդերձ, վորոնք զինվալը եյին հազարանոց և տասհազարանոց վաշտերի, [Աբուլ-Ղ'ասիմը] մտավ Դվինն քաղաքը, և նրա զայրույթի[ն հետևող] հնծութիւնը նախագուշակում եր Հայքի (Սոմխիթի) ավերմանը, ինչպես Նինուեացվոց կործանմանը, վորպեսզի սրանք եւ զղջան: Իսկ նրանց (հայերի) սրտերը տաքացած եյին՝ ինչպես յերկաթը, և սառած՝ ինչպես տիեզերքը (?), քանի վոր նրանց հերձվածողական մեղքը ապամանդյա յեղուն-գով եր [վորա]գրված յերկաթե տախտակի վրա:

...[Յետ] նամանվեց Հայոց (Սոմխիթի) այդ Տունն այն անմիտ մարդուն, վորը [իր] հիմքը գայթակղութեան և վխրուն ավազի վրա դրեց, և հենց վոր շինվածքը բարձրացրին՝ այն [խկուշն և եթ] փլավ, և մեծ եր փլչումը...

Ինչպես սովորութիւն ունեին, նրանք (արաբները) նախ և առաջ ապառիկ [մնացած] հարկերը պահանջեցին, [նաև] ձիր (նվեր) և ընծաներ իրենց հաղարապետներին, քանի վոր [հայերը] նրա[նց] հարկատու եյին: Ապա անցյալի բնպարը խնդրեցին... և այսպիսի մեքենա[յական յեղանակներ]ով ծծեցին նրանց նյութական միջոցները, վորպեսզի հեշտութեամբ տիրեն, վոր և յեղավ այսպես:

Յետ յերբ արաբացին (սարկինոսը) սկսեց հպարտանալ, չհանդիպեց վոչ մի վորձի (հնարի), վոր հայոց թագավորը[9] ընդդիմադրութեան ցույց տար կամ փրկութեան վորոներ, քանի վոր ասոված ճեղքել եր նրա թագավորութիւնը. ապա նա փախավ Աբխազաց (Աբխազեթի)[10] լեռների կողմը, ուր վերջ ի վերջոյ չխուսափեց մահից, իսկ [արաբացոց] այն արքան մեծ զայրութով սկսեց նրան փնտռել, վորպեսզի մահվան դատապարտի:

Յետ յեկան նրանք (արաբները) Դուրգին իշխանաց-իշխանի մոտ Ղ'ուեյի բերդն[11], ուր գտնվում եյին ազատները (ազնվականները) ու նրանց հետ Բրխատոսի վկա՝ յերանելի Գորգոնը...:

Իսկ յերբ Սմբատ (Սումբաթ) թագավորը սուրբ Գորգոնի մարտիրոսութեունից հետո վերադառնում եր իր յերկիրը, վոչ մի հնարավորութեուն չգտավ բացի նրանից, վոր մտներ Կապուկյա (Կապոեա) բերդը: [Այս Սմբատին] այն ժամանակվա բոլոր մարդիկ իմաստնագույն եյին համարում: Բայց յերբ սատծո ողնութիւնը նրանից հեռացավ և ամբողջապես ուժասպառ յեղավ, նա անել փակվեց [ամրոցում] և հետո ուներ բազմութիւն զորաց: Բայց [Աբուլ-Ղ'ասիմը] այդ բերդին էլ մոտեցավ, վոր և պայքարից հետո գրավեց, և Հայոց (Սոմխիթի) բոլոր իշխաններին, իշխանուհիներին և ազատներին (ազնվականներին) գերեց:

Յետ [Սմբատ] թագավորին յերկար տանջանքից հետո սպանեց և գլխատած կախաղանի հանեց քաղաք Դվինի կենտրոնում[12]:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այսինքն քաղկեդոնիկ կամ յերկաբնակ (դիոֆիզիտ):
2. Այսինքն հակաքաղկեդոնիկ կամ միաբնակ (մոնոֆիզիտ):
3. Տես հինգերորդ գլխի 12-րդ ծանոթությունը:
4. Հայաստանի աշխարհագրության այս պատկերը վերին աստիճանի հետաքրքիր է, վորքան էլ այդ X դարու սկզբների նկատմամբ՝ չենք գտնում վոչ արաբական աշխարհագիրների և վոչ էլ հայ պատմիչների նկարագրության մեջ, հմմտ. *M. Brosset.* Histoire de la Géorgie. t. I, p. 276, n. 3:
5. Տես նախորդ ծանոթությունը:
6. Տես 1 ծանոթ.:
7. Նույնը:
8. Վրաց «Կաման»-ը, ըստ Իվ. Ջավախիշվիլու (Վրաց իրավունքի պատմություն, վրացերեն, գ. II, մ. 1, Տփղիս 1928, եջ 142), նույն արաբ «ղ'ալիդ»-ն է, վոր հազարապետ և նշանակում:
9. Սմբատ խոստովանողի մասին և խոսքը:
10. Աբխազիա (Աբխազեթ) ասելով, վրացի հեղինակը, անկասկած, հասկանում է արևմտյան վրաստանը:
11. «Ղ'ուեյի բերդ» (Ղ'ուելիս ցիխե) հատուկ անունը վոմանք՝ կապելով հատարակ «Ղ'ուելի» բառի հետ, վոր վրացերեն պանիր է նշանակում՝ մեկնել են ըստ այնմ և հասկացել «Պանրի բերդ» կամ «Պանրաբերդ». և այս և պատճառով վոր Կոնստանդին Ծիրանածինը իր De administrando imperio-ի XLVI գլխում (Migne, Patrologiae cursus completus, series graeca, t. CXIII, 357) այդ բերդը կոչում է Τυρόκαστρον: Նույնը Ատոդիկը, ինչպես ստորև կտեսնենք, անվանում է «Կուելոյ բերդ»: Ինչ վերաբերում է այդ բերդի աշխարհագրական դիրքին, հայտնի է, վոր այն գտնվելիս է յեղել Սամցխե-Մեսխեթում (Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմություն, II, 1914, եջ 323):
12. «Գորգոնի վիայարանության» մեջ նկարագրած անցքերի մասին հայ մատենագրության մեջ, յեթե հաշվի չառնենք Հովհաննես Դրասխանակերտցվո, Սամվել Անեցվո և Ստեփանոս Որբելյանի կցկտուր տեղեկությունները, փոքր ի շատե վել Անեցվո և Ստեփանոս Որբելյանի կցկտուր տեղեկությունները, փոքր ի շատ մանրամասն խոսում է Ասողիկը (Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, եջ 164—165) «...Ամենեսեան վրաց թագաւոր և Գագիկ իշխան Վասպուրականի, որ էր քեռորդի Սմբատայ, և Աշոտ որդի Շապհոյ, եղբօր Սմբատայ, ամենայն զօրօքն իւրեանց միաբանին ընդ նմա (Յուսուփայ), թողեալ ի բաց զթագաւորն Սմբատ՝ ննդագործն նախանձեալ ի շինութիւն աշխարհի

հիս Հայոց: Զոր լմացեալ թագաւորն Սմբատ զննդաւոր խորհուրդս նոցա՝ հանդերձ տիրամբք Հայոց և ամենայն զօրօք գնաց ի գաւառն Տայոց ի գիւղն Օձուն, և անդուստ յԱփխազս անցանէ: Եւ Յուսուի հետամուտ լինի մինչ գտանուրն, և մարտուցեալ ընդ Կուխոյ բնբդին՝ առնու զնա: Եւ յետ այնորիկ ի Տփղիս անցանէ: Իսկ թագաւորն անդրէն ի Շիրակ դառնայ: Եւ ի գալ ամին միւսոյ դարձեալ առաւկագոյն զօրու ելանէ Յուսուի յերկիրս Հայոց: Որոյ ընդդէմ երթեալ ամենայն զօրուն Սմբատայ ... և մարտուցեալ ընդ միմեանս .. պարտեալ զօրն Հայոց՝ ի փախուստ դառնայ... իսկ թագաւորն Սմբատ փախստեայ ամբանայ յամուրն Կապուտայ: Եւ հետամուտ եղեալ տաճիկ զօրուն՝ գան ի գաւառն Բագրեւանդայ... և ապա երթեալ հասանեն յամուրն Կապուտայ: Իսկ թագաւորն ի գաւոյ ազատացն, որք առ իւրն էին մնացեալ, զարհուրեալ՝ ցուզ ի ձնոն առեալ [երթայ] առ Յուսուինս ըզի Աբուսաճի: Եւ անօրէն Յուսուի հանդերձ թագաւորաւն ի Դուին չուէաց, և երթեալ մարտնչէր ընդ գդեակ բնբդին, որում ներքնագի կոչեն, յորում ամրացեալ էին կանայք ազատացն և գանձք նոցին. և առեալ զամրոցն՝ անգրէն գառնայ ի Դուին: Եւ ապա կթագաւորն Սմբատ գնայեալ խախեալ սպանանէ ի Դուին քաղաքի յՅԿԹ թուականին»:

Թ.

ԱՆԱՆՈՒՆ (ՄԻՆՉ X Դ.)

ՈՐՇՆԵՐԳՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՎԻՆ

Մի որշներգի մեջ, որ պահված է Աթոնի Իվերոն կոչված մայրավանքի վրացերեն ձեռագրաց հավաքածուի X-րդ դարու մի դրչագրում, վրացինները գլխում են Ս. Գրիգոր Պարթևին (լուսավորչին) իբրև «լցնողի հայ աշխարհը աստվածային ուսման անուշահոտությամբ», այս բառերով.

«Հավատով դեպի բոլորի աստվածը հաստատեցիր Քրիստոսի յեկեղեցին անդրդվելի ժայռի վրա»:

Մի ուրիշ որշներգի մեջ հին վրացինները Գրիգորին մաղթանք են ուղղում.

«Ո՛վ Գրիգոր, դու, որ Հայաստանի աստղն ես, հիշիր քեզ հետ քո հոտին — փրկչի առաջ. շնորհիր մեզ վողորմություն և ծավալիր աշխարհում խաղաղություն»:

(Տես *Н. Марр.* Крещение армян, грузин, абхазов и аланов св. Григорием (Арабская версия), — Спб. 1905, стр. 154 = նույնը, *Մկրտությիւն Հայոց, Վրաց, Աբխազաց և Ալանաց ի սրբոյն Գրիգորէ, Թարգ.* Յուսիկ archiepiskopos, *Վաղարշապատ, 1911, եջ 92*):

Ժ.

Ա Ն Ա Ն Ո Ւ Ն (X Դ.)

«ԴԱՎԻԹ ԳԱՐԵՋԵՑՈՒ ՎԱՐՔԸ»

Դավիթ Գարեջեցին (Դավիթ Գարեջելին), որի անվան հետ են կապված Տփղիսի «Մամա-Դավիթ» կամ «Մթածմինդա» (Մթածմիդա) կոչված վանքը՝ նուիրանուն լեռան լանջին, և «Գարեջեչի բազմավերանց» (Գարեջեչս մրավալմթա) այրերվանքերից մեկը, այն և Ս. Դավիթ մայրավանք-անապատը — Ղարայազ կայարանից մոտ 30 կիլոմետր հեռավորութեամբ դեպի այսպես կոչված «Տվարատծատափ» (Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմութեյունը, II, Տփղիս 1914, եջ 308) = «Տուարատծատափ» (И. Адоиц, Армения в эпоху Юстиниана, стр. 314), այն և 5 վերստանոց քարտեզի «Տաուրատափա»-ն, — այն գործիչներից են, որոնց սովորաբար «ասորի հայրեր» են կոչում և որոնք VI դարումն են մուտք գործել արևելյան Վրաստան (Քարթլ-Կախեթը) քարոզչական նպատակով։ Այս «ասորի հայրերի» մասին մինչև վերջին ժամանակները այն կարծիքն էր տիրապետում, որ նրանք իրր թե 13 հոգուց բաղկացած խմբով եկին միաժամանակ եկել Վրաստան քրիստոնեութեյունն հաստատելու նպատակով։ 1925 թվին հրատարակած իր հատուկ ուսումնասիրութեյան մեջ «Ասորի գործիչների Քարթլի գալու հարցի մասին» (Bulletin de l'Université de Tiflis, № 6, եջ 82—107, գերմաներեն ռեզյումեյով) Կորն. Կեկելիձեն բավականին հաջող կերպով ապացուցեց, որ այդ «հայրերը» եկել են արևելյան Վրաստան ոչ թե 13 հոգուց բաղկացած մի խմբով, այլ զանազան խմբերով և ընդհանուր թվով ոչ պակաս քան 17 հոգի, և այն էլ ոչ թե մի անվագ, այլ զանազան ժամանակներ, և նրանց թվում առաջին հերթին Դավիթ Գարեջեցու խումբը բաղկացած իրեն՝ Դավթից, Ղուկիանոսից (Լուկիանե) և Դոդոյից, մոտավորապես 520 թվին։ Ինչ վերաբերում և այդ

*«հայրերի» ազգային (տոհմական) ծագմանը, դրա մասին տեղեկութեյուն տարաձայնութեյուն. մինչդեռ վրացագիտներն ընդհանրապես և Գ. Փերադզե (Die Anfänge des Mönchtums in Georgien. Gotha 1927, S. 39—40) ու Իվ. Ջավախիշվիլին (Վրաց ժողովրդի պատմութեյուներ, I, 1928թ., 347) մասնավորապես այն կարծիքի են, որ դրանք «ասորիներ» են եղել, Գ. Բախրադզե (Վրաստանի պատմութեյուն, վրացերեն, Տիֆլիս 1889, եջ 183) ու Կ. Կեկելիձեն (op. cit., 102—105) նրանց բուն վրացիներ են համարում՝ Ասորիքում կրթութեյուն ստացած։ Նույնպես տարաձայնութեյուն և նկատվում այն հարցի վերաբերմամբ, թե ովքեր էին «ասորի» կոչված հայրերն ըստ ազգանուն։ Ընդհանուր տարածված կարծիքն այն է, որ նրանք քաղկեդոնիկ-յերկաբնակներ են եղել, որ եկել են վրաց միաբնակների դեմ պայքարելու (G. Peradze, Die Anfänge des Mönchtums in Georgien, S. 37—38. Իվ. Ջավախիշվիլի, op. cit., I, 342—343), մինչդեռ Կ. Կեկելիձեն (op. cit., 88—97) ջանում է ապացուցել, որ նրանք հակաքաղկեդոնիկ-միաբնակներ էին, որոնք ապաստան էին գտել Վրաստանում՝ Ասորիքում ընդհանրապես միաբնակների դեմ սկսած հալածանքներից վախենալուց հետո։

«Ասորի» կոչված «հայրերի» վարքերը գրված են զանազան հեղինակների ձեռքով, որոնց թվում Դավիթ Գարեջեցունը, իրրև անանուն գրվածք, ըստ Կ. Կեկելիձեյի (op. cit., 84—85), X դարու առաջին կիսի գործ է, թեև Գ. Փերադզե (op. cit., 6—8) կարծում է, որ այն գրի չի առնված ոչ առաջ քան 1074 թ. և ոչ ուշ քան XII դարու առաջին քառյակը։

Դավիթ Գարեջեցու «վարքը», ի թիվս այլ «վարքերի» հնագույն խմբագրութեյուններին, հրատարակեց 1928 թ. Սարգիս Կակաբաձեն իր հատուկ աշխատութեյան մեջ «Ասորի հայրերի վարուց նախատիպերը» (վրացերեն, եջ 36—42)։ Իսկ հետագա խմբագրութեյունը հայտնի էր վաղուց համաձայն Մ. Սաբինինի 1882 թ. վոչ պիտակի հրատարակութեյան («Վրաստանի դրախտը», եջ 265—286)։ Վերջինիս ռուսերեն թարգմանութեյունը ներկայացրած է նույն Մ. Սաբինինի գրքում Полное жизнеописание святых грузинской церкви (ч. I, Спб. 1871, стр. 133—140)։

Ասորի բերած հատվածի թարգմանութեյունը կատարված է ըստ Ս. Կակաբաձեյի հրատարակութեյան։

[ԴԱՎԻԹ ԳԱՐԵՋԵՑԻՆ ՅԵՎ ՀԱՅԵՐԵՆ (ՍՈՄԽՈՒՐԻ)[1] ԼԵԶՈՒՆ]

... Տեսնելով սուրբը [Դավիթ]ին, ինչպես նա կանգնած ադոթքում եր և կաքաղը նստած եր նրա վոտների կոպքին, ոտարազգին (բարբարոսը) դիմեց նրան՝ ասելով. «Ո՞վ ես դու». և նա (Դավիթը) պատասխանեց հայերեն (սոմխուրի) լեզվով. «Յես մարդ եմ մեղապարտ, ծառա մեր աստված Հիսուս Քրիստոսի...»...[2]

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Սոմխուրի»-ի մասին մանրամասն տես Բ. պրակի 2 գլխի 8-րդ ծանոթությունը:

2. Կանգ առնելով այն հարցի վրա, թե ովքեր կլին իրենց ազգային (տոհմական) ծագումով «սասրի հայրերը», Ս. Կակաբաձեն (op. cit., 16), ի միջի այլոց, հայտնում է. «Այն փաստը, վոր Դավիթ Գարեջեցին քարբարոսի հետ հայերեն եր խոսում, վոր հիշատակված է համապատասխան վարուց ինչպես նախատիպ, նույնպես և մեռոփերատ խմբագրությանց մեջ, ինքնըստինքյան վկայնչ չի ապացուցում: Իսկ մենք, ընդհակառակը, կարծում ենք, վոր այս հանգամանքը վորոշ բան կարող և ապացուցել, յեթե, ի հարկե, ի նկատի ունենանք այսպես կոչված «Կախենի և Հերեթի դիպվածոց» այն տեղը, ուր X դարու անցքերի նկարագրության ժամանակ ասված է, վոր «մինչ Դինար թագուհին ու սրա վորդի Իլլանիկն Հերեթը հերձվածող եր» և այս Դինար թագուհին փոխադրվեց Իլլանիկի Հերեթը հերձվածքից դեպի ուղղափառություն» (Վրաց տարեգրությունը, վրացերեն, հ. II, Դ. Ջուրիձովի խմբ., ՍՊԲ. 1854, եջ 97. համ. H. Марр, Арк'ауп. Монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах,—«Византийский Временник», т. XII, 1905, стр. 7): Վորոշ բան կարող և ապացուցել, ըստ մեր հետազոտության, նաև այն, վոր Դավիթ Գարեջեցու մայրավանքը հնում «հավատացյալ» հայերի ամենասրված ուխտատեղին և յուրքի, վորը հրապուրել և դեպի իրեն ուխտավորներին վոչ միայն Տփղիսից ու Կախեթից, այլև Հայաստանից, և սրա ապացույց և 20-ի չափ հայերեն արձանագրությունները XIII—XVIII դարերի (սրանց թվում մի քանիսը հայերեն-վրացերեն, իսկ մեկը՝ 1352 թ.՝ վրացերեն-հայերեն-պարսկերեն-ույղուրերեն), վոր մենք յուրաքանչյուրս ենք հանել այդ մայրավանքի պատերում դեռ 1921 թվին և ապա 1929 թվին և վորը պատրաստած ենք տպագրության աշխատությունների մեջ «Հայերեն արձանագրությունները Վրաստանում» (այդ արձանագրությունների մի քանիսի մասին առայժմ տես. Լ. Մելիքսեթ-Բեկ, Տփղիսի Վանքի հիմնադրության հարցի շուրջը, վրացերեն,—«Bulletin de l'Université de Tiflis», IV, 1924, եջ 87 et pass. Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, վրացերեն, Տփղիս 1930, եջ 27, 60, ծանոթություն 1): Ի դեպ, արժանի յե հիշատակել, վոր այս «Գարեջեչի» վանահայրն և, վոր հիշվում է Ստ. Որբելյանի պատմության կե դլխում («Ամփոփարն Գարշտէուցն», Տփղիս 1911 թ. հրատ., եջ 355)՝ «Գարեջէուցն»—«Գարդաբեցուն»:

ԺԱ.

ԳԵՈՐԳ ՄԵՐՉՈՒԼ (X Դ.)

„ԳՐԻԳՈՐ ԽԱՆՁԹԵՑՈՒ ՎԱՐՔԸ"

Գեորգ Մերչուլը (Գիորգի Մերչուլին), վորն ապրում եր X դարում, հեղինակ է «Գրիգոր Խանձթեցու վարք» կոչված հագվագյուտ յերկասիրության, վոր պահվում է Յերուսաղեմի Հունաց պատրիարքարանի մատենադարանի վրացերեն ձեռագրերնրից մեկում (թվրև unicum): Այդ յերկասիրությունը վերստին հրատարակ հանեց և լուսո ընծայեց հանգուցյալ ռուսերեն թարգմանությամբ Ն. Մառը իր սուղար աշխատության մեջ „Георгий Мерчул. Житие св. Григория Хандзтийского. Грузинский текст. Введение, издание, перевод" [Тексты и Разыскания по армяно-грузинской филологии, кн. VII]. Спб. 1911: Իսկ Ն. Մառի աշխատության համաձայն նույնը լատիներեն թարգմանությամբ հրատարակեց Paul-Peeters-ն իր Histoire monastique Géorgiennes-ի մեջ [Extrait des „Analecta Bollandiana", t. XXXVI—XXXVII], Bruxelles 1923:

Ինչպես ինքը հեղինակը՝ Գեորգ Մերչուլն ասում է (եջ պ), նա իր յերկասիրությունը գրել է Գրիգոր Խանձթեցու մահվանից հինսուն տարուց հետո: Բայց քանի վոր վերջինս, ըստ նույն հեղինակի, վախճանվել է 861 թվին (ib.), ուրեմն այդ յերկասիրությունը գրված պիտի լինի 861+90=951 թվին: Բացի սրանից, ուրիշ վոչ մի տեղեկություն Գ. Մերչուլի մասին գոյություն չունի: Նույնիսկ նրա մականունը՝ «Մերչուլ» դեռ լուսաբանած չե. այսպես Ն. Մառը վոչ մի խոսք չի ասում նույնիսկ նրա մասին, թե ինչ և այս վերջինս նշանակում՝ ազգանուն թե մականուն, իսկ P. Peeters-ը՝ հանարելով այն ազավաղման հետևանք՝ ստացվում է (op. cit., 209—210) ուղղել «Մերչուլ»-ը «Մերեուլի»-ի[*],

* *Սրա դեմ տես. К. Дондуа*, Творение Мерчула в латинском переводе белгийского ориенталиста, — „Тексты и Разыскания по кавказской филологии, т. I, Лнгр. 1925, стр. 15, прим. 2:

[ԴԱՎԻԹ ԳԱՐԵՋԵՑԻՆ ՅԵՎ ՀԱՅԵՐԵՆ (ՍՈՄԽՈՒՐԻ)[1] ԼԵԶՈՒՆ]

... Տեսնելով սուրբ [Դավիթ]ին, ինչպես նա կանգնած ագռաւում եր և կաքաւը նստած եր նրա վոտների կողքին, ոտարազգին (բարբարոսը) դիմեց նրան՝ ասելով. «Ո՞վ ես դու». և նա (Դավիթը) պատասխանեց հայերեն (սոմխուրի) լեզվով. «Յես մարդ եմ ձեղապարտ, ծառա մեր աստված Հիսուս Քրիստոսի...»...[2]

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Սոմխուրի»-ի մասին մանրամասն տես Բ. պրակի 2 գլխի 8-րդ ծանոթությունը:

2. Կանգ առնելով այն հարցի վրա, թե ովքեր կլին իրենց ազգային (առհամական) ծագումով «տասրի հայրերը», Ս. Կակաբաձեն (op. cit., 16), ի միջի այլոց, հայտնում և. «Այն փաստը, վոր Դավիթ Գարեջեցին բարբարոսի հետ հայերեն եր խոսում, վոր հիշատակված և համապատասխան վարուց ինչպես նախապես, նույնպես և մեռաքրատա խմբագրությանց մեջ, ինքնըստինքյան վոչինչ չի ապացուցում»: Իսկ մենք, ընդհակառակը, կարծում ենք, վոր այս հանդամանքը վորոշ բան կարող և ապացուցել, յերեի, ի հարկե, ի նկատ ունենանք այսպես կոչված «Գախենի և Հերենի վկայածոց» այն տեղը, ուր X դարու անցքերի նկարագրության ժամանակ ասված է, վոր «մինչ Դինար թագուհին ու սրա վորդի Իրանսին Հերենը հերձվածող եր» և այս Դինար թագուհին փոխադրից (ուղղից) Հերենը հայոց հերձվածքից դեպի ուղղափառություն» (Վրաց տարեգրությունը, վրացերեն, հ. II, Դ. Ջուրիձովի խմբ., ՍՊԲ. 1854, եջ 97. հմմ. H. Марр, Арк'ауп. Монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах,—«Визант. Временник», т. XII, 1905, стр. 7): Վորոշ բան կարող և ապացուցել, ըստ մեր հետազոտության, նաև այն, վոր Դավիթ Գարեջեցու մայրավանքը հնում «հավատացյալ» հայերի ամենասիրված ուխտատեղին և յիդել, վորը հրապուրել և դեպի իրեն ուխտավորներին վոչ միայն Տփղիսից ու Գախենիքեցյայլ հայաստանից, և սրա ապացույց և 20-ի չափ հայերեն արձանագրությունները XIII—XVIII դարերի (սրանց թվում մի քանիսը հայերեն-վրացերեն, իսկ մեկը՝ 1352 թ.՝ վրացերեն-հայերեն-պարսկերեն-ույղուրերեն), վոր մենք յիշեցինք հանել այդ մայրավանքի պատգան այրերում դեռ եղի 1921 թվին և առաջիկ 1929 թվին և վորը պատրաստած ունենք տպագրության աշխատությանս մեջ «Հայերեն արձանագրությունները Վրաստանում» (այդ արձանագրությունների մի քանիսի մասին առայժմ տես. Լ. Մելիքսեթ-Բեկ, Տփղիսի վանքի հնմնադրության տարեգրի ջուրջը, վրացերեն,—«Bulletin de l'Université de Tiflis», IV, 1924, եջ 87 et pass. Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, վրացերեն, Տփղիս 1930, եջ 27, 60, ծանոթություն 1): Ի դեպ, արժանի յե հիշատակել, վոր այս «Գարեջրի» վանահայրն և, վոր հիշվում և Ստ. Որբելյանի պատմության կե դլխում («Համթավարն Գարշտէուցն», Տփղիս 1911 թ. հրատ., եջ 355)՝ «Գարեջէուցն»—«Գարբաէուցն»:

ԺԱ.

ԳԵՈՐԳ ՄԵՐՉՈՒԼ (X Դ.)

„ԳՐԻԳՈՐ ԽԱՆՁԹԵՑՈՒ ՎԱՐՔԸ"

Գեորգ Մերչուլը (Գեորգի Մերչուլին), վորն ապրում եր X դարում, հեղինակ և «Գրիգոր Խանձթեցու վարք» կոչված հագվագյուտ յերկասիրության, վոր պահվում և Յերուսաղեմի պատրիարքարանի մատենադարանի վրացերեն ձեռագրերնրից մեկում (երրև unicum): Այդ յերկասիրությունը վերստին հրատարակ հանեց և լուս ընծայեց հանգուցյալ ռուսերեն թարգմանության մեջ Ն. Մառը իր ստվար աշխատության մեջ „Георгий Мерчул. Житие св. Григория Хандзтийского. Грузинский текст. Введение, издание, перевод" [Тексты и Разыскания по армяно-грузинской филологии, кн. VII], Спб. 1911: Իսկ Ն. Մառի աշխատության համաձայն նույնը լատիներեն թարգմանության հրատարակից Paul-Peeters-ն իր Histoire monastique Géorgiennes-*ի մեջ* [Extrait des „Analecta Bollandiana", t. XXXVI—XXXVII], Bruxelles 1923:

Ինչպես ինքը հեղինակը՝ Գեորգ Մերչուլն ասում և (եջ պ), նա իր յերկասիրությունը գրել և Գրիգոր Խանձթեցու մահվանից իննսուն տարուց հետո: Բայց քանի վոր վերջինս, ըստ նույն հեղինակի, վախճանվել և 861 թվին (ib.), *ուրեմն այդ յերկասիրությունը գրված պիտի լինի 861+90=951 թվին: Բացի սրանից, ուրիշ վոչ մի տեղեկություն Գ. Մերչուլի մասին գոյություն չունի: Նույնիսկ նրա մականունը՝ «Մերչուլ» դեռ լուսաբանած չե. այսպես Ն. Մառը վոչ մի խոսք չի ասում նույնիսկ նրա մասին, թե ինչ և այս վերջինս նշանակում՝ ազգանուն թե մականուն, իսկ P. Peeters-ը՝ համաձայնվելով այդ ազատազման հետևանք՝ առաջարկում և* (op. cit., 209—210) *ուղղել «Մերչուլ»-ը «Մերկուլի»-ի**,

* *Սրա դեմ տես. К. Дондуа,* Творение Мерчула в латинском переводе бельгийского ориенталиста, — „Тексты и Разыскания по кавказской филологии, т. I, Лнгр. 1925, стр. 15, прим. 2:

հաճախանալով վերջինիս տակ, քան յերևույթին, տեղի անվանց յուչիչ (Մերէ — Մերէթուլի Մեհեցի)։ Վերջապես, Պ. Միրիմանովիչի՝ Ն. Մառի աշխատության վրա գրած իր գրախոսականում («Մոսկովսկիե վեդոմոստի» 1912 թ. № 503) առաջարկում է կապել այն «քչուլ-ի» (=«քչուլ-ի» || «աչուլի» || «չչուլ-ի») բառի հետ, որ նշանակում է կոն, և քան այժմ մեկնել այն իբրև կոնացած, կանոնագետ (կանոնիկոս)։

Գեորգ Մերչուլի գրվածքի նշանակությունը հայագիտական տեսակետով բավականին հաղող տրված է Ն. Մառի աշխատության մեջ, ուր, ի միջի այլոց, կարդում ենք. „Житие Григория Хандзтийского впервые открыло, что грузины никогда не прерывали в древности близкого общения и в церкви со всем армянским миром. Они ослабили связь лишь с одною его частью, конфессионально разномыслящею. Что же касается конфессиональных единомышленников, армян-халкедонитов, грузины поддерживали с ними интимную дружбу и самое тесное общение, завершавшееся постепенно полным слиянием этих армян с грузинами вплоть до утраты ими своей национальности. Из *Жития Григория Хандзтийского* узнаем, с каким уважением продолжали грузины относиться к памяти армянского католикоса Нерсеса, с каким благоговением вспоминали об его постройках, очевидно, в виду халкедонитских взглядов этого армянского патриарха“**:

Սարև մենք բերում ենք մի հատված Գեորգ Մերչուլի գրվածքից՝ Իշխանի ախոռին և Ներսես Իշխանյանն վերաբերյալ, համաձայն Ն. Մառի հրատարակած բնագրի։

[ԻՇԽԱՆԻ ԱՔՈՒԸ]

Կամաքն սատուծո Սարան յեպիսկոպոս կարգվեց Իշխանում յերանելի Ներսես (Ներսե) կաթողիկոսի կանուցած կաթողիկե յեկեղեցում ու նրա ախոռին, որ յերկար տարիներ այրեցած եր[1]։

** Գեորգ Մերչուլի և նրա յերկասիրության մասին ընդհանրապես տես, բացի վերև հիշած գրականություններից՝ Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականությունը, 96—111. Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմություն, I, 148—153. մասամբ *H. Марр*, Батум, Ардаган, Карс — исторический узел межнациональных отношений Кавказа, Пгр. 1922, стр. 13—16։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Ներսես Իշխանյան մասին առհասարակ տես հիմնվորող գլխ. 81-րդ ծանոթության մեջ։ Ինչ վերաբերում է Իշխանին, սրա մասին հետաքրքիր և հիշել հարկ Կարնեցու (Կ. Կոստանեանց, Յակոբ Կարնեցի. Տեղագիր վերին Հայոց. Յիշատակարան ԺԷ. դարու. Վաղարշապատ 1903, եջ 17—18) հետևյալ նշանակալից խոսքերը. «Եւ կայ ի մէջ ձորոյն [ձորախի] մեծամեծ վանորայք վաց ի դիւղն Խախուլ[է], ոչկ և Իշխան, որ յար և նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբ Սոսէ ի Կոստանդնուպոլիս։ Եւ էին բնակիչք երկրիս հէն հայ ազգաւ և հէն կրօնիւք վրացի, բայց հայի լեզուաւ խօսէին»։ Իշխանի յեկեղեցու վրացերեն արձանագրությունները, որ բնօրինակել եր Վենետիկի մխիթարյան Ն. Ներսես Սարգիսյանը, հրատարակել է *M. Brosset* — Notices concernant les inscriptions géorgienne, recueillées par le P. Nerses Sargissian («Mémoires de l'Académie Imperiale des sciences», VII sér., t. VIII, № 10, p. p. 14—20, tabl. III, IV ibid.)։ Մանրամասնություններն ու հարցիս բիբլիոգրաֆիան տես մեր հատուկ հոդվածում. *Л. Меликсет-Беков*, Местечко Ишхан Эрзерумского вилайета (Историческая справка), — «Тифлисский Листок» 1915 № 107։

ԻԲ.

ՅԵՓԻՄԻՈՍ ԱԹՈՆԵՑԻ (X—XI Դ.)

VI ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ (ՎՐԱՑԱԿԱՆ ՎԵՐՍԻԱ)

Յեփիմիոս Աթոնեցին (Եփթիմի Աթոնելին) կամ Սվետոգորեցին (Մթաձմիդելին) վրաց սքոլաստիկ-եկեղեցական գրականության խոշոր գործիչ մնին է, որը վախճանվել է 1028 թվին 65 տարեկան հասակում, ծնված լինելով, ուրեմն, 963 թվին: Յեվ նրա ժառանգությունն այդ գրականության գրեթե բոլոր բնագավառներում այնքան բազմակողմանի չի, որ Կ. Կեկելիձեն (Վրաց գրականության պատմություն, I, 182—211) նույնիսկ նպատակահարմար է գտնում տալ այդ ժառանգության մանրամասն տեսություն, բաժանելով 9 ճյուղի. 1) լիտուրգիա, 2) ապոկրիֆներ, 3) եկեղեցաբան (մեկնաբանական), 4) դավանաբանական-հակաճառական, 5) ասկետիկա և միստիկա, 6) հոմիլետիկա (ներբողյաններ), 7) հագիոգրաֆիա (վարքաբանական), 8) լիտուրգիկա (ատամածպաշտական կամ ծխակատարության) և 9) եկեղեցական իրավունքը: Միաժամանակ՝ Յեփիմիոսը հայտնի և վոչ միայն իբրև հեղինակ բազմաթիվ ինքնուրույն գրվածքների, այլև իբրև թարգմանիչ հունարենից վրացերեն և, նույնիսկ, վրացերենից հունարեն: Նրա «Վարուց» (կենսագրության) հեղինակ՝ Գեորգ Աթոնեցին (Սվետոգորելին) ուղղակի ասում է (Աթոնի իվերոն վանքի 1074 թ. գրչագրին ապացույցով, վրացերեն, Տփղիս 1901, եջ 4=«Վրաստանի դրախտ», 403), վոր Յեփիմիոսը «թարգմանեց վրացերենից հունարեն Բալահվարն ու Աբուկուրան և մի քանի ուրիշ գրություններ»: «Բալահվարը»՝ գա, անկասկած, Բալահվարն և Հովասափ վրույցն է, իսկ «Աբուկուրայ»-ի հարցը մինչ սրա լուծված չի (Л. Меликсет-Беков, К вопросу о Феодоре Абукуре в древнегрузинской литературе. — «Известия Кавказ-

ского Историко-Археологического Института», т. IV, 1926, стр. 41—50):

Առանձնապես ուշագրավ է Յեփիմիոսի գործունեությունը եկեղեցական իրավունքի բնագավառում: Այստեղ նրա անվան հետ կապված է մի շարք «կանոնական» գրությունների թարգմանությունը հունարենից վրացերեն, վորոնց թվում—1) այսպես կոչված՝ Հովհան Պաստոր կանոնագիրքը (Н. А. Заозерский и А. С. Хаханов, Номоканон Иоанна Постника в его редакциях грузинской, греческой и славянской, Москва 1902) ու 2) VI տիեզերական ժողովի կանոնները (А. С. Хаханов, Правила VI вселенского собора, в грузинской редакции, Москва 1903) Վերջինս Յեփիմիոսն վերամշակել և յուրատեսակ դասավորել՝ այնպիսի նյութեր մտցնելով մեջը, վոր հունարեն բնագրում չկա և չի եղել: Այսպիսի նյութերից են, ի միջի այլոց, 68-րդ կանոնը, վոր հատկապես վերաբերում և հայերին և վորի մասին Ա. Խախանովը (А. Хахановым) գրում և հետևյալը (Правила VI вселенского собора, стр. 84, 87): «В груз. тексте правило 68 предлагает чтение, не имеющее параллели в греко-слав. тексте. Оно об'ясняется результатом религиозных прений между грузинами и армянами... Сличение грузинского перевода Правил с греко-славянским текстом показывает их разницу в составе, распределении и деталях материала; некоторые правила первого отсутствуют во втором и обратно. Это обстоятельство в связи с другими фактами дает основание предположить, что грузинский перевод или восходит к особой неизвестной греческой редакции, или же представляет самостоятельную переработку их на грузинской почве. Внимательное рассмотрение грузинского текста склоняет меня ко второму предположению. Самостоятельной переработкой следует об'яснить устранение полемики против римской церкви и усиление состава правил против церкви армянской»:*

Ստորև մենք դնում ենք այլ և այլ կանոնների թարգմանությունը քաղվածաբար, համաձայն Ա. Խախանովի (Хахановым) հրատարակության:

---

* Համ. նաև՝ Իվ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմություն, վրացերեն, գ. I, Տփղիս 1928, եջ 30—31:

|„ՀԵՐՁՎԱՍՈՂ ՀԱՅԵՐԸ“|

|Կանոն| 16... Հարկավոր չե պահել յոթնյակի այն պասը, որին առաջվոր[1] ևն կոչում [և] որը պահում ևն հակոբեկնները...

|Կանոն| 17. Նուիրակս լսեցինք, որ Հայոց (Սոմխեթի) եկեղեցում սուրբ պատերի շարաթ-կիրակի |օրերը| ուտում ևն պանիր և ձու և ամեն |տեսակ| կաթնեղեն. սա անթուլատրելի յե և անկանոն[2]...

Յետ այս էլ լսեցինք, որ Հայոց (Սոմխեթի) եկեղեցում կաթնեղենը և ձուկը և գինին միա|տեսակ| ևն գնահատում, և սա անմոռաթյուն և հիմարություն[3]...

|Կանոն 33|. Այս էլ լսեցինք, որ Հայոց (Սոմխեթի) եկեղեցում և մի քանի ուրիշ եկեղեցներում «սուրբ աստված» արտասանութիյանն ավելացնում ևն՝ «սուրբ [և] անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմյա մեզ», որը նրանց լեզվով «խաչնայար» և կոչվում,... որը |ասկայն| Բագրեվանդում ժողոված հայերը... հանեցին[4]...

|Կանոն| 34. Այս էլ լսեցինք, թե |ինչպես| Հայոց (Սոմխեթի) եկեղեցում քահանայութիյան |աստիճանները| բաշխում ևն |նրանց|, որոնք քահանաների աղջկից կըլին, և այս որինքը յեղբայրան ե...

|Կանոն| 68. Այս էլ հասավ մեր ականջին, որ Հայոց (Սոմխեթի) եկեղեցում չեն ընդունում սուրբ և պատվական պատկերների նկարում և վոչ էլ եկեղեցագործում ևն նրանց (պատկերներին)[5]...

Վորովհետև անուրեն Պետրոս Քաթիչն |ինչպես «խաչեցար»-ն ուսուցել նրանց (հայերին), նուիրակս էլ այդ չար հերձվածքը յանուց նրանց մեջ[6]...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես հինգերորդ գլխի 13-րդ ծանոթութիյունը:
2. Տես. *Л. Меликсет-Бекова*, Грузинский извод сказания о посте «аражавор», стр. 87—88. 103—105:
3. Ibid.:
4. Տես հինգերորդ գլխի 12-րդ ծանոթութիյունը:
5. Հարցիս վերաբերյալ տես. Արիստակէս եպ. Սեդրակեան, *Հայաստանեայց Եկեղեցւոյ պատկերապաշտութիւնը*. Պատմական տեսութիւն. ՍՊԲ 1904:
6. Պետրոս Քաթիչի մասին տես՝ *Л. Меликсет-Бекова*, ibid., եջ 100—108:

ՓՓ.

ՅԵՓԻՄԻՈՍ ՅԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ (XI Դ.)

ՀԱԿԱՁԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԴԵՄ ՍՈՍԹԵՆԵՍ ՄԱՐՄԱՇԵՆՑՈՒ

Յեփիմիոս Յերուսաղեմացին կամ Յեփիմիոս Յերկարը (Եփթիմեն Գրձելին) հայտնի ե իբրև ժամանակակից Բագրատ IV վրաց թագավորի (1027—1072), որի պատվերով նա հատկապես կանչվել և Անչախից (Տայք-Կղարջքից)՝ մասնակցելու 1046 թվի այն բանակովին հայոց Սոսթենես վարդապետ Մարմաշենցուհետ, որը տեղի ե ունեցել Դրախտատեղ: Այդ բանակովը վորոշ արտաքսութիյուն և դեմ հանդես գալ հանդեպ Քաղկեդոնի դրվածքի մեջ, որը կրում և հետևյալ ընդարձակ վերնագիրը. «Կրոնավոր Յեփիմիոս Յերկարի (Եփթիմեն Գրձելի) հակաճառութիյունը Սոսթենես հայոց վարդապետի ընդդեմ» և որը հրատարակել և Մ. Սաբինինը իր «Վրացական դրախտը» ժողովածուի մեջ, եջ 615—621 (տմմ. նույնը համառոտ՝ Թ. Ժորդանիա, Քրոնիկաներ. I, 126—127): Այդպես այս Յեփիմիոս Յերկարն կամ Յերուսաղեմացին վրաց պրոպանութիյան մեջ ակը չի հրատարակվում և մինչ Կ. Կեկելիձեյի հատուկ ուսումնասիրութիյան հրատարակումը (Յերկու Յեփիմիոս վրաց հին պրոպանութիյան մեջ. Սպիրենեցի եւ Յերուսաղեմացի. Վրացերեն, — «Ջվենի մեցնիերեբա», № 2—3, 1923 թ., եջ 102—121) նրան շփոթում էին Յեփիմիոս Աթոնեցու կամ Սպիրենեցու հետ, որոնք ապրել են Յեփիմիոս Աթոնեցու հետ, վորը X—XI դարերին եր գործում: Նույն Կ. Կեկելիձեյի (Վրաց վորը X—XI դարերին եր գործում. Նույն Կ. Կեկելիձեյի պրոպանութիյան պատմութիյուն. I, 534—535) կարծիքով, Յեփիմիոսի Հակաճառութիյունը մեկն և այն եկեղեցաբրութիյուններից, որոնց ապրյուր և ծառայել այսպես կոչված Պատիմոթիի-ին (տես վորոնց ապրյուր և ծառայել այսպես կոչված Պատիմոթիի-ին (տես այս պրակի վեցերորդ գլխի ներածութիյունն ու Բ. մասը):

Հայոց պրոպանութիյան պատմութիյան տեսակետից այս Հակաճառութիյունը հետաքրքիր և նրանով, որ զուգադիպում և, մեկ կողմից, Անանիա Սանահնեցվո «Գիրք հակաճառութեան և

ընդդիմաբանութեան ընդդէմ երկաբնակաց»-ին, որ գրվել է 1054—1060 թ. թ., և մյուս կողմից, Հակոբ Բարաբնեցվո ընդդիմախոսութեանը հունաց դեմ կոստանդնուպոլսում 1059—1068 թ. թ. (ժանրաբանութեունները տես Լ. Մելիխեթ-Բեկ. «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» եւ., 97—120, առանձնատիպ 104—105):

Սարսև մինչ գնում ենք Յովհաննես Յերուսաղեմացվո Հակաճառութեունից քաղած համապատասխան կտորների թարգմանութեունը հոժարաձայն Մ. Սարիեանի վերոհիշյալ հրատարակութեան

ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԴԵՄ ՍՈՍԹԵՆԵՍ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Առածո ծառա Բագրատ թագավորի որոք ժողով կայացավ Դրախտայում[1], վճռ իրը յեկեղեցական, այլ առավել պինդորական[2]: Կար մի վանական (մենաստան) ծագումով հայ (առյուծ), վարդապետ և ջատագով (առաջնորդ) նրանց (հայոց) կրոնի, անունով Սոսթենես[3] (Սոսթենա), որը հարպիկ լեզու ուներ և հուժ պիտուն եր գրոց և նրանց (հայոց) անհատատոր ու թեք դավանութեան: Սա, ըստ սովորութեի, յեկավ Բագրատ թագավորի ժող, և սկսեց մեծամտութեամբ ու հպարտորեն գովել իր (հայոց) կրոնը և կշտամբել ու պախարակել մեր (մերոց) դավանութեունը: Յեվ այն պահին [Բագրատին կից] վոչոք չգտնվեցավ ուժով ընդդիմախոս, բացի նրանցից, որոնք՝ մի փոքր տեղյակ լինելով՝ հանդիպեցին նրան (Սոսթենեսին), [այն է] Մելքիսեդեկ Ծուրծդ՝արևելցին, Սանանո Դ՝վինեցին, Գրիգոր Աբղիսեցի-ձեն [և] վոմն Գաբրիել Ուկիս-ձեն[4]: Սակայն սրանք չկարողացան ընդդիմադրել [Սոսթենեսին]՝ նրանց (հայոց) գրոց անտեղյակ լինելու պատճառով: Ապա Դավիթ Բիձա-ձեն գրեց թագավորին՝ ասելով. «... Գիտցիր, որ մեր ուժերից վեր և կատարելապես ընդդիմադրել Սոսթենեսին (Սոսթենային), յերեք չկանչես այստեղ Յովհաննես Յերկարին (Եկեղեցվո Գրձնելին)»: Թագավորը պատասխանեց Դավթին. «Իմ թագավորութեան վեր տեղում և գտնվում նա այժմ»: Դավիթը կրկին գրեց թագավորին. «Լսել եմ, որ նա այժմ Յերուսաղեմից յեկած է և գտնվում է արքեպիսկոպոսական գրանը՝ Անչ[ա]յում»[5]: Թագավորը, հենց որ լսեց այս, հուժ ուրախացավ և իսկույն և նեթ գրեց արքեպիսկոպոսին, որպեսզի կրոնավորին իրեն մոտ բերի: Իսկ արքեպիսկոպոսն անհապաղ յեկավ կրոնավորի հետ միասին թագավորի մոտ:... Հայոց (Սոմխեթի) մեծ վարդապետ Սոսթենեսն (Սոսթենան) էլ յեկավ իր քվերորդու հետ միասին:... Թագավորն կարգով ողջունեց նրանց և հրամայեց նստել ըստ ծխի: Ապա Սոսթենեսն (Սոսթենան) բացեց բերանը և ասաց թագավորին... «Դու կանչեցիր քո թագավորութեան մեջ [գտնվող] բոլոր կրոնապետներին, որպեսզի բոլորը միասին ավելին լինեն. և այն ժամանակ դու կճանաչես մեր (հայոց) գավանութեան ուժը և ձերի (վրացոց) թուլութեունը. բայց յես ձեր արքայութեունից խնդրում եմ այնպիսի հրաման արձակեք, որ յեթե յես քո կրոնապետների կողմից հաղթվեմ, ապրող դուրս հանեն լինեմ քո պալատից. իսկ յեթե նրանք հաղթվեն լինեմանից՝ կարգալույծ անես [և] ոկյոր [նրանց] հանես քո պալատից»:... Ապա կրոնավորը դիմեց [Սոսթենեսին]՝ ... «Յես սուրբ քաղաք Յերուսաղեմից եմ գալիս,... որպեսզի ուսուցանեմ ձեր (հայոց) չարափառութեունը... իսկ դու վճռաբեկից ես գալիս, չգիտես. Արգինացից[6] և Մամմաշենից[7] ես գալիս ու հետդ բերում Նեստորի, Սևերոսի և Պետրոս Թափիչի ապանդը և քեզ թույլ ես տալիս բամբասել աստծո ժողովրդին և հակառակվել ուղիղ պատանութեանը»:... Ապա կրոնավորը (Յովհաննեսը) նորից դիմեց նրան. «...Դուք (հայերդ) ասիական ժողովների հետն եյիք մինչ չորրորդ ժողովը. իսկ յերբ դուք ձեր թագավորին և յերկիրը մատնեցիք պարսիկներին և՝ բաժանվելով հավատներից (բերձեններից)՝ միացաք պարսիկների հետ, Աստրով (Աուսարայի) ու նրա վորդի Շապուհի (Սապուհ

վերս յի հյուսիսային մեծ իշխանն Դավիթ դարձից[15], *որոն և կաճի հոգովին ասասծո և բարվոք կղզի ամեն ինչ ձեր պատմության*[16]*-ից»։ Սոսթենեսը (Սոսթենան) ասաց կրոնավորին. «Անիծյալ լինեի ով որ քեզ ծանոթացրեց պատմությանս-լի հետ...»։ Կրոնավորը պատասխանեց. «Անիծյալ լինեի Պետրոս Թափիչը, որը քեզ սովորեցրեց «խաչեցար»-ը և ապականեց յերևքսրբյան սրբասացությունը»...*[17] *Իսկ Սոսթենեսը (Սոսթենան) նորից սկսեց պիճել կրոնավորի հետ՝ գովաբանելով Պետրոսի վարդապետությունը. և կրոնավորն ասաց. «Ձե որ նա (Պետրոսը) լրտեսի և քոա արժանվույն վռնդվեց և անպատվության յենթարկվեց ու կարգալուց յեղավ յերեցպետությունից... ապա՝ գալով ձեր (հայոց) յերկիրը՝ լցրեց այն չար ոգանոքով և մոլորեցրեց անկիրթ ժողովուրդը... [որին] Մի քանի վրաց (Բաղքվից) կաթողիկոսն, ինչպես յերևում Դավիթ մարգարեն Գողիաթի վրա, քարով գլուխը ջարդից՝ ըյուրաքանչ և հազարավոր նրա հետևողների ներկայությամբ...»*[18]։

Ապա Թագավորը դիմեց Սոսթենեսին (Սոսթենային) ասելով. «Ուզում ես դու էլի վորևե ասելիք մեր դեմ թե միանգամայն պարտվեցիր»։ Սոսթենեսը (Սոսթենան) պատասխանեց Թագավորին. «Յես վոչ թե մարդուց հաղթվեցի և վոչ էլ հաղթվել եմ, այլ ճշմարտությունից [եմ պարտված]»։ Կրկին դիմեց Թագավորը Սոսթենեսին (Սոսթենային). «Ես ինչո՞ւ չես լինում [դավանա]փոխ»։ Սոսթենեսը (Սոսթենան) պատասխանեց. «Ինչպե՞ս թողնեմ Մարմաշենը»։ Իսկ Թագավորն ասաց. «Նրա (Մարմաշենի) վոխարենը մեղանից ասույր»։ Սոսթենեսը (Սոսթենը) պատասխանեց. «Այդպես հնարք չե ինձ համար թողնել Մարմաշենը»։ Ապա կրոնավորը դիմեց Սոսթենեսին (Սոսթենային). «Այժմ իրագործիր այն ուխտը, որը քո իսկ բերանով արտահայտեցիր, և մերկ ու անքողարկված մարմնով դուրս յելիր, վորովհետև ուղիղ հավատքի քող չունես»։ Իսկ Թագավորն ասաց կրոնավորին. «Ինձ շնորհիր այդ պատիվը, և բավական և այն ամենը, որ Թափվեց նրա (Սոսթենեսի) գլխին»։ Ապա Սոսթենեսը (Սոսթենան) վեր կացավ մերկանգամայն հագիված, ընկճված ու ամոթահար բոլորի առաջ, և հեռացավ...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս Ղաբլեան վրացագետները ընդհանրապես և վերջերս Կ. Կեկելիձեն ևլ մասնավորապես հայտնի չե թե ինչ պատճառով Ճորոխի ավազանումն եղին չհետաքրքրվել նույնացնելով Արտանուջի հետ։ Բայց գա սխալ եւ։ Ինչպես դեռ 1914 թվին իրավացի մատնանշել եր Իվ. Ջավախիշվիլին (Վրաց ժողովրդի պատմություն, II, 322), «Ղաբլեան նույն Իսախլան և, Փարվանա [լճից] դեպի հյուսիս-արևմուտք, վոր նշանակված և այժմյան 5 վերստանոց քարտեզի վրա»։ Իրոք, Իսախլան այժմյան Ջավախքումն և գտնվում Բաբլեթ-Ամամաղի մատերքում և հայտնի և իր հնություններով (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XIII, Тфл. 1892, отд. I, стр. 128—131)։

2. Համաձայն Իվ. Ջավախիշվիլու հետազոտության (op. cit., II, 438—439), Բագրատ Ջավախքումն և յեղել՝ զրկված լինելով պատերազմական գործողություններով՝ մոտավորապես 1046 թվին։ Այս իսկ պատճառով նրա ձեռներեցությամբ՝ հրավիրված «դինվորական» ժողովը, վորի մասին խոսվում և Յեփիմիոսի Հակաճառության մեջ, նույն 1046 թվին պիտի վերադրել (տմմ. Կ. Կեկելիձե, Յերկու Յեփիմիոս վրաց հին գրականության մեջ, էջ 114)։

3. Խոսքը Սոսթենես Մարմաշենցու մասին և, վորը հայտնի յե Մարմաշենի 1029 և 1033 արձանագրություններից (Надписи Мармашена. Собрал и приготовил к печати Иосиф Орбели [Памятники армянской эпиграфики. I] Игр. 1914. стр. 1, 3), նաև Դրիտոր Մագիստրոսի Թվիներից (Կ. Կոստանյանց, Դրիտոր Մագիստրոսի Թվիները, Ազգագրական հանդես, Պետերբուրգ, 1910, էջ 101—104), իրրև «առաջնորդ սուրբ ուխտին Մարմաշենից»՝ 1033 թվից։ Տես նաև՝ Կ. Կեկելիձե, Յերկու Յեփիմիոս վրաց հին գրականության մեջ, 110—113, տմմ. Լ. Մելիխեթ-Բեկ, «Վարդապետ Հայոց հիւսիսային կողմանց» etc., էջ 105, ծան. 3։

4. Բոլորն էլ անհայտ գեմքեր են վրաց գրականության ասպարիզում։

5. Այսինքն Կարջքում։

6. Հայոց կաթողիկոսների աթոռանիստն եր (Շիրակում) 944—992 թ.թ., հաստատակ մի վանք և ավան (Գ. Ալիշան, Շիրակ, 12—13)։

7. Մարմաշենի վանքը, վոր գտնվում և Ախուրյանի հովտում, անկասկած, շինված և (ուղիղ՝ հիմնադրված և) 988 թվին Դրիտոր Մագիստրոսի հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու ծախքով։ Սրան ապացույց կարող և ծառայել Մարմաշենի կաթողիկեի հարավային պատի արձանագրություններից մեկը, վորը սկսվում և այսպես. «Շնորհեաւ աստուծոյ ես Վահրամ իշխանաց իշխան եւ անթիւթատ պատրիկ սրբոյն Գրիգորի Հայոց Մեծաց ի ցեղէ Պահլաւունի եւ ի զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, որ յաղագս ի Քրիստոս յուսոյն հիմնադրելի զսուրբ եւ զտեղեկական ուխտս Մարմաշէն սկսեալ ի նիւէ թուականին Հայոց...» (И. Орбели. Надписи Мармашена, стр. 1)։ Բայց նույն Մարմաշենում կա նաև մի ուրիշ արձանագրություն, նույն կաթողիկեի նույն հարավային պատի վրա, վորը սկսվում և այսպես. «Շնորհեաւ աստուծոյ ես Մարիամ Ամիրապայ և Հայոց թագուհի, զուսար մեծին Սենեքերիմայ եւ թոռն Գագիկ Հայոց արքայի, որ եաւ զաւարտս ի սուրբ եւ ի տիեզերական ուխտն Մարմաշէն առաջնորդութեամբ հաւր Սոսթենեսի...» (ibid., 3)։ Ըստ այսմ, Կ. Կեկելիձեն (Յերկու Յեփիմիոս վրաց հին գրականության մեջ, էջ 113, ծան. 2) հետևյալ սրամիտ կարծիքն և հայտնում Մարմաշենի անվան մասին. „Ինչպես յերևում և, Մարիամ [թագուհին] շատ շահագրգռված և յեղել Մարմաշենով և կինգանի մասնակցություն և ցույց տվել նրա հիմնարկության-կարգավորման գործում. կարելի յե յենթադրել, վոր Մարմաշեն անունը վոչ թե «Մարմարաշեն» նշանակի, ինչպես Սենեքերիմ Մարտենն եր կարծում, այլ «Մարիամաշեն»“։ Յեվ իրոք, մեր կարծիքով ել, «Մարմաշեն» անունը ավելի շուտ «Մար[իա]մաշեն»-ից կարող եր առաջանալ քան թե «Մարմ[ար]աշեն»-ից։

8. Տես հինգերորդ դլխի 15-րդ ծանոթություն:
9. Տես նույն դլխի 8-րդ ծանոթություն:
10. Այսինքն հակորիկ:
11. Տես հինգերորդ դլխի 40-րդ ծանոթություն:
12. Տես տասնուկերկուերորդ դլուխը (կանոն 17):
13. Տես հինգերորդ դլխի 37-րդ ծանոթություն:
14. Տես հինգերորդ դլխի 38-րդ ծանոթություն:
15. Ուզում է ասել՝ Բագրատունյաց վրաց թագավորը:
16. Տես վեցերորդ դլխի ներածություն:
17. Տես հինգերորդ դլխի 9-րդ և 12-րդ ծանոթ.:
18. Մանրամասն տես. *Л. Меликсет-Беков*, Грузинский извод сказания о посте «араджавор», стр. 94—97, 100, 101—102, նաև հետևյալ գլուխը:

ԺԴ.

ԱՆԱՆՈՒՆ (XI Դ.)

„ՊԵՏՐՈՍ ԹԱՓԻՉԻ ՅԵՎ ԱԼԱՉԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ“, „ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐՈՒԼՅԱՆ ՎՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ ՄԱՍԻՆ“

Անանուն վրաց հեղինակի գրչին պատկանող գրվածքը առաջավորաց պահի մասին թևև մի յերկասիրության ձևով և հասել մեզ, սակայն այն իրոք յերկու տարբեր հատվածներ և ներկայացնում՝ տարբեր վերնագրերների ներքո, վորոնցից մեկն և «Պետրոս Թափիչի և ալաչի պատմություն», իսկ մյուսը՝ «Հաղորդություն Սուրուլյան վորդի Սարգսի մասին»: Յերկու հատվածների՝ իրրև ամբողջական յերկի՝ առաջին վոչ դիտական հրատարակությունն ըստ յերևույթին մի ձեռագրի հիման վրա տվեց Մ. Սաբինինը իր «Վրաստանի դրախտը» ժողովածուի մեջ, 1882 թվին, եջ 629—633: Իսկ յերկրորդ՝ քննական հրատարակությունը 5 ձեռագրերի համեմատությամբ և հանդերձ ուսերեն թարգմանությամբ en regard տվինք մենք մեր աշխատության մեջ Грузинский извод сказания о посте «араджавор» (Христ. Восток., т. V, в. II) 1917 թվին, եջ 85—96:

Ինչպես 1917 թվին, նույնպես և այժմ մենք այն կարծիքի յենք, վոր յերկու հատվածներն էլ՝ իրրև մեկը մյուսի շարունակությունն՝ առասպելական «զրույցներ» են, ուր տեղ-տեղ վորոշ արձագանք ունին գուցե դանազան պատմական իրողություններ, թևև այդ իրողությունների նկարագրության ժամանակագրական տակն ու վրա յե յեղած յեվ վո՛չ մի ճշմարտության չի դիմանում (տես ibid., եջ 97—111, հմմ. նաև Մեսրոպ վ. Մաքսուդյանցի գրախոսականը մեր աշխատության վրա, — «Արարատ» 1918 թ., եջ 148—150):

Ինչ վերաբերում է հեղինակի անձին, այդ հարցը կատարյալ մթության մեջ է: Իզուր հանգուցյալ Մեսրոպ վ. Մաքսուդյանցը

(եջ 148) մեզ վերապրում եր կարծիք (յնենտպրութիւն յան), որ «առաջելը...«առաջաւորաց» պահքին նախառնմամբ վրաց եկեղեցու մէջ... ծագած է 1103-ից յետոյ, երբ վրաց Ռուսա-Ուբրնեան ժողովում հայերը պաշտօնապէս յայտարարուում են հերետիկոս»: Ուրիշ խոսքով առած, սա նշանակում է, որ վերոհիշեալ «պատկերը» պիտի յին առնված 1103 թվից յետոյ: Այսպիսի կարծիք կամ յենթադրութիւն համապատասխան աշխատութիւնների մէջ մենք հայտնած չունինք և այժմ էլ ոչ մի հակառիս չունինք այդպիսի բան արտահայտելու: Բայց լսենք, թէ ինչ է այս հարցի մասին պրել 1923 թ. Կ. Կեկելիձեն (Վրաց պրականութեան պատմութեան, I, 539). «Այս աշխատութիւնը (առաջաբանը. Լ. Մ.-Ի.) վերապրված պիտի լինի վրացերեն, բայց ելզէլ, այն ժամանակ, երբ Աբանեվաչեա-ձեն կազմում եր իր Բոլմատիկոնը, հավանական է նրա խնդրանքով լինի վերամշակված, վորովհետև, թեև առկայ, բայց կան այնպիսի ձեռագրներ, ուր Բոլմատիկոնից քաղած հոդվածները հետ միասին արան էլ են հանդիպում»:

Մենք կարծիքով, վոչ մի անհրաժեշտութիւն չկա առաջելի հեղինակին քաշել XII դարու առաջին քառորդը (Աբանեն վաչեա-ձեն, վորն ապրել է Աբանեն Իղ՝ալթոյեցի անվամբ, իրոք, XII դարու առաջին քառորդի գործիչ է), քանի որ այն մի շարք մանրամասնութիւններում շրջում է նախորդ դիմից ընթերցողին արդեն ծանոթ Յեփրեմիոս Յերուսաղեմացու Հակաճառութեան հետ*. այնպես վոր, կիմն մենք ունինք վորևէ հնատարութիւնը վերապրելու այս առաջաբանը վորևէ ժամանակաշրջանին, հարցն, անկասկած, պիտի լուծվի հոգուտ XI դարու առաջին կիսի, կապվելով այն՝ առաջին յենթադրաբար՝ Յեփրեմիոս Յերուսաղեմացու հեղինակութեան հետ:

Սուրբ մենք տալիս ենք յերկու հատվածներից քաղած համապատասխան կատրները համաձայն մեր հրատարակութեան:

* Որինակ, ընդդեմ Սոսթենեսի Հակաճառութեան մէջ կարդում ենք. «Միքայել վրաց կաթողիկոսն, ինչպես յերբեմն Դավիթ մարգարէն Գողիաթի վրա», Սուրբ Գրքի Սարգսի մասին Հաղորդագրութիւնն գրում է. «Սուրբ հոգին պիտնց Միքայելին, ինչպես յերբեմն Դավիթին Գողիաթի վրա», եվն:

[ՊԵՏՐՈՍ ԹԱՓԻՉԸ ՀԱՅՔՈՒՄ]

[Կոստանդնուպոլսից] նա (Պետրոս Թափիչը) գնաց Հայոց (Սամխիխի) յերկիրն իր բազում համախոհներով և աշակերտներով հանդերձ, և սկսեց քարոզել հերձվածոզ կրոնն ու բամբասել հռոմայց (բերձնների) կրոնը, վորն ընդունել եչին սուրբ և մեծ ժողովներն ու առաքածազգեստ հայրերը: Յեվ բոլորը հավատում եչին նրա խոսքերին, քանի վոր առաքածանման հրեշտակ եչին տեսնում նրա մեջ՝ ասելով. «Ահա այս մարդն արքայանիստ քաղաք է պատրաստել»:

Ապա Պետրոսը առաջնայի ներշնչմամբ սկսեց կախարդու թյուններ անել և պատմել ամեն տեսակ հերձվածոզական գործերի մասին, ուսուցանելով ժողովրդին թե ինչպես պահել կաթողիկե պասերը... Յեվ այսպիսով նա (Պետրոսը) անբիծ հայ ժողովրդին թեքեցնում եր կրոնը և հերձվածքն ուսուցանում ու իր միաուժներին յենթարկում:

[ԱՊԱ ՊԱՏՄՎՈՒՄ Է „ԱԼԱՋ" ԿՈՉՎԱԾ ՇԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՄՓՈՓԵԼ ԱՅՍՊԵՍ

Պետրոսը հետո ունենում է մի շուն ալաջ անունով[1], վորին վարժեցրել եր գնալու վորտեղ հրամայեր: Մի անգամ Պետրոսն ալաջին ուղարկում է մի քահանայի մոտ, վորն իր աշակերտների ձեռով սպանել և տալիս շանը: Պետրոսը գալիս է և հարցուփորձ անում շան մասին: Քահանան չխմանալ է ձևացնում: Պետրոսը կարպատրում է հինգ որ պահք պահել, վորպեսզի առաված հայտնի ալաջի տեղը: Ժողովուրդն սկսում է պահել և ալաջն յերևում է Պետրոսին տեսիլքում՝ ասելով. «Ահա այս ձորումն եմ ընկած մահացած»:]

Ապա Պետրոսը կանչեց ժողովրդին և ասաց. «Ահա հրաշք մի մեծ և զարհուրելի. այսուհետև պատ պահեցեք ալաջի համար այն որերին, վոր յես ձեզ համար առնմանեցի»:

Այսպիսի յերևույթներով կողմից նզոված և ժողովների կողմից մերժած Պետրոսի որենքը, և թող նզովյալ լինեն ալաջի ու սուրբ Սարգսի համար բոլոր պատ պահողները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Հավանական է, որ այս «ալաջ»-ն առաջացած լինի «առաջ[ավոր]» կամ «առաջ[ավորաց]»-ի ազավաղումից։ Հմմ. նաև «ալաջ» արմատն արեւագներեն «ալըշ» (⟶ «ալըշ[կինաբ]»)-ի հետ (Լ. Մելիքեթ-Բեկ, Մի քանի խոսք առնչի պատմությունքի մասին, — «Արարատ», 1918 թ., էջ 125—128)։

Բ. ՀԱՏՎԱԾԻՑ

[ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ]

Նույն ժամանակներն ապրում էր մի վանի դյուցազն (հերոս), Սուրուբի[1] որդի Սարգիս անունով, որին՝ ընդունելով կռատակրոնության (դառնալով մոնոզոն)՝ մենաստան կառուցեց Արարատի ստորոտում, ուր և դիշեր-ցերեկ ազոթում էր։ Իսկ այս մենաստանը կառուցված էր քաղաք Դվինի մոտերքում[2]։

Այս պահին յեկավ ազարացվոց սպասալարը[3] և՝ մոտենալով [այդ] քաղաքին՝ գրավեց այն։ Ապա այդ քաղաքի մարդիկ յելան քաղաքից և ասացին Սուրուբ Սարգսին. «Դուրս յեկ քո մենաստանից և մարտնչիր Բրխաոսի թշնամի ազարյան զավակների հետ. և յեթե հաղթես ու խաղաղ վերադառնաս, մենք բոլորը քո ծառաները (սպասվածները) կդառնանք, իսկ յեթե սպանեն, քո փոխարեն՝ ի հիշատակ քո՝ խաչ կդնենք»։ Ապա Սարգիսը դուրս յելավ պայքարելու ազարացիների հետ և հաղթեց և վերադարձավ՝ նեռով վիրավորված։

Մի քանի ժամանակից հետո նորից գնաց բարձրացրեց (պինվից) Սպահանի սպասալարը և մոտեցավ քաղաք Դվինին։ Յեվ նրանց (ազարացիների) դեմ նորից դուրս յելավ Սարգիսը։ Յեվ հենց որ սկսվեց պայքարը, Սարգսին գրավեցին և ամբողջ Հայքը (Սոմխիթը) ավերեցին ու ամայի դարձրին։ Իսկ Սարգսին բազում գերիների հետ միասին Սպահան տարան սուլթանի[4] մոտ։ Իսկ սուլթանը տեսավ թե վոչ Սարգսին՝ շատ ուրախացավ, վորովհետև լսել էր նրա արիության և բարեծնողության մասին, և խնայեց նրան, քանի որ ծերացած էր։ Յեվ սկզբից և լի սկսեց նրան [գայթակղեցնել]՝ մեծ վարձատրություն և քաղաքներ ու գյուղեր խոստանալով և ասելով. «Ամբողջ Հայքն (Սոմխիթն) և իշանը ու նրանց թագավորությունները կթողնեմ քեզ, յեթե խոնարհվես ինձ և՝ ուրանալով խաչեցյալին՝ ընդունես Մահմեդ (Մուհամեդ) առաքյալից[5] մեզ տված կրոնը»։ Իսկ նա ամենևին հանձն չառավ այդ, և քանի որ նա (Սարգիսը) ծեր էր, [սուլթանը] հրամայեց անպատճառ մերկացնել նրան և ածխել, փշրել առաջիներն և անգթաբար ծեծել, ծակծկել վոտների կոճերը և՝ գլխիվայր կախելով ուղտից՝ պտտեցնել ամբողջ քաղաքը։ Յեվ այս բոլորից հետո նորից նրան (Սարգսին) գցեցին արկելանոցը, ուր՝ արժանանալով հրեշտակի տեսլյան՝ միանգամայն բուժվեց։ Ապա նրան նորից ներկայացրին բռնավորին, վորն և հարցրեց կրոնի ու հավատքի մասին։ Իսկ նա ամենայն հանդգնությամբ հայհոյեց (մերկացրեց) սուլթանին, և ահա վերջինիս հրամանի համաձայն վճիռ կնայեցավ դլխատել նրան սրով։ Յեվ այն վայրերի մարդկանց մեջ ծագեց հավատք, վոր այնտեղ, ուր նա (Սարգիսը) մահացած ընկած եր, յեկեղեցի մի այներ։

Յերկար տարիներ անց Սպահան գնացին [ուխտավորներ] Հայոց (Սոմխիթի) բոլոր քաղաքներից և բազում պատիվներով հանեցին նրա (Սարգսի) մասունքները, և նրա աջը դրին Գադի յեկեղեցում, վոր Պետրոսն եր շինել[6]։

Յեվ լուր տարածվեց Յերուսաղեմում, Կոստանդնուպոլսում, Անտիոքիայում, Ալեքսանդրիայում և Հռոմում, նաև ամբողջ աշխարհում, վոր Պետրոսը հերձվածողական կրոնին հետք դրեց Հայոց (Սոմխիթի) յերկրում։ Յեվ ժողովեցան չորս պատրիարքներն ու Հռոմի պապը և նզովեցին Պետրոսին, նմանապես բոլոր նրանց, ով պատ կպահե ալաջի համար կամ կաղոթե Սուրուբ Սարգսին, կամ վերջինիս որևէքով կընծաներ։

...[Այս] անօրեն Պետրոս Թափիչը, վորն իր մորուքը վոսկվով եր ներկում[7] և՝ քանիցս բազմելով Անտիոքիայի աթոռի վրա[8] իր չար հերձվածքի պատճառով սուրբ հայրերից յեննարկվել եր նզովքի ու դահընկեցության, յեկավ Հայք (Սոմխիթ) և ասելիք...

Իսկ գալով մեր (վրաց) յերկիրը՝ նա (Պետրոսը) բոլորին գրգռացնում եր չգիղությամբ ու հպարտությամբ...

Ապա գոռոզացյալ այն [Պետրոսը] յեկավ Կանգարք և իրեն մոտ կանչեց յերանելի Մխքայել Վրաց (Բարձրլեր) կաթողիկոսին[9], վորպեսզի վերջինս կամ նրա վարդապետությունը (կրոնը) ընդունի կամ յեթե հրաժարվի՝ հետևող աթոռից։ Իսկ սուրբ հոգին պինդ եր Մխքայելին, ինչպես յերբեմն Դավթին Գողիաթի վրա։ Յեվ յեկավ [Մխքայելը] Մցխեթից իրեն յեթակա յեպիսկոպոսներով և քահանաներով ու հավատացյալ ժողովրդով հանդերձ. և մոտեցան կանգարա[ց] յերկրին։ Յեվ հրեշտակի ցուցմունքով ազդ յեղավ, վորպեսզի նա (Մխքայելը) ինքն և նրա ուղեկիցները սուրբ քարեր

ջակին մերձակա ձորից և մտանոտն թե վոչ [ուր հարկն և], հանեն պլխարկները և լցնեն այն քարերով։ Իսկ շնորհալորդ (առաքեալն) Միքայելը սովորեցրեց բոլորին այսպես. «Ինչ վոր կանեք ինձ անելիս, նույնը արեք և դուք»։

Ապա Միքայել կաթողիկոսն յեկավ [Գագ] և յերկրպագեց Պետրոս Թափիչի աթոռին։ Իսկ նա (Պետրոսը) ձգեց իր գլուխի թևերը, վորպեսզի Միքայելն էս ըստ նրա սովորության։ Իսկ առաւոտով քաջալերված Միքայելը՝ բռնելով թևերից՝ ուժով քաշեց այն գետի ափեն և բարշ ավից ու վայր դրեց [Պետրոսին] հողի վրա, ապա գարկից քար[եր]ով, վոր [ժողված] ուներ գլխարկում և ձգվից այն անտերն և դառը [Պետրոսին]՝ մահացու վերք հասցնելով նրան։ Ապա նրա հետ յեղած բոլոր յեպիսկոպոսներն ու համախոհները պատեցին նրան (Պետրոսին) քարերով [10]։ Յեվ այսպես սպանեցին այն գայլին [11]։...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Մաւրաւլ», անկատած, հայերեն «սուրբ» բառի ազավաղումն է. հետևվածս «Մաւրաւլ Սարգիս»-ը նույն «Սուրբ Սարգիս»-ն է, վորը հայոց հավատալիքներում հունադավանների կամ հոռոմների թշնամի չի. «ս. Սարգիսը հոռոմ պիտ խրդէ». resp. «ս. Սարգիսը հոռոմ չխրդած չիլալ», կամ «ս. Սարգիսը հոռոմ պիտ փաթայունէ», resp. «ս. Սարգիսը հոռոմ չը փաթայրած չիլալ» (Ե. Շահազիզ, Նոր-Նախիջևանցիք. — «Ազգագրական Հանդես», գ. IX, 1902, էջ 14—16. Համմ. Ն. Լալայեան, Բորչալուի գաւառ, — նույնտեղ, գ. X, 1903, էջ 257), Համմ. Л. Меликсет-Бекова, Грузинский извод сказания о посте «арадзакавор», стр. 110—111:

2. Այս տեղեկությունը՝ քաղաք Դվինի մոտ մենաստան կառուցանելու մասին՝ անհրաժեշտ է համեմատել Կիրակոսի (Պատմութիւն Հայոց պարթևաց Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, 58) հետևյալ հաղորդագրության հետ Ներսես Իշխանցու (641—661) շինարարության մասին նույն Դվինում. «Յետ Ներսես Իշխանցու (641—661) շինարարութեան մեր Ներսէս ամս քսան։ Սա շինեաց զվիճակարան սրբոյն Սարգսի՝ որ ի Դուին. և կոտորեցին Իսմայէլի զբազաքն Դուին երկոտասան հազար՝ արեամբ կոտորելոյն ծածկեցաւ սուրբ սեղանն և աւազանն, և գայլն դիրեցին աւելի քան զերեսուն և հինդ հազար։ Եւ զոսկիս սպանելոցն ամփոփեաց հայրապետն ի նոյն վիճակատանն». համմ. Л. Меликсет-Бекова, op. cit., 97—98:

3. Մեսրոպ վ. Մահտեսյացցի իր զրախոսականում մեր աշխատության վրա («Արարատ», 1918 թ., էջ 149—150), ուշադրություն գարձնելով այս՝ ապաապար բառի վրա, «որ երկիցս գործածուած է վերոյիշեալ ընդարձակ երկրորդին՝ Սպահան քաղաքի անուան հետ միասին», հարց է տալիս. «Արդեօք այս զուտ պարսկական տիպարը Սպահան քաղաքի նման զուտ պարսկական մի կենտրոնի հետ

կապուած՝ իրաւունք չի տալիս մեզ ենթադրելու, [որ] հազարայուց մասին եղած հիշատակութիւնը Թիւրքմացութեան արդիւնք է, մինչդեռ պարսկական արշաւանք քրիստոնեայ Հայաստանի վրայ հանդերձ պարսկական ճնշումներով ընդդէմ քրիստոնէութեան միանգամայն պիտի համապատասխանէր ե. դարու անցքերին»։ Այս առթիվ մեզ մխիթարում է մատնանշել, վոր մեր աշխատության մեջ (էջ 100) խնդիրը հենց այսպես էլ լուծված է։ Համմ. նաև հետևյալ ծանոթ.։

4. Այս՝ «սուլթան»-ի հիշատակությունն էս տեղերն անաքրոնիզմ է V դարու անցքերի նկարագրության մեջ (տես. Թ. Ժորդանիա, Քրոնիկոններ, I, էջ 318, ծան. 26., Л. Меликсет-Бекова, Грузинский извод сказания о посте «арадзакавор», стр. 100):

5. Համմ. նախորդ ծանոթ.։

6. Վար Գագի յեկեղեցին ս. Սարգսի պաշտամունքի հետ է յեղել կապված, որա մասին վկայում են և հայ պատմիչները։ Կիրակոսը (Պատմութիւն Հայոց պարթևաց Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, 238) ասում է. «Էր ի Գագ խոչ պարթևաց կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, 238) ասում է. «Էր ի Գագ խոչ մի սքանչելագործ առ ամենայն նեղեալս, և մանաւանդ առ դևից. զի որք ոք ապաւինէին բոլորով սրտիւ, ինքն իսկ սուրբ վկայն Սարգիս բռնայր զդուռն տաճարիկ և արդևանայց, և լուծանէր զերկաթն, և առաջնորդէր մարմնաւոր տնօրէնաւ և արդևանայց, և լուծանէր զերկաթն, և առաջնորդէր մարմնաւոր տնօրէնաւ լեամբ ի տեղիս իւրեանց. և համբաւ սքանչելեացն տարածեալ էր ընդ ամենայն ազգս, զոր կանգնեալ տային սրբոյն Մեսրոպայ վարդապետին մերոյ»։ Վարդանը (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, 145) հիշատակում է. «Գագիկ անուանի բնիկ և գաւառ ի Գագիկայ թագաւորէ շինեալ, ուր տակաւին է. «Գագ անուանի բնիկ և գաւառ ի Գագիկայ թագաւորէ շինեալ, ուր կայ հռչակաւոր և սուրբ ուխտն խոչ և ակնածուն սրբոյն Սարգսի զորքայ հռչակաւոր և սուրբ ուխտն խոչ և ակնածուն սրբոյն Սարգսի զորքայ բազմաբերն, օրհնեալ ի սրբոյն Մեսրովբայ վարդապետէն և Թարգմանչէն Հայոց, որ կայ ի գլուխս Գագայ, և հայի ի գաշտն լայնանիստ և երկայնատարած»։ Իսկ ս. Սարգսին նվիրված շարականում (Շարական, Էջմիածին 1861, էջ 113) ասված է. «Առաւել պայծառ ի գլուխս Գագայ, ի գագաթան տեղւոջն օրհնեալ սրբոյն Մեսրոպայ, երազահաս սուրբդ Սարգիս բռնեալ կոթածանիչ»։ Գագի հնությունների նկարագրությունը տես՝ Ղ. Ինճիճեան, Տեղագրութիւն հին Հայաստանի, Վենետիկ 1822, էջ 513—514. Ս. Զալալեան, Ճանապարհորդութիւն ի Միջն Հայաստան, I, 1842, էջ 157—158. Մակար Բարխուդարեան, Արցախ, Բառ. 1895, էջ 4, 393, 436, ևլն։ Համմ. Л. Меликсет-Бекова, op. cit., 98—99:

7. Տես հինգերորդ գլխի 40-րդ ծանոթությունը։

8. 471, 475—478, 485—488 թ. թ.։

9. 449—472 թ. թ.— ըստ այսմ, պարզ է, վոր այստեղ էս անաքրոնիզմի հետ ունենք գործ, քանի վոր Պետրոսը Հայաստան և Վրաստան կարող էր գալ վոչ ուշ քան իր վերջնական գահընկեցությունը, վորը տեղի ունեցավ 488 թ.։ Ի դեպ, հիշենք, վոր այս Միքայելին «Վրաց գործի պատմությունը» (Е. Такайшвили, Описание рукописей, II, 722) վերագրում է Վախտանգ Գորգասալ Թագավորի յերեսին վոտքով գարկելու «քաջագործությունը»։ Համմ. Л. Меликсет-Бекова, op. cit., стр. 100.

10. Համմ. տատնուկիրկուերորդ գլխի 18 ծանոթությունը։

11. Այստեղ, անկատած, շփոթած են իրար հետ Պետրոս Թափիչ Անտիոքացին (V դ.) և Պետրոս հայոց յեպիսկոպոսը (VI—VII դ.)։ Այս իսկ պատճառով ավելորդ չի լինի լսել, թե ի՞նչ են ասում հայ պատմիչները վերջինիս մասին։ Ուխտանեսը (Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց, էջ 91) հաղորդում

և հետևյալը. «Պետրոս այս եպիսկոպոս լեալ ի տան գրան եպիսկոպոսին յաւուրս Աբրահամու Հայոց կաթուղիկոսի, այլ կռվողաձյտ, և ճոխախոս, և ճարտարապան, և բանիբուն դպիր: Զոր առաքեալ Աբրահամ առ Կիւրիոն վկնի թղթոյն իւրոյ հանդերձ ազատ արամբք, զոր յերկրորդում նուագի անդ ապառնացեալ նմա իշխանքն վրաց՝ եթէ մի առներ երթևեկ ի մեզ վասն հաւատոյ ինչ իրապատ եթէ ոչ՝ մեռանիս ի ձեռաց մերոց: Եւ կամ զի այդպէս յարձակեալ ես ի վերայ մեր գայլապար գալով քո առ մեզ գրով և պատգամաւ, զոր յայսմ բանի պարծին դու ես բնակիչք վրաց աշխարհին, ուանդուքեամբ ի միմեանց առնելով որգի ի հօրէ ուսեալք, եթէ զձեր Գայլ Պետրոսն ապանին իշխանքն մեր ի վերայ լերինն՝ որ կոչի Կանգաբք. բայց մեք ոչ գիտեմք այնպէս լեալ՝ որպէս նոքայն ասեն: Նաև հոռոմք կոչեն Գայլ զՊետրոս Անտիոքացին, որ փախեաւ ի չար ժողովոյն Քաղկեդոնի....»: Նա յնը կրկնում է և Կիրակոսը (Պատմութիւն արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, 46)՝ յորմէ՝ հենվելով Ախտանեանի վրա՝ ասում է, որ վերջինս (Ախտանեսը) «գրեաց... զքաջախօսութիւնն Պետրոսի եպիսկոպոսի, որ պատգամաւոր էր առաքեալ Աբրահամու՝ առ Կիւրիոն, զոր վերք վասն համարձակութեան նորա՝ Գայլ կոչեցին զնա»: Իսկ Թեոդոր Ստուդիտը էր Doctrina chronica monasterii Studii կամ Catechisis chronica կոչված գրվածքի մեջ (Migne, Patrologiae cursus completus, series graeca, t. XCIX. p. 1700) անվանում է նրան «Πέτρου ἐπισκόπου Ἀρμενίων, ὃν καὶ Λυκόπετρον οἴδε» ὁ λόγος καλεῖν»: Համ. Л. Меликсет-Беков, op. cit., 100—101.

ԺԱ.

ԳԵՈՐԳ ԱԲԵՂԱ (XI Դ.)

„ԳԵՈՐԳ (ԳԻՈՐԳԻ) ՍԵՎԼԵՌՆԵՑՎՈ ՎԱՐՔԸ“

Գևորգ (Գիորգի) արևգան կամ կուսակրոն քահանան (խուցեմոնոզոնը) հռչակավոր Գևորգ (Գիորգի) Սևլեռնեցվո կամ Աթոնեցվո աշակերտն եր, վորը գրի չի առել իր ուսուցչի վարքը հետևյալ վերնագրով. «Սուրբ և յերանելի մեր հոր Գևորգ (Գիորգի) Սևլեռնեցվո վարքն ու գործերը»: Այս յերկասիրության, ըստ Իվ. Ջավախիշվիլու (Հին վրացական պատմական գրականության, էջ 125—137, հատկապես 137), «վստահության առավել արժանի» ցուցակը և, վորն, ըստ Կ. Կեկելիձեյի (Վրաց գրականության պատմություն, I, 257—259), 1065—1068 թ. թ. պիտի լինի գրված: Հրատարակվել է այն 3 անգամ. նախ՝ 1846 թ.— Դ. Ղուբինով. Վրացերեն քրեստոմաթիա, վրացերեն, ա. հրատ., մաս I, ՍՊԲ 1846, էջ 255—301, ապա՝ 1882 թ.— Մ. Սաբինին, Վրացական դրախտ, էջ 437—488, և վերջապես՝ 1901 թ.— «Աթոնի Իվերոն վանքի 1074 թ. ձեռագիրն ապացնելով», վրացերեն, Տփղիս, էջ 282—351. ռուսերեն թարգմանությունը (վոչ ճիշտ, ապավրեություններով և հապավումներով)՝ М. Сабинин, Полное жизнеописание святых грузинской церкви, II, 161—212:

Ստորև մեր բերած քաղվածքների թարգմանությունը կատարված է համաձայն 1901 թ. հրատարակության:

ՀԱՅՈՑ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

...Սկզբից և նա մենք (վրացիներս) ունեցինք պրականության (գրվածքներ) ու ճշմարիտ և ուղիղ դավանության. բայց մեր յերկերը հետու յեր Հունաստան յերկրից (Բերձենաստանից). [այդ պատճառով] մեր յերկրում իրրև վորոմ ցանվեցին հայոց (առմեխների) չար սերմերը՝ բմրոտ և նենգ...

Յետ եկին այն պահին [Հռոմոց] թագաւորի (Կոնստանդին Տուկիծի) [1] *մոտ վտանգաւոր մեծամեծներից և յեղեկլիներից, հռոմ. և հայերը, որոնց հետ էր Գագիկ Կարուցին** և թագաւորական այլ իշխաններըը, քանի որ ժամանակին էլ հաշտ էր և խաղաղ և... ահեղ թագաւորը (Կոնստանդինը) հարցուփորձ անել ուղարկեց նրանց մասին...*

Ապա թագաւորը հարցրեց [Գեորգին] հայերի մասին. «Ունե՞ն նրանք արդյոք վորևէ առնչություն քրիստոնյաների հետ»: Իսկ տուրքը կարճ պատասխան տվեց. «Զար[ափատ] դաւանություն. անունը չկիսաի ասել նուկնիակ»: Յետ նրանց բոլորի հեռանալուց յետո թագաւորն ամենայն զգուշութեամբ զարձրեց հայերին... [2]

ԾԱՆՕԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կոնստանտին Տուկիծը 1059—1068 թ. թ.:

2. Հայոց գավառության քննության մասին, վորը տեղի չի ունեցել Կ. Պոլսում Կոնստանդին Տուկիծի որոք հայոց Գագիկ թագավորի հետ, մանրամասն տեղեկություններ է հաղորդում Մատթեոս Ուռհայեցին (Մատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, թ. տպ., Վաղարշապատ 1898). «Յայսմ ամի (շժդ — 1065) Տուկիծ թագաւորն Հռոմոց և պատրիարգն և ամենայն կղերկիսոքն և ամենայն զօրք նեղբլինայն լծակիցք լեալ չարաշունչ և պիղծ խորհրդոյ անօրէն թագաւորին և ամենայն մեծամեծ իշխանքն Հռոմոց ձեռն տուեալ խաւարային խորհրդոցն. վասն զի կամէր թագաւորն չար միաբանկովք իւրովք բառնալ զՀայոց հաւատոյ զաւանութիւնն և խորհէին նզօանել զհաւատս սուրբ Լուսաւորչին Գրիգորի. և կամեցաւ զնոսա զնաւառն և զնահապնզոր և զիմաքահատար զհաւատան հատատակել ի Հայս...» (եջ 159—160): «...եւ արդ անդ առաքեաց թագաւորն Տուկիծ ի Սեբաստիա քաղաքն և կոչեաց զորդիսն թագաւորաց Հայոց զԱտոմ և զԱպուսահլ զալ ի Կոստանդնուպոլիս: Եւ նորա ժամանեան առ սակաւ մի զչար խորհուրդն և առեալ ընդ ինքեանս զՅակոբոս վարդապետն բուռ աւելի անուանն Քարափնեցի, այր գիտնական գրոց բանից, և գնացին ի Կոստանդնուպոլիս: Եւ թագաւորն զառաջինն բարով ընկալաւ զորդիք թագաւորացն Հայոց և զինն սակաւ աւուրց սկսաւ յայտնել զչար խորհուրդ մտաց իւրոց և ասէր, եթէ «Հրամանք է թագաւորութեանս մերում՝ զի զուք և ամենայն իշխանք Հայոց աշխարհին առնուք յանձինս ձեր զվնասունք հաւատոյ ազգիս Հռոմոց»: Եւ յայնժամ նորա ի մէջ Հռոմոց անկան և մեծ աղաղակ առանք և ասացին ցթագաւորն Ատոմն և Ապուսահլն. «Մեք առանց Գագկայ Աշոտոյ որդւոյն ոչ ինչ կարեմք առնել, զի նա այր քաջ է և թագաւոր և մեր փեսայ. առաքեա և կոչեա զնա այսր, զի եթէ մեք առանց նորա իրք առնեմք, հրով այրէ զմեզ ի գաւառն մեր»: Եւ լուեալ թագաւորն՝ ոչ կամեցաւ զգալն Գագկայ, վասն զի այր հզօր էր յիմաստասիրական ջոխսն և անյագիւ ի պատերազմանն.*

* Բնագրում «Գագիսկարելի» (Գագիկ Կարսեցի):

*զի սա ի սուրբ Սոփի ի յամրիոնն նստէր ընդ ամենայն վարդապետան Հռոմոց: Եւ յայնժամ Ատոմ և Ապուսահլ զգայ խնդիր նանին Գագկայ ի Կոստանդիանոս: Իսկ թագաւորն Տուկիծ որոք քննութիւն հաւատոյ իւր առաջի, և Յակոբոս վարդապետն՝ որ ասի Սանահնեցի, որոք դիմադրութիւն բազում յամենայն հարցմունսն ընդդէմ Հռոմոց. բայց սակաւ մի վասն երկրնութեանն Քրիստոսի ի կողմն Հռոմոց գարձաւ: Եւ յամենայն պատճառան հաւատոցն հաճեալ թագաւորն և հրամայեաց յոյնսր վերայ դնել միաբանութեան դրել ընդ Հայք և ընդ Հռոմայ: և վարդապետան Հայոց Յակոբոս դրեաց զնոսա միաբանութեան Հայոց և Հռոմոց: Եւ հաճեալ թագաւորին ի դնր հաւատոցն, հրամայեաց գնալ զդիրսն ի սուրբն Սոփի, զի անդ յայտ հնար եղիցին ի միասին միաբանեալ Հայք և Հռոմայ: Եւ ի նոյն ժամայն իրրև զարթուն թագաւորն հասանէր Գագկի ի Կոստանդնուպոլիս, և լուեալ թագաւորն՝ ուրախ եղև յոյժ. և իրրև մտաւ առ թագաւորն, հրամայեաց մտանել զդիրս միաբանութեանն. և առեալ ընծիրգաւ Գագկի և իրրև մտանել զդիրս միաբանութեանն. և առեալ ընծիրգաւ Գագկի և իրրև մտանել զդիրս միաբանութեան Յակոբոսի, պատուհաս գնա առաջի թագաւորին յիրկուս ծանեալ զդրեալսն

ԺԲ.

ԵՓՐԵՄ ԿՐՏՍԵՐ (XI Դ.)

„ԸՆԴԴԵՄ ԱՐԻԱՆՈՍԱՑ ՅԵՎ ՅԵՎՆՈՄԻԱՆՈՍԱՑ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ ՁԱՌԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ“

Յեփրեմ Կրտսերը (Յեփրեմ Մչերկն) վրաց աքսլատսիկ-յակոբական գրականության խոշոր գեմքերից մեկն է XI դարում (Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականություն, 145—169. Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմություն I, 259—283)։ Նրա մատենագրությունն այդ գրականության գրեթե բոլոր բնագավառներում, ինչպես և Յեփրեմյան Ամբոնեցունը X—XI դարում, այնքան բազմակողմանի չի, որ Կ. Կեկելիձեն (op. cit.) նույնիսկ նպատակահարմար է գտնում տալ այդ մատենագրության մանրամասն տեսություններ, բաժանելով 11 ճյուղի. 1) բերլիտրատուրա, 2) հոմիլետիկա (մեկնաբանական), 3) դավանաբանական-հակաճառական, 4) ասկետիկա և միստիկա, 5) հագիոգրաֆիա (վարքաբանական) և պատմություն, 6) համիլետիկա (ներբողյաններ), 7) թղթակցություններ, 8) եպիստոլեներ, 9) խմբագրական, 10) քերականական, 11) լիտուրգիկա (ատամածպաշտական կամ ծեսակատարության), 12) տաղեր։

Յեփրեմի բազմաթիվ գործերից մեզ համար առանձնապես հետաքրքիր և մի գրվածք, որը կոչվում է «Ընդդեմ արիանոսաց և յեվնոմիանոսաց Գրիգոր աստվածաբանի ձառի մեկնություն»։ Այդ գրվածքին հեղինակը կցած ունի մի հիշատակարան, ուր իր կարծիքն է հայտնում հայերենից վրացերեն թարգմանություններ կատարելու մասին, կարծես թե վորոշ նախապաշարմունքով։

«Մեկնությունը» գեռևս հրատարակված չէ, բայց մեզ հետաքրքրող հիշատակարանը քանիցս in extenso օգտագործվել է վրաց գրականության մեջ (Թ. Ժորդանիա, Քրոնիկոններ. I, 227. Իվ. Ջավախիշվիլի. op. cit., 147. Կ. Կեկելիձե. op. cit., 166—167), վորն և հիմք է ծառայել ասորև բերած մեր թարգմանությանը։

ՎՐԱՑԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՈՐԴԻ ՅԵՎ ՀՈՒՆԱՐԵՆԻ ԹՈՌՆ Է

Սբրա[կրն] և քրիստոսասիրք, ազոթեցեք Յեփրեմ թարգմանչի[1] ժառն, վորը յերկրորդ անգամ թարգմանեց այս ընթերցվածքը. վորովհետև յերանելի Գրիգոր Ոշկեցվո[2] ձեռքով հայերենից թարգմանվածն այսպես [անբավարար] գտա. իսկ յես հարկադրվեցի, հայերենի փոխարեն, կրկին թարգմանել հունարենից, քանի վոր հայերենի վորդուն և հունարենի խոսքն փոխարեն, վորը տակավին անկատած չեր, անկատածելի ու անփոփոխ վորդիս վերապահեցի[3]։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինդրում «թարգմանի», վոր նշանակում է լինչպես «թարգմանիչ» նույնպես և «մեկնիչ». թեև այս դեպքում կարելի յի հասկանալ առաջին իմաստով, քանի վոր Յեփրեմը, իրոք, թարգմանչ էլ է յիղել, նույնիսկ հայերենին բավականին տպավոր վորովհետև Հովհան Դամասկոսու Օծոյծ-ի մեկնությունն մեջ ասում է, վոր մի խոսք «էիքսի» վրացերեն անփոխադրելի յե, իսկ հայերեն դա նշանակում է «քերական» (տես Е. Такаишвили, Описание рукописей, I 720. Р. П. Блэйк, О древнегрузинских версиях Ветхого Завета. По поводу Codex Z'ordaniae Грузинского Университета, — «Известия Кавк. Отд Моск. Арх. О-ва, в. VI, Тфл. 1921, стр. 37)։ Բայլ դրանից, «Ընդդեմ արիանոսաց և յեվնոմիանոսաց Գրիգոր աստվածաբանի ձառի» մեջ հայերեն «հրատարակ»-ը Յեփրեմը փոխարինել է «ուրակպարակի»-ի (Р. П. Блэйк, ibid)։

2. Գրիգոր Ոշկեցին X դարու հեղինակ է, Տայք-Կղարջյան գպրոցի ներկայացուցիչ, հայազգի (տես. Կ. Կեկելիձե, op. cit., 166—167). այս Գրիգորի մասին անտիպ աշխատություն ունի Պ. Ինգորոգ'վան՝ կարդացված դեռ 1918 թ. 15. XII վրաց Պատմա-Ազգագրական ընկ. հրատարակական նիստին (այս մասին տես. Л. Меликсет-Беков, Из истории культурных взаимоотношений армян и грузин в IX—X в. в.,—«Тифлисский Листок» 1918, № 273. Р. П. Блэйк. op. cit., 37)։ Տայք-Կղարջյան գպրոցի մասին հայերեն տես. Ա. Մելիքսեթ-Բեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ,—«Գեղարուեստ», գ. VII. Թիֆլիս 1921, էջ 34—35։

3. Ուզում է ասել, վոր յեթե հայերենից թարգմաներ, վորն իր հերթին հունարենից է փոխադրած, այն ժամանակ վրացերենը հունարենի թռուն և հասկանալի վորպես կլիներ. ուստի և թարգմանել է անմիջապես հունարենից, վորպեսզի վրացերենը հունարենի հարազատ վորդին լինի։ Համ. այս պրակի յոթերորդ գլուխը։

ԺԱ.

ՌՈՒԻՍ-ՈՒՐԲՆԻՍԻ ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ (1103 Թ.) ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ռուիս-Ուրբնիսի յեկեղեցական ժողովը վրաց մասնավոր յեկեղեցական ժողովներից մեկն է, որը կայացել է Դավիթ II Շինող թագավորի հրամանով 1103 թ. բացօթյա՝ Ռուիս և Ուրբնիս յեկեղեցիների միջև տարածվող դաշտում (այժմյան Վորու շրջանում, Սկրա կայարանի դիմացը, հյուսիս-արևելք կողմը):

Այս ժողովի կանոնները յերկու անգամ է հրատարակված. նախ՝ 1882 թ. Մ. Սաբինինի «Վրաստանի պրեսս»-ում, եջ 518—530, իսկ յերկրորդ անգամ 1897 թ. Թ. Ժորդանիայի «Քրոնիկա-նեբ»-ի II գրքում, եջ 54—72:*

Կանոններից հայերին հատկապես վերաբերում է 12-րդ կետը (կանոնը), որը տարել ենք գաղափարը:

[ԽԱՉԵՑԱՐ - ՀԱՅԵՐԸ]

[Կանոն] 12... հերձվածողներից խաչեցյալներ[1] հայերն են... Սրանց մասին առհասարակ ենք, որ [ուղղափառություն ընդունելու պեպքում] սրանց լոկին միրոն ինչպես հեթանոսներին. որովհետև պատը, որ այլ մեծ յեկեղեցիներն այսպես են անում, ինչպես որինակ Անտիոքի պատրիարքական աթոռն ու նրան հետևող ամբողջ արևելքի յեկեղեցիները[2]:

* *Կանոնների ուսումնասիրությունը տես. Իվ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմություն, I, վրացերեն, Տիֆլիս 1928, եջ 39—46, համ. բավականին հնացած և գիտական արժեքից միանգամայն զուրկ գրքույկը. Андроник Гвелесиев, «Дзеглис цера» (Хартия) грузинского царя Давида III Возобновителя. Тифлис 1898:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համ. հինգերորդ գլխի 12-րդ ծանոթ.: «Աշակերտները», իբրև հայկական, վրաց պրակտիկայի մեջ մտած և հունարենի ազդեցությամբ, ուղղափառ ընդունելու պեպքում ենք Quomodo recipiendi sunt Armenii haeretici-ի *մեջ (Migne,* PG. CXXXII, 1257), *կամ ընդհանրապես կարգում ենք այլուր, ճիշտ այնպես, ինչպես այն նույն հունարենից մտած և սլավոներենում «հանգիս» ձևով (И. Мансветов,* О постах православной восточной церкви, 50). *տես նաև՝ Л. Меликсет-Беков,* Грузинский извод сказания о посте «араджавор», стр. 106—107, 81, 73:

*2. Այս խոսքերը վորոշ արձագանք են վրաց յեկեղեցու՝ նախնական շրջանում Անտիոքի աթոռից կախման և նույն Անտիոքից ինքնագլխությունն (ավտոկեֆալիան) ստանալու մասին հոբինված թեորիայի, վորի ապրյուրը Յեփեսի կրառների (տես դեպորդ գլուխը) յերկասիրությունն և հետևյալ վերնագրով «Հանդրձաբերի

ԺԲ.

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Կանգ առնելով վերջ գավանաբանական-վիճաբանական գրականության վրա, որն առանձնապես սկսեց զարգանալ IX դարում ու իր գագաթնակետին հասավ XI—XII գարերում, Կ. Կեկելիձեն (Վերջ գրականության պատմություն, I, 539—540) գրում է. «Անհասարակ պետք է նկատենք, որ հայերի ընդդեմ ուղղված վիճաբանական գրականությունը հունարեն լեզվով, որն իններորդ գարուցն է սկսվում, առանձնապես սուր կերպարանք ստացավ XI—XII դարում։ Այժմ հավաքում են ի մի յունական-գավանական բոլոր այն առձեռնություններ, որոնք հայերը տարբերվում են հույներից, քննադատության բովով են անցկացնում այդ և հաճախ այնպիսի պատմություններ հորինում, ինչպիսին է առաջ[ավոր]ի (ապաջորի) մասին առասպելը։ Այսպիսի հորինվածքներից մի քանիսը վրացերեն էլ է թարգմանվել»։

Ապա նույն պատմականը մատնանշում է (ibid), որ Արան Վաչեձեն իր Խոմաֆիկոնի մեջ ունի մոտքած 3 այսպիսի հորինվածքներ. 1) «Հայոց հերձվածքի յերեսուն պատճառներ»[1], 2) Յերուսաղեմի Թոմաս պատրիարքի թուղթը Հայոց հերձվածողների դեմ, որը գրի է առել Թեոդորոս Յեպիկուրան (Արեւելուրան) Խարանի յեպիսկոպոսը, և հունարեն թարգմանել Միքայել յերեցն՝ Յերուսաղեմի ամոռի միաբանը[2], և 3) Նիկիտա Ստիփատի՝ Ստուդիի վանքի արեղայի՝ Յեղծ հայոց հերձվածքի (5 ճառ)[3]։ Բացի դրանից գոյություն ունեն վրացերեն նաև. «Ամենայնատնկի Թեոդորոսի (Յեպիկուրայի [Արեւելուրայի] ?) հակաճառություն ընդդեմ հայոց»[4], «Մաքսիմոսի ընդդեմ հայոց»[5] և «Թե սուրբ կաթողիկե յեկեղեցին ինչու չի ղովում հայերին»[6]։

Թրդատ*) թագավորի դստեր վրդ դուն: Իսկ այս Բաքարը բանակեցավ պարսից թագավորի՝ իր հոր յեղբորորդու հետ, խնամիացավ ու վոխանակեց յերկիրը, և նրա փեսա Պերոզին (Փերոզին), վորը սիրում եր Միհրանից (Միրհան-նից) նրան չնորհեց Ռանր մինչ Պար-տավ (Բարդավ), ավեց Սամշվիլդեյից սկսած մինչ Աչոցքի** գլուխը: Ապա Պերոզն (Փերոզն) ու նրա ժողովուրդը զորությամբ՝ ուժ ստանալով Տոսրո-վից. հայերը գավթեցին Ջավախքը (Ջա-վախեթը), [իսկ վրացիք] հաղթեցին ու քշեցին հայերին: Ապա Բաքար թագա-վորը, հունաց (բերձենների) և պարսից թագավորների միջնորդությամբ, նա-մակ գրեց իր յեղբորորդուն ու նրանց մորն Սալոմեյին:...

...[Բաքարի վորդի Միհրդատ թագա-վորը որոք] մեռավ Հակոբ յեպիսկոպոսն, և [նրա տեղ] յեպիսկոպոս նստեց Հովել (Իոք) հայը՝ Նեբսես (Նեբսե) կաթողի-կոսի սարկավագը...

Ահա և պարսից թագավորն ուղար-կեց իշխան[ներից մեկ]ին մեծ զորքով, վորպեսզի հարկ դնի հայերի(սոմեխների) և վրացիների վրա: Ապա հայերն (սո-մեխներն) դեսպան ուղարկեցին [վրաց] Վարազ-Բաքար [թագավոր]ի մոտ՝ ա-սելու, վոր ժողովեն և ոգնություն խնդրեն հույներից (բերձեններից), և՝ քացելով դուռն Կովկասյաց (Կավկաս-յաց)՝ բերեն ոսկերն ու լեզդիներին (լե-կերին) պարսից ընդդիմադրելու: Յեվ նրա յերեելիներն էլ խորհուրդ տվին տալիս ընդդիմադրելու պարսիկներին: Բայց նա չլսեց վրէ հայերին (սոմեխ-ներին) և վրէ էլ իր յերեելիներին, վո-րովհետև համաձակ չեր ու վախկոտ եր և թաք կացավ կախքի (կախեթի) ձորում... Նախ և առաջ պարսիկներն յեկան Հայք (Սոմխիթի), վորն և ավե-

* Var. Թարդատ:
** Բնագրում՝ Աչոցի. համ. 148 յեր. * ծանոթ:

ստաչանս արձակեալ ի Յոյնս, և յամե-նայն կողմանց ժողովեալ զօրս՝ առէր պատերազմ ընդ Հայս ի Ջաւախէթ, և հալածեցին զնոսա. և Թագաւորեաց Բահքար՝ ուժգին Յունաց և Պարսից Գիր էառ ի Սոդոմեայ և յորդւոյ իւրմէ...

... Եւ յետ նորա (Յակոբ եպիսկո-պոսի)՝ Նեբսէս կաթուղիկոսն Հայոց ձեռնադրեաց զսարկաւագն իւր զՅակոբ (ուղիղ՝ զՅովել)՝ եպիսկոպոս վրաց, և առաքեաց:...

... Յաւուրսն յայնոսիկ եկն զօրա-գլուխն Պարսից՝ մեծաւ ուժով ի սահ-մանս Հայոց և վրաց, յաւուրս Տոսրո-վայ՝ արքայի Հայոց, որդւոյ քաջին Տրդատայ, և խնդրէր հարկս ի Հայոց և ի վրաց: Եւ հրամայեաց Տոսրով Թա-գաւորին վրաց՝ ածել զքենակիչս Կով-կասու՝ զԼեկս և զՕսս, զի կռուհացին ընդ Պարսս: Եւ կնամարդին այն վարդաբերք երկիւղալից եղեալ՝ Թագաւ. ի Ձորն Կուխեթոյ. և եկեն Պարսիկք և շինե-ցին բերդ ի գրանն Տփխեաց՝ հակառակ Մցխեթոյ:...

բնկլին։ Ապա մտան Բարթլէ, և պարսից դորապետը (իշխանը) կառուցեց Տփղիսը (Տփղիսը) «պռնկերի» մէջ [Կասպից և Խարիսանի]՝ ընդդեմ Մցխեթին...

[Վարազ-Բաբարի մորդի Փարամանի մահից հետո] թագաւորը նստեց նրա յաղթայը Միհրդատը (Միհրդատ)՝ Տրդատի (Թրդատի) գտեր և Վարազ-Բաբարի մորդին, հորով Բաբայեան և մորով Ռևյան, մորոնք Միհրանի որդոց սերնդից էին...

... եւ թագաւորեցուցին իշխանքն զՏրդատ, զորդի գտերն Մեծին Տրդատայ՝ աշխարհին Հայոց արքայի...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Համմ.* Մ. Խորենացվո *տված ծննդաբանութիւնը (I, 5)։*

2. *Ասել է՝ «Արարատ և Արագած», կամ դուրս «[Մ]արարատի և Մասիս». Համմ. F. Murad,* Ararat und Masis. Studien zur armenischen Altertumskunde und Literatur, Heidelberg 1901. *Նաև՝* Ս. Կանայեանց, *Անյայտ դաւառները հին Հայաստանի, Էջմիածին 1914, էջ 76—88։ Համմ. Վրաց մէջ գրպիտատարածող ընկ. հավաքածուի № 3226 ձեռագրի լուսանցքում տված դիտողությունը՝ «Արարատի Ավազդիա» Արարատը՝ Ալազյազն է (E. Такайшвили,* Описание рукописей, II, стр. 3)։

3. *Տես նախորդ ծանոթութիւնը։*

4. *Տես նուլնը։*

5. *Այն հանգամանքը, որ Լեոնտիոս Ռուխեցին Կովկասյան ժողովրդների եպոնիմները հորինելիս առաջնորդությունը՝ հանձինս Հայկի՝ հայերին և ընծայում և վոչ թե՝ հանձինս Բարթլոսի՝ վրացիներին, — այնինչ Բ. Յ.-ի վարիանտներից մեկում, որը Մոսկվայի Ռումյանցևի անվան թանգարանում էր գտնվում և այդ պատճառով «Ռումյանցևյան վարիանտ» էր կոչվում, այդ կարգը փոխված էր հոգուտ վրացիների (նույնը հետագայում յեղան յեկավ և Վրաց մեջ գրպիտություն տարածող Ն. ընկերության հավաքածուի № 3666 ձեռագրում),— հենց էր տվել վրաց չորս բանակի պատմաբանասեր-բանաստեղծներից մի քանիսին, որ. Ոիբոմեենդլիշվիլուն (Սերեբրյակովին), Ա. Խախանաշվիլուն և Մ. Ջանաշվիլուն վարնասուն բարձրացնելու վրաց ժողովրդի «պատիվը» վոտնատակ անելու և վրացապետության հիմնադիր՝ բագրատատակ ակադ. M. Brosset-ին մեղադրելու Բ. Յ.-ի վրացերեն բնագիրը խեղաթյուրելու մեջ։ Սակայն այդ յեղյուրենները իր ժամանակին արժանի պատասխանը տվին՝ առաջին յերկուսի նկատմամբ Ն. Թաղ'այշվիլին (Описание рукописей, II, 92—96), իսկ վերջինի նկատմամբ Իվ. Ջավախիշվիլին (Հին վրացական պատմական գրականությունը, ս. հրատ., էջ 119, բ. հրատ., էջ 177)։ Յեվ իրոք, Ն. Թաղ'այշվիլու ասելով, «никакого искажения текста... Броссе в данном месте не допускал, и во всяком случае, прежде чем обвинять в искажении этого места Броссе, следовало в том же обвинить царевича Вахушта, который в своей Истории Грузии (издание Бакрадзе, стр. 35) точно воспроизводит известие К.-Ц. в пользу

армянского языка. Известно, что первая часть Истории Грузии Вахушта есть сокращенное повторение содержания К.-Ц. Что касается первого существенного отличия Румянцевского списка от других, по которому первенство между сыновьями Таргамоса отдается Картлосу, а не Аосу, то это явление исключительно свойственно Румянцевскому списку и его копии. Ни в одном другом списке не только довахтанговском, но и вахтанговском мы такого явления не наблюдаем. Нет этого и в Истории царевича Вахушта (стр. 28—32). Стало быть, это тенденциозное изменение текста не есть дело Вахтанговской комиссии. Это изменение, без сомнения, позднего происхождения, начала XIX века. Поэтому оно не повлияло на списки XVIII века» (op. cit., 96): Իվ. Ջավախիշվիլին էլ (op. cit., 172) *համամիտ է* Ն. Թաղ'այշվիլուն, *որ «այստեղ, ի հարկե, վոչոք վոչ մի դեպքում չի կասկածել և որ այս տեղեկությունն անպայման իրեն՝ Լեոնտիոս Ռուխեցուն է», որն «ընդհանրապես հայոց նախահորը և հայերեն լեզվին և առաջնություն ընծայում»։ Բայց «ինչո՞ւ»՝ „Վորովհետև, — պատասխանում է նույն գիտնականը,—Լեոնտիոս Ռուխեցին գրեթե ամեն բանի մեջ հետևում է մի յերկասիրության, որը սխալմամբ Յեփրեմ Ասորու հորինված էր համարվում և կոչվում է «Սրբո հոր մերո Յեփրեմի ասացյալ՝ մեկնություն ստեղծագործության յերկնի և յերկրի և Ադամի մասին...»“։ Վերջինս, որ հրատարակել է Ն. Թաղ'այշվիլին իբրև հավելված Բ. Յ.-ի «Մարիամ Թագուհու վարիանտի» (էջ 786—846), ըստ Իվ. Ջավախիշվիլու հետազոտության, այն չորքի՝ պարսկահոն համարված՝ գրվածքներից են, ինչպիսի յեն ասորական «Գանձանձամ»-ը (գանձուց անձավ, այր գանձուց) և եթովպական «Ադամագիրք»-ն, թեև իրոք առաջինի ուրույն խմբագրություններից մեկն է։ Յեվ այս «Գանձանձամ» կամ «Այր գանձուց» գրվածքն է, Յեփրեմ [Կրտսեր]ի ձեռքով վրացերեն վերածած, ուր ասված է, որ «յերբ Նոյան տոհմերն ու վորդիք Սեմ, Քամ և Հաբեթը... ընացին արևելքից, մի դաշտ գտան վողողված յերկրում, ուր և հաստատեցին բնակություն, և եր նրանց լեզուն մի, և սկսած Ադամից մինչ այդ որը նրանք խոսում եյին ասորերեն լեզվով, վորը հույժ տարածված է մինչ Հայէ (Սոմխեթ) և [վորը] բոլոր լեզուների թագավորն է... իսկ յերբ Բաբելոնում աշտարակ շինեցին, այնտեղ բոլոր լեզուներն իրար հետ խառնվեցին, և ցիր ու ցան յեղան յերկրիս յերեսին... և այս ժամանակից սկսած աղբարհումս յեղավ յոթանասուն լեզու և յոթանասուն իշխան, և յուրաքանչյուր լեզվին տվին թագավոր» (Ն. Թաղ'այշվիլի, Քարթլիս – գևորեբա, Մարիամ Թագուհու վարիանտը, էջ 812—813, հավելված)։ «Մյցին դարերի պատմչի համար այս որինակելի յերկասիրությանից Լեոնտիոս Ռուխեցուն նկատած պիտի լիներ, վոր սկզբում յերկար տարածության վրա, վորը «մինչ Հայք» եր հանուում, իշխում եր մի լեզու՝ ասորերենը, ուրեմն Հայքում ասորերենը չի յեղել տարածված, այլ հայերենը, այսպես պիտի դատեր և հենց այսպես էլ դատել է մեր պատմչը»,—նկատում է Իվ. Ջավախիշվիլին (ibid., 179), և ապա շարունակում. «Քանի վոր վերոհիշյալ յերկասիրության մեջ Հայքից դատ ուրիչ վոչ մի յերկիր հիշատակված չէ, այս պատճառով Հայքն ու հայերեն լեզուն նա (Լեոնտիոսը) համարել է մեծ նշանակություն ունեցող», և «սրանով և բացատրվում, վոր Լեոնտիոս Ռուխեցին «Հատինն» և հայերեն լեզվին այսպիսի առաջնություն է ընծայում»։ Իվ. Ջավախիշվիլու յեզրակացությանն այս կետում սկի համամիտ չեն Կ. Կեկելիձեն (Լեոնտիոս

Ռուխանցվո գրական աղբյուրները, 10—11), որը՝ հետևելով Ֆ. Պատկանյանին (Ванские надписи etc., ЖМНПР, 1883, декабрь, 240—242), սակայն վերջինիս անունը չհիշելով՝ արծարծում և այն միտքը, որ հայերին և հայերենին առաջնության տալու գաղափարը Լեոնտիոս Ռուխանցին յուրացրած պիտի ունենա Մ. Խորենացվո պատմության աղբյուրների վորքան էլ ուշում և սրամիտ լինի տեսակետները Իվ. Ջավախիշվիլու կարծիքը՝ մի կողմից, և համանման լինի ըստ էության Կ. Կեկելիձեյինը՝ մյուս կողմից, մենք, սակայն, կարծում ենք, որ յերկուսն էլ խնդիրն լուծելիս աչքաթող են արել այն կարևոր հանգամանքը, որ Լեոնտիոսի դրվածքում կամ գուցե նրա ձեռքի տակ յեկած վրացերեն աղբյուրում եպոնիմների անունները հունարեն վերջավորությամբ են գործածված, հետևապես հունականի ազդեցության դրոշմն են կրում (հմմ. К. Патканов, Ванские надписи etc., ЖМНПР, 1883 г., декабрь, стр. 239—240):

6. Հաոսի պատերազմը Նեբրոթի դեմ, ինչպես ուղիղ գլուխ ունի, և միջի այլոց, և Կ. Կեկելիձեն (Լեոնտիոս Ռուխանցվո գրական աղբյուրները, եջ 11—14), հիշեցնում և հայանի առասպելը Հայկի և Բելի կռվի մասին, որը մանրամասն նկարագրությունը տալիս և Մ. Խորենացին (I, 11). հմմ. К. Патканов, Ванские надписи etc., ЖМНПР, 1883 г., декабрь, стр. 242:

7. Տես 2-րդ ծանոթությունը:

8. «Սոմխուրին» և «սոմեխ» (այստեղից «Սոմխեթ»-ի) տերմինների մասին, յերեք մի կողմը թողնենք M. Brosset-ի ստուգաբանությունը վրացերեն «սամխրեթ» հարավ բառից (Histoire de la Géorgie, t. I, p. 15—16, n. 5; Introduction, p. IV—VI), որը լեզվաբաններին, ի հարկե, անընդունելի յև, անհրաժեշտ և հիշատակել Ն. Մառի կողմից այլ և այլ ժամանակ այլ և այլ առիթով առաջարկված հետևյալ յերեք ստուգաբանությունները. 1. «սոմեխ»←«սո-մեխ» ‖ «սոմեխա», այսինքն մեխ ‖ մեխ (История термина «абхаз», — «Известия Академии Наук», 1912, стр. 705): 2. «սոմեխա» ← «սո[ն]-մե[ս]խա» ավան և մեխ ժողովրդների հիշատակած Armenochalybes, Պտողեմեոսի Σουανοκόλχοι և Փավստոս Բյուզանդացվո «Նկերսուանք»-ը (Из поездок в Сванию,—«Христ. Восток», т. II, 1913, стр. 22—23; Яфетические названия деревьев и растений,—«Изв. Акад. Наук», 1915, стр. 945; К дате эмиграции мосохов из Армении в Сванию,—ibid., 1916, стр. 1690; Грузинская поэма «Витязь в барсовой шкуре» Шоты из Рустова и новая культурно-историческая проблема, — ibid., 1917, стр. 439—442, հմմ. նաև մեր՝ Несколько слов о термине «сомех», — «Христ. Восток», т. VI, 1918, стр. 93—94. Հայերը վրաց հին դրականության մեջ, — «Գեղարուեստ», VII, 1922, եջ 36. Введение в историю государственных образований Юго-Кавказа, Тфл. 1924, стр. 97—98). ընդ սմին հատկապես Լեոնտիոսի այս տեղեկության առթիվ մեծ դիտականը 1913 թվին դրում եր. «... в одном списке Грузинских летописей утверждается, что первоначально грузины говорили по-сомехски, а потом они заговорили по-грузински. При намеченном ходе научных приобретений это значило бы, что первоначально у грузин церковно-литературным языком служил сомехский, т. е. сванский язык Сомехии, а с известного момента они свой родной картский язык обратили в литературный язык церкви» (Из поездок в Сванию,—«Христ. Восток», т. II, стр. 24): Ապա 1921 թվին նույն գիտնականը գրում եր հետևյալը. «Грузины... называли и продолжают называть армян не особым каким-либо этническим термином, а тем, точнее, слиянно теми двумя терминами, какими армяне раздельно пользовались для именования двух армянийских народов, hay'ев (‖ son' ов) и hayk'ов (‖ mes'ц ов), отложившихся основными слоями природной своей речи в двух реально сохранившихся языках Армении, haйском (hayeren) и haйкском (haykakan). Для Армении грузинский гибридный термин someq' (‖ *hay-hayk) более реально историчен и об'ективен, чем простые армянские названия, суб'ективные, будут ли это по народному самоопределению — hay, или по культурно-историческому, т. е. национальному самоопределению — hayk, resp. haykazən ‖ haykazun. Но тот же термин someq' у грузин являлся с известного момента камнем преткновения в отношении Грузии. Имея в крае до-историческую давность с точки зрения национальной истории и грузинской, и армянской, someq первоначально означал гибридное племенное об'единение или первичного населения Армении, чисто яфетического, или вторичного ее населения – мешанного уже с арноевропейцами, яфетидо-арноевропейцами. Позднее, по мере дальнейшего перерождения части того же со-мехского ‖ *haй-haйкского населения в пределах Грузии в грузин, этнический термин someq' стал означать грузинское племя, сохранив однако исторически-преемственно первоначальное свое значение как этнического термина, наименования населения Армении (Астрономические и этнические значения двух племенных названий армян,—«Записки Восточного Отд. Рус. Арх. О-ва», т. XXV, стр. 242—243): 3. «սոմեխ»←«սո-մե-խ» ‖ «սո-մեր» ‖ «սու-մեր» ‖ «շու-մեր»(Скифский язык, «По этапам развития яфетической теории. Сборник статей Н. Я. Марра», М.-Л. 1926, стр. 358—361):

9. Լեոնտիոսի մեկնությունը վրացերեն լեզվի ծագման խնդրում այն իմաստով, որ նա այն համարում և Բարթլիում յերեսին տարածված լեզուների «խառնուրդ», հիշեցնում և Ստրաբոնի (XI, 14, 5) մեկնությունը հայերենի նկատմամբ, որը նմանապես «խառնուրդ» եր ճանաչված: Սակայն, հետաքրքրը և թե ինչպիսի կարծրքի եյին վրաց հին գործիչներն իրենց մայրենի լեզվի մասին. «Վրացերեն լեզուն թողված և մընչ յերկրորդ գալուստն նորա (Քրիստոսի)՝ գաւելու, վորպեսզի այս լեզվով ասված մարգարեները բոլոր լեզուները», — այսպես և սկսում X դարու անանուն վրացը հեղինակն իր «Վրացերեն լեզվի գովասանքը» («Կավկասիոն» հանդես, № 1—2, Տփղ. 1924, եջ 269) և ապա վերջում ավելացնում. «Յեվ պճնագարդ և տերոջ անվամբն որինյալ այս գեղեցիկ և խոստանած (գնանած) լեզուն սպասում և տերոջ յերկրորդ գալստյան և ունի նշան, վոր լինուսն և չորս տարով մեծ և ուրիշ լեզուներից Քրիստոսի գալուստից մընչ այսօր»: Գեորգ Մերչուլը (H. Марр, Житие св. Григория Хандзтийского, եջ մթ)՝ նույնպես X դարում՝ գրում է. «Բարթլի յե համարվում ընդարձակ յերկիրը, ուր ժամասացությունն կատարվում և և ուղիքներն արտասանվում են վրացերեն լեզվով և միմյանց կվերլեկցյոնը (տեր ողորմա-ն) հունարեն»:

10. Տես նախորդ ծանոթությունը:

11. Ըստ M. Brosset-ի (Histoire de la Géorgie, I, p. 40, n. 1) պիտի լինի «Անձհանցձոր»: Բայց մենք կարծում ենք, որ գուցե Անանուն աշխարհագրի

(Մովսէս Խորենացո ?) «Անձահիճոր»-ը լինի, որը Վասպուրականի ոռմանններում և ցույց տրված (Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, հրատ. [Արաէն վ. Սուկրեաճի], Վենետիկ 1881, եջ 32); Հմմ. նաև Ղ. վ. Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ 1822, եջ 208—209. *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, стр. 315, 317:

12. «Վրաց գպրութիւն» (մծխդնօբրօբա ჴքարթուլի) ասելով՝ Լեոնտիոսը, անկասկած, ակնարկում է այն այբբենի մասին, որը գոյութիւն պիտի ունենար վրացոց մէջ նախաքրիստոնէական շրջանում: Ճիշտ է, վերջերս Կ. Կեկելիձեն (Վրաց գրականութեան պատմութիւն, I, 1923, եջ 28—31) ջանաց վրացերէն այբբենի մշակումն և ձևավորումը վերագրել, համաձայն Կորյունի ցուցմունքների՝ Մեսրոպի վերահսկողութեամբ և ուղղ Ջաղայի անմիջական մասնակցութեամբ և դեկավարութեամբ Վրաստանում դրծող՝ հատուկ կոմիսիային 412—429 թ. թ. մէջտեղին, սակայն պարզ է, որ ինչպես վրացերէնը, նոյնպես և հայերէն տառերի «գյուտ» հարցը կարող է նոր լուսաբանութեան բոլորովին այլ հիմքերի վրա բայց՝ համեմատած հայերէն նմանագրերի հետ՝ վրացերէնի հարցն ավելի բարդանում է ընդհրնի այն հանգամանքի, որ վերջինումս յերեք տեսակի այբբեն է հայտնի. 1. «խուցուրի ասոմթավրուլի» գլխատառ կամ գլխագիր յեկեղեցական (յերկաթագիր), 2. «խուցուրի նուսխա» փոքրատառ յեկեղեցական, և 3. «մխեդրուլի» զինվորական կամ աշխարհիկ: Այդ յերեք այբբենիների նոնչուքեան հետ վրացագէտները պատկերացրած ունեին այսպես. մինչդեռ քանասերները մի խումբը Ի. Ոբրոմաձեի-Սերեբրյակովի գլխավորութեամբ (Об изобретении грузинского алфавита,— Труды V археологического съезда в Тифлисе в 1881 г., Москва 1887, стр. 221—229) ապացուցում եր, որ «գինվորական» կամ «աշխարհիկ» այբբենն է ավելի հինը, որը հորինվել է դեռ հին Փառնավազ թագավորի որոք, իսկ ապա քրիստոնէութիւնն ընդունելուց հետո վրացիք հնարել են նորը կամ վերածել հինը նորի, որը «յեկեղեցական» անվամբ է հայտնի, բանասիրների մի ուրիշ խումբ Գ. Բաքրաձեի գլխավորութեամբ (Грузинская палеография,—նույն հրատարակութեան մեջ, եջ 207—214. Վրաստանի պատմութիւնը, վրացերէն, Տփղ. 1889, եջ 82—85) ապացուցում եր ընդհակառակը, որ սկզբնական այբբենն է «յեկեղեցական գլխագիրը», որից եղոյուցների ճանապարհով նախ առաջացել է «յեկեղեցական փոքրատառը», իսկ ապա X—XI դդ. «զինվորականը» (աշխարհիկը): Այս՝ յերկրորդ խմբակի կողմից արծարծված տեսակէտն ավելի կայուն հանդիսացավ գրականութեան մեջ, քանի որ նրա ջերմ պաշտպանը և նույնիսկ ջատագովը հանդիսացան նախ՝ XIX դարու վերջերը՝ պրոֆ. վ. Բոլոտովը (О сочинении студента Георгия Гамрекелова «Древнейшая история церкви в Грузии etc».,—«Христианское чтение», 1898 г., в. IV), իսկ ապա XX դարու չորրից սկսած և մինչ մեր օրերը գրեթե բոլոր վրացագէտները: Սակայն այս խնդրում առանձնապես հետաքրքրական յեն Ն. Մառի և Իվ. Ջավախիշվիլու կարծիքները: Ն. Մառը 1925 թվին գրում եր (Грамматика древнелитературного грузинского языка [Материалы по яфетическому языкознанию, XII], Лнгр., стр. 2). «Вообще церковный алфавит как инициальный, так строчный есть письмо грузинской христианской культуры, возникшее с нею и обслуживавшее религиозно-просветительные, а затем и общественные интересы грузинской христианской среды. Письмо, обслуживавшее культурные интересы грузинской языческой среды, до нас не дошло. Вероятно, *военный* или *рыцарский* алфавит есть его пережиток, получивший развитие в светской военной среде под воздействием церковного письма, в свою очередь влиявший на него, на выработку его строчного вида»: Հատկապես կանգ առնելով Լեոնտիոսի ցուցմունքի վրա, Իվ. Ջավախիշվիլին 1928 թ. (Վրաց հնագրութիւնը, վրացերէն, Տփղ., եջ 188) գրում եր. «Վրացական պատմական գրականութեան մեջ առաջին մի-ջ-այն Լեոնտիոս Ռուխեցվո (Լեոնտիս Մրովելու) յերկասիրութեան մեջ ենք հանդիպում տվյալին վրաց այբբենի հորինման ժամանակի և հորինողի անձնավորութեան մասին: Նա վրաց «գպրութեան» հորինումը Փառնավազ թագավորին և վերագրում: Բանի որ այս Փառնավազին XI դարու այս՝ վրացի պատմիչը պատկերացնում է իբրև Վրաստանի պետութեան և հասարակակարգի, ինչպես և կրոնի հիմնադիր, որն առասպելական անձնավորութեան և վերածված, այս պատճառով Լեոնտիոս Ռուխեցվո՝ վրաց այբբենի մասին [տված] տեղեկութիւնն իր արժեքը կորցնում է: Այստեղ միմիայն այն հանգամանքն և ուշագրավ, որ XI դ. վրաց պատմիչը վրաց այբբենը պատկերացրած ունի իբրև նախաքրիստոնէական շրջանի մի դյուտ, որը, նրա կարծիքով, հնից հին եր և ուրիշների նման քրիստոնէութեան շահվածք չեր համարում: Դուցե ապագայում պարզվի, ուներ արդյոք Լ. Ռուխեցին այս առթիվ որևէ հիմնական ազբյուրներ կամ պատմական ավանդութիւն: Սրանից հետո Իվ. Ջավախիշվիլին հատկապես չդադարում է վրաց այբբենի՝ այս կամ այն այբբիններին և, ի մէջ այլոց, հայերենի հետ (ibid., եջ 189—196) ունեցած առնչութեան հարցը, որը, սակայն, լուծում է դոնե հայերենի նկատմամբ՝ բացասական իմաստով: Վրացերէն տառերի հայերենի հետ առնչութեան մասին տես. Հ. Աճառեան Հայոց գրերը [«Ազգային Մատենադարան» ԿԹ], Վիեննա 1928: Ոգովիլով առիթից, առաջ ենք բերում ակադ. Ի. Մեշչանինովի (Загадочные знаки Причерноморья [«Известия Госуд. Акад. Ист. мат. культуры», вып. 62], Лнгр. 1933. стр. 60) գիտողութիւնը կովկասյան ժողովուրդների այբբենների ծագման ժամանակի մասին ընդհանրապես. «Поскольку Закавказье в первом тысячелетии до н. э. не представляло еще в своей социальной структуре классового расчленения, постольку же всякие поиски в нем «настоящей», т. е. фонемной, письменности заранее обречены на неудачу»:

13. «Մայրենի կրոն» (աջուլի դեդուլի) դարձվածքը Լեոնտիոսը «հայրենի կրոն» (պջուլի մամուլի)-ի հակադրութեամբ և գործածում, ակնարկելով յերբեմնի մայրիշխանական կամ մայրապետական (մատրիարքատային) կարգերի վրա, որոնց ամենացայտուն ապացույցները մինչ մեր օրերը պահպանել և վրաց իրականութիւնը, առանձնապես և շնորհակի կերպով լեզվական տվյալներում արտահայտված փաստերը (այս հարցի մասին մանրամասն մեր համապատասխան աշխատութեան մեջ К вопросу об обычае кувады на Кавказе, որ ապագրվում է:

14. «Մուսբերիզ» նույն արաբ. «մուսբերազ» = վրաց «բուսբերազ» բառն և դյուցազն-ի իմաստով. նույնն է և Լեոնտիոսի յերկասիրութեան մեջ:

15. Որ Անդրեաս (Նախակոչյալ) առաքյալը վոչ մի առնչութիւն չի ունեցել Վրաստանի (նաև Հայաստանի) հետ, և նրա վերաբերմամբ ամբողջ զրույցը միմիայն X դարումն է առաջանում վրաց գրականութեան մեջ, տես հետևյալ գրականութիւնը. *И. Джавахов*. Проповедническая деятельность св. Нины и апостола Андрея,—«Журн. Мин. Нар. Просв»., 1901 г., январь, նույնը

վրացերեն, «Մոամբե» հանդիսում 1900 թ., № IV և առանձին. Կ. Կեկելիձե, Վրաց դարձի դլխավոր պատմական-ժամանակագրական խնդիրները, վրացերեն, — «Մրմամխլվելի» I, 1926, եջ 3—9, նույնը գերմաներեն՝ Die Bekehrung Georgiens zum Christentum, Leipzig 1928, S. S. 9—15:

16. «Բկունես-խևի», իրոք, յերկաթձաղր և նշանակում:

17. Սկսած արդացից «Ապա թագավոր գարձավ Հայքում (Սոմխեթում) մեծն Յերվանդ» ևվն մինչ այստեղ Լեոնտիոսը կամ գուցե նրա նախապրյուրն ընդհանուր գծերով հիշեցնում են Մ. Խորենացվո տվյալները (II, 37—61) համմ. Ս. Գորգաձե, Գրութիյունները վրաց պատմութիյունից, վրաց., եջ 23—26, Կ. Կեկելիձե, Լեոնտիոս Ռուխեցվո գրական աղբյուրները, եջ 14:

18. Անակի, Խոսրովի և Տրդատի մասին խոսելիս Լեոնտիոսը, անկասկած, ոգտագործած ունի Ագաթանգեղոսի պատմութիյունը, սակայն գոչ հայերեն բնագիրը, այլ X գարու հունարեն թարգմանութիյունը, վորը յերկու խմբագրութիյամբ և հայտնի. 1. ընդարձակ և 2. համառոտ (Vita et conversatio et martyrium sancti martyris Gregorii Magnae Armeniae,—*Migne*, Patrologiae cursus completus, series graeca, t. CXV, p. p. 143—996; Acta sancti Gregorii, interpretae Ioanne stiltingo,—«Acta sanctorum» septembris, t. VIII, Antverpiae 1762; *V. Lenglois*, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. I, Paris 1867; *Paul de Lagarde*, Agathangelus und die Akten Gregors von Armenien, — «Göttingische Gelehre Anzeiger» XXXV, 1887. համմ. XI գարու վրացերեն թարգմանութիյունը *L. Melikset-Bek*, Vita s. Gregorii Parthianensis, T. 1920). համմ. նաև՝ *Л. Меликсет-Беков*, Грузинская версия Агафангелия и ее значение для грузинской историографии,—«Христ. Восток», т. V, 1915, стр. 168—170. Կ. Կեկելիձե, Լեոնտիոս Ռուխեցվո գրական աղբյուրները, 4—5. Ս. Կակաբաձե, Պատմական պրպտուիներ, 150:

19. Այսինքն Ագաթանգեղոսի պատմութիյան մեջ. տես նախորդ ծանոթութիյուն:

20. Հայոց (Հայքի) Որբնեթի մասին տես. այս աշխատութիյան բ. հատորի ժե. գլխի 2 ծանոթութիյունը:

21. Համմ. «Փարվանա»-ի մասին լեգենդը՝ Յ. Կոստանեանց, Շիրակի լեգենդներից և ժողովրդական կևանքից, Ալեքսանդրապոլ 1896. նույնը Հ. Թումանյանի կողմից ոգտագործած:

22. Համմ. 20-րդ ծան.:

23. Այս կտորի մանրամասն վերլուծումը տես. *Л. М[еликсет]-Б[еков]*, По поводу одного из анахронизмов в грузинских летописях,—«Христ. Восток», т. III, 1915, стр. 200—203:

24. Հռիփսիմյանց մասին խոսելիս, Լեոնտիոսը, անկասկած, ոգտագործած ունի Ագաթանգեղոսի պատմութիյունը:

25. Այսինքն՝ վրանկ:

26. Նույնը:

27. Ասկ և Սղնախ քաղաքից 4 կլ. հեռավորութիյամբ գտնվող Բոդբեն (սրանից մի փոքր հեռու կա և Բոդբես-խևի գյուղը), ուր հետագայում կառուցվեց Նունեյի անվան վանքը, վորը բազմիցս վերանորոգված ձևով հասել և մինչ մեր որերը: Ցեկղեցու մեջի պատկերագրութիյունը, վորը ներկա վիճակում այնքան հին կի չի, համաձայն նկարիչ Գ. Շարբաբչյանի մեզ հայտնած տեղեկութիյան, կատարված պիտի լինի XVIII դարու վերջերում նկարիչ Հովնաթան Հովնաթանյանի ձեռքով (սրա մասին Շարբաբչյանը պատրաստած ունի հատուկ հոդված. իսկ առաւժմ տես. Լ. Մելիխեթ-Բեկ, Հովնաթան, վրացերեն,—«Մնաթոբլե» ամսագիր, 1933 թ. № 5, եջ 185):—Վերջերս Ս. Կակաբաձեն (Бюллетень Кавк. Ист.-Арх. Института, № 4, Тфл. 1928, стр. 6—7) կարծիք հայտնեց, վոր Բոդբե || Բուդբեն վոչ թե Սղնախի մոտ գտնվող Բոդբեն և հանդերձ ս. Նունեյի մենաստանով, այլ «Ներսե-ծմիդա» գյուղը Սագարեջոյի մոտ՝ հնագույն տաճարի բեկորներով (վերջինիս մանրամասն նկարագրութիյունը տես. Լ. Մելիխեթ-Բեկ, Հնագիտական ուղևորութիյուն Գարե-Կախեթի և Ձորհմի հովիտը, վրացերեն,—«Մաթալնո սաբմե» 1920 թ. № № 964, 974):

28. Հռիփսիմյանց մասին տեղեկութիյունները Լեոնտիոսը քաղած ունի գլխավորապես յերկու աղբյուրից, վորոնցից մեկն և ս. Նունեյի վարքը (տես ա. պրակը), իսկ մյուսը նույն Հռիփսիմյանց վկայարանութիյան վրացերեն թարգմանութիյունը, վորը մի քանի խմբագրութիյամբ և հասել մեզ, դրանց մեջ ամենահինագույնն և, ինչպես Իլիա Արտլածեն նորերս պարզեց, Վրաց յեկեղեցական նախկին Թանդարանի հավաքածուի № 511-ը (*Ф. Жордания*, Описание рукописей Тифлисского Церковного Музея, Кн. II, Тфл. 1902, стр. 63), ապա գալիս են Գիտութիյանց Ձեմարանի նախկին Ասիական Թանդարանի, այժմ Արևելագիտութիյան Ինստիտուտի Georgica հավաքածուի № 56 (*А. Цагарели*, Сведения о памятниках грузинской письменности, т. I, в. 3, стр. 160) և Վրաց մեջ գրագիտութիյուն տարածող նախկին ընկերութիյան հավաքածուի № 3640. սրանց կողքին անպայման հիշատակելու յե Պարիզի Ազգային Մատենադարանի Georgica հավաքածուի № 3 (*E. Takaïchvili*, Les manuscrits Géorgiens de la Bibliothèque Nationale de Paris et les vingt alphabets secrets Géorgiens, Paris 1933, p. 26, վրացերեն) և Կեմբրիջի համալսարանի գրադարանի Georgica հավաքածուի № 5 (*Robert P. Blake*, Catalogue of the Géorgian Manuscripts in the Cambridge Universty Library,—«Harvard Theological Review, Vol. XXV, July 1932, № 3, pp. 216, 220—221). վերջապես, նորագույն ժամանակվա յե վրաց յեկեղեցական Ն. Թանդարանի № 1013 (*М. Джанашвили*, Каталог предметам Церковного Музея грузинского духовенства, Тфл. 1914, стр. 1. *Л. Меликсет-Беков*, Новый список «Жития свв. Рипсимии, Гаянии и сподвижниц» на грузинском языке,—«Христ. Восток», т. III, 1915, стр. 313—314): Ընդ սմին ավելորդ չի լինի մատնանշել, վոր Դավիթգարեջա մայրավանքի վրամփոր մեծ սեղանատան հյուսիսային պատի վրա մի ուշագրավ fresco կա, ուր ներկայացած և 2 աղջիկ համապատասխան մակագրութիյուններով վրաց յեկեղեցական յերկաթձագիր տառերով. 1. «Ծ. Ի[ռիփսիմե», և 2. «մոցիքուլի քարթ...» (մեր 1921 և 1929 եքսպեդիցիաների նյութերից), վոր մենք կարդում ենք և մեկնում այսպես. 1. «Ծմիդայ Ռիփսիմե» սուրբ Հռիփսիմե, և 2. «մոցիքուլի քարթ[ուլեթա Ներոն]» վր[աց] առաքելուհի [Նունե]: Իր տեղում, Դավիթ Գարեջեցու վարքի մասին խոսելիս, մենք արդեն ցույց ենք տվել, թե ինչպիսի գիրք ուներ գրված մինչին դարերում Դավիթգարեջայի վանքն իր շրջակա այրիվանքերով հանդերձ հայ «ուխատավորներին» ոչքում:

ՀԱՎԵԼՎԱԾ

*Ինչպես ընթերցողը հիշում է, այս գլխի ներածականում մենք առաջ ունինք բերած այն հիշատակարանը (թարգմանաբար), որը Թբղիսի-ցխորեբայի Մարիամ Թագուհու վարիանտում նախորդում է «Արչիլ Թագավորի վկայաբանութեանը» և որից պարզվում է վերջինիս հեղինակի անունը՝ «Արչիլի վկայաբանութեան են... գրեցի Լեոնտիոս Ռուխեցիս (Լեոնտի Մրովելին)»,—ասում է իր մասին Լեոնտիոսը։ Նույնը մենք գտնում ենք և հիշյալ Արչիլի վկայաբանութեան ընդարձակ խմբագրութեան մեջ, ուր ասված է, որ վերջինիս «յերանելի վարքն ընդարձակ կերպով գրել է, ինչպես «Վրաց մատյան»-ն է հաղորդում, սուրբ Լեոնտիոս յեպիսկոպոսը» (Մ. Ջանաշվիլի, Վրաց գրականութեյունը, վրացերեն, I, Տփղ. 1900, եջ 258)։ Հետևապես Լեոնտիոս Ռուխեցին՝ «Արչիլ Թագավորի վկայաբանութեան» հեղինակ լինելն ամենայն կասկածից դուրս է։

Ինչ վերաբերվում է «վկայաբանութեան» տեկստին, այն հասել է մեզ յերեք խմբագրութեամբ, որոնցից հնագույնն է Ք. Ց.-ի մեջ մուծածը՝ Ե. Թաղ'այշվիլու հրատարակութեամբ 211—215 եջերում, իսկ M. Brosset-ի (նույնը և Ն. Մառի)՝ 181—184, որին համապատասխանում են նույն M. Brosset-ի ֆրանսերեն թարգմանութեյան 253—255 եջերը («Համառօտ պատմութիւն Վրաց»-ի մեջ բացակայում է)։ մյուս խմբագրութեյունն է ընդարձակը, որին հիմք է ծառայել հնագույն համառոտը և որը հայտնի յի Մ. Ջանաշվիլու հրատարակութեամբ՝ «Վրաց գրականութեյուն», I, 253—292. վերջապես յերրորդը՝ դարձյալ համառոտ՝ համեմատաբար նոր ժամանակների (XVIII դարու), որը հրատարակել է Մ. Սաբինին՝ «Վրաստանի դրախտը», վրացերեն, եջ 321—332. նույն Մ. Սաբինին պատկանում է և «վկայաբանութեյան» ռուսերեն թարգմանութեյունը՝ «Полное жизнеописание святых Грузинской церкви», ч. III, СПБ. 1873, стр. 71—84։

«Վկայաբանութեյունն» ի նկատի ունի արաբական արշավանքի դեպքերը և Արչիլ II թագավորի (668—718) նահատակութեյունն «ի ձեռն ճիճուա-Ասիմի»։

... [Արչիլին արգելոցի մեջ ձգելուց հետո] Աս[ի]մին ներկայացավ Գարդաբանեցի իշխան[ներից] մեկը (var.+ազգով հայ), որը սարկինոզ [1] էր դարձել...

ԾԱՆՕԹՈՒԹՅՈՒՆ

1. Այսինքն մահմեդական

Գ.

ՋՈՒԱՆՇԵՐ ՋՈՒԱՆՇԵՐՅԱՆ (XI Դ.)

„ՎԱԽՏԱՆԳ ԳՈՐԳԱՍԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ“

Թբղիսի-ցխորեբայի Մարիամ Թագուհու վարիանտում Լեոնտիոս Ռուխեցին «Վրաց Թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմութեյանն» անմիջապես հետևում է մի ընդարձակ յերկասիրութեյուն հետևյալ վերնագրով. «Պատմութեյուն Վախտանգ Գորգասալ Թագավորի ծնողների, ապա և հենց իրեն՝ մեծ և աստվածապաշտ Թագավորի, որը վրաց բոլոր այլ Թագավորներից առավել ևս հռչակավոր հանդիսացավ»։ Այդ յերկասիրութեյունը գրված ունի Ե. Թաղ'այշվիլու հրատարակութեյան մեջ 117—211 եջերը, իսկ M. Brosset-ի (նույնը և Ն. Մառի)՝ 108—161, 163—181, որին համապատասխանում են նույն M. Brosset-ի ֆրանսերեն թարգմանութեյան 114—216, 220—253 եջերը և «Համառօտ պատմութիւն Վրաց»-ի 72—104։ Վոր այս յերկասիրութեյունն, իրոք, Ջուանշերինն է, յերևում է այն հիշատակարանից, որն ինչպես նույն Մարիամի վարիանտում, նույնպես և Վախտանգ VI-ի հանձնաժողովի խմբագրութեյան բովով անցած գրչագրերի մեջ անմիջապես կցված է «Արչիլ Թագավորի վկայաբանութեյանն». հետևյալ բովանդակութեյամբ. «Վրաց (քարթվելների) պատմութեյան այս գիրքը մինչ Վախտանգ [Գորգասալ] գրվում էր հետզհետե, իսկ Վախտանգ Թագավորից սկսած մինչ այստեղ գրից Ջուանշերը Ջուանշերյանը, սուրբ Արչիլի (sic) յեղբոր զատեր ամուսինն, Միհրանի (Միրիանի) վորդի Ռևի սերնդից. իսկ այսուհետև թող գրեն յեկող սերունդներն՝ ինչպես դիտեն» (Ե. Թաղ'այշվիլու հրատ., 215, M. Brosset-ի, 184, հմմ. ֆրանսերեն թարգմանութեյան 256)։ Նույնն ըստ «Համառօտ պատմութիւն Վրաց»-ի տես այս պրակի ներածականում։

Այն հանգամանքը, որ այս հիշատակարանում Ջուանշերն Արչիլ Թագավորի յեղբոր փեսա յի անվանված, հիմք տվեց բանասեր-

ՀԱՎԵԼՎԱԾ

Ինչպես ընթերցողը հիշում է, այս գլխի ներածականում մենք առաջ ունինք բերած այն հիշատակարանը (թարգմանաբար), որը Քարթլիս-ցխորեբայի Մարիամ Թագուհու վարիանտում նախորդում է «Աբչիլ Թագավորի վկայաբանութեանը» և որից պարզվում է վերջինիս հեղինակի անունը՝ «Աբչիլի վկայաբանութեունն ևն... գրեցի Լեոնտիոս Ռուխեցիս (Լեոնտի Մրովելին)»,— ասում է իր մասին Լեոնտիոսը։ Նույնը մենք գտնում ենք և հիշյալ Աբչիլի վկայաբանութեան ընդարձակ խմբագրութեան մեջ, ուր ասված է, որ վերջինիս «յերանելի վարքն ընդարձակ կերպով գրել է, ինչպես «Վրաց մատյան»-ն և հաղորդում, սուրբ Լեոնտիոս յեպիսկոպոսը» (Մ. Ջանաշվիլի, Վրաց դրականութեունը, վրացերեն, I, Տփղ. 1900, եջ 258)։ Հետևապես Լեոնտիոս Ռուխեցին՝ «Աբչիլ Թագավորի վկայաբանութեան» հեղինակ լինելն ամենայն կասկածից դուրս է։

Ինչ վերաբերվում է «վկայաբանութեան» տեկստին, այն հասել է մեզ յերեք խմբագրութեամբ, որոնցից հնագույնն է Բ. Ց.-ի մեջ մուծածը՝ Ե. Թաղ'այշվիլու հրատարակութեամբ 211—215 եջերում, իսկ M. Brosset-ի (նույնը և Ն. Մառի)՝ 181—184, որին համապատասխանում են նույն M. Brosset-ի ֆրանսերեն թարգմանութեան 253—255 եջերը («Համառօտ պատմութիւն վրաց»-ի մեջ բացակայում է)։ մյուս խմբագրութեունն է ընդարձակը, որին հիմք և ծառայել հնագույն համառոտը և որը հայտնի յի Մ. Ջանաշվիլու հրատարակութեամբ՝ «Վրաց դրականութեունն», I, 253—292. վերջապես յերրորդը՝ դարձյալ համառոտ՝ համեմատաբար նոր ժամանակների (XVIII դարու), որը հրատարակել է Մ. Սաբինին՝ «Վրաստանի դրախտը», վրացերեն, եջ 321—332. նույն Մ. Սաբինինն պատկանում է և «վկայաբանութեան» ռուսերեն թարգմանութեունը՝ «Полное жизнеописание святых Грузинской церкви», ч. III, СПБ. 1873, стр. 71—84։

«Վկայաբանութեունն» ինկատի ունի արաբական արշավանքի դեպքերը և Աբչիլ II Թագավորի (668—718) նահատակութեունն «ի ձեռն Ճիճում-Ասիմի»։

... [Արչիլին արգելանոցի մեջ ձգելուց հետո] Աս[ի]մին ներկայացավ Գարդաբանեցի իշխան[ներից] մեկը (var.+ազգով հայ), որը սարկինոզ [1] եր դարձել...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Այսինքն մահմեդական

Գ.

ՋՈՒԱՆՇԵՐ ՋՈՒԱՆՇԵՐՅԱՆ (XI Դ.)

„ՎԱԽՏԱՆԳ ԳՈՐԳԱՍԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ“

Քարթլիս-ցխորեբայի Մարիամ Թագուհու վարիանտում Լեոնտիոս Ռուխեցվո «Վրաց Թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմութեան» անմիջապես հետևում է մի ընդարձակ յերկասխրութեուն հետևյալ վերնագրով. «Պատմութեուն Վախտանգ Գորգասալ Թագավորի ծնողներին, ազգ և հենց իրեն՝ մեծ և աստվածապաշտ Թագավորի, որը վրաց բոլոր այլ Թագավորներից առավել ևս հռչակավոր հանդիսացավ»։ Այդ յերկասխրութեունը գրված ունի Ե. Թաղ'այշվիլու հրատարակութեան մեջ 117—211 եջերը, իսկ M. Brosset-ի (նույնը և Ն. Մառի)՝ 108—161, 163—181, որին համապատասխանում են նույն M. Brosset-ի ֆրանսերեն թարգմանութեան 114—216, 220—253 եջերը և «Համառօտ պատմութիւն վրաց»-ի 72—104։ Վոր այս յերկասխրութեունն, իրոք, Ջուանշերինն է, յերևում է այն հիշատակարանից, որն ինչպես նույն Մարիամի վարիանտում, նույնպես և Վախտանգ VI-ի հանձնաժողովի խմբագրութեան բովով անցած գրչագրերի մեջ անմիջապես կցված է «Աբչիլ Թագավորի վկայաբանութեանն». հետևյալ բովանդակութեամբ. «Վրաց (քարթվելների) պատմութեան այս գիրքը մինչ Վախտանգ [Գորգասալ] գրվում եր հետզհետե, իսկ Վախտանգ Թագավորից սկսած մինչ այստեղ գրից Ջուանշեր Ջուանշերյանը, սուրբ Աբչիլի (sic) յեղբոր զատեր ամուսինն, Միհրանի (Միրիանի) վորդի Ռևի սերնդից. իսկ այսուհետև Թող գրեն յեկող սերունդները՝ ինչպես գիտեն» (Ե. Թաղ'այշվիլու հրատ., 215, M. Brosset-ի, 184, հմմ. ֆրանսերեն թարգմանութեան 256)։ Նույնն ըստ «Համառօտ պատմութիւն վրաց»-ի տես այս պրակի ներածականում։

Այն հանգամանքը, որ այս հիշատակարանում Ջուանշերն Աբչիլ Թագավորի յեղբոր փեսա յի անվանված, հիմք տվեց բանասեր-

ներին կարծելու, որ իբր այդ Ջուանշերը VIII դարու պատմիչ ու Մ.յսպես եր դառում, ի միմի այլոց, և «Համառօտ պատմութիւն վրաց»-ի հրատարակիչ Է. Ա[բաւաս] Թ[իոյան]ը, ւերբ իր հրատարակության առաջաբանում («Տեղեկութիւն»-ում) գրում եր. «Առաջիկայ Պատմութեանս Վրաց... ոչ է յայտ ոմէ ևկաց մատենագիրը, թէ և ի բազմաց հաւաստի՝ թարգմանութիւն լինել երկասիրութեանն Ջուանշերի (Ջուանբերի) Վրաց պատմչի, որ եկաց առ ժամանակօք, որպէս թուի Աբչիլ Բ-ի (688—718), որ և յիշատակի անուն նորին ի պատմութեանս։ Ապա հրատարակիչն առաջ և բերում համապատասխան memento-ն ըստ նուն պատմութեան, որը նա վերջ ի վերջո Ջուանշերին և վերագրում և բուն այնմ ել խմբագրում իր հրատարակության վերնագիրը՝ «Համառօտ պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի»։ Թեև Ս. Կակաբաձեն (О древнегрузинских летописцах XI столетия, Тфл. 1912, стр. 22—26, 36) սկզբում բոլորովին այլ կարծիքի էր Ջուանշերի մասին՝ համարելով նրան XI դարու պատմիչ, սակայն վերջերս՝ սկսած 1924 թվից՝ պնդում է, որ «Վախտանգ Գորգասալի պատմության» հեղինակն «8-րդ դարու յերկրորդ կիսին, ավելի ճիշտն՝ յերրորդ քառյակին պիտի վերագրել» (Պատմական պրպտումներ, 1924, էջ 190, Պատմական ժողովածու, II, 1928, էջ 68)։ Իսկ Իվ. Ջավախիշվիլին՝ Ս. Կակաբաձեյից ել առաջ և մինչ որա՝ թե իր բանավոր յերկ յթներում (դասախոսություն-զեկուցումներին) և թե 1916 և 1921 հրատարակված «Հին վրացական պատմական դրականության» աշխատության ա. և բ. տպագրության մեջ ապացուցում եր, որ Ջուանշերը վեց թե VIII դարու պատմիչ է, այլ XI-րդին, քանի որ օգտագործած ունի X—XI դարերում յերևան յեկած աղբյուրները։ Ճիշտ է, Ջուանշերի յերկասիրությունն իրրև պատմագրական գործ ցածր վորակի դրվածք է, բայց և այնպես նուն Ջավախիշվիլին այսպես է այն բնորոշում. «Ջուանշերի գրած «Վախտանգ Գորգասալի պատմությունը» այնպիսի վոճով է դրված և այնպիսի անհավատալի տեղեկություններով լցված, որ ավելի առասպելին է նման, քան թե իսկական պատմությանը» (բ. տպ., 189)։ «Ջուանշերի յերկասիրությունը Վախտանգի ժամանակվա պատմության համար, բացի մի քանի տեղեկություններից, գրեթե պիտանի չէ և ուշագրավ է միմիայն իրրև բնորոշող նրա, թե ինչպիսի տեղեկություններ և ինչպիսի պահանջում ունեին XI-րդ դարում վրաց ուսյալ շրջանները Վախտանգ Գորգասալի անձի և թագավորության մասին. թեև VII—VIII

դարերի [անցքերի] մասին [նրա մեջ] ավելի ուշագրավ տեղեկություններ կան» (ibid., 194)։

Ըստ Կ. Կեկելիձեյի (Վախտանգ Գորգասալի պատմիչն ու նրա պատմությունը, վրացերեն,—«Ձվենի մեցնիերեբա», № 4, 1923, էջ 46) ևս, «Վախտանգ Գորգասալի պատմությունն իրոք XI դարում է գրված, բայց նրա հեղինակը վոչ թե Ջուանշերն է, այլ հենց նուն անձնավորությունը, վորը գրել է «Թագավորների պատմությունը» և վորը հայտնի յե Լեոնտիոս Ռուխեցվո անվամբ»։

Ով ուզում է լինի «Վախտանգ Գորգասալի պատմության» հեղինակը, մեզ համար եական ևն այն է, որ այդ գրված քը պատմագրական լուրջ գործ չի կարող համարվել. բավական է հիշել, որ Վախտանգ Գորգասալի կյանքի՝ նկարագրությունն այնպիսի առասպելաբանություններով է զարդարված, որ ուղղակի հակասում է Ղազար Փարպեցվո տված միանգամայն հավաստի տվյալներին։ «Վախտանգի մասին մենք ունինք ուրիշ տեղեկություններ ևս», — ասում է այս առթիվ Իվ. Ջավախիշվիլին (op. cit., 191), ակնարկելով Ղազար Փարպեցվո վրա և ապա շարունակում. «և այս տեղեկությունները մեզ ցույց են տալիս, որ Վախտանգը յերեելի թագավոր է յեղել. սակայն, ոչ այն Վախտանգը և ոչ Ջուանշերի նկարագրած Վախտանգ Գորգասալը։ Ջուանշերի պատմությունն այն աստիճան առասպելական գծերով է զարդարված, որ հետագոտողի մեջ ակամա միտք է ծագում՝ մի՞ գուցե Վախտանգ թագավորի պատմության մեջ սխալմամբ մտցրած լինին այն դյուցազներգությունները, վորոնք, Գրիգոր Մագիստրոսի ասելով, դույթյուն ունեյին Վրաստանում Վահրամ (Բահրամ) Պահլավունու մասին» (ibid.)*։

---

* Տես հատուկ գրականությունն այս առթիվ Կ. Կոստանեանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը. Ալեքսանդրապոլ 1910, էջ 40. Н. Марр, Грузинский извод сказки о трех остроумных братьях из «Русуданиани»,—«Восточные Заметки», Спб. 1895, стр. 228. նույնը, Вступительные и заключительные строфы Витязя в барсовой коже Шоты из Рустава [«Тексты и Разыскания по армяно-грузинской филологии», XII], Спб. 1910, стр. XXXVII—XXXVIII и прим. 1. стр. XXXVIII։ Ինքնըստինքյան հասկանալի յե, որ այստեղ մի կողմն թողնելու յե Թ. Ժորդանիայի (Քրոնիկականը, I, էջ XXXIV) անհեթեթ կարծիքը, իբր Վախտանգ Գորգասալի պատմության հեղինակը վերջինիս ժամանակակից պիտի լինի և համապատասխան անցքերի ականատես։

ներին կարծելու, որ իբր այդ Ջուանշերը VIII դարու պատմիչ եւ Մայսես եր դառում, ի միմի այլոց, և «Համառօտ պատմութիւն Վրաց»-ի հրատարակիչ Հ. Ա[բաձաս] Թ[իոյան]ը, ինքը իր հրատարակութեան առաջաբանում («Տեղեկութիւն»-ում) գրում եր. «Առ չիկայ Պատմութեանս Վրաց... ոչ է յայտ ով եկաց մատենագիր, թէ և ի բազմաց հաւաստի՝ թարգմանութիւն լինել երկասիրութեանն Ջուանշերի (Ջուանբերի) Վրաց պատմչի, որ եկաց առ ժամանակօք, որպէս Թուխ Արչիլ Բ-ի (688—718), զի և յիշատակի անուն նորին ի պատմութեանս։ Ապա հրատարակիչն առաջ և բերում համապատասխան memento-ն ըստ նույն պատմութեան, որը նա վերջ ի վերջո Ջուանշերին և վերագրում և բուն այնմ ել խմբագրում իր հրատարակութեան վերնագիրը՝ «Համառօտ պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի»։ Թեև Ս. Կակաբաձեն (О древнегрузинских летописцах XI столетия, Тф. 1912, стр. 22—26, 36) սկզբում բոլորովին այլ կարծիքի եր Ջուանշերի մասին՝ համարելով նրան XI դարու պատմիչ, սակայն վերջերս՝ սկած 1924 թվից՝ պնդում է, որ «Վախտանգ Գորգասալի պատմութեան» հեղինակն «8-րդ դարու յերկրորդ կիսին, ավելի ճիշտն՝ յերրորդ քառորդին պիտի վերագրել» (Պատմական պրպտումներ, 1924, էջ 190, Պատմական ժողովածու, II, 1928, էջ 68)։ Իսկ Իվ. Ջավախիշվիլին՝ Ս. Կակաբաձեյից էլ առաջ և մինչ որա՝ թե իր բանավոր յելույթներում (դասախոսություն-դիվուցումներին) և թե 1916 և 1921 հրատարակված «Հին վրացական պատմական դրականութեան» աշխատութեան ա. և բ. տպագրութեանց մեջ տպագրում եր, որ Ջուանշերը վերջ թե VIII դարու պատմիչ է, այլ XI-րդին, քանի որ օգտագործած ունի X—XI դարերում յերևան յեկած աղբյուրները։ Ճիշտ է, Ջուանշերի յերկասիրությունն իրրև պատմագրական գործ ցածր վարակի գրվածք է, բայց և այնպես նույն Ջավախիշվիլին այսպես է այն բնորոշում. «Ջուանշերի գրած «Վախտանգ Գորգասալի պատմությունը» այնպիսի վոճով և գրված և այնպիսի անհավատի տեղեկություններով լցված, որ ավելի առասպելին է նման, քան թե իսկական պատմությանը» (բ. տպ., 189)։ «Ջուանշերի յերկասիրությունը Վախտանգի ժամանակվա պատմության համար, բացի մի քանի տեղեկություններից, գրեթե պիտանի չէ և ուշագրավ է միմիայն իրրև բնորոշող նրա, թե ինչպիսի տեղեկություններ և ինչպիսի պատկերացում ունեցին XI-րդ դարում վրաց ուսյալ շրջանները Վախտանգ Գորգասալի անձի և թագավորության մասին. թեև VII—VIII

դարերի [անցքերի] մասին [նրա մեջ] ավելի ուշագրավ տեղեկություններ կան» (ibid., 194)։

Ըստ Կ. Կեկելիձեյի (Վախտանգ Գորգասալի պատմիչն ու նրա պատմությունը, վրացերեն,—«Ձվենի մնցնիերեբա», № 4, 1923, էջ 46) ևս, «Վախտանգ Գորգասալի պատմությունն իրոք XI դարում և գրված, բայց նրա հեղինակը վոչ թե Ջուանշերն է, այլ հենց նույն անձնավորությունը, որը գրել է «Թագավորների պատմությունը» և որը հայտնի է Լեոնտիոս Ռուխեցվո անվամբ»։

Ով ուզում է լինի «Վախտանգ Գորգասալի պատմության» հեղինակը, մեզ համար եականն այն է, որ այդ գրվածքը պատմագրական լուրջ գործ չի կարող համարվել. բավական է հիշել, որ Վախտանգ Գորգասալի կյանքի՝ նկարագրությունն այնպիսի առասպելաբանություններով է զարդարված, որ ուղղակի հակասում է Ղազար Փարպեցվո տված միանգամայն հավաստի տվյալներին։ «Վախտանգի մասին մենք ունենք ուրիշ տեղեկություններ էլ», — ասում է այս առթիվ Իվ. Ջավախիշվիլին (op. cit., 191), ակնարկելով Ղազար Փարպեցվո վրա և ապա շարունակում. «և այս տեղեկությունները մեզ ցույց են տալիս, որ Վախտանգը յերևելի թագավոր է յեղել. սակայն, ոչ այն Վախտանգը և ոչ Ջուանշերի նկարագրած Վախտանգ Գորգասալը։ Ջուանշերի պատմությունն այն աստիճան առասպելական գծերով է զարդարված, որ հետազոտողի մեջ ակամա մեր և ծագում՝ մի գուցե Վախտանգ Գորգասալի պատմության մեջ սխալմամբ մացրած լինին այն դյուցազներգությունները, որոնք, Գրիգոր Մագխտրոսի ասելով, գոյություն ունեյին Վրաստանում Վահրամ (Բահրամ) Պահլավունու մասին» (ibid.)*։

---

* Տես հատուկ գրականությունն այս առթիվ Կ. Կոստանեանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը. Ալեքսանդրապոլ 1910, էջ 40. Н. Марр, Грузинский извод сказки о трех остроумных братьях из «Русуданиани»,—«Восточные Заметки», Спб. 1895, стр. 228. նույնը, Вступительные и заключительные строфы Витязя в барсовой коже Шоты из Рустава [«Тексты и Разыскания по армяно-грузинской филологии», XII], Спб. 1910, стр. XXXVII—XXXVIII и прим. 1. стр. XXXVIII։ Ինքնըստինքյան հասկանալի չէ, որ այստեղ մի կողմն թողնելու չէ Թ. Ժորդանիայի (Քրոնիկոններ, I, էջ XXXIV) անհեթեթ կարծիքը, իբր Վախտանգ Գորգասալի պատմության հեղինակը վերջինիս ժամանակակից պիտի լինի և համապատասխան անցքերի ականատես։

[ՎԱԽՏԱՆԳ ԳՈՐԳԱՍԱԼ[1] ՅԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԸ]

... Վախտանգը մարդ ուղարկեց իր մորեղբայրը Վարազբակուրի մոտ, որն իշխան էր Ռանուա, և՝ հաղորդելով Սաց (Ասկէի) արշավանքի մասին՝ ողնութիւն խնդրեց նրանից։ Ապա Վախտանգը դիմեց Վրաց (Քարթլիի) զորքին, և բոլորը ժողովեցան... [Յետ]՝ հանձնելով թագավորութիւնն իր մոր Սա[հա]կդուխտին (Սապդուխտին)[2] Խվարանձէյին ի կնութիւն վերցնի Մխրանը (Մխրբանը), որը Վախտանգի հորեղբոր վորդին էր Մխրանի (Մխրբանի) վորդի Ռևի զարմից, որը հայոց, (սոմխենների) Տրդատ (Թրդատ) թագավորի փեսան էր...։

... Յետ խնդրեց [Վախտանգը] Պարսից թագավորից տալ իր դուստրը Նրան ի կնութիւն։ Յետ Պարսից թագավորը տվեց նրան ի կնութիւն իր դուստրն, որի անունն էր Բալենդուխտ. նաև Հայքն (Սոմխիթը) և Կովկասյան բոլոր թագավոր[ութիւն]ները տվեց նրան ոժիտ։ [Յետ] նամակ գրեց նրան, որի մեջ ասված էր հետևյալը. «Որմզդ ամենայն արքայից արքայի առ Վախտանգ Վարենխոսրովծանդ, ախոյեան տան թագաւորաց՝ խնդալ։ Արար իմ զոր խնդրեցերն. այլ զօրացիր և քաջ լիր՝ կալով ընդդէմ Յունաց, առեալ զքեզնին քո ընդ քեզ։

Եւ արար Վախթանգ հանդէս զօրաց հրկուհարիւր հազարաց, և եկ ընդ Հայս, զի և նոքա ևս առեալ էին զնոյն պատուէր։ Եւ էլին նախարարքն Հայոց ընդ նոսա՝ Տրդատ Արշակունի և Աբև Սիւնեաց տէր և Ջուանբեր (ուղիղ՝ Ջուանշեր) Վասպուրականի և համազասպ Տարօնոյ, Գրիգոր և այլքն ընդ նոսա. և չոգան ի Կարախպուրա, և թողին ի վերայ նորա իշխանս հրկուս՝ հրկու հազար հեծեալս... [Յետ] արշավանքի յետս Վախտանգն ընդդեմ Հունաց (Հունաստանի) և հասավ (ընագրում՝ հասան) Հայք (Սոմխիթ). և Գերժիկ-փարուժ, ուր բերդ էր կառուցել վերոհիշյալ Գերոզը, նրան մրացան Հայոց (Սոմխիթի) իշխանները՝ Սյունեայց Արևը, [Վ]ասպուրականի (Աղիորաձնեցի) Ջուանշերը*, Տարոնեցի [Է]մամազասպը, Գրիգորաշեն քաղաքից Տրդատը (Թրդատ**)՝ Մեծն Տրդատի (Թրդատ**) զարմից։ Յետ [բոլորը միասին] մոտեցան քաղաքին***, որ կոչվում էր Կարախպոլիս, այժմ Կարնոյ****-քաղաք անվանյալը։ Յետ կռվում էլնի նրա (Կարախպոլսի) դեմ, սակայն գրավել այն չկարողացան, քանի որ վերջինս [յերկար շարք] բարձր պատերով էր [ըրջապատված]։ Յետ թողեց [Վախտանգն] այնտեղ յերկու իշխան [յուրաքանչյուրը] տասներկու հազար [հեծելա-]զորքով՝ այն քաղաքն պաշարելու համար։ [Իսկ ինքը] Վախտանգը գնաց դեպի Պոնտոս և ճանապարհն ավերեց յերեք քաղաքներ՝ Անձլանձոր*****, Եկեղեց (Եկլեց) [և]Գաստեր******... [Յետ] Վախտանգը Հայոց (Սոմխիթ) զորքին և [առհասարակ] բոլոր զորքերին պատվիրեց, որ կրոնավորներից վնաս չպահանջ, այլ [միմիայն] դերն վերցնեն. [ապա] ասաց. «...Առաջին ընդհարումը թագավորների մէջ կեղավ Անձլանձորում, ուր այժմ գտնվում և մեծն վարդապետ Գրիգորի[3] գերեզմանը... իսկ դուք, Հայք (Սոմխիթի) ընակիչներդ, Աբշակունյաց բդեշխ (պետ-աշխ) Բյուրատյանը, մինչև չօք հիշում Գրիգոր Պարթևի ու նրա հակառակորդների գործերը, ինչպես Տրդատ ******* տասան հազար հեծելօք՝ պատերազմել ընդ նմա, որ է կարնոյ քաղաք. և չոգան ընդ միջերկրայս մինչ ի Պոնտոս, և առին երիս քաղաք։ Եւ պատուէր ետ Վախտանգ զօրացն մի զոք սպանանել զանօրինացն պարսն (ուղիղ՝ զկրօնաւորացն [զան]պարսն), որք Քրիստոսի յերկրպագութ են իբրև զմեզ։ Բանդի հաւն իմ յորժամ եղ ընդ Պարսից թագաւորին ի Յոյնս և հասին մինչև Յանձրանձու, ուր գերեզման սրբոյն Գրիգորի է... Եւ մեծն Տրդատ թագաւորն հայոց պատուհասեալ ի Տեառնէ, վասն տանջելոցն զսուրբ Լուսաւորիչն և զսուրբ տիկնայսն, և ծանուցեալ զքրիստոս՝ ոչ յաղթահարեցաւ յումեքէ մարդոյ, զոր դիտէք դուք լսել, քաջք Հայոց, թէ որպէս հակայն և նըշանաւորն յաժենայն ազգս Տրդատ՝ թիկամբք բեռնարկեալ՝ ինէր տուն աստուծոյ... Եւ թողեալ [Ներսեհեանք] զքաղաքն և զաշտարակն՝ զոր չինէին, գնացին յաշխարհն իւրեանց. Թորգոմ ի Թորգոմեանսն, Սրդոն ի Սիդէթ, Բերձեանք ի Բերձանս, Յոյնք ի Յունէթ, Ապ և Մագ՝ յԱգմագդեթ (ուղիղ՝ Գաւդ և Մագ[ոդ]՝ ի Գաւգմագոդեթ), Պարսք ի Պարսս, և այլք յայլս։...

---

* Var. Ջուանբեր. հմմ. 148 յեր.* ծանոթ.։
** Var. Թարդատը։
*** Var. Քաղաքաբերդին։
**** Var. Տարնու։
***** Var. Անձրձոր, Անձորեթ։
****** Var և Սահր (դա սահրի)։
******* Var. Մխրդատ։

Աբշակունյաց* թագավորն ամբարտավանութիւնից դլորվեց և խոզ դարձավ, իսկ Գրիգորը նրան [քրիստոնյա] դարձրեց[5], և այնուհետև յեղավ նա յեկեղեցիներն սպասավոր (աշակ), և մեծ յեկեղեցի կառուցեց Տրդատը (Թրդատը)** իր թիկունքով, քանի վոր նա հակա յեր... Իսկ [Նեքրոթյանները] բոլորը թողնելին այն քաղաքը. և ավեց հնդկերեն խոսողներըին Հնդկաստանը, ասինպացիներին՝ Սինդը, հռոմայեցիներին՝ Հռոմը, հույներին (բերձեննրին)՝ Հունաստանը, Գոգ և Մագոգին՝ Մադուքքը (ընագրում՝ Ագ և Մագոգին՝ Մադուգիքը), պարսիկներին՝ Պարսկաստանը։ Իսկ առաջին լեզուն ասորերենն եր. և այսպես Նեքրոթի որոք յոթը լեզվով եյին խոսում[6]...։

Յեվ զարթնելով քնից՝ թագավորը վհատաբանեց ասածուն...և դիմից [երեն մոտ դտնվող Գրիգոր աստվածաբանի աշակերտներ Գետրոս քահանայն և Սամվել մոնոզոնին, ասելով՝] «...Տեսնում ենք***, վոր Պարսից զորքն ավելի շատ և, քան թե Հայոց (Սոմխիթի) և Վրաց (Բարթլելի) զորքերը, և մեր մեջ չկա վոչոք հմարիտ հավատացյալ [այն հավատքի], վոր սերմանից մեր հայրմ[Մ]րբոնը ((Մ[ր]բոնը) կամ՝ ժորով իմ պապական Տրդատը (Թրդատը)****... Ապա [Վախտանգ] թագավորը դիմեց իր մոր-եղբորն ու բոլոր թագավորներին՝ ասելով. «Բանակ հաստատենք ծովից դեպի հարավ*****, վորպեսզի մենք յեզը ունենանք ազատից և խնդությունից»։[Յեվ] նա հանեց այն զորքը քաղաքի շրջապատից, և անցան հինգերյա ճանապարհով դեպի հարավ ****** և կանգ առան Սպերի շրջանում...

... և ապա զարթուցյալ փառք ետ [թագաւորն] աստուծոյ եւ ի վաղիւն դառնայր առ հայօք, և պատուիրէը մի ումեք մեղանչել։

* Var. Աբրահունյաց. հմմ. 148 յեր. ծանոթ.։
** Var. Թարդատը։
*** Var. Դրանենք։
**** Var. Թարդատը։
***** Var. Դեպի Հայք (Սոմխիթի)։
****** Var. Դեպի Հայք (Սոմխրթ)։

... Ապա փող փչեցին, և դուրս յելան ամբողջ Հայքը (Սոմխիթը) և Պարսիկք և Դարուբանդի թագավորը...

Յեվ վերադարձավ Վախտանդը [Հունաստանից] Կղարջքի (Կլարջխիթի) ճանապարհով, իսկ իր զորքը թողնց Հայոց (Սոմխիթի) ճանապարհով...

Յեվ յերեք տարուց հետո Պարսից թագավորը պատերազմի յելավ Վախտանդի դեմ... իսկ Վախտանդը մարդիկ ուղարկնց հույների (բերձեննների) մոտ՝ հաղորդելով հետևյալը. «...Ահա պարսիկները՝ թվով մոտ յերեք հարյուր հազար՝ ներս խուժեցին Վրաց (Բարթլելի) սահմանները. թեև նա (պարսից թագավորը) հուսով եր, վոր Հայոց (Սոմխիթի) և Կովկասյանների թագավորների զորքով ևս կուժեղանա, սակայն վերջիններս հանձն չառան նպաստելու նրան, քանի վոր նրանցից վոմանք հավատարիմ եյին խաչեցյալին, իսկ վոմանք սատանայի դրդմամբ (սատանայից հաղթահարվելով) Դարուբանդի թագավորին միացան...»...

Յեվ ընդլայնացրեց Վախտանդը Մոգվքա[7] [կոչված] կամուրջն իր վաթսուն կանդուն՝ նրանով զորք անցկացնելու համար։ Յեվ ինքը թագավորը և Ջուանշեր* սպարապետը կանգ առան Մցխեթում, իսկ Նասր և Միհրդատին (Մրդատին) թողնց Հայոց (Սոմխրթի) և Վրաց (Բարթլելի) զորքի հետ, վորոնք կանգնած եյին Արմազը մոտ[8]...

... Յեվ չորս ամբս շարունակ նրանց (վրաց և պարսից) միջև տեղի ուներ սաստիկ պատերազմ. ապա [վրաց մոտ] հասավ կայսեր դեսպանը, վորը մատուցնց Վախտանդին ընծաներ և հասցրնց ուրախուն հազարանոց հնծելազորք հույներից (բերձեններից), նաև կայսեր դիմեն առ Վախտանդ, ուր ասված եր. «Վերադառնալով պատերազմից ընդդեմ թականի, ահա ուղարկում եմ քեզ ուրախ...և լինքն (Վախթանդ) Հայօք և վրօք առանձնացաւ։ Եւ մարտեան Պարսք և Կովկասեանք ընդդէմ կայսերւ...

* Var. Ջուանշերը. հմմ. 148 յեր.* ծանոթ.։

սուն հազարանոց հեծելազորք և դրել եմ Լևոնին[9], որ՝ յերեք կարիք ունենաս զորքի, քո առաջն և Մելիտինից *[10] սկսած մինչ Համդե **[11] և դնալի վեր մինչ կարնո-քաղաքը, և հրամայել եմ Լևոնին լինի քեզ մոտ»:

... Յետ տվեց Վախտանգն և հնուէթյուն պարսից թագավորին իր քույրն, որ անունն եր Միհրանդուխտ և որին դերի եյին վերցրել ոսերը, իսկ Վախտանգն ազատել եր: Յետ Վախտանգէն չտվեց այն պատճառով, որ վերջինս գրավ եր Հայոց (Սոմխիթի) բդեշխի (սպահապետի) մոտ...

Յետ Վախտանգի հրամանատարութեյան ներքո ժողովվեց հինսուն հազար ընտիր հեծելազորք՝ հույնը (ներձենը), վրացին (քարթլին) և հայը (սոմեխը)***:

Յետ Պարսկաստան մտնելուց ութերորդ տարին Վախտանգ թագավորը հասավ Անտիոքիա, ապա յեկավ Ուրհա... Յետ Վախտանգը վողջ և առողջ դառավ իր մորն ու քրոջը. իսկ [նոա զորքը] հասավ մինչ հունաց (բերձենների) և հայոց (սոմեխների) սահմանադիծը...

Յետ [հունաց] թագավորը մեծամեծ ընծաներ ուղարկեց Վախտանգ թագավորին, նաև ի կնութեյուն տվեց նրան իր դուստր Հելինեյին, որին [և] ուղարկեց մեծ զորքով հանդերձ մինչ Հայքի (Սոմխիթի) սահմանները, ուր [հույներին] դիմավորեց Վախտանգ թագավորը. ապա հունաց (բերձենների) զորքը վերադարձավ, իսկ նա (Վախտանգը) յեկավ Մցխեթ...

... Յետ նստեց ինքը Վախտանգն Ուջարմոյում, որը մեծ կառուցվածքներով զարդարեց, և իր քույր Միհրանձեյին ի կնութեյուն տվեց Հայոց (Սոմխիթի) բդեշխ (պատիվով) Բակուրին...

... Եւ նա Վախթանգ զքոյր իւր Միհրանդուխտ՝ թագաւորն Պարսից Խոսրովու ի կնութիւն. զի միւս քոյրն Խոռաղնէ առ Հայոց Պատիաքսոյն (ուղիղ բդեշխին) դրաւ էր:...

Եւ ևքին ի սահմանս Հայոց և Ցունաց...

... Եւ նստաւ Վախթանգ ի յՈւջարմայ. և Ինորանձէ՝ զքոյր իւր գաւառ՝ ետ ի կնութիւն Հայոց բդեշխին՝ Բակուրայ:

. . . . .

* Var. *Մելիտից*:

** Var. *Բնագրում՝ Լամդե* (sic): *Ըստ յերևույթին առաջացած և յեկեղեցական վրացերենում «ի»-ի շփոթությունից, որոնք իրար նման են:*

*** Var. *Հույները (ներձենները), վրացիք (քարթվելները) ու հայերը (սոմեխները):*

Իսկ հունաց (բերձենների) թագավոր [Լևոնը]՝ վախտանգի անունը՝ մեռավ, և թագավոր նստեց նրա վորդի (sic) Զևնոնը[12], որը դեպի Սպեր ուղղվեց՝ բարեթիւ գալու նպատակով: Յետ՝ լսելով [Վախտանգ] Գորգասալի ծանր վրճակը՝ նա կանգ առավ Կարնո-քաղաքում: Այնտեղ դիմեց և [պարսից] Խոսրով (Խվասրո) [թագավորը]: Խոսրովն (Խվասրոն) ու կայսրն [իրար հետ] կռվեցին Կարնիփորում, ուր մեծ կոտորած յեղավ յերկու զորքից էլ, որից արյան յերկու հոսանք կազմվեց. և այդ պատճառով էլ այն Կարնիփորա[13] կոչվեց:

... Ապա Վախտանգը՝ զգալով իր մահ[վան մերձեցում]ը՝...դիմեց իր վորդի Դաչէին. «Դու իմ անզրանիկ վորդին ես. քեզ եմ տալիս իմ թագավորության թագը, իսկ քո յեղբայրներին բաժին եմ հանել Տասիսկարից[14] և Ծուղից[15] սկսած մինչ Հայք (Սոմխիթ) և Հունաստան...»...*

... Յետ մեռավ Փարսմանը, և թագավոր նստեց նրա վորդի Բակուրը:... Յետ սրա որոք Պարսկաստանում թագավորում եր Ուրմիզդ կոչեցյալը, իսկ Հայքում (Սոմխիթում) կար մի իշխանաց վորդի Վազդեն (Վասքեն) անուն, որն ամուսնացած եր իշխանազն Շուշանիկ կոչեցյալի՝ Վարդանի դստեր՝ հետ: Սակայն սատանան տիրեց այս Վազդենին (Վասքենին) և միտք հղացրեց կրակապաշտ դառնալու: [Յետ Վազդենը] դնաց պարսից թագավորի մոտ և՝ հրաժարվելով քրիստոնեական կրոնից՝ դարձավ կրակապաշտ: Իսկ պարսից թագավորը յետ ուղարկեց նրան (Վազդենին) մեծամեծ ընծաներով՝ [նրան ակնկալով նրան] Ռանի իշխան: Յերբ նա (Վազդենը) վերադարձավ, նրա կին Շուշանիկը նկատեց, որ ամուսինն ինքն էլ կրակապաշտ է դարձել, և ինքն էլ դարձավ կրակապաշտ:

Յետ ժամանակի մեռավ կայսրն Յունաց, և թագաւորեաց Զինոն որդի (sic) նորա, և սկսեց օգնել Վախթանգայ. և հասեալ ի Սպեր՝ լուաւ զբօթ վերաւորելոյն և մահ դ'Վախթանգայ, և դարձաւ ի Կարնոյ քաղաք...

Եւ մեռաւ Վախթանգ, յորով պատուիրանաւ՝ որդւոյն՝ Դաչէի, որոյ հետ զթագաւորութիւնն...

* Var. + *... Սուրբ Անտոն [Մխջադեացին] (խոսքը Անտոն Մարտոմդ'ուխեյու, այսինքն Մենակյացի մասին է. Լ. Մ.-Բ.) հարցուփորձ արավ իր ուսուցչի ուղիղ մասին), և սովորեց ճշմարտան, և խմացավ, վոր նա (ուսուցիչը՝ Հովհան Զեդազնեցին) դնացել և Հայք (Սոմխիթ), որը հյուսիսումն է:*

տեց, վոր իր ամուսինն ուրացել և քրիստոնեական կրոնը, այլևս չեր խոնարհվում նրան իբրև ամուսնին, և մոռացության ավեց սիրն առ իրեն ամուսինն, և վողջ սրտով նվիրվեց Քրիստոսին՝ նրա պատգամները կատարելու համար: Ապա Վազգենն (Վասքենն) ամենայն հիդ ու ջանք դործ դրեց [վերադարձնելու սերը]՝ նախ չողոքորթությամբ և աղերսանքով ու ընծաներ տալով. ապա յենթարկեց նրան (Շուշանիկին) մեծամեծ տանջանքների. թեև սուրբ Շուշանիկի վարքը չկարողացա [նկարագրել վարքագրության ընդարձակ լինելու պատճառով[16]. [ի վերջո] նա սպանվեց իր ամուսնի Վազգենի (Վասգենի) իշխանից... [17]*

*Ապա վրաց Բակուր թագավորը դիմեց Վրաց (Քարթլիի) բոլոր իշխաններին և՝ գաղտնաբար դրբք ժողովելով՝ դավադրի յկավ Վազգենի (Վասքենի) դեմ: Իսկ Վազգենը (Վասքենը) կանչնած եր դաշտից դուրս, Կուր [գետ]ի ափին, ուր Անակերտ** [18] գետը միանում և վիրջինես, հարձակվեց նրա վրա և՝ կալանավորելով նրան՝ մաս-մաս արավ նրա մարմինը, որին ապա ծառից կախեցին: Իսկ սուրբ Շուշանիկի մարմինն առանձին մեծարանքով բերին և թաղեցին Ցո[ւ]ռտավուս [19]...*

.. Ապա պարսիկները՝ դրավելով ամբողջ Քարթլին, Հայքը (Սոմխեթին) ու [Վ]ասպուրականը (Աղուերաստանը)՝ սկսեցին պատերազմել հույները (բերձեննները) դեմ...

.. Հերակլ կայսրն եկավ [Քարթլի] և մոտեցավ Տփղիսին...

... Ապա Հերակլ կայսրը Մանգլիսից և Երուշլիմից [20] տարավ մեր տեր Հիսուս Քրիստոսի վոտների տախտակները և բևեռները, վոր Կոստանդնուպոլսում Ճանապարհ կալնել ընդ Հայս [կայսրն Հերակլ] եկն ի Բզնունիս, և անտի եկանէ ի Տփխիս...

... և էառ [Հերակլ] ի Մանկլեայ և յերուշլեմէ՝ զոտից Տեառն տախտակն, և զբևեռն՝ զտուեալսն ի Կոստանդնուպոլսէ Մբրեանայ թագաւորին...

*[կայսրն] եր տվել Մխեթան (Մխլեան) թագավորին...**

Իսկ այդ պահին ապականյալ եր Քարթլիի, Հայոց (Սոմխեթի) և Ռանի յերկիրները, քանի վոր վոչ մի տեղ այլևս չկար վոչ շինություններ և վոչ ել ուտելիք մարդկանց և անասուների համար [21]...

*... Ապա Արչիլ թագավորը կանչեց [իրեն մոտ] Քարթլիի բոլոր իշխաններին և նրանց հանձնեց իր [հանգուցյալ] յկղբոր՝ Մխեր [22] թագավորի՝ վորդոց. մեկին ավեց հորեղբորորդի Դուբամ Կուբապալատին, վորը տիրում եր Կղարջքին (Կլարջնեթին) և Ջավախքին (Ջավախեթին), իսկ մյուսին՝ Պևրոզի ազգական բդեշխին (սպասխալչին), վորն իշխում եր Թռևդքում (Թրիալեթում), Տաշիրում և Աչոցքում**, յերրորդին՝ Նևրսես (Նևրսե) Նևրսիանին, վորը վախտանգ թագավորի ընտրյալն եր...*

*... Ապա նրա (Արչիլ թագավորի) մոտ յեկավ վոմն իշխան, վորը Դավիթ մարգարեյի սերնդից եր, Աթրներսեհ (Ադարնասե) անուն, Աթրներսեհ (Ադարնասե) կույրի յկղբորորդին, վորի հայրը խնամիացիկ եր Բագրատո[ւ]նյանների հետ և նրանց ընտանիքի (բերձեննների) հայոց (Սոմխեթի) կողմից իշխան. սա [Մուրվան] Քուլի արշավանքի ժամանակ Դուբամ Կուբապալատի վորդոց մոտ եր անցել Կղարջք (Կլարջնեթ) ու մնացել այնտեղ: Ետև այս Աթրներսեհը (Ադարնասեն) խնդրեց Արչ լուց... տալ նրան [վրևե] յերկիրը. և [Արչիլը] ավեց նրան Շուլավերն*** ու Արտահանը (Արտանը)...*

... Իսկ արաբացիք (սարկինոզները) ուժեղացան Ռան յերկրում և տիրեցին Դազիրին և Հայքին (Սոմխեթին) [24]...

Ցաւուրան յայնոսիկ իշխան ոմն ի տանէ Դաւթի մարգարէի, Ազրնաս կոչեցեալ, եկն առ Արչիլն, որ լեալ էր ի Հայս, և զերեալ որդւովքն յայլազգեացն, և զերծեալ անտի՝ խնդրէր ի նմանէ տեղի բնակութեան. և ետ նմա զՈրիա և զՂեղուեր և զԱատմն: Եկին և ի Տար[ո]նոյ եղբարք երեք և բնակեցան մինչև ցԳադգադ՝ հրամանաւ Արչլին...

---

* Var. *Ռանի իշխանից:*
** Var. *Անակերտ*

* Var. + *... Մուրվան Քուլը զերեց Հունաստան և Հայաստան (Սասմխեթո) յերկիրները մընչ ծովը...*
** *Բնագրում՝ Աբոցում. հմմ. 148 յեր.* ծանոթ.:
*** Var. *Շոլավերը*

Աարնեբսեհ (Ադաբնասհ) կուլբի յեղբորորդիք, յորոց յեղբայրները, որոնք այրեցին հորեղբոր աչքերը, Տարոնից կյին յղկել Շակի* ու հաստատվել այնտեղ Աբշիլի հրամանով, քանի որ կովկասի բոլոր ծայրերը Ռանի կողմից անբնակ կյին դարձել,... և յերկք յեղբայրները հաստատվեցին մինչ Գուղդուղ (Գուլգուլ)։

Նույն ժամանակներում բզնիների (պատիվաբնների) տոմանք, որոնց ներս չթողին կղարջք (Կլարջիթ), գրավեցին Տայքում (Տաոյում) մի ժայռ, որը կոչվում եր Կա[լ]ամա[25], և ընակեցին այնտեղ ամրոց։...

... և ոմանք ի նոցանէ (յորոց) գնացին յերկիրն Տայոց, և գտին քար մի, և ընակեցան գնա ամրոց, և կոչեցին գնա Կամախ (ուղիղ՝ Կալմախ)։...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վորքան առասպելական գծերով և լի Վախտանգ Գորգասալի ժամանակվա (V դարու) անցքերի նկարագրությունը, որը տալիս և Զուանշերը, նույնքան իրական և նույն Վախտանգի պատմությունը, որը՝ թեև համառոտ՝ տալիս և Ղազար Փարպեցին։

2. Այս Սահակդուխտ-Սագդուխտն՝ իբրև Վախտանգի մայր՝ հայտնի յև վոչ միայն Զուանշերի յերկասիրության մեջ, այլև «Համառօտ պատմութիւն Վրաց»-ի համապատասխան տեղերում, ուր կարդում ենք. «Եւ կինն Միրդատայ հաւատաց ի Քրիստոս և մկրտեցաւ. և ընկեաց զսուրբն Սիոնին ի Շամշոյտէ, և էր անուն նորա Սակդուխտ» (եջ 73). «Եւ մեռաւ Միրդատ, և ետես Վախթանգ հօրենամեայ։ Եւ զահի հարաւ մայր նորա Սակդուխտ ի հօրէ իւրմէ՝ թէ քինախնդիր լինի վասն թողլոյն իմ զմոգութիւնն և աւերմանն Պարսից՝ յառնէ նորա Միրդատայ» (եջ 74). «Իսկ Սակդուխտ վարէր զթագաւորութիւնն կամօք հօր իւրոյ, մինչև մեռաւ նա. և էառ զինախանութիւնն նորա Վարազաքուր որդի նորա, եղբայր Սակդխտոյ» (ibid.)։ Վարդան պատմիչն այս առթով գրում և (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ 1862, եջ 91). «Եւ սիրեցեն [վիրքն] ի ծովէն Պոնտոսի մինչև ցծովն Կասբից՝ մինչև ցՄիհրան, և ցԱբբակ (ուղիղ՝ Աբշակ) թոռն լուր, որ էառ կին ի Պարթևաց՝ Սահակդուխտ անուն ի Պարտաւայ. որ և ամուլ գտուի հաւատաց ի Քրիստոս, և ետ նմա զաւակ՝ զՎախտանգ, որ և Գուրգասարն կոչեցաւ, որ է Գայլագլուխ ի Պարսից բառն»։ Սրևմայան Վրաստանի Ռուսայի նախկին գավառի սահմաններում Զվարիսա կոչված գյուղում 1925 թ. յերևան հանած մի ուշադրավ արծաթե «խաչի» վրացերեն յեկեղեցական գլխատառ արձանագրություն ևս, որը թեև VI դարուն և պատկանում, հիշատակում և այս անունը. «Սուրբ Գրիգոր Սքանչելագործ, քեզ աղօթող քո աղախին Սահակդուխտին պահպանիր ամենայն չարից»

* Var. Բակի։ հմմ. 148 յեր.* ծանոթ։

(Գեորգ Բոնորիմե, Զվարիսայի հուշարձանը, վրացերեն — «Վրաստանի Արխիվ», գ. III, Տփղ. 1927, եջ 205—208)։

3. Տես այս պրակի Բ. գլխի 11-րդ ծանոթությունը։

4. Այսինքն Աատվածաբանի կամ Նաղիանդենի։

5. Հմմ. այս պրակի Բ. գլխի 18-րդ ծանոթությունը։

6. Հմմ. Լեոնտիոս Ռուխեցվո համապատասխան ցուցմունքը Քարթլիում յերբևիե վեց լեզուների գործածության մասին («Այլ և այլ դեպքեր «Նաղրաց» արշավանքների շրջանից» հատվածում)։

7. «Մոգուս»-ի «մոգվ»-ի մոգ բառից. հմմ. նույն արմատից կազմված «Թ-մոգվ-ի» բերդի անունը (հայերեն արդի ֆոլկլորում «Թմբուկ»-«Թմբկաբերդ»-ի վերածված)։

8. Մցխեթի և Արմազի հակադրության մասին տես մանրամասն. *Л. Меликсет-Беков*, В поисках Страбоновой Севсаморы, Тифлис 1917, стр. 3—4։

9. Հունաց գործածած անունն և, որին Վախուշտը (XVIII դ.) պատրիկ և կոչում, իսկ «Համառօտ պատմութիւն Վրաց»-ը (եջ 86, 89)՝ «զօրագլուխ»։ Հմմ. *M. Brosset*, Histoire de la Géorgie, t. 1, p. 179 et n. 1։

10. Մելիտա-Մալատյայի մասին տես. *Y. Sandalgian*, Les inscriptions cunéiformes Urartiques, Venise 1900, p. 396, *И. Мещаников*, Халдоведение, Баку 1927, стр. 22, 24, 34, 36, 167։

11. Հմմ. *M. Brosset*, ibid., p. 179, n. 2։

12. Այստեղ Զուանշերը չփոթած և հունաց (Բյուզանդական) կայսրների ֆննդաբանությունը։

13. Այսինքն «կարմիր փոր». հմմ. *M. Brosset*, ibid., p. 199, n. 2։

14. Այժմյան Բորչոմի հովիտը։

15. Կումուրդո գյուղից ցած, Կուրի հովտում։

16. Ակնարկում և Հակոբ յերեցի (V դ.) կազմած «Ս. Շուշանիկի վկայաբանության» վրա, որի մասին մանրամասն տես մեր աշխատության այս հատորի առաջին մասի Ա. գլխում։

17. Տես նույնտեղ։

18. Անհայտ է։

19. Ծուրտավի մասին մանրամասն տես նույնտեղ 6-րդ ծանոթությունը։

20. Երուշեթը նույն Արտահանն է. հմմ. «Ե-րուշ-եթ»—Իշտ-ուն-իք Araston-ի հետ (*H. Марр*, Надпись Сардура II, сына Аргиштия в Даш-Керпи на Чалдырском озере [Записки Кавказского Музея, Серия В.—I], Тгр. 1919, стр. 7, 15, 36, 38։

21. Այս աբզացի մեկնությունը տես՝ Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, II, Տփղ. 1914, եջ 352։

22. «Միհր», «Միհրան», «Միհրդատ» ևլն անունների մասին տես. Լ. Մելիխեթ-Բէկ, Արտաւազդ և Միհրի հետքերը Վրաստանում,—«Բանբեր Էջմիածնի Գիտական Ինստիտուտի», գ. I—II, Էջմիածին 1921—1922, եջ 98—104. Թադէոս Ադալբէգեան, Միհրը հայոց մէջ [«Ազգային Մատենադարան», ՃԻ], Վիեննա 1929։

23. Ըստ յերևույթին, Արտահանին սահմանակից մի վայրի (գավառի) անուն և, որին հանդիպում ենք նաև արևելյան Վրաստանում (նախկին Բորչալովում, այժմյան Շահումյանը), նաև հարավային Ոսեթում, վերջինում «Շուլաուր»

և «Շևկուս» ձևերով. հմմ. *Л. Меликсет-Беков*, К археологии и этнологии Туальской Осии,—сборник «Юго-Осетия», Тфл. 1925, стр. 260, 276:

24. Ջուանշերի տեղեկությունն արաբական աղբյուրների մասին, ըստ Իվ. Ջավախիշվիլու (*Վրաց ժողովրդի պատմություն, II 1914, եջ 351*), «վերաբերում է VIII դարու առաջին քառյակի անցքերին և վոչ թե արաբացվոց առաջին արշավանքի պատմությանը»:

25. Կալմախ-կամախի մասին մանրամասն տես. *Н. Я. Марр* и *Я. И. Смирнов*, Вишапы, Лнгр. 1931, стр. 19—21 (Ն. Մառի հոդվածը):

Դ.

ԱՆԱՆՈՒՆ (XI Դ.)

„ՎՐԱՑ (ՔԱՐԹԼԻԻ) ՄԱՏՅԱՆԸ“

Քարթլիս-ցխորևբայի Մարիամ Թագուհու վարիանտում «Արչիլ Թագավորի վկայաբանության»ը, ինչպես նախորդ (Գ-րդ) գլխի ներածականում տեսանք, կցված է մի հիշատակարան, ուր, ի միջի այլոց, ասված է, վոր Վախտանգ Գորգասալի պատմությունը գրել է Ջուանշեր Ջուանշերյանը, «իսկ այսուհետև Թող գրեն յետոյ սերունդները՝ ինչպես դիտեն»: Այդ հիշատակարանին անմիջապես հետևում է մի նոր՝ բավականին ընդարձակ՝ յերկասիրություն, վորը հասնում և մինչ «[Դավիթ] արքայից-արքայի պատմությունը»: Այս յերկասիրությունը, ճիշտ և, վերնագիր չունի, և վոչ ել նրա հեղինակի անունն և հայտնի, սակայն ինքնըստինքյան պարզ է, վոր այստեղ մենք գործ ունինք մի նոր գրվածքի հետ, վորը տալիս և մեզ վրաստանի անցյալի նկարագրությունը սկսած VIII դարուց և մինչ XI դար (Գևորգ II-ը) և, իբրև XI դարու յերկասիրություն, անշուշտ, ծանոթ և յեղել «[Դավիթ] արքայից-արքայի պատմության» հեղինակին XII դարու առաջին կիսում, վորն՝ ոգտագործելով այդ յերկասիրությունը՝ «Վրաց (Քարթլիի) մատյան» (մատիանե քարթլիսա) յե կոչում այն: Յեվ այս հիման վրա Իվ. Ջավախիշվիլին (Հին վրացական պատմական գրականությունը, բ. հրատ., եջ 200) նպատակահարմար և գտնում այս գրվածքը հենց այդպես ել կոչել՝ «Վրաց (Քարթլիի) մատյան» (մատիանե Քարթլիսա):

Անանունն հեղինակը, անտարակույս, XI դարու գրող և: Սա յերևում և նրանից, վոր իր յերկասիրության մեջ նա քանի հետանում և VIII դարուց և մոտենում XI-ին, ավելի և ավելի ընդարձակ կերպով և նկարագրում այլ և այլ անցքերը, իսկ իրեն ժամանակակից դեպքերի մասին պատմում և ամենայն մանրամասնությամբ և բարեխղճությամբ:

«Վրաց (Բարթլիի) մատյանը» գրված ունի Ն. Թաղ՝այշվիլու հրատարակութ յան մեջ 216—280 եջերը, իսկ M. Brosset-ի՝ 184 — 236 եջերը (բաց Ն. Մառի միմիայն 184—200, քանի որ Ք. Ց. հրատարակութ յունն այդ 200 յերեսով առհասարակ ընդհատված է), վորին համապատասխանում և նուն M. Brosset-ի ֆրանսերեն թարգմանութ յան 256 — 345 եջերը և «Համառօտ պատմութ իւն Վրաց»-ի 104—114։

[ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ [1]]

... Յերկար տարիներ անց [արաբացիներից Տփղիսը գրավելուց հետո՝Տփղիս] յեկավ հաղարացվոց ամիրան, վորն իշխում եր Հայքում*, Բարթլիում, Հերքում (Հերեթում)՝ Խոսրով (Խվասրո) անուն, վորը խազարներից ավերած Տփղիսը [2] [վերա]շինեց։...

Յեվ նրանից հետո յեկավ Խալիլ Յեզիդի (Իզիդի) վորդի՝ արաբացին, վորը գրավեց Հայքը (Սոմխիթը), Բարթլին և Հերքը (Հերեթը) [3]։...

Ապա յեկավ Բուղա** Թուրք տարուկը Բաղդադից, վորին մեծ զորքով հանդերձ ուղարկել եր ամիր Մուսլը. սա ավերեց ամբողջ Հայքը (Սոմխիթը) և գերեց նրա բոլոր իշխաններին, ապա՝ [մանելով Բարթլի՝] մոտեցավ Տփղիս քաղաքին, քանի վոր վերջինը նրան չեր հպատակվում, և սպանեց Տփղիսի ամբրա Սահակին. և ավերեց Տփղիսը։... Իսկ Աբուլ-[Ա]բաս (Աբուլբաց) հայոց (սոմեխնեների) իշխանն և Գուարամ***Աշոտի վորդին**** հաղորդեցին լուռնականներին, վորպեսզի նրան (Բուղային) [իրենց մոտ] ներս չթողնեն։...

... Ապա իրրև ամիրա յեկավ Խալիլի վորդի Մոհմեդը*, վորն ավելի ևս կամայականորեն գրավեց ամբողջ այս յերկիրը՝ Հայքը (Սոմխիթը), Բարթլին և Հանձը... Յեվ ամբրա յեղավ վոմն՝ Սահակը ծառաներից** մեկը՝ Գաբլուց անուն, [վորը]... ազատեցավ [հույներից] և վորին հպատակվեցին գաղղքանեցիք. սա կռվում եր իր հորեղբոր որդի*** և Գուարամը յեղբայր (sic) Աշոտի հետ։ Իսկ Գուարամը՝ տիրելով Ջավախքին (Ջավախեթին), Թռեղքին (Թրիալեթին), Տաշիրին, Աղոցքին**** և Արտահանին (Արտանին)՝ կռվում եր սարկինոզների դեմ։ Յեվ յերբեմն հաղթում եր Գուարամը և յերբեմն սարկինոզները. իսկ Գուարամը բաժանեց յերկիրները իր յեղբայրները՝ Ատրներսեհի (Ադարնասեյ) և Բագրատ մլջև, և Աղոցքը ***** բաժին հանեց իր անեղորդի (կնոջ յեղբայրը)՝ հայոց (սոմեխների) թագավորին։...

Ապա Դավիթ Կուրապալատ հետ թշնամացավ Նասրան, Գուարամ Մամվալի վորդին, վորը սույն Դավիթ հորեղբայրն եր։ Իսկ այս Նասրան՝ նույն Դավիթ Կուրապալատի քեռորդին՝ և Գուրգենը ափխազների կողմնակից էին. և Դավիթն ու Լևոպարիան ոգնում էին հայերին (սոմեխներին). և հայերն (սոմեխները) ու ափխազները կռվում էին Բարթլիում։ ... [Յեվ] ժողովեցան ընդդեմ Նասրայի հայերն (սոմեխները). և՛ Լիպարիան ու վրացիք, և՛ Աշոտ՝ Դավթի յեղբայրը, և՛ նրանց հետ սարկինոզները։ ... [Ապա] Ատրներսեհ (Ադարնասե) թագավորի [կռվում նույն Նասրայի դեմ] հայերն (սոմեխները) [ևս] նրա (Ատրներսեհի) հետ էին։ ...

...Զկինի երկերիւր ինն և տասն ամաց առաջն Մահմետի, ելեն Բուղային, վշտացոյց զերկիրն Հայոց. և հասեալ ի Տփղիս՝ սպան զԱհակ ամիրային, զի ոչ հնազանդէր նմա...

---

* Var. Հայքում abs.
** Var. Շուղա. համմ. 148 յեր.* ծանոթ.։
*** Var. + Մամփալ։
**** Var. + Բագրատ կուրապալատի յեղբայրը։

* Var. Մուսմեղը։
** Var. Ազգականներից։
*** Var. + Հայոց (սոմեխների) Սմբատ թագավորի վորդի։
**** Բնագրում՝ Աբոցին. համմ. 148 յեր.* ծանոթ.։
***** Նույնը։

Այն ժամանակ, [երբ Քարթլիում իշխում էին ազատները (ազնվականները)] դուրս յելավ Կոնստանդին ափխազաց թագավորը, որը գրավից Քարթլին. սրան քշնամացավ հայոց (սոմխեները) Սմբատ Տ[ի]եզերակալ[6] թագավորը, որը մեծ զորքով յելավ արշավանքի և մոտեցավ Ուփլիսցիխեին[7]... և գրավից այն. իսկ Սմբատն ու Կոնստանդինը բարվոք խնամիացան[8], և [Սմբատը] վերադարձրեց նրան (Կոնստանդինին) Ուփլիսցիխեին ու ամբողջ Քարթլին[9]: Սրանցից հետո յեկավ հագարացվոց ամիրան՝ Աբուլ – Կասիմ անուն, Աբու-Սաջլի որդին, արաբացին. սրան ուղարկել էր Ամիր-Մումլին մեծ և անհամար զորքով, որին յերկիրը չէր տեղավորում: Նա նախ մտավ Հայք (Սոմխիթ) և ավերից ամբողջ Հայքը (Սոմխիթը), Այուհիքը, Վայոց-Ձորն ու [Վ]ասպուրականը (Աղիուրադանը): Զգլմանալով նման ավերածությանը՝ Սմբատ հայոց (սոմեխների) թագավորը փախուստի դիմեց և ուղղվեց Ափխազաց լեռների կողմը, և այնտեղ էլ մնաց: Յետ [Աբուլ-Կասիմ] Աբու-Սաջլի որդին յեկավ Տըփղիս, ուր ամիրա յեր Ալիի որդի Ջափարը,... ապա մտավ Քարթլի և ավերից Քարթլին, ...այնտեղից մտավ Սամցխե, և ավերից Սամցխեն ու Ջավախքը (Ջավախեթը), ապա մոտեցավ Թմոգվիի բերդին[10]. տեսնելով վերջինիս անառիկ և ամուր դիրքը, այնտեղից քաշվեց և յեկավ Ղՙվելՙի մոտ, որը սկսեց պաշարել: Նրա (Ղՙվելՙի) մեջ եր մի պատանի՝ Գոբրոն անուն... որին կալանավորեցին և նահատակեցին, և որի վկայաբանությիւնը մանրամասն գրած ունի մեր սուրբ հայր Սահփան Տբեթի (Սահփանե Մաթևավարի) յեպիսկոպոսը[11]: [Ապա Աբուլ-Կասիմը] այնտեղից [էլ] քաշվեց և գնաց Դվին քաղաքը. իսկ այնտեղ նրան լուր հասցրին, որ Սմբատ թագավորը մտած և Կապուտյա (Կապոետ) բերդը, խսկույն և յեթ տեղից

...Ի ժամանակս Սմբատայ՝ հայոց արքայի տիեզերակալի, որ մատա եղեալ ընդ Կոստանդեայ՝ թագաւորին Ափխազաց՝ էառ զԲարթլ և զՈւխլիսցխէ. և զարձեալ հաշտեալ՝ խնամիք եղեն, և զարձոյց անդրէն: Յաւուրսն յայնոսիկ եկն Բուլկասիմ (ուղիղ՝ [Ա]բուլ-Կասիմ) զօրապետն Սարակինոսաց՝ ի Հայս, և ապա ի Տփխիս... և... անդէն ի Դուինն եւ Սմբատ արքայն Հայոց խոյս հետ ի նմանէ, և եկն շրջէր ի լերինս Ափխազեթայ. իսկ բռնաւորն սպասէր նմա, քանզի պերճացեալ էր յաղթութեամբն Վրաց. քանզի առեալ էր զամենայն Քարթլի և յոլով բերդս, զԹմօք և զՈւխլիա, յորում եսպան զդեղեցիկ և զքաջ մանուկն Գօբրոն (ուղիղ՝ Գոբրոն)՝ վասն հրնստոսի, զի ոչ ուրացաւ զնա. զորոյ վկայութիւնն գրեաց սուրբ հայրն մեր Սահփանոս Վկայաց և սուրբ թագաւորն Սմբատ՝ ի նոյն բռնաւորէն՝ ի Դուին քաղաքի. բոլոր տարի մի չարչարեալ, և ապա խեղդամահ սպանին և կախեցին զփայտէ, զի մահակից և խաչակից լինի Քրիստոսի:

շարժվեց և դիմեց դեպի այն բերդը, ուր գտնվում եր հայոց (սոմեխների) Սմբատ թագավորը. և պատվիրեց իր բանակին, որպեսզի ամեն մեկին, որին կենդանի կգտնեն, բերեն իրեն մոտ: [Յեվ Աբուլ-Կասիմը] յեկավ և մոտեցավ Կապուտյա (Կապոետ) բերդին, և կալանավորեց բերդակալների կանանց, որոնց դռան դրսում: Գրավելով բերդը՝ [արաբացիք] կալանաւորեցին Սմբատին, որին ապա տարան Դվին, ուր և կախեցին փայտից. և նա մեռավ[12]: ...*

[X—XI ԴԱՐՈՒ ԱՆՑՔԵՐԸ]

...Յայնմ ժամանակի Իշխանիկն էր թագաւոր ի կողմանս Հերէթոյ, և ունէր նա հերձուած, և մայր իւր զարձոյց յուղղափառութիւնս...

...Եւ Ռատն էր ի Կարս (ուղիղ՝ ի [Կլդե]կար), և ունէր զբերդն Ատենոյ և զհարաւակողմն Կուր գետոյ. սա ոչ հնազանդէր Բագրատայ. և Գուրգեն հայր նորա եկն առ որդին, և կամեցան գնալ ի վերայ Ռատինն: Եւ քանզին առ Դաւիթ կիւրապաղատան՝ եթէ զգլուխ քո խնդրեն. և հաւատաց բանիցն, և ձեռնտուութեամբ Հայոց՝ փախոյց զզօրսն...

...Յայնմ ժամանակի զօրացաւ Փատլուն՝ ամիրայն Գանձակայ, և հարկանէր զիշխանսն Կախեթոյ և Հերէթոյ: Եւ առաքեաց Բագրատ՝ թագաւոր Աբխա-

* Var. *Սմբատ թագավորինն*

** *Բնագրում՝ զարմանալի կերպով*

նակ առ ժամանակ ավազակորեն և գաղտագողի ավերելով և դերելով այլ և այլ տեղեր: Իսկ Բագրատ մեծն Թագավորը՝ տեսնելով նրա (Փաղկոնի) հանդգնութիւնը՝ իր ամբողջ զորքով պատրաստից [նրա վրա հարձակվելու], դեսպան ուղարկեց Գագիկ շա[հ]նչա[հ] հայոց (առմեխներէ) Թագավորը մոտ, որպեսզի վրեժխնդիր լինի Փաղկոնից: Ցեվ նա (Գագիկը) հույժ ուրախացավ [սրան], և շտապ կանչեց իր ամբողջ զորքը և դիմեց Ափխազաց Թագավորի մոտ, [և] յերկուսը [միասին] ժողովեցան Զորակերտում[16], Փաղկոնի դեմ յելնելու...*[17]

...Իսկ նրա (Դեոդրէ) Թագավորութեան չորեքերորդ տարին հունաց (բերձեններէ)[18] Վասիլ Թագավորը հունաստանի ամբողջ զորքով՝ անթիվ այլազգիներով հանդերձ՝ յելավ նրա (Դեոդրէի) դեմ: Դեոդր Թագավորն էլ մեծ զորքով յելավ նրա (Վասիլէի) դեմ. և յերկուսն էլ յերկար ժամանակ կացան Բասեն (Բասիան) յերկրում՝ կռվի չելնելով իրար դեմ: Մուսափեղով [Վասիլից]՝ Դեոդր Թագավորը յեկավ և ավերից քաղաքն Ուղթյաց (Ոլթին), ապա այնտեղից հասավ Կողա (Կոլա): Նրան հետամուտ յեղավ հունաց (բերձեններէ) Վասիլ Թագավորը. և ժողովեցան թե՛ վոչ Դեոդրոսն հետամուտ յեղողներն ու Վասիլի առաջընթաց զորքերը՝ տեղի ունեցավ մեծ ընդհարում Շիրիմք կոչված դյուղում[19]...

...Յերկրորդ անգամ յեկավ Վասիլ Թագավորը Թռեղբով (Թրիալեթով), չըրջեց Ջավախքն (Ջավախեթն) ու Արտահանը (Արտանը) ձմռան պահին ...ապա վերադարձավ Խաղայայց (Խալղա՝ Խավաղ) յերկիրը՝ Տրապիզոնին կից[20]:...

...Նորից յեկավ Վասիլը Բասեն (Բասիան)՝ պահանջելով Դեոդր Թագավորից դավառներ և բերդեր, և խոստանալով համերաշխություն և խաղաղություն*... Յեվ տվեց Դեոդր Թագավորը [Վասիլին] յերկիրը, որը Դավիթ Կուրապալատինն էր, Տայքում**, Կողա Արտահանում (Կոլա-Արտանում) և Ջավախքում (Ջավախեթում)***[21]:...

[Հունաց Կոնստանդին Թագավորի մահվան և Ռոմանոսի դահակալութեան] յերրորդ տարին[22] դնաց Մարիամ Թագուհին՝ ափխազաց [Բագրատ] Թագավորի մայրն՝ Հունաստան խաղաղություն հաստատելու****, նաև կուրապալատուի պատիվը խնդրելու իր որդու համար, ինչպես նրանց տան սովորությունն էր ու կարգը*****[23]...

Յեվ սրանից հետո իր վերին և ներքին «հայրենիք»-ին տեր դարձավ Բագրատը******[24]...[Յեվ]սրա Թագավորության գործերը ժողովեցան և կալանավորեցին Լիպարիտին և Սբազա որդի Հովհաննին (Իվանեին): Յեվ յեկավ մեծն Կորիկե (Կվիրիկե) Բանից (ռանների) և Կախից (կախերի) Թագավորը, Դավիթ[25] հայոց (սոմեխների) Թագավորը և Տփղիսի ամիրա Ջաֆարը. սրանք բոլորը ժողովել էին Կորըկեյի (Կվըրիկեյի)******* պայմանի համաձայն Յեկեղեցայ (Նեկեց) [դավառ]ում...

...[Ապա] Թագավոր էր Կախեթում (Կախեթում) Գագիկը՝ Սամշվիլդեյի և Զորակերտի******** հայոց (սոմեխների) Դավիթ Թագավորի որդին [և] Կորիկեյի (Կվըրիկեյի) քեռորդին...

Ապա կրկին ուժեղացավ և հզորացավ իր «հայրենիք»-ում Բագրատ Թագավորը: Յեվ Բագրատի բազդը բանեց [և վոչ՝ վնասը [նրան] միացավ Անվո

...եւ դնաց Վասիլն ի Տրապիզոն. և կոչնեցնալ առ ինքն զմեծ կաթուղիկոսն Հայոց զՊետրոս՝ ի տօնի յայտնութեանն, և օրհնեաց զՔուրն առաջի նորա. և ետես հայրն մեծ սքանչելիս ի վերայ ջրոյն, և զովեաց զհաւատս Հայոց, և դնաց ի Կոստանդնուպօլիս...

...ի հինգերորդ (ուղիղ՝ յեւթներորդ) ամի Թագավորութեան սորա (Դէորգեայ)՝ եկն Վասիլ կայսրն. և ընդդէմ դնաց նորա ի դաւառն Բասենոյ. և իբրև առես եթէ բազումք են՝ զարձաւ անդրէն. և Վասիլն դնաց դէտ նորա, և այրեաց զքաղաքն Ուխտեաց. և զարձաւ Դէորգի և կռուեցան. և անկան յերկուց կողմանց բազումք ի տեղւոջն՝ որ կոչի Շիրիմքն...

...Եւ էառ զԹագաւորութիւնն Բագրատ. և չորաւ մայրն նորա Մարիամ ի Կոստանդնուպօլիս, և երեր Թուղդաչանց խաղաղութեան և պատիւ կիւրապաղատութեան՝ որդւոյ իւրոյ:...

...Թագավորն Կախեթոյ [էր] Գագիկ, որդին Հայոց արքայի:...

...զի մայր նորա (Բագրատայ) Մարիամ՝ դուստր էր Սենեքերիմայ Հայոց արքայի, ետուն զքաղաքն Անի՝ ընակիչք նորա՝ ի Թագուհին Մարիամ:...

---

* Համ. այս պրակի Ա. գլուխը (նշ 137, ծանոթ. ****):

* Var. +... և անցավ Բասենի (Բասիանի) սահմանը...

** Var. + Բասենում (Բասիանում):

*** Var. + Շավշեթում:

**** Բնագրում՝ վինտեելու:

***** Այս արտացը գրեթե կրկնությունն է Սմբատի յերկաստիրության համապատասխան հատվածի (տես այս աշխատության 138 նշը):

****** Var. Բագրատ Թագավորը:

******* Var. կայսեր:

******** Var. սամշվիլդեցվոց և զորակերտեցվոց:

լինն բերդով, բացի Ամբերդից։ Յեվ անեցիք ավին Անին Բագրատի մորն, քանի վոր այն հայերի (սոմխնների) «հայրենիքն ևր, [իսկ] Բագրատի մայր Մարիամ թագուհին հայոց (սոմխնների) Սենեքերիմ թագավորի դուստրն ևր[26]։...

...Յեվ Հիսպարիտը ...հանից Անիից՝ թագուհուց՝ Աբուսեր Արտանուջի իշխանին, ...և Հովհան (Իվանե) իշխանին, Հովհան (Իվանե) Դադիանուն և Գուագրամ Գոդերձիա-Ձեյին, ...վորոնց և կալանավորեց Անիի դռանը ...

...Յեվ Հիսպարիտի գաշնակիցներն էյին [ընդդեմ Բագրատի]՝ կախերը իրենց զորքով և Դավիթ հայոց (սոմխնների) թագավորն իր զորքով։...

Յեվ մի քիչ ժամանակից հետո գաշնակից յեղան Կալմախի իշխան Սուլյան և Ատանուջի իշխան Գրիգորը, վորոնց մրացան մեսս ազնվականներն (ազնաուրներն) յես՝ ոչնչուս Բագրատ թագավորին։... Լսելով այս՝ Հիսպարիտը ժողովեց իր զորքը և կանչեց կախերին ու հայերին (սոմխնները)։ և հույներն (բերձեններն) [և] սրա հետ էյին։ ...

Յեվ սահմանի դրսով գնալով՝ Հիսպարիտը նույն զորքով ժամով Դվին և առաջնորդեց հուներս (բերձեններն) թագավորին պվինեցվո վրա. ապա վերադարձավ իր յերկիրը։ Իսկ նրա վերադարձից մի տարուց հետո Բասեն (Բասիան) գավառում յերևեցան Բահրամ-Լամյան սուլթանական թուրքերը։ ...

...Ապա Հիսպարիտը հարձակվեց թուրքերի վրա և մտավ Անի։...

...Մի քիչ հետո սրա (Բագրատի) թագավորության մեծամեծները ձանձրացան Հիսպարիտի ադրատկանությունից։ Սուրա Կալմախցին և բոլոր մեսխները փախան Հիսպարիտից, և կալանավորեցին Հիսպարիտին ու նրա հորը՝ Դիլիմում։ Իսկ Նլրանեան դադիեց և գնաց գնալ Կլդեկար (Կլդեկարն), ուր, սակայն, նրա հոր (Հիսպարիտ) բերդապահները ներս չթողին նրան, և նա անցավ Անի՝ հույներ (բերձեններն) մոտ։ ...Յեվ մի քանի տարուց հետո Նլրանեան վախճանվեց Անիում։...

Սրա (Բագրատի) թագավորության պահին յերևաց սուլթան Արփ-Ասլան (Արփարասան ‖ Արփասարան)՝ պարսից թագավորը։ ... [Յեվ] յեկան [պարսիկներն] անակնկալ կերպով* և ավերեցին Կանդարքն ու Թռնդքը (Թրիալեթը)։ ...

...Յեվ դիմեց սուլթանը (Արփ-Ասլանը) դեպի Անի և գրավեց Անին, ավերից այն և անթիվ ժողովուրդ գերեց ու դնաց իր յերկիր՝ Պարսկաստանը։ Նա [յեր, վոր] Անին խլեց հույներից (բերձեններից) և տվեց Աբուլասվարի վորդի Մանուչարին։ Իսկ Բագրատի քեռորդին, վորին խնդրում եր սուլթանը ի կնություն, հայոց (սոմխնների) Կորիկե (Կվիրիկե) թագավորի յեղբորորդին եր։ Բագրատը սրան խնդրեց, բայց հայոց (սոմխնների) թագավորը նրան չտվեց։ [Ապա] Բագրատը մեծ զորքով հանդերձ դեսպան ուղարկեց [Կորիկեի մոտ] Վարազ-Բակուր Գամրեկել իշխանին։ [Նույն Բագրատը] հայոց (սոմխնների) թագավորի մարդկանց ել գրգռեց, և Սամշվիլդե մտնող հայոց (սոմխնների) Կորիկե (Կվիրիկե) թագավորին ու նրա յեղբայր Սմբատին կալանավորեցին Քվեշի պուրակում[27]։ Յեվ հաղորդեցին Բագրատին, [վորը]... պահանջեց Սամշվիլդեն, սակայն [հայերն] այն չտվին, և նրանց (Կորիկեի ու Սմբատի) մի ուրիշ յեղբայրը՝ Աբրնեսեհը (Ապրնասեն)՝ մտել եր Սամշվիլդե։ Իսկ [Կորիկե և Սմբատին] տարան Սամշվիլդե. և տարքեցին [խաչա]փայտեր, և հայոց (սոմխնների) Կորիկե (Կվիրիկե) արքային յերեք որ [կախված] թողնե [հայերը] խնդրեցին խաղաղություն և տվին Սամշվիլդեն[28]։ Յեվ յեկել էյին հայոց (սոմխնների) թագավորի յերկու իշխան-

...և դայը [սուլթան Արփասլան] առնոյր զամենայն տունն Բարթլայ, կոտրբէր և գերէր. և խաղացեալ գնայր ի մայրաքաղաքն Հայոց ի յԱնի, և առնոյր գնա, և ընոյր արեամբ կոտորելոցն։ Եւ այլ ևս սպառնայր Վրաց աշխարհին, եթէ ոչ տացէ նմա Բագրատ՝ զդուստր քեռ իւրոյ ի կնութիւն. որ էր նա դուստր եղբօր Կիւրիկէի Հայոց արքայի. յորմէ խնդրէր Բագրատ աղաչանօքև ոչ տայր գնա Կիւրիկէ. մինչ գործեցին նմա ուրոգայթ Վարազբակուր և Գամրեկէլ զօրագլուխն Վրաց, և ըմբռնեցին գնա յանտառն Բուբշոյ. և ազդ արար ին Բագ[ա]րատայ. և գնաց առ նա, և էառ զաղջիկն և զՇամշոյտէ ի ձեռաց նորա, և ապա արձակեաց։ Իսկ Սուլտանն գինի երից ամաց գարձաւ ի վերայ Վրաց, և եղից արեամբ գերկիրն։ Եւ առեալ գՏփխլիս՝ եառ ի յամրլայն Գանձակայ ի Փաղունն։ Եւ Ախսատ թան որդի Գագկայ թագաւորին կախեխոյ՝ եկն առ նա, և շրջէր ընդ նմա՝ մինչև գնաց Սուլտանն։...

---

* Բնագրում՝ անդրալիորենս

նները՝ Լոկի*[29] իշխանը և Կակվաքարինը։ Կորիկեի (Կվիրիկեի) յեղբայր Սմբատը տալիս եր և հանձնում յերեք բերդեր՝ Ոփրեթին[30], Բոլա[յը]ն**[31] ու Վարդաքարը։ Իսկ Բագրատ Թագավորը խղճաց նրանց, և ազատեց ու վերադարձրեց նրանց բոլոր բերդերը բացի Սամշվիլդեյից, և վոչ ել այլ բերդերի տերերին-մեծամեծներին թույլ տվեց նստս մըտնելու այնտեղ, այլ դրավեց Սամշվիլդեն, [վորը և մյացրեց] իր Թագավորությանն։ Յեվ այսպես հայերը (սոմեխները) [վրաց] հպատակ դարձան[32]։...

[Ապա սուլթանը] յեկավ ափխազաց Թագավորի դեմ, և նրան մյացան հայոց (սոմեխների) Կորիկե (Կվիրիկե)[33] Թագավորը, Տփղիսի ամիրան և Աղսարթանը, [վորոնք]՝ ոդակ [կազմել]ով՝ մտան Քարթլի... քրոնիկոնի 288-ի սեպտեմբերի 10-ին, յերեքշաբթի որը[34]...

...եւ ափխազաց [Բագրատ] Թագավորը դրավեց Գագըւ Ապա Փաղլոնը... դողցավ Բավաղնը...

...[Բագրատի վորդի Գեորգ Թագավորը] շնորհեց Հովհաննին (Իվանեին) [Վիպարիտի վորդուն] Սամշվիլդեն... սակայն Հովհանը (Իվանեն) չկարողացավ մնալ բերդի ներսում [և] հեռացավ դեպի Հայոց (Սոմխեթի) լեռները...

[Ապա] Հովհանը (Իվանեն) նորից ուրացավ [Գեորգեին], խաբուսիկ կերպով խլեց Գագը Գեորգ Թագավորի բերդապահներից և ծախեց [այն] Գանձ[ակ]ի տեր Փաղլոնին։...

Մի քիչ հետո Սարանդն իր ամբողջ զորքով՝ դաշնակից ունենալով Գանձ[ակ]ի, Դվինի և Դմանիսի ամիրաներին՝ գնաց Գեորգի դեմ։...

...[Ապա Գեորգ Թագավորը] դրավեց հուշներից (բերձեններից) Անակոփիան՝ Ափխազաթի բերդերի գլուխն, և շատ բերդեր Կղարջքում (Կլարջեթում), Շավշե-

...և էառ [Բագրատ] ի նմանէ (ի Փառուն ամիրայէ) զՏփխիս և զԴագ և զԲողինն՝ զոր առեալ էին Պարսք ի Հայոց և ի Վրաց։...

... եւ ապստամբեաց ի նմանէ (ի Գէորգեայ) Իւանէ՝ որդին Լիպարտի. և յինքն յանկուցեալ զպահապանս դղեկին Գագայ՝ վաճառեաց զնա զարձեալ տեառն Գանձակայ...

...եւ էառ Գէորգ ի Ցունաց զամենայն բերդսն՝ զոր առեալ էր նոցա, զԱնակոփի՝ ի գլուխն Ափխազեթոյ, և երկիրն Կլարճեթոյ և ի Շաւշեթոյ և ի Ջաւախեթոյ և յԱրտահանայ՝ յոլով ամրոցս, և զկարս և զԱնանդ, նոյնպէս և զՇամշոյտէ ի Թուրքաց։...

* Բնագրում՝ Լուկի։

** Բնագրում՝ Կոբա (Կոջա). համ. 148 յեր.* ծանոթ.

քում (Շավշեթում), Ջավախքում (Ջավախեթում) և Արտահանում) (Արտանում)։ Յեվ սրանից հետո... գրավից Կարս (Կարբիս) քաղաքը, Վանանդի բերդն և դավառն, ու Կարնիփոր-Ա[ր]նիանու ամրոցները, և մաքրեց յերկիրը Թուրքերից։...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արաբական արշավանքների շրջանի Հայաստանի պատմությանն վերաբերյալ տես հետևյալ հատուկ գրականությունը *M. Ghazarian*, Armenien unter der arabischen Herrschaft bis zu Enstehung des Bagratidenreiches Marbourg 1903. *H. Thopdschian*, Armenien vor und während der Araberzeit —«Zeitschrift für armenische Philologie», II. B., I. H., Marbourg 1903 S. S. 50—71. Բագրատ եպպ. Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին [«Ազգային Մատենադարան» 29], Վիեննա 1919. *J. Laurent*, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquète arabe jusqu'en 886, Paris 1919. Հակոբ Զորյան. Արաբների հարկային քաղաքականությունը ավատական Հայաստանում,—«Հ. Ս. Ի. Հ. Պետական Համալսարանի Գիտական Տեղեկագիր» № 2—3-Յերևան, 1927, եջ 319—349. Նույնը, Արաբական շրջանում փեոդալական Հայաստանի քաղաքի և դյուղի միջև ստեղծված հակադրությունը, —«Տեղեկագիր Հ. Ս. Ի Հ. Գիտությյան և Արվեստի Ինստիտուտի» № 2, Յերևան, 1927, եջ179—203. № 3, եջ 3—38. Հակոբ Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստանում (ժամանակագրական դիտողություններ)—նույնի «Մանր հետազոտություններ»-ի մեջ, հրատ. Մկրտչյան ֆոնդի, Յերևան, 1932, եջ 22—74. *R. Vasmer*, Chronologie der arabischen Statthalter von Armenien unter den Abbasiden, von as-Saffach bis zur Krönung Aschots I., 750—887, Wien 1932։

2. *Տես Մովսես Կաղանկատվացի*, II, 11։

3. *Ըստ Ասողիկի (Ստեփաննոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, 106)՝ «և ...յմզ թուականին Խալիֆ էին Եղիա՝ Հայոց ամիրայ եկն և էանց բազմութեամբ ի Վիրս և մնաւ ի Ջաւախս, և դիւղն որ կոչի Խոզաբէ (այժմյան Խլպաթվրա. Լ. Մ.-Բ.)։*

4. Մանրամասնությունները տես. *И. Джавахов*, К вопросу о времени построения грузинского храма в Атене по вновь обследованным эпиграфическим памятникам,—«Христ. Восток», т. I, 1912, стр. 277—297.Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, II, 1914, եջ 374—377 համ. նաև մեր այս աշխատության ա. գլուխը։

5. Համ. Ասողիկը (ibid., 158)։

6. Պետք է լինի «Մոստովանդոդ». համ. հաջորդ ծանոթության մեջ հիշած մեր հոդվածը Բվալթնելիի մասին, եջ 218։ Նաև՝ *M. Brosset*, Histoire de la Géorgie, I, p. 274, n. 8.

7. Ուվլխացխևների՝ իբրև հայոց պաղթականության հնագույն վայրերից մեկի մասին վրացական՝ առայժմ տես. *П. Иоселиани*, Города, существо

вавшие существующие в Грузии, Тфл. 1850, стр. 65—66. *Н. Пантюхов*, О пещерных и позднейших жилищах на Кавказе, Тфл. 1896, стр. 34—35. *ավելի մանրամասն՝ Л. Меликсет-Беков*, Пещерный город Квахрели,— «Известия Кавказского Музея», т. XI, 1918, стр. 208—218. [*Л. Меликсет-Беков*] Прошлое и настоящее Грузии по древним памятникам Мцхетского района и Уплисцихе (Краткий путеводитель экскурсий), изд. Культотдела Совпрофа Грузии [Тфл. 1929], стр. 4. *Նույնը, վրացերեն, նչ 4։ Հայկական արձանագրություննների և մանավորապես 1585 թ. արձանագրության ընդօրինակումը տես՝ M. Brosset*, Voyages archéologiques dans la Géorgie et dans l'Arménie, II rapp., livraison II, SPB. 1850, p. p. 161—162. Գ. Գարիթեացց, *Հայկական արձանագրութիւն մը Ուխլիս ցխէ գիւղում (Վրաստան), «Հանդէս ամսօրեայ» 1907 թ., նչ 300. Նմմ. նաև բանահյուսական նյութը՝ ն Թաղ՝այշվիլի, [Վրաց] ժողովրդական զրականության, I [Տփղ. 1909—1915], նչ 256, 257։*

8 Վրացերեն բնագրում «իմձախևս», որի վերլուծությունը տես՝ M. Brosset, Histoire de la Géorgie, I, p. 274, n. 9։

9. Սմբատի և Կոստանդնի թշնամության և ապա համերաշխության մասին նմմ. Հովհան Դրասխանակերտցվո տվյալները (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց [«Ղուկասեան Մատենադարան» ե], Տփղ. 1912, նչ 200—201։

10. Հայ բանահյուսության մեջ Թմբկաբերդ կոչվածը. նմմ. «Թմբկաբերդի առումը» (ե. Լալայեան, Ջավախքի բուրմունք, Թիֆլիս 1892, նչ 57). *Նույնը Հովհ. Թումանյանի կողմից ոգտագործած։*

11. Մանրամասն տես մեր յերկասիրության ա. պրակի Ը. գլուխը։

12. Տես նույն տեղ, նմմ. նաև Ասողիկ (նչ 164—165)։

13. Նմմ. ա. պրակի ժ. գլխի 2 ծանոթ.։

14. Թոնդրի և մասնավորապես Կլդկևարիի և Մանգլայց մասին տես. Е. Такайшвили, Археологические экскурсии, разыскания и заметки, в. IV, Тфл. 1913, стр. 1—79, 130—144. Լ. Մելիքսեթ-Բեկ, *Մանգլիսի շրջանը պատմա-հնագիտական տեսակետով, վրացերեն,— «Ախալ սկոլիսակենն» 1924 № 2—3, նչ 71—80.* Նույնը, *Կլդկևարնի, վրացերեն,* — «Bulletin Historique 1924, № 1, *նչ 167—172.* Նույնը, *Մանգլիսի նեկրոպոլը, վրացերեն,* — *«Ձվենի մեցնիերեբա», № 13, 1924, նչ 82—87։*

15. Նմմ. Ասողիկի (նչ 252) ցուցմունքը. «Եւ կիւրապապատն Տայոց Դաւիթ և թագաւորն Վրաց Բագարատ առաքեն առ թագաւորն Հայոց Սմբատ [Տիեզերակալ]՝ կոչել յօդնականութիւն իւրեանց...»։

16. Զորակերտը այժմյան Զուրտակետն և կամ Ղ՝արաբուլախի դաշտավայրը (Ստորին Ծալկան), ուր՝ VI—VII և հետագա դարերի վրացական բազմաթիվ հնություններին կողքին՝ հանդիպում ենք և հայկական հնություններին համեմատաբար ավելի ուշ ժամանակներին, XVIII դարու հայերեն կամ հայերեն-վրացերեն արձանագրություններով (1718, 1721 և 1795 թ. թ.), որ մենք ընդօրինակեցինք 1932 թվի ամառվա դիտական արշավանքի միջոցին (պատրաստվում և տպագրության ժողովածուի մեջ՝ «Հայերեն արձանագրությունները Վրաստանում» վերնագրով)։

17. Ըստ Ասողիկի (ibid., 252—253), *Սմբատ Տիեզերակալ «առեալ զամենայն զօրս Հայոց և զԴադիկ զնգբայր իւր՝ գնաց առ նոսա ի գաւառն Ջաւախայ և բանակին ի գիւղն, որ կոչի Դլխվակն, և մանուկն Աբաս թագաւորն Պարսից...։ Եւ ամենայն զօրն Վրաց և Վաստուրականք, Սիւնեաց և Աղուանից իշխանքն միահաւաք լինէին ընդդէմ Ախխազաց զօրուն։ Որոց երկուցեալ զխաղաղութիւն խնդրեն և սէր հաստատեն առ միմեանս։ Կիւրապաղատան Դաւիթ խնդրէ ի թագաւորէն Ախխազաց զերդն Սակուբէթ, և առեալ տայ թագաւորին Հայոց Սմբատայ՝ շնորհ նմա արարեալ վասն օգնականութեան. զոր ի մահուն Սմբատայ դարձեալ հանին ի Հայոց զերդն Սակուբէթ»։*

18. Ըստ Արիստակես Լաստիվերտեցվո (*Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Տփղ. 1912, նչ 11*) *հայոց 470 թ.–1021 թ. ք. նմմ.* Իվ. Ջավախիշվիլի, *Վրաց ժողովրդի պատմությունը, II, 424, M. Brosset*, Hist. de la Géorgie, I, p. 306, n. 2։

19. Այս արշավում նկարագրած դեպքերի մասին տես. Արիստակես Լաստիվերտցի, I և II *գլուխները, նաև* Զաքար Անտիոքացի (В. Р. Розен, Император Василий Болгаробойца, Петербург 1883, стр. 61—62). *նմմ.* Իվ. Ջավախիշվիլի, ib., 425։ *Մանավորապես «Շերիմաք»-ի մասին տես.* Ասողիկ, XVII *(նչ 196—197). Նաև՝ M. Brosset*, Histoire de la Géorgie, I, p. 306, n. 4. Ղ. Ինճիճեան, *Սուրբ գրքի հին Հայաստանեայց, 402։*

20 Նմմ. В. Розен, ց. с., 65—66։

21. Տես նույնը։

22. 1030—1031 թ. թ. (Իվ. Ջավախիշվիլի, op. cit., II, 431)։

23 Տես Դավիթ վորդի Սմբատի յերկասիրությունը (այս պրակի Ա. գլուխը)։

24. Ըստ Վարդանի (Վեն., 106)՝ *«Վրաց թագաւորն Բագարատ դարձեալ ի կայսերէ՝ առնու զհայրենիսն իւր»։*

25. Անհոգին։

26. Տես այս պրակի Ա. գլխի 5-րդ ծանոթությունը։

27. Այս Կորիկի (Կվիրիկե) և Սմբատը Լոռու-Տաշիրի Կորիկյանց հարբուտության ներկայացուցիչներն են, վորոնց ազգարանությունը վրացի հեղինակը շփոթած է՝ համարելով նրանց յեղբայրներ, մինչդեռ Կորիկին (Կվիրիկեն) Դավիթ Անհոգինի վորդին ևր, իսկ Սմբատը՝ յեղբայրը կամ Կորիկեի հորեղբայրը. Կորիկյանց ծննդաբանությունն ընդհանրապես տես. M. Brosset, Monographie des monnaies arméniens, SPB. 1839. Նույնը, Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie. p. p. 277—279. Ղ. Ալիշան, *Շիրակ, 96—97.* Նույնը *Հայապատում, Վեն. 1901,* II, *392.* Ե. Լալայեան, *Բորչալուի գաւառ,* — *«Ազգագրական Հանդէս», գ.* VII—VIII, *Տփղ. 1901, նչ 312—318.* Գեւոնդ վ. Մովսէսեան, *Լօռիի Կիւրիկեանց թագաւորներու պատմութիւնը [«Ազգային Մատենադարան» Գվ], Վիեննա 1923. Е. Пахомов*, О монете Корикэ Куропалата, — «Известия Кавказского Историко-Археологического Института», т. III, Тфл. 1925, стр. 43—45. Լ. Մելիքսեթ-Բեկ, *Բորբերն և նրա հայերեն ու վրացերեն արձանագրությունները, վրացերեն,* — «Bulletin de l'Université de Tiflis», VII, 1926, *նչ 60—73.* Նույնը, *«Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց»* etc., *նչ 25—32, հատկապես 31։ Մասնավորապես Կորիկե (Կվիրիկե) և Սմբատի մասին պետք*

և ասել, որ սրանք Սանահնի վանքի Ամենափրկիչ կոչված տաճարի կառուցողներն են, մեր մասին վկայում և նույն տաճարի արևելյան պատի համապատասխան քանդակագործությունը, ուր յերկու թագավորներ ձեռին բռնած ունեն յեկեղեցու կաղապարը, հետևյալ արձանագրությամբ՝ «[Կ]որիկէ թագաւոր, Սմպատ թագաւոր» (*H. Марр*, Санаинская скульптурная группа ктиторов,— «Христ. Восток», т. I, 1912, стр. 350 и табл. XX): Համմ. Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետաց Հայոց հիւսիսային կողմանց» etc., 49: Ըստ այսմ և ի նկատի ունենալով, որ նույն Կորիկեն և Սմբատը հիշատակվում են նաև նույն Սանահնի 1063 թվի մի արձանագրության մեջ (Ս. Զալեմեանց, op. cit., I, 32 — Description des monastéres arméniens d'Haghbat et de Sanahin, par archim. *Jean de Crimée*, avec notes et Appendice, par *M. Brosset*, SPB, 1863, p. 49 = Կ. Կոստանեանց, *Վիմական տարեգիր, 24*), մենք յեկած ենք այն յեզրակացության, որ Սանահնի Ամենափրկչի կառուցումը պիտի վերագրել հենց այդ Կորիկին և Սմպատին XI դարու կիսին և, համենայն դեպս, ոչ ուշ քան 1065 թ.: Ինչ վերաբերում է Հաղբատի Սուրբ Նշան տաճարի հյուսիսային պատի 991 թ. արձանագրությանը (Զալեմեանց, I, 79 = *Jean de Crimée*, p. 11 = Կոստանեանց, *10*), ուր հիշատակված են Սմբատ և Գուրգենը, դրանք Բագրատունյաց Աշոտ Ողորմած վրդովչն են, որոնցից Գուրգենը Կորիկյանց հարստության հիմնադիրն և համարվում, բայց, ի հարկե, ոչ իրավացի (այս առիթով մանրամասն տես. Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետաց Հայոց հիւսիսային կողմանց» etc., *էջ 25—27, ծան. 6*):

28. Սամշվիլդեի՝ իբրև Կորիկյանց յերբեմնի մայրաքաղաքի մասին՝ վկայում են մի շարք հայկական հնություններ, որոնք մինչ որս պահպանված են և որոնց ընդհանուր նկարագրությունը կարելի յի գտնել հետևյալ գրականության մեջ. M. Brosset, — «Mélanges Asiatiques», t. II, p. p. 92—103. Սարգիս Վ. Զալեմեանց, *Ճանապարհորդութիւն ի Միջն Հայաստան, II, 1858, էջ 78—79. С. Мажников*, Памятники древности города Самшвильде, — «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», в. XIII, 189*1*, отд. I, стр. 3—13. *Е. Такайшвили*, Археологические экскурсии, разыскания и заметки, II, 40—46. *Համմ.* Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետաց Հայոց հիւսիսային կողմանց» etc, *էջ 31, ծան. 1*: Այդ հնությունների առանձնապես հետաքրքրիր և հինավուրց վիշապաքար-փալուսը, որը XI դարում վերածած է խաչքարի՝ հայերեն արձանագրությամբ ՆՃ 400+100 = 500 (1051) թվականով, ուր հիշատակված և «Սմբատ իշխանաց իշխանը» (*համմ.* Լ. Մելիքսեթ-Բեկի, op. cit., *էջ 28, ծան. 5*), և որը հետագայում ներփակվել և ասեվածաձևա անվամբ կառուցված և հայերին հատկացրած փոքրիկ մատուռում: Այդ արձանագրության մասին և, որ Ս. Զալեմյանը *1858* թվին դրում էր (op. cit. II, *79*)՝ ...«ի միջի մերոյ մատրան արտաքին բերդի որ կոչին Շամշուլդի կանգնեալ կայ միաձոյլ և բարձր խաչ քար, ի բաց (ուղիղ՝ Սմբատ. Լ. Մ. Բ.) իշխանէ (ուղիղ՝ իշխանաց իշխանէ. նույնը) ի թուին Հայոց ՆՀԹ (ուղիղ՝ ՆՃ. նույնը), յորում առնեն գութ ատրուբիւնս զենմամբ խոյոց և զուարակաց»: Այդ արձանագրությունն ամբողջությամբ հրատարակած ունի *M. Brosset* (Mèlanges Asiatiques», t. II, p. 97—98): Մի ուրիշ արձանագրություն փորագրված և Սիոն կոչված մայր յեկեղեցու (վրացականի) հարավային պատի վրա, հետևյալ բովանդակությամբ. «[Ի]մամ[ն]աւ ան Գե[ո]րգ[ի]ա հա[յո]ց կաթո[ղիկոսի]...» (մինչ այժմ գրականության մեջ բոլորովին անհայտ), ուր, անկասկած, հիշատակված և Գևորգ Գ. Լոռեցի կոչված

կաթողիկոսը՝ Գրիգոր Վկայասերի հակաթոռը՝ 1069—1072 թ. թ.: Նույն Սիոնի արևելյան պատի արձանագրությունն և, ուր հիշատակվում և բդեշխները (սպասիսալարները) սերունդը:

*29. «Լոկի» ընթերցվածքը տալիս և «Բարթլես-եկսերեբա»-ի Աննա թագուհու վարիանտ կոչվածը, որն ամենահնագույնն և համարվում և որն Իվ. Զավախիշվիլուն և պատկանում ու դեռ հրատարակված չե. տես Իվ. Զավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, II, 449 և ծան. *. Նույնը, Վրաստանի սահմաններր, 22*: Ղ. Աղայանի «Տորք-Անգեղ»-ում հիշված նույն «Լոքի» կամ «Լոբ»-ն և:

30. Ղ. Աղայանի «Տորք-Անգեղ»-ի նույն «Ուսերէթ»-ը:

31. «Կորա»-«Կոշա»-ն «Բոբա[յր]»-ի յի վերականգնում, թեև հարցական նշանի տակ, Իվ. Զավախիշվիլին, Վրաց ժողովրդի պատմությունը, II, 449.

32. Ըստ Իվ. Զավախիշվիլու (Վրաց ժողովրդի պատմությունը, II, 448—449 Վրաստանի սահմանները, 21—22), մոտավորապես 1065 թվին:

33. Կորիկե Բ.

34. Այսինքն 1068 թվին,

Ե.

ԱՆԱՆՈՒՆ (XII Դ.)

«ԴԱՎԻԹ ԱՐՔԱՅԻՑ-ԱՐՔԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Քալթլխա-ցխորևբայի Մարիամ Թագուհու վարիանտում անանունն հեղինակի անվերնագիր յերկասիրությանը, ուր վրաց պատմությունը մինչ Գեորգ Ա-ի թագավորությունն ե հասցրած, անմիջապես հետևում ե բավականին ընդարձակ «[Դավիթ] արքայից-արքայի պատմությունը», վորի հեղինակի անունը վոչ մի տեղ չի հիշվում. Այդ պատմությունը գրված ունի Ե. Թաղ'այշվիլու հրատարակության մեջ 281—335 եջերը, իսկ M. Brosset-ի 236—263, վորին համապատասխանում են նույն M. Brosset-ի ֆրանսերեն թարգմանության 346—381 եջերը և «Համառօտ պատմութիւն վրաց»-ի 114—123։ Նույնը վարքաբանության վերածված վրացերեն Մ. Սաբինինի «Վրաստանի դրախտ»ում, եջ 489—512, և ռուսերեն արձակ թարգմանությամբ՝ նույն Սաբինինի գրքում Полное жизнеописание святых грузинской церкви, ч. III, Спб. 1873, стр. 103—140։ Այս յերկասիրությունը պարունակում ե իր մեջ մանրամասն նկարագրություն այլ և այլ քաղաքական և պատերազմական անցքերի սկսած Գեորգ Ա-ից մինչ Դավիթ Շինողի մահը, այսինքն 1125 թիվը։*

Վոր «Դավիթ արքայից-արքայի պատմության» հեղինակն, իրոք, նույն Դավիթ ժամանակակիցն ե, այս գրությունը միանգամայն անվիճելի յե վրացագիտության մեջ (Թ. Ժորդանիա, Իվ. Ջավախիշվիլի, Ս. Կակաբաձե)։ Վրացագետների կողմից հայտնված կարծիքների մեջև տարբերությունը միմիայն ժամանակնությունների և վերաբերում։ Ըստ Թ. Ժորդանիայի (Քրոնիկոններ, I, XLV—XLVI), «մատենագիրը հոգևորական անձն ե, վոր յերեում ե յուրաքանչյուր տողից», քանի վոր «նրա ամբողջ պատմվածքն ասոված-աբանական [դատողության] դրոշմն ե կրում». միաժամանակ՝ նա «հույժ կրթված և զարգացած մարդ ե», դիցուք «Հովհան կաթողիկոսը կամ Սիմեոն Ձղոնդիդեցին կամ Աբսեն Իղ'ալթոյեցին լինի»։ Մի ուրիշ տեղ նույն Ժորդանիան (ibid., 248) վոչնչացնում ե նույնիսկ յերկասիրության գրության ժամանակը. «Դավիթ Շինողի պատմությունը գրված ե Գելատի [տաճարի] ավարտումից, այսինքն 1130 թվից հետո»։ Միանալով Թ. Ժորդանիային կարծիքին, Սարգիս Կակաբաձեն իր հատուկ գրքույկում՝ վերնագրով «Դավիթ Շինողի պատմչի ով լինելը» (վրացերեն, Տփղիս 1913, եջ 3—7)՝ այն միտքն ե հայտնում, վոր հեղինակը վոճն Աբսեն վանականը պիտի լինի, վորը 1115 թվից Դավիթի խոստովանահայրն եր համարվում։ Յեվ այս հիման վրա յե, ըստ յերեվույթին, վոր Կ. Կեկելիձեն (Վրաց գրականության պատմություն, I, 315—316), այս յերկասիրությունը վոճն Աբսեն Սաղիրխաձեյին ե վերագրում։

Ըստ Իվ. Ջավախիշվիլու (Հին վրացական պատմական գրականությունը, ը. տպ., 216), «Դավիթ արքայից-արքայի պատմության» գրված պիտի լինի 1123—1126 թ. թ. մեջոցին. անանուն պատմիչն ընդհանրապես լայն և աչալուրջ մարդ ե, և միմիայն առ հայերն տածած թշնամանքն ե, վոր,— նույն գիտնականի ասելով (215—216),— աչքի յե ընկնում։ Սակայն հեղինակի այս զգացմունքն էլ, ըստ յերևույթին, կրոնական հողի վրա չե բուսած. ընդհակառակը, այնտեղ, ուր նա նկարագրած ունի վրաց և հայ հոգևորականության ասոված-աբանական վեճերի ընթացքը, յերկու հոգևորականությանն էլ համահավասար կերպով մեղադրում ե և պախարակում՝ «յերկու կողմն էլ տարված եր իրար ճնշելու և վաստաբանության պայքարելու միտումով, քանի վոր նրանք մոռնում եյին անանց և զժվար չլսանելի գործերի մեջ». մի խոսքով,— շարունակում ե նույն գիտնականը,— «պատմիչը, այնուամենայնիվ, ասոված-աբանության չատագով չէր յեղել և հենց այս հանգամանքը ցույց ե տալիս, վոր Դավիթ Շինողի պատմության նկարագրողը կամ աշխարհիկ անձն ե, կամ, յեթե հոգևորական ե, կրթված և՝ մտած-ելակերպով միանգամայն աշխարհականացած գրող և յեղել»։ Միաժամանակ Իվ. Ջավախիշվիլին (եջ 216) մատնանշում ե, վոր հեղինակը Դավիթ կողմնակից ե և իր յերկասիրության մեջ տեղ-տեղ պայքարում և վերջինիս հակառակորդների հետ կամ վիճում։

* *Վրացերեն «աղմաշենեբելի» շինող строитель և վէր թե վերաշինող возобновитель.*

*Ի վերջո, հիշատակենք, որ «Դավիթ արքայից-արքայի պատմութեան» վրացերեն ընդարձակ քննական հրատարակութիւնը վաղուց պատրաստած ունի ակադեմիկոս Իվ. Ջավախիշվիլին**։

[ԳԵՈՐԳ II ՅԵՎ ԴԱՎԻԹ ՇԻՆՈՂ ԹԱԳԱՎՈՐՆԵՐ]

...Ապա յետոյ Սուլթան Մելիք-Շահը և մոտեցաւ Սամշվիլդեային, վորն և դրավից. և Իլխպարիսի վորդի Իվանեային գերեց, և ամբողջ Հայքը (Սոմխիթն) ավերից։ Ապա նույն տարին Սարանդը՝ գալով սուլթանական զորքով հանդերձ՝ կանգ առավ Սամշվիլդեայի դաշտում, ուր յետոյ և Գեորգ թագաւորի զորքերը, և ընդհարում ունեցան Փարցխիսում։ Գեորգի զորքը հաղթեց և փախուստի մնթարկեց պարսիկներին... իսկ Գեորգը գնաց իր հայրենիք՝ Տայքը, ապա հասաւ Բանա[2]։ Յետ նույնտեղ նրա մոտ յետոյ արեւելքի զորավար (զորվար) Գրիգոր՝ Բակուրյանի[3] վորդին, վորը տեր էր Ուղիյաց (Ուղիքի), Կարնո-քաղաքի և Կարսի. և նրանք հույժ ուրախացան և հանդարտվեցին։ Յետ հանձնեց [Գրիգորը] Գեորգ թագավորին քաղաքաբերդն Կարսի ու նրա շրջակա գավառը. ապա բաժանվեցին։ Իսկ Գեորգ թագավորը թողեց Կարսում շավշ (շավշ[եք]ցի) ազատներին (ազնվականներին) և տուն վերադարձավ...

Մինչ այս ժամանակ Տփղիս քաղաքը, Ռուսթավը, Հայքը (Սոմխիթն) և ամբողջ Սամշվիլդեն՝ ու Ագարա[կ]ները՝ թուրքերի ձեռն էին. իսկ Թռևդեն (Թրիալեթն) ու կլդեկարը Ճղ'ոնդիդելիի[6] քեռորդվո ձեռն եր...

Ապա թուրքերն՝ իմանալով Սամշվիլդեի առումը [Թեոդորոս, Աբուլեթ և Հովհան (Իվանե) Որբելների կողմից]՝ Հայքի (Սոմխիթի) բազում բերդերը թողին և գիշերով փախան... Իսկ մինչ այդ

Իրրև լուաւ գայս (զքաջագործութիւնս Գէորգեայ) Մելիք Շահ Սուլտանն՝ եկն և անդրէն էառ զՇամշոյտէ, և գերեաց զվիրս և զիւանէ իշխան, և չոգաւ Յաւուրսն յայնոսիկ՝ մինչև էր Գէորգի ի բանակս, եկն առ նա Գրիգոր՝ որդին Բակուրանայ, տէրն Ուխտեաց և Կարուց և Կարնոյ քաղաքի, և խնդրեաց ի նմանէ գնաս, և նոյն եղեալ նմա լինել գերբան...

* Տես Գիտութեանց Ճեմարանի հրատարակութեամբ 1911—1915 թ. թ. Պետերբուրգում լույս ընծայած Bibliotheca Armeno-Georgica հատորի I—V գրքերի շապկի վերջին յետսի annonce-ները։

...Իսկ [Դաւիթն] և պերդաքաղաքն Հայոց՝ գնաց։...

Թուրքերն իրենց վրաններով աշնանը Հայքով (Սոմխիթով) եկին անցնում՝ կանգ առնելու Դաշկենքում (Գաչկենում)[7] ու Կուր գետի յեզերքին՝ Տրփղիսից մինչ Պարտաւ (Բարդավ)՝ և Իրրի ափին և ձմեռային արոտատեղ [ծաղայող] բոլոր այս սքանչելի տեղերում[8], ...իսկ զարնանը սկսում են [կրկին] վեր բարձրանալ դեպի Հայոց (Սոմխիթի) և Արարատյան լեռները, ուր ամառն պահին նրանք գանում եյին հանդիստ և ուրախութեան՝ խոտով և դաշտավայրով, սքանչելի ալպյուրներով և ծաղկաւետ տեղերով[9]...

...Յերբ վոր Սամշվիլդեն գրավեցին*, նույն տարին սուլթանի զորքը և բովանդակ թուրքութիւնն յեկավ ...[ապա] վրաց զորքն աներկյուղած հարձակվեց [այն] թուրքերի վրա, վորոնք նստած եյին մինչ Բասեն (Բասիան) և կարմիր փորա[յե][11] լեռն[եր]ում**։...

Յետ մյուս տարին [Դավիթ թագավորը] կալանավորից Աամ և Շոթա՝ Գրիգորի վորդվոց, և գրավից բերդն Գիշո, և իր վորդի Դեմետրին մեծ զորքով ուղարկից Շարվան... իսկ մյուս տարին[13] ծաղկազարդին գուրս յեկավ [Դավիթ] թագավորն Ղանուխից՝ գնալու Աբաքսի (Ռախսի) յեզերքը, և գտիկը տոնից Նախիդուրում[14]... և հարձակվից Աբաքսի (Ռախսի) յեզերքին կանգնած թուրքերի վրա, վորոնց մի մասը կոտորից։ ...Սույն թվին. [Դավիթը] գրավից Հայոց (Սոմխիթի) քաղաքաբերդ Լոռին, և նույն տարին, հուլիսին, լուսադեմին, կրկին վերցրեց Ագարա[կ]ները[15], քանի վոր առաջին անգամ այս բերդը նրա պապ Բագրատն եր գրավել։...

...Յետ սկսից [Դավիթն] արշավանքները կատարել Պարսկաստանի, Շարվանի և մեծ Հայքի (Սոմխիթի) վրա...

...[Դավիթը] հարձակվից Սուլթանի

* Var. + քրոնիկոնի 330-ն եր[10]։

** Var. + քրոնիկոնի 336-ին[12]։

վրա. և զորք[ով] լցրեց [ամբողջ յերկիր-
ը] լեռն[եր]ից սկսած մինչ Կուր և Դա-
դից[15] սկսած մինչ Բերդուջ ...քրոնիկո-
նի 340 թվին[17]...

...[Ապա սուլթանը]հրամայեց թուրք-
մենությանը, ուր էլ վոր լինի, ժողովել
հեծելազորք՝ Դամասկից և Հալեպից
սկսած մինչ վեր, և սրանց հետ Գան-
ձ[ակ]ի աթաբեկին՝ իր ուժով և Հայքի
(Սոմխիթի) բոլոր ամիրաներին*։...

...Յեվ սավառնելով երբեք արծիվ
[Դավիթ թագավորը նույն թվին] մայր-
սին[18] վերցրեց Հայքի (Սոմխիթի) բեր-
դերը՝ Դադք (Դադ[եր]ը), Տերունականը
(Տերունականը), Բավազիններըը, Նոր[ա-
կն[ը]դը, Մանկեցգոմերը (Մանասգոմերը)
և Ղ՝ալինջաքարը (Ալինջաքարը),[19] և
հունիսին [նորից] յեկավ զորքով և ան-
ցավ Ջավախքը (Ջավախեթը), Կոդան
(Գոլան), Կարնևփորը[20], Բասենք (Բասիան-
ները)՝ մինչ Սպեր. և ուր էլ գտավ
թուրքմեններ, բոլորին կոտորեց կամ
գերի վերցրեց. անցավ Բուլաթաղ՝ուրը
և ավերեց Ուլոխքը (Ոլթին), ապա մեծ
հաղթանակով յեկավ Թռելք (Թբլավեթ)։
...Յեվ ոգոստոսի քանիսն էին ժամ-
բույրներն մոտ կանգնած [Դավիթ թա-
գավորի] մոտ յեկան Անիի ավագներն
[գիվանա]պետները և հայտնեցին քա-
ղաքն ու բերդերը նրան (Դավիթին) տա-
լու մասին։ Յեվ նա շատ կերպով հրա-
վիրագրեր ուղարկեց բոլորին. և յեր-
րորդ որը նրա (Դավիթ) առաջ կանգ-
նած եր վաթսուն հազար հեծյալ. ու-
ղևորվեց և յերրորդ որը հեշտությամբ
գրավեց Անի քաղաքն ու նրա բերդերը,
և Անվո դյուղերն ու գավառները. հա-
նձնց [Անիից] Բուլասվաբրին** իր ուժն
վորդվով, կանանց և հարևներով հան-
դերձ, վորոնց ուղարկեց Ախլաթք (Ախ-
լաթեթ), և Անվո պահապան թողեց
մնացեալ ազատներին (ազնվականներին),

...Նա (Դավիթ) էառ և զղջական Հա-
յոց՝ զԴմանիս, զԳադ, զՏէրունականն,
զԲաւազինն, զՆոր-բերդն, զՄանասա-
գոմ, զՄալինճքար. և անցեալ ի կողմն
վերին ի Բասեն և յԻսպիր՝ ուր և գտա-
նէր ի Թուրքաց՝ կոտորեալ զնջէր, և
գառնայր մեծաւ յաջողմամբ ի վիրս՝
յօդոստոս ամսեանն։ Եւ հասանէր առ նա
Թուղթ ի յաւագացն Անւոյ՝ եթէ եկ-
ատցուք զքաղաքս ի ձեռդ քո. և զնաց
վաթսուն հազար հեծելովք, և զկնի և-
րից աւուրց էառ զնա...

---

* Var. 341։

** Var. Շուլասվային. համ. 148 յեր.* ծանոթ.։

իսկ ինքը վերադարձավ Բարթլին... և
կարգավորեց բոլոր գործերը Բարթլիի,
Հայքի (Սոմխիթի) և Անվո[21]...

